203.1
9--95

891.99
Q--89

$4- U L

2004

1721

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

որ կոչի

ՆԱՐԵԿ։

Տպագրեալ ըստ ընտրելագոյն օրինակաց։

Յամի Տն 1807։

Եւ 'ի Թուականութեան Հայոց . ռմծզ։

Ի ՎԵՆԵՏԻԿ.
'Ի Վանս Սրբոյն Ղազարու։
Հրամանաւ Մեծաւորաց։

им. А. Мясникяна

243

ԳՐՈՒԹԻՒՆՔ

յոգնաթախանձ բանից օգտակարաց , ապաշաւանաց ,
հոգեշահ խրատուց ։

Անձին ստգտանաց , զղջականաց կանոնաց կենաց , կամաւորուե̃բ յանձնառուե̃ց , աներեւութից յայտնութե̃ց , մեղանաց խոստովանուե̃ց , ցուցմունք գաղտնեաց , տարածմունք ծածկեցելոց , յանդիմանութիւնք թաքուցելոց ։

Սպեղանիք զօրաւորք՝ վիրաց անբժշկականաց . դեղք ազդուականք՝ ցաւոց անտեսականաց . հնարաւորուե̃ք բազմամասնեայ երկանց վտանգից ։

՚Ի դիմաց կարեաց՝ ամենից բնուե̃ց , առիթք արտասուաց , պատճառք աղօթից ։

՚Ի խնդրոյ հայցմանց՝ հարց միանձանց և բազմաց անապատականաց՝ ասացե̅լ մատեան ողբերգութե̃ ,

ԳՐԻԳՈՐԻ

՚Նարեկայ վանից վանականի ։

243+241



Ս.Բ գրիգոր Նարեկացի :~

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ։

ԲԱՆ. Ա։

ԶԱՅՆ ՀԱՌԱՉԱՆԱՑ՝ հեծութեան սրտի՛ ողբոց աղաղակի՛ քեզ վերընծայեմ տեսո՛ղդ գաղտնեաց. և մատուցեալ եդեալ 'ի հուր թախծութեանձին տոչորման՝ պտուղ ըղձից ծնեղերոյ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Այլ հոտոտեսցիս հայեսցիս գըթած, քան 'ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարգութեան։ Ընկա՛լ զսակաւամանեայ բանիցս յօդուա՛ծս՝ քեզ 'ի հաճութիւն, և մի՛ 'ի բարկութիւն. ելցէ՛ 'ի խորոց սատի զգայութեանց խորհրդակիր սնեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօ-

րութե̃ ճարպոյ՝ որ յիմն է պարարտութիւն ։ Եւ 'ի գնելս իմ ընդ քեզ դաս՝ խառնեալ աղերսիւ հզօր, մի՛ իբրև ընդհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յակոբու, ըստ բողոքելոյն եսայեայ, և զանիրաւութե̃ն բաբելոնի, տաղտկալի քեզ երևեսցի, զոր տուաւ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ ․ այլ իբր ընդբուրեալ խունկն հաճոյական 'ի խորանին սելովայ, զոր դաւիթն կանգնեալ նորոգեաց տապանակին հանգստեան 'ի գերութենէն դարձելոյ, որ 'ի վերստին գիւտ կորուսեալս հոգւոյ սուակի, ընդունելի
կամաց քոց լիցի ։

Է ․ Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ ուժգինս հնչեցեալ 'ի ձորն վրէժխնդրութե̃՝ կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս ․ այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց, որ յիմումս անձին ցուցանի, խռովութիս ամբոխից ․ հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոցն հոյլք, չարեացն՝ ընդ բարիսն, և գերեալ զիս 'ի մահ ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան զշնորհին ժամանել առ իս ․ զոր ընթերցեալն առաքելականացն դասուց պօղոս՝ առօրինակեալ զմովսէս, զքնի փրկութե̃ն յաղթող ցուցանէ ։ Վասն զի թէ մերձ է օր տն̃, ոպ̃ գիր ասէ, 'ի հովտին անձուկ տապարիսին յովսափաթու և հեղեղատին կեդրոնի, փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութե̃ց, որ կենցաղականաւ այսը յաւիտենիւ՛ զհանդերձելոցն ինձ կերպարանէն, այլ և՛ս յաւէտ մերձեցաւ 'ի վր՟ իմ արքայութեն՟ ոյ՟՝ մարմին եղելոյ, մեծապէս գոհեալ զիս ուխթ հիւսուց՝ բազմից տոկոսեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց Ճշմարտապատմից, քան ըղձեռին նորին վերակացուին անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եդովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց բարբարոս ազգաց : Քանզի այն ընտրութի՟ ամօք չափեցաւ, իսկ սպասուհաս իմումս պարտուց՝ առանց աւարտման ունի զսահման : Ա՛հ՝ դուք՝ և որոգայթ անձողոպրելի, ըստ մարգարէին և առակողին, տագնապաւ մեծաւ առդուրս ինձ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր ատէն գծագրել : Զոր միայն քո՛ է հրաշագործել սպուղս դեղոց՝ 'ի հնարս կենաց՝ ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից, քաւիչ ամենայնի՝ գովեալ 'ի փառս անճառս անսահմանելի բարձրութե՟, յաւիտեանս յաւիտենից :

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս ճողոպրանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ՟ :

ԲԱՆ. Բ :

ա. Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն Ած՟ յօդաւորական շրթամբք կարգաւս, որ գործովք միայն գրաւի, և ոչ սուտեղծաբանութ՟ք կաշառի, որ յեզխապատու մեղ ունիս զորդիդ զդարձն , զի՛նչ օրինակ տու այս քեզ նմանագոյն և յարմարական աստանօր եղից՝ անձն իմ պարտաւոր ։ Պատժակիցս կործանեցելոյն սոդոմայ · ըմբերանեալ դատախազս նինուէի · անարի բարբարոսս քան զտիկինն հարաւային · վատթարագոյնս քան զքանան · յամառեցեալս քան զամաղէկ · անբժշկականս քաղաք դրօշելոյ · նշմար մնացեալ ապստամբութեան հինն իսրայէլի · յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն յուդայ ։ Կշտամբեալս գեր քան զծուր · տարամերժեալս քան զծայդան · խորթաբարոյս քան զգաղիլեա · աններելիս քան զանհաւանն կափառնաում · պարսաւեցեալս իբր զքորազին · բամբասեցեալս ընդ բեթսայիդայ · անպարկեշտ ծաղկեցեալ ալեօք եփրեմի ։ Աղու աղաւնիս միշտ յիմարութբ̃՝ այլ ոչ հանդարտութբ̃ · 'ի կորեանց առիւծուց՝ անձնական օձս եղեռնային · կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանտութբ̃ · պատկերս վերջին հարուածոցն երուսաղէմի , ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնի ։ Տաղաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն · խորտակեալ դրացս վատահարան , և կրկին ծրդեալ չինուածս խօսուն · թողեալ ժառանգութիւնս յարմարական · մոռացեալ տունս ա̃ծակերտ , ըստ բանից նախագրեցելոցն՝ մովսէսի՝ դաւթայ և երեմիայի ։ Յարկս բանական՝ անօղս բորբոսութ̃ե , հարուածեալ խրատու քերմանն՝ օրինին կազդուրեալ .

րեալ, օծեալ կաւուծն՝ ողողական հեղութեամբն. անճարակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձեռամբ շինողին. արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ հրամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ. հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնիւք. առանց խնայելոյ: Ծածկեալ դրամս յերկրի չարեօք, ըստ աւանդակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի:

Է. Այլ դու ա՟ծ՝ ա՟ծդ հոգւոց և ամենայն մարմնոց, ըստ դաւանելոյ ա՟ծաշնորհին, երկայնամիտ և բազումողորմ, ըստ ս՟բյն յովնանու ձայնին, շնորհեա՛ կատարել 'ի քոյդ հաճութ՟ե օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութեան: Եւ ընդ լալով սերմանել բանիս 'ի նախընթաց չուս աստիճանաց՝ օթեւանացս պատրաստութ՟ե, 'ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դարձայց բերկրեցեալ լրութ՟ե քաւութե՛ պտղոյն երանութ՟ե որայիցն բարութ՟ե: Մի՛ տացես ինձ արգանդ սրտի անորդի՝ իբր իսրայէլի, և ստինս աչաց ցամաքեալս՝ ով ամենագութ: Լո՛ւր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած, նախ քան երկնի՛ և երկին՝ երկրի, և նա՝ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա՝ իսրայէլի: Եւ երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս ազդեսցէ, քան թէ տարերաց ապականացուաց: Դու ստեղծիչ և ես կաւ, բայց տարակուսելոյս 'ի մասս մաղթանաց այսր հեծութե՝ կամս քաղցրութե՝ զօրանալ առտէն. զի մի՛ 'ի բանալ վերնայինն երկնի՝ անընտիր գտեալ կրթութե վայելման լուսոյ, իբր զնիւթ մթնոյ՝ սպառեցայց ջընջեալ 'ի միջոյ: Ոգի զրկելոյ՝ ըստ մաղթանաց գոչման աստղին, և ոյժ թալկացելոյս, և կեանք մաշելոյս՝ մտացս խղճիւ, այլ ոչ տաժանմամբ կրից՝ աշխատութե զքեզ խնդրելոյ. ա՛ռ զուանդ մաղթանացս, և տո՛ւր զողորմութին քո շնորհացդ. ընկա՛լ զփոքրս՝ 'ի տկարէս, և շնորհեա՛ զմեծդ՝ առ 'ի հզօրէդ. զօրացո՛ զբանս զղջման, առաքեալ 'ի մեզ հոգի 'ի բարձանց՝ ածաշունչ պատգամօքս՝ 'ի սմա եդելոյս: Պարգևեա՛ բա՛րերար՝ զառակն եսայեայ, լուսաւորեալ առ ճշմարտութին, մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ պղնձոյս դոյլի անարգս ձայնի՝ զունկն քո շնորհի. ընդ անպարտութե երկաթոյս՝ սևութե գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյց առաքինութեան, հրաշէկ լիբանանու: Ընդէր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝ չերկընչել 'ի քէն, անճա՛ռ և ահաւոր: Մի՛ եղէց անպտուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր ապաշջան սերմանօղ անբերրի երկրի: Մի՛ լիցի ինձ երկնել, և ո՛չ ծնանել. ողբալ, և ո՛չ արտասուել. խորհել, և ո՛չ հառաչել. ամպել, և ո՛չ անձրևել. ընթանալ, և ո՛չ հասանել. ինձ ձայնել, և քեզ ո՛չ լսել. պաղատիլ, և անտես մնալ. կոծկոծել, և ո՛չ ողորմել. աղաչել, և ո՛չ ինչ օգտել. զոհել, և ո՛չ ճենճերել. զքեզ տեսանել, և դատարկ ելանել: Լո՛ւր ինձ նախ քան զկարդալս իմ՝ առ քեզ միայնդ հզօր. մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ թու՛ով աւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ՝ հատուցաներ: Կեցո՛ զիս գըթած. լո՛ւր ինձ ողորմած. մարդասիրեա՛ ներող. խնայեա՛ երկայնամիտ. պաշտպանեա՛ ապաւէն. բարերարեա՛ հզօր. ազատեա՛ ամենակալ. կենագործեա՛ նորոգօղ. վերականգնեա՛ ահաւոր. լուսաւորեա՛ երկնային. բժշկեա՛ հնարաւոր. քաւեա՛ անքննին. պարգևատրեա՛ առատ. շնորհազարդեա՛ աննախանձ. հաշտեա՛ անախտակիր. ընկա՛լ անոխակալ. սրբեա՛ 'ի պարտուց օրհնեալ: Եթէ յառեցից զաչս իմ, նայեցեալ 'ի հայեցուածս երկուց վտանգից յաւուր թշուառութե՟, զբոյդ տեսից փըրկութե՟ն՝ յոյս և խնամակալ. եթէ նկատեալ դիտեցից 'ի վեր յամենադրաւ ուղին սակալի, հրեշտակ քո խաղաղութե՟ քաղցրութե՟ ինձ պատահեսցէ: Ցո՛յց ինձ տ՟ր 'ի յելելցն աւուր շնչոյս արձակման՝ մաքրութե՟ ոգի, լուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քոյ եկեալ հասեալ: 'Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցո՛րդ ժամանեցուսցես. զանակնկալն բարի՝ չարիս 'ի յուսահատութեանն աւուր շնորհեսցե՛ս: Քա՛ւ լիցի քեզ բա՛րերանեալ՝ որ փրկութի՟դ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ դարձան դժնդակ տացես ուղեկից. մեղօք

մեռելոյս՝ անմահ կեանք․ կործանելոյս
պարտեօք՝ փրկութիւն ։

Գ․ Արդեօք մոռասցիմ զբարերարելդ՝ ակնկալութիւն․ անտեսեսցես զգթասրելդ՝ խնամօղ․ այլայլեսցես զմարդասրելդ՝ անփոփոխ․ նհանջեսցես զկենագործելդ՝ անվախճան․ թողուցուս զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ ։ Աղաւաղեսցես զքաղցրութենդ բարեշնորհ ծաղիկդ․ անպատուեսցես զնիւթ պանծանաց քումդ ճոխութեն․ յեղանակեսցես զփառս հերաց քումդ բարձրութեն․ ոչ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեն քումդ պսակի ։ Եթէ ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն՝ լցեալ փափաքմամբ․ ոչ զբոլորն պարգեւեսցես փրկութիւն․ ոչ մատուցանիցես դեղ վէրացս․ ոչ սպեղանիս խոցուածոյս․ ոչ դարման՝ տկարութեանս․ ոչ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգեւդ անեզերաց ։ Որ միայնդ ունիս փառս ինքնութեն իսկութեն և յարակայ մշտնջենաւորութեն․ վկայեալ 'ի բնաւից․ օրհնեալ և փառաւորեալ յերկնայածինեանս․ և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից․ ամէն ։

Վէր

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ. Գ ։

ա. Տէր իմ տէր, տուիչ պարգեւաց. ինքնաբուն բարի. ամենից տիրող հաւաստարարապէս. միայն արարիչ զբնաւս յոչէից. փառաւորեալ. անքննին. ահեղ. ահարկու. սոսկալի. հզօր. սաստիկ. անտանելի. անմերձենալի. անըմբռնելի. անիմանալի. անճառելի. անտեսանելի. անզննելի. անշօշափելի. անորոնելի. անըսկիզբն. անժամանակ ։ Անշամանդաղ գիտութ՟ն. աներկեւան տեսութ՟ն. ճշմարիտ էականութ՟ն. բարձր՝ եւ խոնարհ. օրհնաբանեալ գոյութ՟ն. անստուէր ծագումն. ամենափայլ ճառագայթ. խոստովանեալ լոյս. անտարակոյս վստահութ՟ն. անտարտամ հանդիստ. անյեղլի կնիք. անսահմանելի տեսիլ. վկայեալ անուն. ճաշակ քաղցրութ՟ե. բաժակ բերկրութ՟ե. հաստիչ հոգւոց հաց. օտար մթութ՟եց սէր. աներկբայ խոստումն. ծածկոյթ ցանկալի. զգեստ անկապուտ. օթոց բաղձալի. զարդ փառաց. ձեռնընկալու մեծ. ապաւէն գովեալ. աննուաղելի շնորհ. անապականելի գանձ. անապական անձրեւ. արփիացնցուղ ցօղ. ամենատեղեաց դեղ. ձրի բժշկութ՟ն. կրկնաձիր առողջութ՟ն. վե-

հա

հագոյն խրախոյս · անպատիր կոչումն · համօրէն աւետիս · ստրկամեծար թագաւոր · աղքատասէր պաշտպան · մշտահարուստ տուիչ · անխափան դիմեցումն · աննահանջելի հրաման · անհամառօտ յոյս · երկար տեսողութ̅ի · անզղջական տուր · ամենաբաշխ աջ · արդարակշիռ ձեռն · անաչառատես ակն ։ Մխիթարութ̅ե ձայն · սփոփանաց լուր · բերկրութ̅ե բերումն · անուն կենդանի · նախախնամօղ մատն · անգայթագղելի ելք · անխարդախ ընթացք · կենդանարար կամք · աննենգելի խրատ · աննախանձ պատիւ · լայնական հնարք · անձկական պայման · անգտանելի հետք · աներևոյթ շաւիղ · անչափագիր պատկեր · որքանութ̅ի անսահման · աննմանական տիպ · անզուգական գութ · ողորմութ̅ի բազմազեղ · խոնարհութ̅ի տօնելի · համբոյր փրկական ։ Եւ ևս քան զայս ազդմունք վայելչականք՝ ա̅ծութ̅ե դնուիրելիք , օրհնեալ · գովեալ · բարեբանեալ · քարոզեալ · աւետարանեալ · հռչակեալ · հնչեցեալ · պատմեալ · անխաբելի կամօք աղաչեալ · և որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն՝ հոսմունք քաղցրութեան , զոր հանդերձելոցն ճառից լուսաբանեն կերպաւորու̅իք · որով զուարթ ցուցանիս 'ի փրկութ̅ին իմ՝ երանութիւն , իբր 'ի պարարտութենէ իմէքէ՝ ախորժ տենչանօք լցեալ · զի ոչ իմոյս ինչ անտոխապատուաստ փառատրիս երգով , այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝ մեծիդ փրկանաց ։

Է. Եւ քանզի առ մի հասարակ անկեցեալ յերկիր ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի, որ զամենեցունց ունի զկերպս պատահմանց՝ նշանակեալ յիւրում պատկերի, երբ կցորդ մեծգիտակական կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից ։ Առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն. առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութ̃ն. առ պարտաւորս, և արդարս. առ ինքնարգոյ բարձրոյօնն, և սխալեալ անձնադատ գտեալն. առ բարիսն, և եղեռնագործս. առ նկունս, և առ արիս. առ տորուկս և ներքոյանկեալս, առ սեպուհս և գերաշխարհիկս ։ Միջակայնոց՝ և պայազատաց. շինականաց՝ և տոհմականաց. արուաց՝ և իգաց. հրամայողաց՝ և հնազանդելոց. գեր ելոց՝ և նուաստից. մեծից՝ և փոքունց. պատուականաց՝ և ռամկաց. ձիավարժից՝ և սոսկականաց. քաղաքականաց՝ և գեղջկաց. արքայից դոռոզութ̃ց՝ 'ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց ։ Միայնացելոց՝ վերնականացն խոսակցաց. մաքրականաց՝ տիրանուէր ըզգաստութ̃ց. քահանայական՝ երջանկակրօնընտրութ̃ց. այցելութ̃ց՝ բարեզգեստից գիտողութ̃ց. աթոռակալութեանց նախագահից՝ սրբանուէր տեսողութ̃ց. որոց ոմանց աղերս աղաչանաց, և ոմանց խրատ բարեաց՝ առ դէմս աղօթից այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնարկեալ հոգւոյդ զօրութ՟՝ կարդել ինձ մաղթանս բազմադիմիս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գթութեան մեծիդ յանդիմանս լինել սովաւ հանապազ:

Է· Եւ որպէս զսոյն ընթերցողացն 'ի սրտա յատակս՝ բժշկութիւն հոգւոյ, և մաքրութ՟ի յանցանաց · թողութիւն պարտուց, և արձակուրդ մեղաց կապանաց: Եղիցի՛ բղխու՟ն արտասուաց՝ սովաւ վարժելոցն, և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին ապաշաւ ըղձից: Շնորհեսցի՛ տ՟ր և ինձ ընդ նոսին առ 'ի քէն՝ զղջու՟ն կամաց · և նոցա իմովս ձայնիւ՝ շունչս բարեհամբոյրս · նուիրեսցի՛ վասն իմ այսու մատենիւ պաղատանք նոցին, և բանիւս այսու հեծութ՟իք նոցին ընդ իմ խնկեսցին: Ընդ համբոյր ճաշակման այսր ողբերգութ՟՝ շնորհ լուսոյ քոյ մտեալ բնակեսցէ՛ · եթէ ելցեն ինձ բարեպաշտք ընծայիլ սովաւ, ընկա՛լ կենդանեօքն վ՟ս քոյ գըթած՝ և զիս ընդ նոսին · եթէ տխուրս ինչ որբանուէրս կաթուածոյ աչաց սովիմք բերիցի, եղիցի՛ 'ի քէն խընամակալ՝ և յիս անձրևեալ · եթէ գրեսցի և 'ի փրկութ՟ի կարգեսցի՝ հաղորդելոցն յայս կիրս կենաց, որպէս կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարեալ · եթէ հեծութ՟իւ ա՟ծահաճոյս 'ի ձեռն այսր բանի՝ 'ի դարանեաց ուրուք յառաջ ելեսցէ, օգտեցայց քեւ բա՛րձրեալ՝ և ես ընդ նմին · եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ՝ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմս ձայնի եւ աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցեալ: Եթէ պաղատանս բազմադիմիս ընդ իմս երկնեսցի, լիցի եւ ինձ քեւ՝ եւ վասն սորին կրկին նուէրեալ: Եթէ յարգեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ 'ի հաճութիւն, նախայլոցն ընդ իս քեւ ընծայեսցի: Եթէ 'ի տխրանաց ինչ ձանձրութեան ոք նուաղեսցի, կանգնեսցի վերստին հաստարանաւ այս հառաչանաց՝ 'ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վտանգութեան մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի: Եթէ յուսոյն ձգարան՝ սասերբն յանցանաց հատեալ կորեսցի, կցեսցի դարձեալ միւսանգամ կամօք ամենակալիդ՝ բարուք պատուհասեալ. եթէ վտանգ մահու՝ անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ, գտցէ փրկութիւն սովաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի՝ 'ի սիրտ խոցեսցի, քաղցրութեամբ քո՝ սովաւ ապրեալ ողջասցի: Եթէ անքաւելի կորստեամբ պարտեաց՝ յանդունդս ոք խորոց իջէ ընդլուղեալ, ելցէ 'ի լոյս՝ կարթիւ այս հնարից՝ քեւ պատսպարեալ. եթէ թմբրութեամբ խաբից՝ խաւարին գործոց իջէ ոք մեռանեալ, զօրասցի անդրէն վասն սոյ միայն աղաչէն՝ 'ի քեզ աղաղակելոյ: Եթէ ապաշխարանին վասն [illegible] զանձն ուրուք լիցէ. ընկալցի այսու միջնորդիւ

В. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
3609

ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատութե՟. եթէ ամայի 'ի զգուշութենէ պահողացն որք դեգերեսցին, սպասեսցէ սովիմք՝ առ 'ի նոյն դարձ նորոգողիդ: Եթէ սարսուռ դիմային ջերմանն՝ դողուք ինչ զոք խռովեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նշան՝ խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ. եթէ անօրէնութե՟ մերին՝ խորտակիչ հողմոյ՝ յանկարծ բախեսցէ ըղհաստուածս մարմնոյ՝ շինուածոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի անդրէն՝ ղեկաւ այս Թևոց 'ի քեզ պատկանեալ:

Է. Եւ արասցես լինել դեղ կենաց՝ առհնարս ցաւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց, զայս կարգեալ սահման ողջոց մատենի ակըղբնեցելոյ յանուն քո՝ բարձրեալ: Զախնեալս իմ՝ դու կառարեա. եղիցի հոգի քո խառնեալ 'ի սա. շունչ զօրութե՟ մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս. զի դու տաս զօրութե՟ վհատեալ սորոց, և ընդունիս փառս յաւիտենիցունց. ամէն:

* * *

Վերափոխին յառաջադրեալ երկին հետեւութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. Գ:

Ա. Եւ քանզի սկիզբն կոչեաց խօսել ընդ քեզ՝ որ 'ի ձեռին ունիս զշունչ կենդանութե՟ հոգւոյս բաղձանօքն , յիրաւի՝ սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ՝ յաւէտ երկնչիմ ․ վասն զի ահաւոր և անտանելի , և 'ի սահմանէ բանի փախչելի , յիշատակ անձողոպրելի՝ անաչառուքո տանելի՝ 'ի կշտամբութիւն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի ։ Նա զի՝ և չէք իսկ բժշկութե՟ բաղձալիանանդ սաստկութե՟ վիրացս անողջանալի , խայթմանց խածուածոյ մահաբերին բերանոյ ժանտեաց՝ որսողին զանձն իմ 'ի կորուստ ։ Մանաւանդ զի՝ ոչ գոյ պատասխանի , բառաւկողին , յաւուր պատերազմի ․ և ոչ բանիւ խրատանալի , և ոչ վերարկուաւ պատսպարելի , և ոչ դիմակօք կեղծաւորելի , ոչ առ երեսս բանիւք մատչելի , և ոչ կերպարանօք երբեք խաբելի ․ ոչ յօդուածովք բանից առելի ․ ոչ արագադիմանց ոտից փախչելի ․ ոչ թիկանց դարձուցանելի ․ ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի ․ ոչ բերանով ընդ հող հատանելի ․ ոչ 'ի խորս երկրի ղօղելի ։ Քանզի մերկ են քեզ ծածկեալքն , և հրապարակեալ են աներևոյթքն ․ արդարութիւն իմ նուաղեալ՝ և խայտառ ունայնացեալ ․ մեղանքն յայտնեցեալ՝ և յաւէտ առաւելեալ ․ չարիքն իմ մնացական՝ և ես կորստական ․ խրատանացն կշիռ պակասեալ՝ և անիրաւութի՟ն իմոյն զօրացեալ ․ բարեացն բերք հալեալ՝ և սըխալմունքն արձանացեալ ․ աւանդն կորուսեալ՝ և դատակնիքն այժմէն դրոշմեալ ․ մահուն մուրհակ գծեալ՝ և աւետեացն կըտակ եղծեալ: Բարերարն տխրեցեալ՝ և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թաղծեալ՝ և սատանայ խնծղուք պարեալ. վերնականն զօրքն ողբացեալ՝ և ստորնայինքն բերկրեցեալ. սպանողին մըթերք լցեալ՝ և պահողին գանձն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ՝ և սասցողին պարգև մնանեալ. հաստողին ձիր մնացեալ՝ և կորուսչին հաղըքն պահեալ. երախտիք փրկչին հեղգնեալ՝ և բելիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ՝ և գուողին ժանգ՝ ժանգիս ժամանեալ:

Բ. Եւ արդ՝ ո՛չ ապաքէն ըղձալի էր, ըստ գրոյն կանխութեան նախաձայնելոյ, ո՛չ ստեղծանելն երբէք յարգանդի՝ և ո՛չ նըկարելն 'ի յորովայնի. ո՛չ 'ի ծնունդ յառաջադայել՝ և ո՛չ 'ի լոյս կենաց հասանել. ո՛չ 'ի թիւս մարդկան գրել՝ և ո՛չ 'ի հասակ աճման ամբառնալ. ո՛չ 'ի պատկեր գեղոյ զարգարել՝ և ո՛չ բանիւ հանդերձաւորել, քան ընդ այսպիսեաց սաստկագունից և սարսափելեաց ըմբռնել պարտուց, զոր և ո՛չ վիմաց կարծրութիւն բերէ, թո՛ղ թէ մարմնոց լուծականութի:

Գ. Եւ արդ՝ տո՛ւր բարեգութ աղաչեմ զքեզ՝ տո՛ւր ինձ ողորմութի, որ զայսոսիկ դու ինքնին քեզէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր՝ ասելով, թէ տուք զայդ նուէր՝ յանուն փրկութեան ձերոյ՝ ինձ, և սուրբ եղերուք. զի զողորմութի կամիմ, և ո՛չ զպատարագ: Ահա բարձրացիր վերա-

ածին

ոլին խնկեալ այսր յիշատակաւ, որ ունիս զամենայն, և 'ի քէն է ամենայն, և քեզ փառք յամենեցունց. ամէն:

⁂

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. Ե:

ա. Եւ արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն դոյիւ ըզբաղեալ, և յիմարութեամբ պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ամենայնիւ սնեալ, և ոչ միով իւիք ճշմարտեալ: Քանզի որո՞վք դիմօք վերադարձեցելովք նշանակօք աղաւաղեցելովք՝ յանդգնեցայց ընծեյանդիման քում դատաստանիդ, ո՞վ երանագատ ահաւոր անճառ՝ անպատում հզօր ա՟ծ բոլորից: Քանզի դասեալ սատանին 'ի նոյն՝ զայլերախառնութ՟ն մերձեցեալ անձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից զիրաւունս քո միշտ զօրացեալ, և զանիրաւութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ: Որ արարեր զիս 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն վեհիդ ապաւորութեան, զանկարս օժանդակելովդ:

բ. Զարդարեցեր բանիւ. փայլեցուցեր փչմամբ. մտօք ճոխացուցեր. իմաստիւք անձեցուցեր. հանճարով հաստատեցեր. 'ի շնչականացն որոշեցեր. հոգւով իմանալեաւ խառնեցեր. իշխանականին գոյիւ պճնեցեր ։ Ծնար հայրաբար · սնուցեր դայեկապէս · տածեր ստացողապէս ։ Տնկեցեր զամբարիշտս 'ի քում գաւթի · ջրովն կենաց ոռոգեցեր · աւազանին ցօղով մաքրեցեր · կենացն վտակաւ արմատացուցեր · հացիւդ երկնայնով ջամբեցեր · ծծայլին արեամբդ արբուցեր · անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր · զայս երկրեղէն՝ 'ի քեզ համարձակեցեր · լուսովդ փառաց վերածածկեցեր · զհողանիւթ մատունս անմաքուր ձեռացս՝ 'ի քեզ մատուցեր · զմխիրս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգեցեր · ըղհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր ։ Ո՛չ կիզեր զբերանս լցեալ նանրութբ̅՝ 'ի ժառանգակիցն կարդալ զքեզ · ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս՝ 'ի քո կցորդութե̅ն · ո՛չ ստոճերացուցեր զանսխաչացս՝ 'ի քումդ ակնարկուե̅ն · ո՛չ արգելանս կապանաց՝ ընդ մահապարտացն տարագրեցեր · ո՛չ խորտակեցեր զդաստակ բազկիս , որ անմաքրապէս առ քեզ համբառնայր · ո՛չ մանրեցեր զոտս իմոյ մատանցս՝ 'ի շօշափելն զբանդ կենաց · ո՛չ պատեցին զինև մառախուղք՝ 'ի ձօնելն զքեզ՝ ահաւոր · ո՛չ փշրեցեր զսկրս ատամանցս՝ յըմբոշխնելն զքեզ՝ անսահմանելդ · ո՛չ գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետևօղս , իբր ընդ վրիպեալ ուղին խորշելի ։ Ո՛չ խայտառակեցեր 'ի հարսանարանիդ՝ զանարժանս քումդ պարերգութ՟ե · ո՛չ 'ի գձուձ համդերձին տեսիլ՝ զանօրինեալս յանդիմանեցեր · ո՛չ կապանօք ձեռացս և ոտիցս՝ յարտաքին խաւարին հալածեցեր :

Գ · Օայս ամենայն մասունս բարեաց՝ և զներելոյդ երկայնմտութ՟ի ընկալեալ 'ի քէն՝ բարերար օրհնեալ՝ և յամենայնի միշտ երկայնամիտ , փոխադրեցի զչաստակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութ՟իս , մարմնականաց և անձնականաց՝ ամենակերպ բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրպաշտութ՟եց : Զայսոսիկ քեզ՝ ա՟ծ իմ և տ՟ր ընդ այսքանեաց բարեաց փոխաբերեցի · զայս քեզ՝ լինձէն հատուցի չարիս , ըստ մոլախեան յանդիմանութ՟են առակի , մոռացեալ զիմաստութի՝ և սիրով յիմարութ՟ե : Զայսց բարեաց երախտեաց կամաւ՝ ընդունայնութ՟ե գնացիք՝ չարաչար ունայնացուցի · զայս լուսաւորութ՟ի շնորհաց անճառից՝ 'ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ մրըրկան խեղագարութ՟ե ցնդեցի : Եւ թէպէտ բազումանգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին քո այցելութ՟ե ձգել զիս առ քեզ , ո՛չ հաւանեցայ , ըստ մարգարէին՝ որ զիսրայէլէ ամբաստանութ՟ե · և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ , և ո՛չ ընդ այսմ սահմանաւ ուխտին փակեցայ , այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս , անդստին յոճն առաջին մանեայ, փշոցն մեղաց հերկեցի զանդաստան ոգւոյս՝ յորոմանն արդիւնաւորութ՟ի : Եւ

իս ելանէն առածք ճծարեալ ո՛ր մարդաբերիցն․ քանզի միայցէր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի․ դարձայ յանախորժ դառնութե պտղոյ՝ այգիս օտարացեալ․ բուռն հարի զանհաստատ հողմոյ, որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբերիմ․ ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի․ 'ի վերայ աւազոյ՝ շինուածս յիմարութե կառուցի։ Այնստարր հետովք խաբեցայ՝ կենացն անձկալեաց հաստատել․ փակեցի ինձէն զելիցն ուղեորութե, բայց կամաւ զկորստեան խորխորատն։ Խցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ բանիդ կենաց ընդունելութե․ կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած՝ առ 'ի զկենացն գեղ նկատել։ Ո՛չ ընդոստեայ 'ի թմբրութեց լքմանէ մտացս՝ 'ի պատգամ փողոյդ ահաւորութե․ ո՛չ զգաստացայ 'ի բողոք գուժի՝ հրափորձական աւուրն ընտրութեան․ ո՛չ երբէք զարթեայ 'ի նիրհմանէ քնոյն մահացուէի, որ 'ի կորուստ կառապետէ։ Ո՛չ ետու հանգիստ քոյ հոգւոյդ՝ 'ի մարմնեղէնս տաղաւարի․ ո՛չ ընդ բնութե շնչոյս խառնեցի զմաքուր շնորհաց քումդ պարգևի․ իմոյս ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին,
զհոգիս կենդանի մահացուցանել։

Դ․ Եւ զի՞նչ է ինձ սակաւս և նուաղագոյնս յօդել սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ անցեալ է ըստ քանակութե՛ և վրիպեալ ըստ բժշկութե։ Արդ՝ քո՛ է ընձեռել կեանս՝ հոգւով մեռելոյս, և անոխակալութե̃ մատչել առ այցելութե̃ն դատապարտելոյս՝ որդի ա̃յ կենդանւոյ. քեզ փառք յամենայնի. ամէն:

⁂

Վերոյին յառաջադրած կրկին հեծութեան՝ նորին հակողն, առ նոյն աղերս մաղթանաց բանի : 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ :

ԲԱՆ. Զ:

ա. Եւ արդ՝ զի՞նչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ այն սահմանս ընթացից ձայնիս հեծութե̃ն՝ լսանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս՝ խոյրանաւ բանիս արտաքս հերքել. և կամ զծանրութիւն սրտիս՝ մթերեալ ցաւոյս՝ հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութեամբ, մատնամուխ զզուանօք փսխել :

բ. Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս՝ ընդ սր̃ցն դաս, որոց լի են բերանք ն̃ց ծաղու՝ և շրթունք խնդութեանց ցնծութ̃ե, ըստ առակողին և սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ յիշատակել համայն աստանօր. Թէպէտ առ իմում թերութե̃ բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք իցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն : Տօնելի եղև մանաւէ, առ իմոց պարտուցս առաւելութիւն. պատուեցաւ և փարխեցին, առ զժնէիս ամբարշտութե̃. գովեցաւ անառակ որդին, առ անդարձիս ուխտազան-

ցու

ցութե̅ի • յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն ամառեայ, առ անշնորհութիւն ապախտաւորիս • օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատապարտեալն է անհաւատից • պատուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշխարողաց ։ Ո՛չ պակաս քան ըղփարաւոն՝ զատեղծուած սրտիւ իմ խոստացուցի • ըստ օրինակի խռովութե̃ մրրկաց ծովու ծփեցայ • ո՛չ այնքան սարսեցի և պատկառեցի 'ի սաստկութէ̃ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն՝ յեզերացն ։ Ընդ թիւս չափուց կշռուե̃ առ իմս գործոց՝ և աւազոյն կոյտ սահմանեցաւ • պակասեաց անբաւելոյն չիք, առ համբարս իմոյս անօրէնութե̃ց ։

Զ • Օի թէպէտ և յոյժ բազում են մանունքն՝ 'ի յափունս ջրոյն համահաւաքեալք, այլ՝ ուրոյնք և առանձնականք 'ի ծննդոց աճելութէ̃ • իսկ մեղանք իմոյս յանցանաց՝ անթիւք, զորս անհնար է առնուլ 'ի միտ ։ Ոմն՝ և ծնունդք իւր • ոմն՝ և շառաւիղք իւր • ոմն՝ և բիծք իւր • ոմն՝ և արկածք իւր • ոմն՝ և փուշք իւր • ոմն՝ և արմատք իւր • ոմն՝ և հաստուածք իւր • ոմն՝ և պտուղք իւր • ոմն՝ և նշխարք իւր • ոմն՝ և ճուղք իւր • ոմն՝ և ոստք իւր • ոմն՝ և արմկունք իւր • ոմն՝ և ճիրանք իւր • ոմն՝ և մատունք իւր • ոմն՝ և խլրտմունք իւր • ոմն՝ և զօրութիւնք իւր • ոմն՝ և ազդմունք իւր • ոմն՝ և նշմարանք իւր • ոմն՝ և տիպք իւր • ոմն՝ և ծնացուածք իւր • ոմն՝ և ստուերք իւր • ոմն՝ և մթութիւնք իւր · ոմն՝ և յարձակմունք իւր · ոմն՝ և հնարք իւր · ոմն՝ և պատիրք իւր · ոմն՝ և գխամունք իւր · ոմն՝ և գխմեցմունք իւր · ոմն՝ և չափք իւր · ոմն՝ և խորք իւր · ոմն՝ և գարշութիւնք իւր · ոմն՝ և կայծակունք իւր · ոմն՝ և կիրք իւր · ոմն՝ և մթերք իւր · ոմն՝ և գանձք իւր · ոմն՝ և ցնցուղք իւր · ոմն՝ և աղբերք իւր · ոմն՝ և գիւղք իւր · ոմն՝ և շանթք իւր · ոմն՝ և հրդեհմունք իւր · ոմն՝ և պատկառանք իւր · ոմն՝ և վէճք իւր · ոմն՝ և անդունդք իւր · ոմն՝ և բորբոքմունք իւր · ոմն՝ և աղջութիւնք իւր · ոմն՝ և ամպրոպք իւր · ոմն՝ և կայլակք իւր · ոմն՝ և հոսմունք իւր · ոմն՝ և հեղեղք իւր · ոմն՝ և սառնամանիք իւր · ոմն՝ և դրունք իւր · ոմն՝ և շաւիղք իւր ։ Հնոյն՝ և տապ իւր · հրատն՝ և գոլորշիք իւր · հալոցն ճարպին՝ և ձենձերմունք իւր · օշինդրն՝ և դառնուն իւր · կործանիչն՝ և հնազանդեալք իւր · բռնաւորն՝ և յեղուզակք իւր · դոռոզն՝ և ապառաժք իւր · աւազակապետն՝ և գումարտակք իւր · գազանն՝ և կորիւնք իւր · խածանողն՝ և ծակոտուածք իւր · ապականագործն՝ և նմանիք իւր ։

Է · Արդ՝ այսոքիկ պէսք են գլխաւորութեանց՝ ապականողաց ոգւոց համայնից, դասեալք ընդ ինքեամբք նուաճունք մասանց՝ իւրաքանչիւրոք 'ի սոցանէ բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց · իսկ զհամայնիցս թիւ՝ նա միայն զօրէ իմանալ, որ զառ 'ի մէնջ չէութիւն դրեալ՝ իւր դէու-

թի

ըթի գործոց տեսանէ ։ Եւ արդ՝ եթէ որք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութե̄ վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և 'ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի, և կամ զընաւ խոկումն սահմանեցի, որ 'ի մերս բնութե̄ պտուտկի ազգի ազգի վթպականութե. այլ 'ի բիւրուցն արգասեաց չարեաց՝ չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք, թէպէտ և ոչ բաւանդակապէս ։

* * *

Վերափոխին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ ։

ԲԱՆ. Է։

ա. Եւ զի մի զփրկութեան վստահութիւն իսպառ կարեցից, և առաջին եղեալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք, զոր վերադրեալքդ սահմանեցին՝ զորքանութիւն պատկերին ձևոյ եդեալ ահարկուս ։ Ցուցից առ սմին բազմաբոյլ բռնութեան մարտակցացդ՝ զօրեղ ախոյեանս ա̄ծականս՝ ամենայաղթօղս և անպարտ պարտէլիս, թէ և կսկծելիս կիրս՝ և դժուարակուլ պտուղս ծառոց անհամանելեաց, և անկոխ ճանապարհաց երկք և տաժանմունք: Քանզի զայն իմ՛ գունդս չարութե՟ բանսարկուին զօրաց, սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ երբ զճճիս զեռունս բազմոտանիս խխայթից երկրի տեսար խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ, կամ՛ դոյզն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ· և դոյզն մի հառաչումն սրտի հեծութե՟՝ ելեալ 'ի յոգւոյ, երբ շնչումն հարաւային ջերմութե՟ խառնեալ յարևու, զսառնամանեաց սաստկութ՟ն հալէ· քանզի ըստ միումդ նմանութե՟՝ հեշտածինք են· և ըստ միւսումդ դիմադրութե՟՝ դիւրամեռք:

Ե. ԱՅԼ ես ոչ երբէք կասեցից դատել զդատապարտեալս՝ բանից կսկծմամբ· պարտել զպարտաւորեալս՝ երբ զվնասակար անփրկանաւոր անհամոզելի· վասն զի զոմանս սատակեալ 'ի յիմոց նետղչացն, ոմանց զօրութիւն տամ՛ կենդանանալ՝ առ հոգւոյս կորուստ: Տունկս դառնոստեան, որ զգարշութ՟ն անառակ վարուց ծաղկեցի· բարունակս ապականաբեր և մահողկուզեան, որ զկորստեան գինին երինեցի· քանանու զաւակս՝ և ոչ յուդայի· ըստ ասից մեծին դանիէլի· որդիս դեհենին, և ոչ արքայութե՟· ժառանգս դժոխոց, և ոչ փառացն փափաքելեաց· նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան: Ապերախտս առ երախտաւորդ· ապաշնորհս առ բազմապարգեւդ · միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ · դառնացուցիչս քաղցրութեան բարերարիդ ։ Ծառայս չար եւ վատ, ըստ տ̃րունեան յանդիմանութ̃են · իմաստուն զչարիս գործել, ըստ եսայեայ նախասացութ̃են · ժիրս առ ժանդագործութիւնս զազրութեան ։ Փոյթս առ՚ի բարկացուցանել զտ̃րն · մշտաշարժս առ գիւտս սատանայականս · Հանապազորդեան վիշտս ստացողին ։ Թոյլս առ բարեացն Թախիծս · Ծոյլս առ երանութիւնն ընտրութեան · Դանդաղս առ դիմումնս խոստացելոյն · անարիս առ կարիս օժտանեացն եւ օգտակարացն · պաշտօնեայս տիրադրուժ երախտամոռաց ։

է̄ · Վայ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ՝ բարկացուցի · վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութ̃են ձիր մոռացայ ։ Վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց, որ ոչ գոյ հատուցանել ։ Վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ՝ դառնալ առ հանգստարանն · վայ ճնաստակարիս տ̃րունեան պարտուցն, որ չիք հնար յանդիման լինել հզօրին ։ Վայ եղեգնախուրձ կիզանողականս նիւթոյ, որ տոչորելոց եմ՚ի գեհենին · վայ ինձ առ այս յիշատակ, զի նետք բարկութ̃են տ̃յ այրեցելովք են գործեալ · վայ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի զծածկեցելոցն յայտնութ̃ե հանդէս ։ Վայ ամբարշտիս, զի միշտ անդադար սատայինս չարեաց կկեցի · վայ զմարմինս պարարողի՝ կերակուր որդանցն անմահից, կատաղացն թունաւորաց զեռնոց համբերեցից · վայ ինձ առ արբումն մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տուժեցայց · վայ ինձ առ ելս անարժան հոգւոյս՝ յելանելի մարմնոյս, Երբ դատաւորին ձայնարկէ յանդիմանեցայց · վայ ինձ առ նուաղութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն · վայ ինձ առ ձեռս տագնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի · վայ ինձ առ ձայնին ահաւորութեն՝ դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին վճռաւ կնքելոյն, թէ ոչ գիտեմ զքեզ:

* * *

Վերափոխին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. Ը:

ա. Եւ արդ՝ զինչ գործեսցես՝ անձն իմ կորուսեալ, կամ ուր թաքիցես, կամ զիարդ ապրեսցիս, կամ որպէս ելցես 'ի մեղաց բանդէ: Քանզի բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմունքն · սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն · անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն · հզօր ատեանն · և անաչառ բեմն · քամահելի ապաւինալիքն, և անողորմ հատուցմունքն · ահարկու հրամանն ; և մերկապարանոց յանդիմանութիւնքն ·

թիւնքն · հրեղէն են դեւքն , և անանցանելի են վտանգքն · թանձրամած խաւարն , և արտաքոյ այցելութեան՝ մառախուղն · ապականութեան է դուքն , և մշտնջենաւոր է տագնապն · ամենադրաւ տարտարոսն , և անզերծ սատանամանիքն : Եւ որդ՝ արդարև քեզ են գանձեալ դառնինքս այսոքիկ դժնդակք , և տարժանելի օթևանք՝ անըմբերբելեացդ պատուհասից , ո՜վ անարժան անձն իմ՝ մեղաւոր՝ չարագործ՝ պոռնիկ՝ բազմաբիծ , և սահման անդատաստանի բնաւին անմաքրութեան : Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեսցես՝ թիւրեալդ 'ի յուղղութեանց , և զառածեալդ 'ի մաքրութեանց · տարագրեալդ յարդարութեանց , և 'ի կարգաց պարկեշտութեանց · ունայնդ 'ի լիութեանց՝ հոգեպարգև հարստութեանց · նախանձարկու բարերարին , և ամենակալ թագաւորին :

Գ · Եւ քանզի կառուցեր քեզ անել արգելան՝ և անփախչելի որոգայթ , խոստովանեա՛լ քեզէն զանբժշկականդ քո վէր , և զանօրինակդ հարուած , վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբուժելիդ բեկութիւն , ո՜վ չարդ 'ի բարեաց · ո՜վ դառնութիւնդ 'ի քաղցրութեանց · ո՜վ խաւարդ 'ի լուսազարդից · ո՜վ կապտեալդ 'ի պճնելոց · ո՜վ դսրովեալդ 'ի գովելոց · ո՜վ անբարիշտդ 'ի բարեպաշտից · ո՜վ չնչականդ 'ի բանականաց · ո՜վ անմիտդ 'ի մտաւորաց · ո՜վ անհանճարդ յիմաստնոց · ո՜վ անմաքուրդ յընտրելոց · ո՜վ մահացուդ 'ի կեն_

·դանեաց · ով խոնհերականդ ՝ի սրբոց · ով արբշիռդ ՝ի պարկեշտից · ով կեղծաւորդ յարդարոց · ով անպիտանդ ՝ի պիտանեաց · ով անարգդ ՝ի փառաւորաց · ով նուաղդ յառաւելուե՟ց · ով գերիդ ՝ի գերագունից · ով նուաստագոյնդ ՝ի վեհից · ով աղքատդ յընչեղաց · ով անարժանդ ՝ի փրկութե՟ց · ով անանկդ ՝ի բարձրութե՟ց , և ՝ի հոգևոր հարստութեանց · և հատուածեալդ յօրհնելոց ։

* * *

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
՝Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ · Թ ։

ա · Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բանբասանս շարագրեցից ՝ի կատակ մաղթանաց մատենի այսր ողբերգութե՟ , ով անձն իմ թշուառ ամենապատկառ , և առ պատասխանիս բանից անբարբառ , անպիտանի ոգի և ս՟րցն մասնակցութեան ։ Զի եթէ զլիճ մի ծովուց՝ ՝ի յօրակութի դեղոյ յեղեղեցից , և զդաշտս տափարակօք բազմօք սահմանեալ՝ ՝ի տարածումն լայնութե՟ քարտէնի չափեցից , և զղուրակս յոքունց անտառաւաց՝ շամբից եղեգանց՝ ՝ի հատուածս գոյութե՟ գրչաց կազմեցից , և ոչ զթի՛ւ մի ՝ի բարդելոցն անօրէնութե՟ց՝ զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել ։ Նա զի՛ թէ զմայրս լիբանանու՝ ՝ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ՝ զլեառն արարատեան՝ 'ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան՝ միջնորդ կայուցից . ոչ հաւասարէ այնր հարթութեամբ համազուգակցել:

է̅ : Ո՛աւս ամբարձուղէշ՝ աստուծարաստեղըն՝ տերևալից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր տ̃րն գօսացոյց . քանզի սաղարթօք վարսից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպից՝ իբր պատկառ իմիք պաճուճեալ, բացականացն դոս բաղձալի . իսկ եթէ մերձեսցի անկօղն՝ խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց, և դարշելի 'ի գեղեցկութ̃եց . ծաղր տեսողաց, և նշաւակութիք նախատողաց: Զի եթէ ապաժամման՝ յանզգոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղաբերոյս անկենդան, որ դոյզն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անիծիւք . և կամ՝ երկիր ոռոգեալ ցօղով, և ոչ բազմապատիկ՝ զաւանդս արդասեաց երկրագործուե̃՝ տածողացն մատուցանէ, լքեալ մնայանի . իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իւրում պտղաւոր, իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առակիդ: Վասն զի զհամայնն ընկալար 'ի քեզ՝ անպակաս յառաւելութ̃եց, սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց նորին՝ զբերս գործոց նանրութեանց, և զգիւտս նորոգս՝ ատելիս և անախորժելիս ըստ հաստողին զքեզ այ՟ :

դ. Եւ վասն զի եդի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան, վիմօք ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընտել գազան վայրենի, անողորմաբար զքեզ քարկոծել : Որ թէպէտ և ոչ պատահիմ անոճանիլ արդար . սակայն յառաջնումն պատասխանւոյ՝ իբր ընդ ոսոխի ումեմն՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստութեան բանի . և զայսոցիկ մտաց խորհրդոցս գաղանեաց՝ իբր զգլխաւորեալ յանցաւորութեան չարութեան գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ ա՟ծ իմ և տ՟ր : Զի որով չափով չափեցից զանձինս սոդոմանք, 'ի քոյդ անհունական գթութեանց՝ այսրէն չափեցայց . ընկալեալ զշնորհդ յաճախագոյնս՝ ընդ մեծագունիցս պարտեաց : Եւ որքան վերացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին՝ և իմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ՝ բարեհաշտեալ լուսաւորեսցին . և 'ի պարտուցն առաւելութեան, նոյնքան փոխատուիդ առատատրութեան՝ բարեբանեալ միշտ պսակեսցի , ըստ խնկաւորդ քում առակի : Զի քո է փըրկութիւն . և 'ի քէն է քաւութիւն . և աջով քո՝ նորոգութիւն . և մատամբ քո զօրեղութիւն . և 'ի հրամանաց քոց՝ արդարութիւն . և յողորմութեանց քոց՝ ազատութիւն . և յերեսաց քոց՝ լուսաւորութիւն . և 'ի դիմաց քոց՝ զուարճութիւն . և հոգւովդ քո՝ բարութիւն .

և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութիւն . և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութիւն . և դու տաս մխիթարութիւն , և մոռացուցանես զվհատութիւն . և բառնաս զխաւար վշտաց , և զհեծութիւն ողբոց՝ 'ի ծաղր փոխես : Եւ քեզ վայել է օրհնութիւն գովութբ̅ հանդերձ՝ յերկինս , և յազգս հարցն՝ և 'ի ծննդս նոցա . և յաւիտենից յաւիտեանս . ամէն :

⁂

Վերափին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հակողի , առ նոյն աղերս ծաղկանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ :

ԲԱՆ. Ժ:

ա̅ . Եւ արդ՝ քանզի միապէս մատնէ կորստեան՝ և զողջունն ուժգնապէս , և մեղանչելն մոլեգնաբար . զի թէև տարացեղ իմն են 'ի միմեանց այլայլութիւք նմանութեցն , սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ , զմի և զնոյն վհատութե̅ ծննդս արտադրեն : Զի մինն՝ զհզօրին ձեռն՝ իբր ապիկար՝ թերահաւատէ . իսկ միւսն՝ ըստ նմանութե̅ քառոտանեաց պաճարեղինաց՝ յանդգնայս եղեալ , զյուսոյն առասան խըզէ . վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ . իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութե̅ լափլիզող գժոխորովայն գաղանի , իբր կերակրով՝ արբեալք պարարի :

բ̅ . Եւ արդ՝ իբր զգանեալ բաղմահար-

ուա

ուածեան հեծանաւ, և յափն մահու ժամանեալ՝ դոյզն ինչ դարձուածն շնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ, կազդուրեցայց՝ պատսպարեցայց՝ կանգնեցայց՝ յարեայց յանկենդանական կորստենէ, օժանդակեալ քո ձեռամբն՝ որ գթածն է յամենայնի. 'ի բարերար յերկնաւոր հօրէն փրկութե՟ և բժշկութե՟ պտուղ ընձեռեալ լինձ մեղուցելոյս՝ ախտացելոյս՝ և մահացելոյս: Եւ սկզբնաւոր ողբերգութե՟ այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն 'ի նախնեացն՝ ալքիմբք զինեալ, փոխեցաւ խնկոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարութե՟ն գեղ ընկալեալ, ապաշաւանաց թոշակաւն՝ զդրաւականն անեղծութեան աստէն ժառանգեաց: 'Ի վեր քան զորոց՝ առաքեալ՝ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ձոխութե՟ փարթամացան: Իսկ զխրախոյս տ՟րունի պաշտելի բանին՝ յեղեալ առ սմին, զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ՝ որ հաւատայն: Է՛ զի՝ և զչափն ընտրականացն բարեմասնութե՟ ա՟յ հաճելեացն՝ զննեալ աստանօր, զայս պատկեր բանի ընկալայք նախնի գահերէց, առ 'ի սրբութե՟ցն մուտ՝ ամլիմք հանդերձել. առանց որոյ և ոչ տ՟րն փառաց՝ զիւրան առ մեզ հրաշագործեաց զօրութ՟իս, եթէ ոչ նախ՝ լծակից խնդրեաց բարերարութեանն իւրոյ զհաւատսն մեր. ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւականութե՝ առընթեր գոլով այ ․ քանզի հաւատք քո կեցուցին զքեզ, օրհնաբանեալն այ բերան վկայեաց ։ Քանզի արդարև սեռն տեսութն, և կատարեալ իմաստութն, և առ ած ընտանութն, և բարձրելոյն ծանօթութն հաւատոց մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ յարաձըգեալ միայ անվթար և անփակելի, պատուականց գոլով սիրոյ և յուսոյ ։ Զի եթէ փոքու սերմանի գոյի՝ հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք՝ զլերանց մեծութն փոխէ զօրեղապէս ՚ի սիրտս ծովու, ապա յիրաւի ընկալաք զայն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ ած, որ զապառնին և զծածկեալսն՝ առանց երկբայութե ՚ի հոգւոյն այս տեսանէ, երրորդութեն փառաւորելի անուամբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ ։ Զի թէ՝ և զերին հատուածս առանձնաւորականս՝ ՚ի մի և ՚ի նոյն խորհուրդ գիտեցես, յաւէտ մեծացիս նոքօք ՚ի յած ․ քանզի՝ թէ հաւատաս ՚ի նա, և սիրես ․ որով և յուսաս աներևութից պարգևաց նորին ։ Նմա փառք յաւիտեանս ․ ամէն ։

Մերոփէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հօհնողի , առ նոյն աղերս ծաղկանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս ։

ԲԱՆ․ ԺԱ։

Ա․ Լու արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն 'ի բարեաց ․ նայեցեալ խորհրդով մտացս 'ի սկզբնաւորն իմ եղելութիւն՝ 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յոյժ քեզ՝ առնել զոր կամի ։ Քանզի հաւատացի, վասն որոյ և խօսեցայ խրատեալ պօղոսիւ, ուսեալ 'ի դաւթայ , թէ և արդ կենդանի մաղթանք նորա այց ինձ արասցէ ․ որպէս հաւատովք ճանաչել զնա , և զզօրութիւն յարութեան նորա , ըստ առաքելոյ , և զհաղորդութիւն չարչարանաց նորա , և որ զկնի բերին ասացեալքն ։ Կցորդ է սմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս և 'ի նորոգս այս փոխադրութեան , որ 'ի մեղացն 'ի քաւութիւն , և 'ի չարագործութենէ յարդարութիւն , և յանմեղութեան 'ի սրբութիւն , և յանքաւելեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութեան , և 'ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ազատութիւն ։ Քանզի զիա՛րդ ոչ արդեօք չքնաղ քան զբան՝ և 'ի մթութենէ երկնանութեան խաւարի զատեալ՝ և աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրոյ մեղաւոքի , որ ընդ մարմնապէս ծննդեանն՝ առ նմին հեծէ հոգեպէս ։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութեան գերագունից կայից՝ ստորասուզեալ ծանրութբ̃ յանդընդային վհին խորխորատ գբոյն կործանման, նոքապէս մեղօքն անջրպետօք, ունի և նշխար նշուլից՝ փրկութե̃ն կենաց հզաւոր, իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի միտս և յոգի․ որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի՝ 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոցն ։ Ուստի և մեղուցելոյն խապառ թաղծելոյ, և ակնկալութե̃ն բարւոյն բարձելոյ, և համարձակութե̃ն շնորհին լքելոյ, յուսալ վերստին անդրէն միւսանգամ՝ նախապարգևից փառազարդութե̃ց դարձեալ հասանել․ քանզի և յա̃ծուստ անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ ո̃գիս․ վասն զի ա՛ս զառէողին զօրութի̃՝ ամենահնար աւետարանէ ։ Յո՛ր խունկ հաճութե̃ մեծապէս հաստատի ա̃ծ, քան յամենայն բուրումն անուշից, և քան 'ի խառնեալն երբեմն ապացմամբ՝ 'ի սպաս խորանին, որ է կերպարան անձանց խոնարհից զիջեալ բեկութեամբ՝ առ 'ի միութի̃ նոյն նմանութե̃ ։ Ըստ որում՝ հարցեալ փրկչին ամենից՝ ցոմանս աշխատացեալս աւետարանօք, հաւատայ.ք ասելով առ այդ, թէ կարօղ ե՞ առնել ձեզ զայդ․ ո՛չ պարգևեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն զբ̃րաւ ընկալաւ ։ Քանզի զի՞նչ քան զմեռելութի̃ քառօրեայն դիոյ՝ առ կենդանու-

թե̃

թէ մեզ անյուսագոյն, առ որ կանանցն ժամանելոց 'ի յատս արարչին՝ հաւատոցն հանդերձանօք, անյապաղաբար զփառացն ա̃յ տեսին զհանդէս՝ 'ի յեղբօրն կենդանութիւն :

բ̃. Իսկ աստատին անկապուտ շնորհին մնացելոյ զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք : Նախ՝ ենովք. զկնի ահարոն. յետ նոցա դաւիթ. դարձեալ և պետրոս. ընդ որս և փոքրն եղիազար, որ 'ի մեծէն ա̃յ ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ : Աւելորդ է առ այս և բանն առակի անառակ որդւոյն. թողում զպոռնիկն՝ որ 'ի տ̃նէ գովեցաւ. և զմաքսաւորն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ. և զաւազակն երջանիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն՝ հաւատովքն պսակեցաւ. և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղորդեալսն սոյնժամն մահու արարչին. առ որս և գլխաւորն ընտրելոց պօղոս՝ որ երբեմն նախնին էր անօրինաց : Յորոց ամենք ծանօթութ̃բ օրինին գլորեալք, անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցութ̃բ՝ քան զնախակրօնիցն առաւելութիւն : Իսկ որ նախ քան զօրինակին տուչուե̃ զաւանդն պահեալ հայրենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնահօրն դաւանուե̃, որ և զնախնւոյն պարտախ՝ ինքեան վարկուցեալ, զնորայն՝ իւրովքն տուժեաց կրից սաժանմանք. ոչ քաւեցաւ միայն ծանկեալ 'ի յերկրի, այլ չարչարելեաւն մարմնով՝ բանականաց բնութեան կենաց

կա

կարապետ՝ յաղթող զօրապետս բանութե՟ մահու փոխեցաւ ։ Իսկ ոմանք 'ի բուսոյ ահաս հասակին չարութե՟ն յերկարաձգեալ, 'ի կատարեալ ոխս ժամանակին , ոչ 'ի բարձրութե՟ն կայից հոսեցան , քան թէ 'ի ստորնականաց թշուառութե՟ց դըժնէից կենացս՝ 'ի կամարն երկնից համբարձան ։ Եւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն դարձ , որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութե՟ , և պատկերն արքունի՝ 'ի պատիճ կերպիս մերոյ՝ նկարեալ արքունական քանդակուածով , անկորուստ և անփոխադիր և յաղթող դաւաճանութե՟ ըղ մերս ենթադրեալ բնութե՟ , այս առաւել յուսալի է այժմ երկապարանոց լուսաւորութե՟ անքօղ և անմէրձարկու՝ տերամբ քնիճ ուխտեալ․ որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տ՟րունի , ըստ մարգարէին ձայնի , ուխտ խաղաղութե՟ և կնիք հաստատութե՟՝ առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշտընջենաւոր բարեխօս ։ Այս ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտադունի , և անփոխադրելի սահմանի , և արարչաւանդ պայմանի . համբուրեմ հաւատոյ շրթամբք զպատկեր բանիս , և ակն ունիմ փառացն շնորհի․ քանզի արդարև յարդարացուցանելն զմեզ ա՟յ՝ ոչ ոք զօրէ դատապարտ առնել ըստ առաքելական բանին սահմանի ։

Ճ․ Իմ և յայս անստուերագիր վստահութե՟

թէ ապաստան, կամ կործանեալս՝ կանգուն. թշուառացեալս՝ յաղթօղ. վրիպեալս՝ 'ի դարձն կենդանական. ամենաթըշուառ չարագործս՝ 'ի յոյսն. մահու մատնեցեալս՝ 'ի կեանսն. ընդ ապականութե̄ վաճառեալս՝ 'ի ձիրն. դժոխային գործովք դրաւեալս՝ 'ի լոյսն. ստորնասէր անառակենցաղս՝ յերկինս. կրկին դայթակղեալս՝ 'ի վերստին փրկութիւնն. մեղօք կապեցեալս՝ 'ի [illegible] խոստումն. անբժշկական վէրօք վարանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ. տատամբեալս վայրագութե̄՝ 'ի սանձն հանդարտութե̄. սրացեալս վարատականս՝ 'ի կոչումն. [illegible] դըժընդակս՝ 'ի հեզութիւնն. ընդդիմաբանս լուտացօղս՝ 'ի ներումն: 'Ի Քս̄ Յս̄, եւ 'ի հայր նորին հզօր եւ ահաւոր, յանուն եւ 'ի կամս բարերարութե̄ հոգւոյն ճշմարտի. օրհնաբանեալ խնկութե̄ն՝ եւ մի ա̄ծութե̄ն՝ զօրութե̄ եւ արքայութե̄, մեծութիւն եւ փառք՝ յաւիտեանս. ամէն:

* * *

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հանճարոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանին: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ:

ԲԱՆ. ԺԲ:

Ա. Եւ արդ՝ քանզի յաւէտ յառաջնում ըղձմամբն՝ յուսահատութեան քանդէ լքայ, եւ տարակուսանաց հեծութեան՝ 'ի մահ ձայնեցայ, աստանօր 'ի յուսոյն կեր-

պա

պարան փոխեալ՝ յարգահատել համարձակեցայց, զերրորդութ՟ին ս՟բ կարդալով յօգնականութ՟ի ինձ մեղաւորիս: Որ և անդստին իսկ յորհնաբանելն և 'ի դաւանելն զկենդանարարն բնաւից ա՟ծ, իսկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութ՟ե անուան շնորհաձիրն բարերարի, մահացելոյս է կենդանութ՟ի, ըստ մարգարէին նախաձայնութ՟ե, թէ որ կարդայ զանուն տ՟ն, ամ կեցցէ: Իսկ ես ո՛չ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութ՟ե նորին. ո՛չ եթէ վ՟ն պարգևաց ն՟ր մատուցեալ յողոք դեգերիմ, այլ իբր զկենդանութ՟ի իսկապէս, և զշնչոյ տուրևառութ՟ե հաւատամ, առանց որոյ ո՛չ է շարժողութ՟ի կամ ընթացութ՟ի. զի ո՛չ այնքան յուսոյն հանգուցիմ, որքան սիրոյն կապանօք բերիմ: Ո՛չ 'ի տուրսն, այլ 'ի տուողն յուսէս կարօտիմ. ո՛չ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի. ո՛չ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ. ո՛չ վայելչոցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք՝ յերեկամանց սաստի կախանիմ. ո՛չ զհանգիստն խնդրեմ, այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ. ո՛չ հարսնարանին խնձոյիւք, այլ փեսային անձկութ՟բ մաշիմ: 'Ի ձեռն որոյ զօրութ՟ե՝ վստահապէս անկեալութ՟բ՝ վերադրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստանեալ, ո՛չ քաւութ՟ե միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութ՟ե

և 'ի գթութն̃ և յերկնիցն ժառանգութն̃ ,
Թէպէտ և յոյժ եմ՛ տարագրելի ։

է․ Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչեցելոց դիմաց կորացեալ, զմիջնորդ ազդման կափուցմանց երկակի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շարժութն̃, նորոգեցից 'ի յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանց՝ աղիողորմ հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ ։

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց Գիշերայնոյ ։

ը․ Ընկալ քաղցրութբ̃՝ ո՛վ ա̃մ հզօր՝ զդառնացողիս զաղաչանս․ մատի՛ր գթութեամբ՝ առ պատկառեալս դիմօք․ փարատեա՛ ամենապարգև , զամօթական տխրութն̃ս․ բարձ յինէն՝ ողորմած , զանբերելի ծանրութն̃ս․ անջրպետեա՛ հնարաւոր , զմահացու կրթութն̃ս․ աւարեա՛ մինչ յաղթօղ , զխաբողին հաճութն̃ս․ բացադրեա՛ վերնային, զմոլելոյն մառախուղ․ կնքեա՛ կենցուցիչ , զկորուսչին ընթացմունս․ ցրուեա՛ ծածկատես , զըմբռնողին չար գամունս․ խորտակեա՛ անքննին , զմարտողին դիմեցմունս ։ Տեառնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս․ պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս․ գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս․ կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս․ ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի․ մաքրեսցես 'ի հաղբից՝

բից՝ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կայուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ՝ դիւային դասու: Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյն նիրհման 'ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ աստուածածնին՝ և ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութեանց՝ զգայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ՝ անխախտելի պաշտպանեալ: Եւ ընթափեալ վերստին 'ի նինջմանէ ծանրութենէ՝ ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

⁂

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ։

ԲԱՆ․ ԺԳ ։

Ա․ Ո՜վ բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի՝ ողորմութե̅դ շնորհի, որոյ անունդ իսկ մեծիդ՝ գթութի̅ և զընտանութի̅ աւետարանէ, քաղցր դժնէից և անգոհացողաց ։ Ընդ քեզ և որդիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև զքոյդ, անժամանակ տ̅րութեամբ ահեղ՝ ընդ արարչութե̅դ քում բարձրացեալ ։ Եւ հոգիդ ս̅բ ճշմարտութեան՝ բղխեալ առ 'ի քէն անսպառութի̅, կատարեալ իսկութի̅ դոյի, էութի̅ մշտնջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից որդւոյ քոյ տ̅րութի̅ ։ Երրեակ անձնաւորութի̅՝ համայն անքննելին, տրոհեալ 'ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ․ իսկ միաւորեալ համագոյութի̅՝ նոյնագոյ բնութի̅ տիրապէս՝ անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութի̅․ ոչ երիցութի̅ ումեմն 'ի յումեմն, և ոչ քթթել մի ական առ նուազութիւն միոյն ժամանեալ, քան թէ պատճառ ոլորոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութի̅, միով պսակաւ սրբասացութե̅՝ անսկզբնաբար մեծաբանեալ ։ Քանզի արդարև վերաձայնեալս այս խոստովանութի̅՝ երեքփառա-

ւորեանդ

տրեանդ դաւանութե̃՝ զվէմն հաւատոյ պետրոսի երանեաց. իսկ զդատապարտելոյս անձն մեղօք՝ բարեհրաման քո ակնարկութ̃, ո՛վ խնդրողդ գերելոյս՝ հրաշանորոգ արդարացուսցէ՛: Քանզի թէպէտ և քո՛ իցեն պարգևք՝ և քո՛ ողորմութիւնք, այլ ոչ՝ ի պարգևսն ես այնքան հռչակեալ, որքան յողորմութե̃ն. զի երկրորդն՝ զքոյդ յաճախէ զփառս, իսկ առաջինն՝ զձիրնաւորացն յայտնէ զգործս. զի պարգևք՝ վաստակոցն են փոխատրութի̃ք, իսկ ողորմութի̃ք՝ մեղուցելոյս բարերարութի̃ք:

է̃. Եւ արդ՝ մի՛ զօրասցին մարդկայինս գործք առաջի քոյոյդ շնորհաց՝ Ա̃Ծ գըթութեանց, թէ և անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց՝ բնաւորականս հասմանց, այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայնմտութե̃, նուաղ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց: Քանզի և որ մաքրութ̃ն պերճանային օրինականացն վստահութի̃ք, ՚ի լուսաւորել քոյդ արդարութե̃ գուշակ ներկայիս, ամենանուաղ անձկութ̃բ լքեալ հրէութի̃ն՝ յետնեալ, և յաւէտ ընդ տարադրական ողորմելոցն, առաւել նոքա գտան կարօտեալ մարդասիրութե̃: Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ բա՛րերար, լո՛ւր պաղատանաց գոչման հեծութե̃ս՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա՛, կեցո՛, և մարդասիրեա՛: Զի քո է երկայնմտութի̃, քաղցրութի̃, փրկութի̃, քաւութի̃, և փառք յամենեցունց՝ յաւիտեանց ազգաց. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա̄յ։

ԲԱՆ. ԺԴ։

Ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ՝ արքայ երկնաւոր՝ գովեալդ անպատում, որդի անճառ մեծիդ Ա̄յ. խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ՝ կենաց տուողն, նորոգ մերձեցեալ կրկին տառանօք ՚ի հառաչման նուաղ ձայնի վիրաւորելոյս։

Բ. Ոչ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ ՚ի ձեռն աւազակացն որոյ խոստովանեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի անկռինչ էր. ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց, քանզի մահապարտ էր. ոչ ՚ի պատգամբանից միջնորդի՝ զողորմածիդ կամս հաճեցոյց, զի անայցելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկոճածով ձորձոց՝ զգթածիդ զսիրտ ճմլեցոյց, վ̄ն զի անյոյս էր. նա և ոչ ծնգովքն հաստատութե̄՝ իբր գարշապարաւ ոտին վարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազ է ՚ի մեռելուէ։ Մանաւանդ զի 'ի քոյոց խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութ՟բ, և փառօք քո լուսազարդեալ, ո՛չ միայն զի ո՛չ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից, այլ ստահակեալ ապստամբութ՟բ' յիւր թշնամեացն թի՛ւ յաւելաւ. ընդնոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց ատելեացն քոց։

Դ. Իսկ դու' բա՛զմապարգև, բա՛րերար, անոխակալ, ամենակեցոյց, ո՛չ միայն զի ո՛չ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ո՛չ բանի՛ւ յանդիմանեցեր. ո՛չ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ' զծայրագոյն ցուցեր ըզխնամս։ Ո՛չ քահանայապետս ահարովնեան տկար օրինին' զօրաւ ու մահուն պաշտօն' դատապարտիչն անիծիւք և բըռնաշէր քարանցն ձգմամբ' 'ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեար. և ո՛չ որպէս ղևտականն կարապետային անկատարագործ' 'ի յերկուցն միջի բաժանեալ խըռբոց' հնոյն լրումն' և նորոյս սկիզբն, ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիմացեալ' զվիրաւորեալն տեսեր զվտանգ, զի մի՛ սատակիչն օրինակութ՟բ տապարաւն արմատակտրաւ' զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջ քան զփորձ առակայիցն սատակեացի. այլ հեթանոսացն պահպանանուն սարբեստանեայցն, որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնս' ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ' մերակերպարան խառնու.

նութե՟, զազատարարն գծագրեցեր զաւետիս՝ առ օտարազգիսն • և ա՟ծաբարդ ներգործութե՟ անապականաւ՝ ձեռն կարկառեալ յարուցեր զմարդն նախնի՝ մեղուցեալ՝ ՚ի մահ՝ խորովքն ծննդովք : Զտրտմեցելոյն սիրտ բերկրեցուցեր , և զվհատեալն հաստատեցեր, և զթշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթացուցեր : Աւազանին կենարար օծմամբն , և բաժակաւն լուսոյ լցեր • Հացիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով՝ նոր յեղանակեցեր : Վերակացութե՟ երջանկացն աղանց ընտրելոց՝ յանձանձեցեր , գրգեցեր , և խնամարկեցեր : Հանդարտընթաց գրատուն ամբողջութե՟՝ անզանցելի պահեցեր • մինչև յարկն լուսոյ ածեր : ՚Ի ձեռն երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց՝ տ՟չութե՟ կտակաց կենդանականաց , մարդասիրապէս դարմանատրեցեր : Եւ որպէս երբեմն ընդ մովսեսի՝ թևս տարածեալ արծուոյն օրինակաւ՝ ընկալեր զնա , և ՚ի հանգիստն հանդարտութե՟ երկրին բարութե՟ առաջնորդեցեր • և զբանին կերակուր՝ ջամբել հրամանատրեցեր վարդապետութե՟ց :

Է • Եւ արդ՝ որ զբնաւն ծայրագունին բարուե՟ լուսոյ՝ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր , զօգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր , կեցո և զիս մաքրեալ ՚ի մեղաց պարտեաց , որ ձրի պարգևես և անպատրաստից • ընդ որոց և ինձ տացես

քա-

քաւուե̃ և բժշկուե̃ բարեգութ, զօրեղ, ա՛նքննին, ա՛նեղծ, ա՛նհաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

* * *

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

ԲԱՆ. ԺԵ ։

ա. Իսկ դարձեալ տատանեալ վերստին առ նոյն հեծուե̃ սրտիս վտանգելի ինձէն մատուցեալ, սովին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւ արդարահատուցից, տագնապեալ ոգւոյս վտանգիւ̃ խայթառ. իբր մեռեալ՝ կենդանւոյ անմահին մաղթեմ ա̃յ, խոստովանեալ ընդ փառացդ քո՝ զիմս անարգութի̃, և առ չարեօքս իմովք՝ զքոյդ բարութի̃. որովք յաղթեալ գտայ՝ քան թէ բժշկեալ, և ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամոռաց ։

բ. Իսկ կրկին առակն որ առ իս՝ որ ոչ է ոքին տրուպն տարապացուցի́. որ յետին անզգայութեան էր մատնեցեալ՝ մոլորեալ. և 'ի լերինն՝ ուր ոչ է այցելութիւն, ընդ գազանականացն դիւաց՝ և կուոցն վայրենութե̃ թափառեալ, ոչ մերձաւոր գոլ տակաւ մի հօտին. ոչ բան ունէր, որով է զցաւոցն աղէտ պատմէր. ոչ ձեռն ձըգողական, որ համբերցն է աղդողական ։ Իսկ դու միայն գովեալդ յանկզբանիցն յա-

ւէ

ախտեանց՝ և յարգի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գոչման երգողին զիս զմեղուցեալս՝ յաննշոյլն մոլորութե՟, խնամածողօրէն տեսչութ՟ք կամաց՝ հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգայցար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն՝ հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութ՟ք սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո ժառանգութե՟ն։ Եւ արդ՝ դու հզօր՝ կենարար՝ օրհնեալ՝ այցելու՝ գթածդ յողորմութեան, եթէ զնս՟ ընկալար զապաքանեալսն ապերասանաց, որ մինն՝ 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն՝ ըստ անբանիցն անզգայութե՟՝ վտարանդի բացամերժութ՟ք յանբնական վայրի վարանեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, ա՟ծային բարեխնամութեամբդ անտեսեցեր զտխեղերահրաշն խնամողութե՟ն՝ առ կորուսելոյն մեծ թշուառութե՟ն, յայտնեաց վերստին և արդ գթութեցդ խորք և բարերարութեցդ հնարք՝ առ անօրինեալս առաւելութ՟ք վերադարձելոցդ օրինակութ՟ք։ Առ բազմօրինակ մահու պարտականս. առ որ 'ի բարութեց խառնից քաղցրութեանց՝ յառաջ համս չար. առ անդամս մարմնոյ՝ արժանաւորս հատման. առ համաձարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր. առ հաւասարեալս անզգայութեց անասնոց. առ օտարացեալս յնմանութե՟է իմաստնոց. առ աննմանս հանգունակից բանաւորութեանց։ Որ եթէ տարացոյց գոյր, ես առէի. թէ նմանակից գոյր իմ, պատմէի. թէ հանգունակից գոյր, ես ճառէի. թէ հաւաստար գոյր, ես գրէի. թէ զուգագործ գոյր, ցուցանէի. թէ օրինակ գոյր, ես ազդէի. թէ յանցեալսն, հայթայթէի. թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի։ Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ ըստ նմանութեն, զոր միայն քո է քաւել բժշկել և կենագործել՝ կենդանարար համայն մեռելոց՝ նորոգութիւնդ տիեզերաց։

Գ. Օի եթէ նոյն սրտի տեսութե՝ երջանկին դաւթայ, անօրէնութեն չարեաց բարձրացեալ առի քան զգլուխ, և ըստ ծանրութեց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց. իսկ որ առ իս կրին սխալմունք՝ գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասոյզ ամենապատա ծովուն յորդութի, և գլխոց լերանց վերադրէ։ Այլ շնչեսցէ օդ քո քաղցրութե՝ իբր առ նոյին, և որ զերկինս հալէ զօրութիւն, ցամաքեցուցանել զշխիղս ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրակործան իմոցս պարտեաց, և լեռնակարկառ բարձրութե մեղացս ամբարձելոց։ Եւ համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակար հնարաւորութք, հակիրճ հատուցմամբ, արասցես ահա ելս քաւութե, ըստ մարդարէին, առ երկարաձիգս անօրէնութի. և ներելով իմս յամառութե, ով երկայնամիտ ողորմած օրհնեալ՝ Թողցես միանգամայն , բարեգործեսցես խնկապէս , հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժանակիրս : Նա զի՝ և չիք իսկ առ .քեզ ցասումն սրտի , և կամ՝ բորբոքումն բարկութ՟ե , որպէս ոչ կրին նենգութ՟իք , և կամ՝ նշմարանք մթութ՟ե ․ քանզի կեանք են 'ի կամաց .քոց՝ և լոյս ․ և ոչ արարեր զմահ , և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ , ըստ դաւթի և սողոմոնի :

Դ. Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ 'ի բարեվիճակդ .քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի չար , այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր մեղանաց զպարտս ․ և այդ բան առ մեզ , որ միշտ 'ի բնութ՟ե ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբերմս չարեաց՝ անհամար բեւրուց նորոգ յայտնելոց , որք օրինաւորին երևին յանդաստան սահմանի՝ ամենաբոյս փշածին բնութ՟ես , ըստ անսուտ .քո վկայութեան , որ թէ՝ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութ՟է : Զի որ զկատարեալ մաքրութ՟ին ունէր՝ աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս , և զինքն ընդ հասարակաց բնութ՟ե լծակցեալ , հաստատեաց զճշմարտութ՟ի .քո՝ առ իմս ստութ՟ի յոյժ արդարացեալ ․ թէ ասեմք ասէ , մեղս ինչ մեք չունել , սուտ առնեմք զնա : Եւ արդ՝ կատարեալ է բան .քո խնկեալ , և 'ի գլուխ ելեալ անպակաս

'ի ստուգութ՟ե՝ առ իմն մոլորութիւն և գժնդակ անխրատութ՟ե։ Վասն որոյ խնայեա՛ յիս ողորմութ՟բ՝ քաղցրութ՟ն ճաշակա՛ց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն
յաւիտենից. ամէն։

⁂

Վերափէն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հայցողէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ։

ԲԱՆ. ԺԶ։

ա՟. Եւ արդ՝ դո՛ւ միայն ա՟ծ երկնաւոր՝ բարձրեալ՝ բարեգործ, քո՛ է զօրութ՟ն, քո՛ ներողութ՟ն, քո՛ բժշկութ՟ն, քո՛ առատութիւն, քո՛ են պարգեւք, քո՛ միայնոյ են ձիրք ձրի, քո՛ քաւութ՟ն, քո՛ պաշտպանութ՟ն, քո՛ հնարք անխափանելիք, քո՛ արուեստք անդատանելիք, քո՛ չափք անչափելիք. դու սկիզբն և դու կատարած։ Քանզի ո՛չ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութ՟ե քո՝ խաւար սրտմտութ՟ե. վ՟ն զի ո՛չ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ 'ի վերդ քան զբան։ Պատկեր անպարագիր՝ անգիր քան զորքանութիւն կշռութ՟ե. անչա՛փ լոյսութ՟ն փառաց. անտարբերափա՛յլ ընդարձակութ՟ն՝ հաստատ զօրութ՟ե. անամփոփելի՛ առաւելութ՟ն բացարձակութ՟ե. անտկարանալի՛ բարերարութ՟ն գթութ՟ե։ Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին, յայդ՝ զստուերս մահու. որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին ար-

գեդեղականացն բանաւի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ. և գերեալ անտի զմթերիցն կապուտ՝ փառաբանելոցն հոգւոց, սուսերբ հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կարծիս ցրուեցեր: Դարձ առ իս՝ որ զընդամ զընդանաւ մնիս՝ տղմասից գբոյս՝ յերկաթս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նետից:

Է. Այլ դու յամենայնի Տէր բարերար, լոյս 'ի մէջ խաւարի, օրհնութեան գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անսպառում, անքննելի, անճառ. բաւական՝ ըստ առաքելոյն յակոբայ. անհնարիցդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորութիւն. հուր ծախիչ զխուրս մեղաց. ճաճանչ կիզանօղ ընդհանրական թափանցանցութեան խորհրդոյ մեծի. յիշեա՛ զիս յողորմութեան քո՝ օրհնեալ, և մի՛ յիրաւունս քո. 'ի ներողութեան քո, և մի՛ 'ի հատուցման. յերկայնմտութեան, քան 'ի հաւասարութեան: Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութիւն, ընդ քաղցրութեան քո՝ և մի՛ ընդ արդարութեան. զի առ սակ նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյն՝ յաւէտ ծանրակիր:

Ը. Արդ՝ մատի՛ր առ իս՝ բարութիւն, որպէս յունկանն բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս ըզհողմ մահու խռովութեանս, զի հանգիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան: Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն :

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի : 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ :

ԲԱՆ. ԺԷ :

ա. Արդ՝ աղաչեմ զխնամակալդ փառանդաւորայ տաժանելեաց կրից թաղծութեանց հոգւոց վշտացելոց : Մի՛ յաւելուր հեծութեանս ցաւ . մի՛ խոցեր զվիրաւորեալս . մի՛ դատապարտեր զպատժեալս . մի՛ տանջեր զչարչարեալս . մի՛ դաներ զհարուածեալս . մի՛ գլորեր զանկեալս . մի՛ կործաներ զգայթագղեալս . մի՛ մերժեր զհեռացեալս . մի՛ տարագրեր ըզհալածեալս . մի՛ ամաչեցուցաներ զպատկառեալս . մի՛ կշտամբեր զհարթուցեալս . մի՛ խորտակեր զբեկեալս . մի՛ խռովեցուցաներ զամբոխեալս . մի՛ աղէկոծեր զբքացեալս, մի՛ սասանեցուցաներ զդղրդեալս. մի՛ չփոթեր զմրրկեալս . մի՛ կեղեքեր ըզգիշատեալս . մի՛ ջախջախեր զբեկեալս . մի՛ դօշեր զմորմոքեալս . մի՛ կուրացուցաներ զխաւարեալս . մի՛ զարհուրեցուցաներ զապչեալս . մի՛ խորովեր զխարշատեալս . մի՛ մահացուցաներ զհիւանդս . մի՛ բեռանց ծանրութե̅ մաշաներ զտկարս : Մի՛ անուր յաւելուր կարկամեալ թիկանցս. մի՛ կրկնակի ողբումն՝ դառն հեծութե̅ս . մի՛ ուժգնատոպէս վարեսցիս առ հողս · մի սաստկապէս՝ առ մոլորս · մի անաչառապէս՝ առ ստեղծուածս · մի ահարկութեամբ՝ առ փոշիս ։ Այլ ընդ հարկանիլ խստութեամբ մեծդ՝ ընդ փոքուս · լոյսդ՝ ընդ ստորնականս · բնութեամբ բարիդ՝ ընդ 'ի բնէ չարիս · ողկոյզդ օրհնութեան՝ ընդ պտղոյս անիծից · քաղցրութիւնդ խակապէս՝ ընդ համոյն դառնութեան · փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամենեւին անարգելս · կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուածոյ · տէրդ տէրանց՝ ընդ տղմիս երկրայնոյ · աննուազ լիութիւնդ՝ ընդ չքաւոր ստրկիս · անկապուտ ճոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյս · անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս ։ Քանզի ո՛վ ոք հասեալ յառաւօտ, և 'ի ծագման լուսոյն խիթայ մթանալ · և կա՛մ ընթերակաց կենաց, մահանալ · կա՛մ ազատութեան, և պարտաւորիլ · կա՛մ շնորհաց, և դատապարտիլ · կա՛մ փրկութեան, և մատնիլ · կա՛մ նորոգման, և եղծանիլ · կա՛մ օրհնութեան, և տարագրիլ · կա՛մ բժշկութեան, և վիրաւորիլ · կա՛մ լիութեան, և նուաղիլ · կա՛մ յաճախութեան հացի, և քաղցնուլ · կա՛մ գետոց հոսանաց, և պապակիլ · կա՛մ մայրենի գթոց, և նենգիլ · կա՛մ խնամոց ծնեան աչքոյդ, և զրկիլ ։

Է · Եւ արդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյն բորոտութեամբ՝ հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տ՛ր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Ընդ աղաղաւայն նեղելոյ՝ մշտագնչերն խարխափանօք՝ մեծակական ձայնիւ հառաչեմ. ո՛չ որդի անուանեմ դաւթի, այլ ծնունդ էիդ այ դաւանեմ. ո՛չ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետայն է պատուի՝ կարծողական զիսկն գիտելոյ, այլ տէր երկնի եւ երկրի հաւատամ: Ո՛չ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութե, ո՛վ բարեգութ ած մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել քո բանիդ՝ առ իմ բժշկութի: Ո՛չ թէ ինչ խարոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութն կարծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ կամելոյն եւ ողորմութեանն, այլ կամիս որպէս բարեգութ, եւ կարես որպէս զարարիչ. ասա՛ բանիւդ, եւ բժշկեցայց: Ընդ հարիւրապետին հաւատոց՝ եւ ես ընծակցեմ. ո՛չ մինչ անձուկ միայն բացակայութբ հեռի լինելով խորան 'ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեդ առ յարութիւն եւ բժշկութի, այլ 'ի վե[illegible]ն երկնի բարձելով, եւ 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութի ո՛չ ունիմ հատուցանել:

Է. Շնորհեա՛ ինձ, որպէս գտաւանինէք բանին՝ քո վճռեցայ առ պոռնիկն ընդունելուի՝ հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի ա'ծ բարութեց եւ ար երանութեց. որ յաճախն ընձեռել՝ բազումս փառաւորիս. եւ 'ի շատն մատուցանել՝ նուէրին չափ սիրիս. եւ յառաւելն ողորմել՝ կրկին բարդաւաճիս. եւ յայսքան բարիս՝ իրաւամբք գովիս • և ամենայնի տ̃ր գոլով՝ հաւասարորդ ճանաչիս • և որ զբոլորն ունիս՝ ընդ մերումս կշռիս • և անճառելեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս • և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս • և մեծադրեալ քո զմերն՝ վեհա գոհաբանիս • և 'ի սակաւուն տուրչութե̃ն՝ դոյզն փառաւորիլ ո՛չ ամբարտաւանիս : Արդ և ինձ զնոյն գթութե̃ն՝ ունողիս ըզգործս անհամար պարտուց • զի և 'ի ճառս երախտեայ քումդ պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելն կարգեսցի • և քեզ փառք յամենայնի • ամէն :

* * *

Վերստին յաւելուած նոյին հեծութեան՝ նորին հոլովոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի : 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ :

ԲԱՆ. ԺԲ:

ա̃ • Որդ՝ ես ծնունդս մեղաց , որդիս մահացու երկանց , արդարև անսահման բիւրուց քանքարայ տուժից գոլ հատուցանող 'ի միում աւուր : Այլ ո՛չ թէ առ փրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներումն , այլ առ աննուազ լիութե̃ն փրկչիդ յո̃ի քո̃ի պաղատիմ մարդասիրութիւն • որ չէի երբեմն , և ստեղծեր • չմաղթեցի , և դու արարեր • չև ես եկեալ 'ի լոյս , և տեսեր • ո՛չ յայտնեցեալ իմ , և գթացար • ո՛չ կարդացեալ , և խնամարկեցեր • ո՛չ համբարձեալ ձեռն , և նայեցար. ո՛չ պաղատեալ, և ողորմեցար. ո՛չ կերպացեալ ձայնիւ, և լուար. ո՛չ հեծեծեալ, և ունկնդրեցեր. գիտելով զարդեան զխոր̃հածոյս, և չանտեսեցեր. նախահայեացդ աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութի̃, և յօրինեցեր: Եւ արդ` զքո արարեալս, և զքո փրկեալս, և զայսքանեաց խնամոց յանձանձեալս` մի՛ իսպառ կորուսցէ մեղացն հարուած` զխումբ բանսարկուին. մի՛ յաղթեսցէ յամառութեան իմոյ մառախուղ` ներողութե̃ քո լուսոյ. մի՛ սրտիս կարծրութի̃` երկայնամիտ բարութե̃դ. մի՛ մահացու մեղքն` ամենակատարդ լրութե̃. մի՛ տկարութիւն նիւթոյ` անպարտելիդ բարձրութե̃:

Բ. Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո` հզօր, արտացեալ ողջ իբրև զառաջինն` մինչ 'ի դրախտին փափկութե̃ զպտղոյն կենաց կթէի: Կաշկանդեալ գոսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ` կայ անուղղելի հոգւոյս թշուառութի̃, ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ` սատանայական բուռն կապանօք, զի մի՛ զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեսցի առ ի՛ միայն ողորմած, զի բարձրացուսցես ըզփայտս խոնարհ բանաւոր անկեալ, և ըզչորացեալս ծաղկեցուսցես 'ի բարի կրօնս վայելչութե̃, ըստ ա̃ծաբանութեան ս̃բ մարգարէին: Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր` չունիմ տեսարան, որով զլուսեղծելիդ նկատեալ չկերպ մարթեցից` հզօր բարեգութ՝ միայն դու պաշտպան ականարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ ՚ի շնչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութ՟ն լուսոյ հաստատեցեր ։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ. Հայեա՛ց ՚ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ո՛չ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարածումն հրաշից՝ ամենայն ուրեք զօրացեալ ։ Ո՛չ օծութ՟բ իւղով՝ պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչաց՝ վարսիւք հերաց ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս՝ ամբարձմամբ բազկաց՝ առոյգ դաւանմամբ հոգւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ զերկիր համբուրեմ. խառնեալ հեծութ՟ն աղերսս արտասուաց, բժշկութ՟ն հոգւոյս աղերսեմ ։ Վատնեալ մեղանօք հոգւոյս գոյութ՟ն լուծեալ մեղկութ՟բ, և յերկուց կայից միայնակողմամբ անհաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջմամբ չարին՝ զհեռաւականին բարձրութ՟ն շինուածոյ մարմնոյս՝ առ եւս ծառոյն կենսառիթ պտղոյն խափանեցելոյ, պատապարեցես անդրէն վերստին՝ միայն հնարաւորդ առ ՚ի փրկութ՟ն ։ Զփառաբանարան հաստուածոյ կերպիս ՚ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրացոյց արգել հողմն բանաւորկուին. հոգիդ քո ազդեալ մեծդ ողորմութ՟բ, ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրաշափառաւորէս բարեգործեսցես բանիւ կենդանի՝ ինձ խօսողութեն անսայթաքելի։ Անկեալ կամ չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ իմումս թշուառութե՝ ողբականօք քքումանաց ձայնից, ով բարերար որդի այ, օրհնաբանեալ աչացդ ցօղով վերականգնեսցես 'ի կենդանութի, իբր զսեբեղին 'ի յանշնչական մեռելութե։ Սոսյդ դառնացօղս 'ի գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արև անստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս 'ի լոյս քումդ նշուլից։ Ընդ աղիողորմ թշուառութե կականման ձայնի՝ այրւոյն 'ի Նայինն՝ մօր միամօրին, տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն՝ և ես պաղատիմ վերջին հեծութբս, տուր յուսահատելոյս զքաջալերութի մխիթարութե գթած քո բանիդ, ասելով և ինձ զովեալդ բարի՝ ստեղծիչ աշխարհի, թէ մի լար դերի՝ բազմաց ողբալի․ որով ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալցիս 'ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ։ Ընդ այսակիր անզգայեցոցն՝ դիւալլուկ և քարակոշկոճ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քամեալ դիւախուին հերացն վայրենեբերս բանդագուշելոցն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից, իբրև զնոսին տա քեզ դիմեցից․ հերքեալ մերժեսցես զդունդս չարացն տապականողաց՝ 'ի քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն հանգիցէ. լցեալ զմարմինս մաքրութ̃ շնչոյս՝ զգեցմամբ անդամոցս, ըզգաստ արարցես զխելագարեալս անձնաթշուառ: Ընդ գերեցեալ դժոխաբնակաց վտարանդելոցն հոգւոց՝ արգելեալ կամ 'ի վտանգի. զՃառագայթ ողորմութե̃ փառաց քոց ծագեալ՝ լոյսդ խմ̃ անձկութե̃, 'ի կապանաց օցաողին զերծեալ զիս ապրեցուցես: Գաղտնորոգայթ աներևութերակ վրիպակ արահետ գարշութ̃ մեղացս ջրդողեցեալ ոգւոյս կերպարան, կայ 'ի տագնապի. զծածկեցեալն 'ի տեսողութեանց՝ զչարագործին նիւթիցն այտուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութ̃՝ որդի ա̃յ, գթածաբար առողջացուցես: Զբազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութե̃ց մահացուցանողաց՝ խուրականօք կորստեան բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք հաստատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորզեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի. որ արօրագրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութե̃:

Է. Եւ քանզի անցաւ ըստ նմանութե̃ օրինակութե̃ց յանցուածոցս մեր, ըստ Ճարակօղն քաղցկեղի, առ բնաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումն, չի̃ք այլեղանի իբր խորայէլի՝ առ անչափութե̃ խարանացն մատուցանել. 'ի խարսխաց բարձիցս՝ մինչև ցափն կառուցման ըստութէ անդամոցս՝ չէ առողջութիւն, այլ ամենեւին անբժշկութիւն։ Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ, և երկայնամիտ թագաւոր անման, լուր պաղատանացս արգահատութեան սրտիս վտանգի, որ կարդամ առ քեզ Տէր ՚ի նեղութեան։

* * *

Վերափոխէն յառաջակրած կրկին հեծութեան՝ նորէն հակողէ, առ նոյն աղերս ճառղթանայ բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

ԲԱՆ. ԺԹ։

ա. Նայեա՛ց ամենահայեաց տեսութեամբ կենաց բարութեան յուսոյ, ՚ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց։ Անհաս մեծութիւն. անուն ահաւոր. բարբառ կենդանի. լոյս ցանկալի. ճաշակ ախորժելի. կոչումն պաշտելի. բարութիւն խոստովանելի. ազդումն խնկելի. իսկութիւն դաւանելի. էութիւն փառաւորելի. գոյութիւն օրհնաբանելի, Տէր Յիսուս՝ ընդ հօր քում գովեալ և երկրպագեալ, և ընդ հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ։ Որ միայն մարմնացար վասն մեր՝ ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո՝ ըստ քեզ. Լոյս ամենայնի յամենայնի ողորմած՝ հզօր՝ երկնային։ Եւ այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ տածօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ գթած, նորոգ հաստատեա՛։ Զքոյին պատկերս մեղօք հնացեալս՝ ՚ի քրայս հա-

լոըղձայ՝ կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերստին ծնուլեալ ։ Զխախտեալ շինուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս՝ պահպանեա հոգւոյս, մաղթեմ բա՛րերար, 'ի բնակութիւն քեզ մաքրագործեալ ։ Մի՛ հատուցաներ չարեացն իմ գործոց՝ զնոյն փոխատրութի ։ Արբեալ եմ, ըստ մարգարէին բանի, և ոչ 'ի գինւոյ . թափեալ զմրուրս անօրէնութե՝ թմբրութե մահու բաժակիս՝ աղտատարար հրամանաւդ՝ ամենակեցոյց, զի մի՛ զքոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետնում հատուցմանն ։

Է . Արդար ես յիրաւունս քո, և յաղթօղ 'ի դատաստանի . եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք քո . եթէ դատապարտես՝ ստուգա ընկեալ զառանջողականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո . եթէ յանդունդս խորոց ուղեսցես, թէ զկենդանութի չարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութի ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուցես, թէ զկենացն ճաշակ՝ 'ի քեզ ինքն ամփոփեսցես, թէ զհաստարակաց կերակրոյս դարմանս բարձցես, թէ զմեւուրցս հարստութիւն համառօտեսցես, թէ ընդ իջման քաղցրութե ցօղոյ՝ և հուր տեղացես, թէ 'ի լռութէ բանի քոյ սովեցուցես, թէ զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր կորեսցես, թէ զգետին յատակի ոտից սասանեցուսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանիցես, թէ ՚ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլատակմամբք հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցաւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ գազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցասման հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն, և սաստիկ քան ըզգեհենն, թունաւորագոյն քան զորդունսն, տարակուսելի քան զխաւարն, երկիւղագին քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւն, վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտապան գոլ սոցա:

Գ. Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են ՚նմանութիւնք փոխաբերութեանցն՝ առ ազդակցութիւն մեզանացս՝ իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ նշանակիչք այսր խորհրդոյ, արդ կարևոր է խոստովանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ ծանօթութիւն խնդրողին: Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցայ, յիրաւի ՚ի նախնումն վտանգին տառապեալ սասանում: Եւ զի ոչ զցանկականն խորոխտականութիւն սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս՝ զանզովանալի զկիզումն: Եւ քանզի ոչ սիրեցի ըզլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ՝ ՚ի մթութեան ըմբռնողական միգին կորըստեան՝ վրիպեալ դանդաչեմ: Եւ զի ոչ խորշեցի զմանունս փոքունցն յանցանաց, իբր անհնարականք վարկանելով, պատկանաւորէս ՚ի խածանողականացն զայրին զեռնոց՝ խթեալ խոցոտիմ: Եւ զի ոչ ձեռն կարկառել առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ՝ ըստ գծագրութե՟ այսր օրինակի, ապականուե՟ն դըոյ նշխարեալ մատնիմ:

դ. Եւ արդ՝ ոչ յա՟ծուստ ամենաբարի գանձուցդ՝ չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուղից՝ խաւար, և ոչ յապաւինութե՟դ՝ գայթագղուն՟, այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ • մեղանք անօրէնութեան իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութե՟ մթերս հոգւոյ • իշխանին մոլորութե՟ հնազանդեալ, թողի ըզտեղի քո՝ նր՟, ըստ գրոյն խրատու յանդիմանութե՟: Եւ քանզի յայտնեցաւ յերուստ գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զերեսօք կերպիս՝ անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, որպէս ցուցեալ զիս ամենեւին՝ իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծածկեա՛ յիս զլոյս քաւուե՟՝ արքա՛յ երկնաւոր, զի թօթափեալ զմեղաց փշիս, ըստ աւետեաց ձայնին դարձելոցն 'ի բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ 'ի հողոյ, և 'ի հաստատութե՟ յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրուն բազկի կարութե՟ նախնում՝ մաքրութե՟ն, վ՟ մեծութե՟ փառաց քաղցրութեան ամենապարգեւ քոյ ա՟ծութե՟դ • օրհնեալ յաւիտեանս • ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն ազնիւ մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ. Ի:

ա. Տէր՝ անոխակալ և երկայնամիտ , ներող բարեգութ հզօր ողորմած . ահա՛ Ճշմարտութբ են գործք քո , և խոստովանեալ դատաստանք քո . վկայեալ են ընտրուեք քո՝ տեսօղդ ծածկութեց : Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցովն փորձեցան , և ոչ վնասեցան 'ի բաբելոնին , զնոյն թախծութե զերգն հառաչեմ , մեղայ , անօրինեցայ , յանցեայ , ապստամբեցայ , և պատուիրանաց քոց ոչ անսացի : Եւ քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա , և զայս խոստովանութիւն գոչէին . իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ սմին ողբոց երգութե , և այլ յաւելից՝ ամենայն պարտս մահու : Ընդ դանիէլի երանեալ և ոք մեծ մարգարէի , որ 'ի քում հարազատութեան ազգականութէ տանն յուդայի , շառաւիղ ընտրեալ . զնորայն առեալ ընդունական և նմանողական բանից պաղատանս , իմովս պատժականութեան գոչմամբք հեծութեամբ՝ և այլ կրկնեցից : 'Ի միջի գիտութեամբ՝ անպատշաճական դնացի , զարտաուղի սխալեալ դժնդակապէս . այս է՝ ամենայնիւ ած իրօք մեղանչելն :

Ըստ սահման կշռութեան կամաց քոց արտաքս վազեցի • որ է հաւասարի կերպարան՝ բառնիր անօրէնութեան : Անգիտիցն չափոց՝ չարութեան գործոց՝ ըստումն յաճախութեան նիւթեցի • որ է ճշգրիտ պատկեր յանցաւորութեան : Սպառնացար , և ո՛չ զարհուրեցայ • արգահատեցեր , և ո՛չ երբէք լուայ • որ է ապստամբութեան յայտնի նշանակ : Քեզ արդարութիւն հանդերձեցեր՝ բարերար , և ինձ ամօթ և պատկառանս պատրաստեցեր • քեզ փառս վայելչականս , և ինձ նախատինս յարմարաւորս , քեզ քաղցրութեան յիշատակ , և ինձ մաղձ քացախեալ 'ի կատարածի • քեզ բարեբանութիւն անլռելի , և ինձ ձայնս ողբոց աղաղակի • քեզ օրհնութիւնս երգոց ինկելի , և ինձ մերժումն տարագրութեան անյուսալի • քեզ իրաւունս բազմարժանիս , և ինձ պատասխանատուութիւնս ամենավճարանս • քեզ բարձրութիւնս անճառ գովեստից , և ինձ զաճխուն ըմպելոյ՝ պատիժ ձաղանաց :

Ե̅ • Եւ արդ՝ ընկալար դու բարեաց ընտրութեանց անկշիռ սահման՝ զքոյոյդ ախորժականաց կնդրկաց պտղոց վերառեալ ըստ քեզ , և ես զինչս աստէն առ սմին պարասաւանս յոգունս՝ կրկնակի բարդեալ ինձ ըստ իս : Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր յանձնառութիւն , իսկ ինձ զի՞րս հիւսեցից շարս և տողս բանից դարովականաց , որ քան զամենայն դժնեայս՝ յաւէտ վրիպեցայ : Մոլորեցայ անասնակ ընթացիւք՝ 'ի միոս վայրենիս․ յանդգնեցայ շրթամբք խօսից՝ 'ի բանս երկրաւորս․ զանկատեցայ անկանել՝ 'ի պատկառելեացըն գործոց։ Փքացայ, վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի՛ 'ի հող մահու եմ իջանելոց․ գոռոզացայ, բարձրացայ, որ և ոչ զգրաւական հոգւոյս՝ տուրևառութե՟ շնչոյս՝ ունիմ 'ի ձեռին։ Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր․ ամբարհաւաճեցայ կաւս ձայնաւոր․ հպարտացայ հողըս անարգութեան․ 'ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի․ բազուկ կառուցի բաժակս մանրելի։ Տարածեցայ առաւել իբր վեհ, և դարձեալ իբր զհերքեալ՝ առ իս ինքն ամփոփեցայ։ Բարկութե՟ն բոցով ցոլացայ տիղմս բանաւոր․ իբր զանմեռ ոք մեծամտեցի, որ ընդ քառոստանեաց մահու եմ փակեալ։ Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ, և 'ի քեզ թիկունս՝ փոխանակ դիմաց դարձուցի․ 'ի թուիչս մտաց՝ ընդ խաւար խորհրդոց սլացայ․ զանարատ հոգիս՝ մարմնոյս փափկութե՟ յաւէտ վատեցի․ զզօրութի՟ աջական կողմանս՝ տկար արարի, ահեկանոյս կայից ուժգնութե՟ տալով՝ յաղթեցի։ Զքեզ իսկ տեսի հոգացեալ վ՟ իմ, զոր չէ՛ սատ գրելի, և ոչ պատկառեցի․ իբրև զհաւ վայրենի սըրացայ, ըստ ողջեան բանին առ եփրեմ, 'ի նախնին իմ առաջնորդութե՟։ Յաղօթարանն վայրի՝ ընդ պատարագմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ․ ոչ կացուցի յառին զերիվար մտացս՝ երասանաւ բանին։ Ընդ հին չարութեցն՝ նորոգ ինքնաստեղծութիւնս գալ• անուրս, ըստ յոբայ, ծանունս և անտանելիս՝ ինձէն ինձ սաստկացուցի• աւիղած անկարկատելի, ըստ երեմիայի, զանձն իմ՝ արարի• իբր զվիժած անգրելի կոչման, ըստ առակարկուէին, 'ի մարդկանէ համարոյ եղծայ• իբր զհանդերձս ինչ ապարահից, ըստ եսայեան բանին, զազրացայ• որպէս զթրծեալ աման խեցեղէն՝ փշրեցայ անարծարծելի• ըստ բամբասանացն եդոմայ 'ի մարգարէէն, զչորրորդ չափն անօրէնութե սատակման՝ ինձ պատրաստեցի: Եւ զի՞նչ սատութի առ այս՝ և զայս յաւելուլ ընդ այս• քանզի զվրանն իսկ դիւանուէր մողոքայ՝ առի ինձ այսրէն՝ նա դժոխոյն ժառանգութի, լքեալ զերկնայինն՝ յեղանակաւ իմն օրինակին նըմանակիր ձեւակերպութե, որպէս առակ պատկերի աստեղն ռեփանոյ բաբելականի՝ յիսրայէլէ պատուէցեալ ցուցաւ 'ի սինայ:

Գ• Իսկ արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձակութե դարձեալ՝ փոխեցայ՝ զըրկեցայ, ելայ, հեռացայ, բաժանեցայ, և անպատուհասատելի կորեցայ, արդ ընկա՛լ զիս տ՟ր՝ վերստին կերպարանեալ 'ի պատկեր հոգւոյ, զանարժանս կենաց՝ իբր ըզմահապարտ• իբր զչարագործ• իբր ըզպատկառեալ• իբր զկոխան եղեալ բանսարկուէին• ո՛չ զանբժշկելի մանրեցեալ• ո՛չ զհասեալ յատակս մահու• ո՛չ զգարճեցեալ• ո՛չ զխոտան գտեալ քո կոչմանդ•

ո՛չ

ո՜վ միանգամայն 'ի կորուստ վարեալ. ո՜վ դեդերեալ. ո՜վ վանեցեալ. ո՜վ տարակուսեալ. ո՜վ թշուառացեալ. ո՜վ վհատեալ. որպէս կործանեալ. որպէս խորտակեալ. որպէս բեկեալ. որպէս զթախծեալ. որպէս յոգնի տրտմեցեալ. որպէս թշնամանեալ: Իսկ դարձեալ ակնարկելով քո՛ գըթած, մարդասէր, հըզօր, 'ի յայլերս բանին՝ որպէս զղջացեալ. որպէս խոստովանեալ. որպէս 'ի յոյս քո դիմեցեալ. որպէս զապաշխարեալ: Որ կշռես՝ դրես՛ եւ մեծ համարիս զհառաչ հոգւոյ, եւ զաղդումն շնչոյ հեծութե. զկսկիծ շրթանց. զպապքել լեզուի, եւ զխոնարհութիւն երեսաց. զկամս խորհրդոց, եւ զյօժարութին խորութե սրտից: Որ փրկութիդ ես անձանց, եւ տեսող՝ ոչ գործեցելոց. եւ ստեղծիչ բոլորից, եւ բժիշկ վիրաց անբուժութեից. պաշտպան յուսացելոց, եւ բարեխնամօղ իր ամենեցուն: Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս. ամէն:

* * *

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին կոչումն, առ նոյն աղերս մաղթանաց բանին: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

ԲԱՆ. ԻԱ:

եա. Նաւ քանզի եւս ինձէն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կացի երբեք 'ի յոյս մարդոյ, եւ ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ դրոյն: Եւ քանզի ոչ

փո

փոփոխեցայ 'ի Նախակարգելոցդ , և ոչ ընդ բարուք ուղին ընթացայ , ընդէ՞ր ոչ զխոտորնական հետոցն խաւարայնոց ըզդէմս ցուցից՝ 'ի սահման կարգի այսր ընթերցուածոյ : Առ որս ածեալ յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի բանից երեսաց , ըստ վերադրոյնդ նշանակելոյ՝ անփոփոխագրելի պահելով , խոստովանեցայց վերստին դարձեալ սատանօր՝ ըզմնացեալ չարութ̅եցն զբիծս , զոր յաջորդաւդ է իմանալի :

Է . Օտար ժանտագործս արժանապատիժս՝ անձեցուն արարի գնացիւք աննսատութեան զգունդն բելիարայ : Կաքաւս կայթից՝ և ցոյցս վազից՝ խաղալկացն դիւաց գարշելեաց ճարտար խաբողաց՝ ծուլութ̅բս իմով շնորհեցի : Գանս գաղտնիս՝ և խոցուածս անյայտս՝ 'ի կործանեցելոցն դահճաց ընկալայ : Ո՛չ հերքեցի զվանեալսըն խաչիւն ք̅ի , քան թէ անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի : Վասն իմոյ հեշտոյս անօրէնութ̅ե՝ անունդ յ̅ի հայհոյի 'ի մէջ այսականաց , որպէս մ̅ր իսրայէլի՝ 'ի մէջ հեթանոսաց : Հարուածս հարուածոց՝ զվնասակարս ապականութ̅եց ժանգոյ և թրթրոյ՝ և այլոց կերչաց վատնողաց զծաղիկ հոգւոյս , ըստ այն յովելեայ հրաշական ողբոցն , որ 'ի ցոյցս երկրի վասն իսրայէլի՝ յասուակս հինից և չարաց հոգւոց , յիս ինքն անկեցի . առեղծանել զի̅ն պատրաստեցայ , քան թէ սատակել : Բիւրըս կուտեալ հաւաքեցի անձին իմում՝

մայր

մարտիկս մահաղէնս․ կշտամբիչս ինձ գոյացուցի՝ անիրաւս և անպատկառելիս․ ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումս և անկուռելիս․ դաւելիս ինձ առի մասունս՝ ընդ քաղցրաւենեացն ճաշակաց․ առ սատացօղն՝ միշտ նենգաւորս, և առ բանսարկուն՝ յաւէտ հաւատարիմս։ Աւաղ աղէտիս, վիշտ վտանգիս, խաւար ամօթոյս, մութ պատկառանացս, զիարդ և առ բանիս յանդիմանութիւն համարձակեցայց․ մեծ է ձայնս գուժի, և անբերելի բողոքս աղաղակի։ Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսանել, տգեղս՝ և նուաղս՝ և ամենեւին ներդեւեալս, ցաւովք հեծութեն՝ ՚ի վերքինս վարեալ վարանումն և մրճոտեալ աղտեղեալ գունով զազրութեն՝ իբր զպաշտօնատար մեհենի․ վասն զի նոյն է ապաստանել ձուլեալ պատկերի՝ և մեղաց ախտի։ Արդ՝ ես գնայի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի․ ետու զբաժինն քո ցանկալի՝ յանապատ անկոխ, ըստ մարգարէին՝ որ առ․քահանայն իսրայէլի ամբաստանութեն։

Գ․ Եւ զիարդ տացեմ անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս․ և իբր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեան կցորդեալ․ և որպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյս որ յիս․ և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստից դրունս փակեալ․ կամ որովք ցուցայց տպաւորուն նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մա-

հա

հայցեալ · նաև ո՛չ շարժողական , և կամ շնչական ունիմ անուանել , թո՛ղ թէ հոգեկան , կամ միայն ընդունականն · անպիտանս ՚ի թիւս անօթոց · անարգս ՚ի քարինս որմոց · արհամարհեալս ՚ի կարգս կոչեցելոց · վատթարս ՚ի յազգս հրաւիրելոց · արհաւրօք մահու պակուցեալս , անխրախուսելի ՚ի բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն երուսաղէմի · ըստ երեմիայի բանին խրատեցեալ · պակասեալ աւուրցս՝ ՚ի հեծութէ̃ , և ընթացք ամացս՝ ՚ի հառաչմանէ , ըստ նուագարանաց երգողին ։ Իբր ասուի ՚ի ցեցոյ՝ և փայտ ՚ի յորդանէ , ըստ իմաստնոյն բանի , ՚ի խիթմանէ սրտիս հալեցայ · իբր զոստայն սարդից մաշեցայ , ըստ սաղմոսողին , և խոտան գըտայ · իբր զամպ առաւօտեայ՝ և զցօղ վաղորդայնի , ըստ մարգարէութե̃ն ձայնի , սպառեցայ ։ Այլ ո՛չ ՚ի մարդ ոք ունիմ զյոյս , եթէ անիծեալ ՚ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ · այլ ՚ի քեզ՝ տէ՛ր իմ օգնական , որ ընկղմեալ ՚ի քոյդ գթութե̃ց բարեաց անբաւից · և ՚ի բևեռելոյն ժամու ՚ի խաչին մաղթեցեր մեծդ ողորմութե̃ առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն ։ Արդ՝ շնորհեա՛ ինձ յոյս քաւութե̃՝ կեանք և ապաւէն · և ՚ի տուր շնչոյս թըշուառի՝ առից զոգիդ քո բարի ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ զօրութիւն , յաղթութի̃ , մեծութիւն և փառք յաւիտեանս · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ :

ԲԱՆ. ԻԲ:

Ա. Դարձեալ սկսաբանեցից՝ 'ի նոյն շարունակ բարդեալ զկշռամբանացս եղանակ՝ գործելով անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին կացուցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի. Թերեւս գտեալ ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանութեան դատակնիք՝ կսկծեցուցանողականս բանի՛ ճշմարիտ խոստովանութ՟ն համայնից գործոց՝ դաւաճանութե՟ց չարեաց :

Բ. Ըստ ո՟մն ձիս խօսնական՝ կարծրերախ սանձակոտոր արձակերասան. յովանակս անհամբոյր՝ վայրենական եւ անկրթական. երինջս աւողական՝ անուղղական եւ անվարժական : Մարդս մոլեգնական՝ տարագրական եւ կորստական. մանուկս մեղանչական՝ անխրատական եւ վարատական, անտեսս մահապարտական՝ տարտամական եւ անգործական. բանականս անասնական՝ գաղտնական եւ անմաքրական : Ձիթենիս ամայական՝ անպտղական եւ կործանական. մարմինս հոգւոյս իմ թախծողական՝ դատողական եւ տանջողական. խոցեալս անբժշկական՝ անխնամական եւ անկանգնական : Ոսկի չարս կայսերական՝ արգելատնական եւ անգտական. ծա-

ռայս

ւոյս սխալական փախստական և թշուառական :

Դ. Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մոլախաբ, կամակոր իսկ՝ և սրտաբեկ. ուշամոռաց և հանճարազրաւ. զգայազիրկ և իմաստասպառ. յոյրատատես և եղեռնալիր : Ես աստուստ և անդուստ բնաւիւք բոլորովմամբք մահաբեր երկամբք վնասեալ, ո՛չ միով ի՛նչիւք տեսութե՟ք 'ի գործ ընտրութե՟ քեզ պիտանացու՝ ո՛րդ բոլորից. ողբամ զորովայնն, որ երկնեացն զիս. աշխարեմ զստինսն, որ դիեցուցին. ընդէ՞ր ո՛չ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ծծեցի, և զիա՞րդ ո՛չ դառնութիւն ինձ ընդ քաղցրութե՟՝ ջամբեալ մատուցաւ : Զի եթէ ես ինձէն անձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութե՟ս անխոնարհելի. ո՞վ ոք 'ի յերկրածնաց աստի զիս ողոքեսցէ. զո՞մ խայտառակեցից. զբնաւ էութիւս դատեալ տուժեցից. զհամօրէն զվնասակարացն զգունդ՝ դանեցից. զխոցողացն զինուորութե՟ց դատախազեցից. զզգայականացն զլխաւորութե՟ս կշտամբեցից : Մեղա՛յ ամենայնիւ յամենայնի, ողորմեա՛ գթած. ո՛չ նոր ինչ գտեր յիս զյանցանաց պարտեաց մառախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պարտաւորութե՟, անկցելի ձորձով սխալեալ առաջի քո՝ անփոփոխելի, և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմոյս փրկութե՟ կանխեալ ներութբ՟ անայլայլելի :

դ՟. Տէրդ՝ մատո՛ խնամակալ՝ հզօր՝ երկնաւոր՝ բարի՝ ամենից հաստիչ յոչ էից՝ զբանից զօրութե՟ իմաստից կայծակն՝ 'ի գործի ազդման լեզուին շարժութե՟, ուղիղ մաքրութե՟ յամենուստ զգայականաց գոյաւորութե՟ց յիս մասնաւորելոց՝ քո ձեռակերտից. սոքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք, կրկին հանդերձանօք, անապական ձայնիւ, անհատ բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութի՟ 'ի փառս մեծութե՟ հօրդ քոյ ա՟յ մերոյ, յաւիտեանս. ամէն :

* * *

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ.

ԲԱՆ. ԻԳ :

ա՟. Տէր ամենայնի, զօրաւոր յամենայնի. անպարագիր և անպարափակ տեղի ամենեցուն. բոլոր իսկութբ՟ հուպ յամենեսին. անուրեք վայրից, և չիք սահման առանց քոյ : Ո՛չ երևեալ երբէք, ո՛չ տեսականութիւն առանց քո ծագման՝ լուսաւոր : Փառք ահաւորութե՟. անուն անհասութե՟. կոչումն մեծութե՟. ձայն անքննութե՟. իսկութի՟ անքըննութե՟ : Անմատչելի հեռաւոր, և անընդ-

Է մէ

միջելի մերձաւոր: Տեսօղ հեծութե՟. նկատիչ թշուառութեան. մօտակաց թախծութե՟. ամենաբուժ հնար անճարութե՟. հայր գթութե՟ց. ծագօղ ողորմութե՟. ա՟ծ մխիթարութե՟:

Է՟. Նայեա՛ց տ՟ր ողորմութե՟՝ ՚ի պատկեր վշտաց դառնութեան բազմավտանգ կրեցես կարեաց, զոր հանդէպ քո տարածանեմ. կցորդակի՛ց լեր բժշկապէս, և մի ՚ի խոյզ քննութե՟ կոչեր դատաւորաբար: Արդարև մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարանման, յորժամ իցէ մարմինն մեղօք գրաւեալ, և անձն՝ ՚ի գործոց չարեաց ո՛չ մեկուսացեալ. գործնականացն գործի՛ սովորութե՟ն կարեաց կապեալ. զանգուածն հանդերձանաց՝ մահացու կրիւք շաղախեալ. զգայուն սրտին իմաստից՝ խեթիւ խոցոտեալ. ակընկալութե՟ բարեացն՝ բնաւին բարձեալ. և ՚ի բանականութե՟ն՝ ը՟ անասունս դատակարգեալ. և զաղիր գարշութե՟ ը՟ դըյութեանն չարամանեալ. և տեսականացն ողջ երամ՝ իմանալիքն վիրաւորեալ: Եւ ՚ի սատակութե՟ յանցանացն յիշատակի՝ յաւէտ յուսահատեալ. և տագնապաւ նախագործելոցն՝ միշտ տարակուսեալ. և յստակութիւն աղերսին՝ իսպառ սպառեալ. և խղճիւ մտացն յուզմանց՝ կրկին ձենձերեալ: Եւ ձեռն ՚ի մանձի գործոյն՝ զլեանոցն հետազօտեալ. և կերպ ՚ի յառաջ դիմեալ՝ ոտք ՚ի վերջ կոյս յետահարեալ: Եւ գիտութեամբ էիցն՝ ՚ի չէիցն միշտ խաւարեցեալ · և 'ի մտացն մաքրս՝ 'ի փաքրունցն յաղթահարեալ։ Եւ 'ի թառամնչ ոյարին՝ հաղադալին դուռն հրդեհեալ · և խնամս զօրութեն քմացն՝ ամ ուրեք տոչորեալ, և անարգև միգով՝ յամենայն մասանց պարփակեալ։ Եւ լայնութե անկնկալութեն՝ ամենևին խաղաղ ամփոփեալ · և անբերրելեացն տոյժ՝ 'ի զգայնն տապաւորեալ · և եղկութե կորստեանն՝ 'ի յուշ անդ եկեալ · և դառնակնիք հառաչմանն 'ի գլխանի մըտացն պրեցեալ։ Եւ բարերարին ակն՝ 'ի ցասումն իմն երևեցեալ · և լոյսն բնութե՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ · և ահաւորութե էին՝ ընդ փոքրկութե բնութես ընդհարեալ · և միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս բարկացեալ՝ և իրաւանցն վիմօք՝ զարժանիս մահու կոչկոճեալ։ Եւ որ իմն է տաղանդ՝ յանառակս աստէն կորուսեալ · և պատուական իւրն ստացուած՝ իբրև անարգ յերկիր թաղեալ · և տաժանմանցն արգասիք՝ ծուլութեն մթով ծածկեալ, և իբրև զ'ի բաց բարձեալ նշմարան ճրագի՝ չերևեալ։ Եւ պատասխանարան լեզուին՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ · և անհամբոյր շրթանցս դրութիւն՝ օրհնաւոր դատմամբ պապանձեալ։ Եւ յուզմունք մտացս՝ 'ի զանազան մասունս ցնդեալ · և զկեանս՝ 'ի վ̄ր օգտին՝ ոչ ինչ գտասցեալ · և 'ի կշռութե բարուցն ընտրութե՝ յիմար երևեալ · և ընթացք ելիցն՝ նհանջմամբ չարին խափանեալ · և վառարան իւղոյն՝ աձիւնանցն հնոցի լցեալ։

Եւ անուանս գիր՝ 'ի կենաց մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդ երանութեան՝ անդ արձանացեալ:

Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. եթէ պատգամաւոր, խաբութե̄. եթէ մատենագէտ, մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ աւետարանական, փոշւոյ ոտից թօթափման. եթէ բարեկրօն, յանդիմանութե̄. եթէ ապառում, կսկծման: Եթէ ջրով ընտրութե̄ փորձիմ, խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ: Եթէ բերս նկատեմ բարութե̄, 'ի կարծեաց չարեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորանամ. եթէ փոքր ինչ խրտուիլ, սարսեմ. եթէ սակաւ մի թնդիւն, ընդոստիմ: Եթէ 'ի խորախճանս ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծից յանդիման ընկնիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցումն բանի կոչիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ, համրանամ: Արդ՝ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարակուսանացս՝ 'ի վ̄ր միմեանց բարդելոց, որք զաւուրս զգայականաց սրտիս դոյութեան՝ 'ի ներքուստ անտոուստ անբժշկական ցաւօք՝ աներևակի նետիւք խոցոտեալ, անտարաբերելի մշտակիր յարմանեաց հանապազամուխ բևեռեալ սաստուստ ընդ հոգւոյս, ցցեալ շարաւով՝ կրկին հարուածով, մտանդ սաստկագին մահու գուշակեն: Թաքախ մթերից՝ սաստե̄ զերկաթով գաղտնեացս ծածուկք՝ ազդեն ինձ տագնապս՝

վէրս պահեալս անխնամմարկելիս՝ ընդ եղս չնչոյս տուրևառութեան. յորոց նեղութեց չարաչար ճնշեալ աղաղակ ձայնիս, խառնեալ արտասուօք՝ կոչկոչագին թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութե՝ յերկրաստեղծիցս նահատակաց ընդ իմ մաղթողաց, վերջին հեծութս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենեքումբք նուէրողօք՝ զաղերսանս ըղձիցս՝ 'ի սորնայնոցս ստակ յերկինս առաքեմ: Շնորհեա՛ տէր անդորրութի կենաց հանգըստեան՝ ողորմելի վաստակեցելոյս 'ի յընդունայն երկրագործութիս, համայնդ յամենայնում. ամենայնի՛ ստացեալ քեզ փառս:

* * *

Վերստին յառաջադրած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

ԲԱՆ. ԻԴ:

ա. Եւ արդ՝ որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս, մատչիմ աղերսել, արքայութեա՞նն՝ յորմէ վրիպեցայ. եթէ փառացդ վայելչութե՝ յորմէ զրկեցայ. թէ կենա՞ցդ անմահականաց՝ յորմէ հերքեցայ. թէ ընդ հրեշտա՞կին պաշտօնակցութեան՝ յորմէ տարհեցայ. թէ ընդ արդարո՞ցն մասնակցութե՝ յորոց ձեղքեցայ. թէ ուռ որթո՞յն կենդանւոյ՝ յորմէ քանցեցայ. թէ սոսա անկո՞յն բերկրութե՝

յորմէ գօսացայ․ թէ ծաղկին փառացն շնորհի՝ յորմէ թափեցայ․ թէ պանծանացն ժառանգաւոր՝ յորմէ կորացայ․ թէ հայրենի ծոցոյն հարազատ՝ յորմէ ընկեցայ․ եթէ զգեստուն լուսոյ պարծիմ՝ յորմէ մերկացայ․ եթէ 'ի սատացօղ դարձին յուսացայց՝ յորմէ խորթացայ․ եթէ 'ի լուսոյն իղձս դիմեցից՝ յորմէ մեկնեցայ․ եթէ յիսուսի յասկերան յօդիմ՝ յորմէ մերժեցայ․ եթէ 'ի թեւս նորա մերձիմ՝ յորմէ օտարացայ․ եթէ յապաւէնն ապաստանեցայց՝ յորմէ խեթացայ․ եթէ 'ի փրկութեն նորոգութե՝ յորմէ մահացայ․ եթէ 'ի զգաստութեն զուարթութե յորմէ ես լքայ․ եթէ 'ի կամանն կենացն ուխտի՝ յորմէ փոխեցայ․ եթէ 'ի սահմանն հաստատական՝ յորմէ սահեցայ․ եթէ յանշարժ վիմին պնդութե՝ յորմէ սասանեցայ․ եթէ 'ի շարս գումարտակին՝ յորմէ հոսեցայ․ եթէ 'ի քաղաքն անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ․ եթէ հանապազորդեան հացին աղօթեմ՝ զոր ո՛չ վաստակեցայ․ եթէ փոխադրութիւն երկանցն խնդրեմ՝ յոր ո՛չ քրտնեցայ․ թէ պարգեւօքն պսակեցայց՝ յոր չհանդիսացայ․ թէ արձանին կենաց գրեցից՝ յորմէ ջնջեցայ․ թէ զերախտեայդ ծիր յիշեցից՝ զոր միշտ մոռացայ։

Ը․ Ահա՛ հատաւ և կամ խզեցաւ լար կենաց յուսոյն․ տիրեցայ 'ի բորբոքութենցն գարշութենէ, համայն ախտացեալ՝ ամենայնիւ սպառեալ մարմնիւ՝ ապականու-

թիւնն շրջապատեալ՞ մեռոյց ա՟յ : Դոցին պալար՝ փայլունակ ոգեղ լնացեալ, մընացուցած ինչ պահեալ նախունակ երկդիմի կերպին, որ զկրկին անմաքրութիւնն նշանակէ • պարծանացն նշոյլ՝ ամենեւին ինձ շիջաւ • փրկութեն մոռանեցաւ • բարին ստուերացաւ • ելք կենացն՝ բնաւին փակեցաւ • մխիթարութեն բարձաւ • դատաստանին ատեան մերձեցաւ • Թոյնք մահուն ինձ արծարծեցաւ • սպանեալն՝ կըրկին ինձ կենդանացաւ • լաստին դադարք՝ մեղմօք խցաւ • շաւիղն յուսոյն՝ կուրացաւ • շնորհին ծածկոյթ՝ յինէն մերկացաւ • փառացն վայելչութի՝ ստուերացաւ • հանճարն առաջնորդական՝ խափանեցաւ • կըշտամբանացն փուշ՝ բազմացաւ • անօրէնութեն ուղէշ՝ ծաղկեցաւ • բոց գեհենին՝ ինձ բորբոքեցաւ • ծառայութեն լուծ՝ ստակացաւ • ստրկութեն կապ՝ զօրացաւ • ունողն յարկին կառուցման՝ ահա անկաւ • բարձրութեն վստահարան՝ կործանեցաւ • ընտանութեն միաւորութի՝ անջրպետեցաւ • սրբութեն սիրօղ հոգին ա՟յ օտարմե-
ցաւ :

Գ. Եւ քանզի զվերջինն համբուրեցի դառնութի , տանջանս՝ խէթս՝ տխրութիւնս , վիշտս հոգեկանս , ցաւս անխնամարկելիս , տարակոյսս անյուսադրելիս , ամօթանս անպարուրելիս , խայտառականս անվերարկելիս , պատկառանս անհամարձակելիս , փախուստս անդառնալիս , հալածանս անմարդասիրելիս , երկայն ու-

ղեռ

ղեորութե՟ն՝ ապաձեռն անթօշակութիւն. իսկ դու փրկութի՟ն զօրութի՟ն և օգնութի՟ն, ողորմութի՟ն լուսաւորութի՟ն քաւութի՟ն և անմահութի՟ն՝ տ՟ր յ՟ս ք՟ս, որդի ա՟յ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի. որ ընձեռես ջուր պապաքելոց՝ 'ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր, երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու. պաշտպան աննախանձ, պահապան յաղթօղ, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լիութիւն աննուազ, երանութի՟ն տօնելի. ձեռն ձրգեալ սիրոյ՝ ողորմութե՟ քոյ աջոյ՝ ընկալ և մատո՛ քաւեալ և սրբեալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւատարապատի՜ քո հոգի, զի քև վերստին հաշտեալ՝ յիս դարձցի: Եւ 'ի ձեռն քո՝ իւրովն կամօք մաքուր նուէրեալ, զօրեղն ինքնութե՟ զիս հօր ընծայեալ, անդէն առնմին՝ նովիմբ միշտ 'ի քեզ ճնչոյս ողջունի՜ կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանելի: Վ՟ որոյ քեզ՝ ընդ հօր քում՟ հոգւովդ սրբով՝ երրեակ անձնաւորութեդ՝ 'ի միում՟ բնութե՟ և 'ի մի ա՟ծութե՟ փառք, և 'ի ստեղծականաց կից՝ գոհաբանութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վերափոխին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ․ ԻԵ։

Ա․ Բայց քանզի 'ի վերայ այսքանեաց գերուե՟ց ամենաթշուառ վտանգաւորիս՝ մի զմիով ել և ելս առնելոց , զոր զկերպարանս անցիցն՝ 'ի մասնէ վեքաճառեալքդ նախագրեցին ․ ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն աղէտից ։

Բ․ Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն ․ յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց՝ տատանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս չքնուճածով իբր 'ի նաւակի ։ Զոր եսայիաս մարգարէ՝ զյանկարծադէպ կատարածն , որ 'ի պարսկականն հինից՝ երուսաղէմի և սամարիոյ կործանմանն , նմանութեամբ այսք օրինակի կերպաւորեցոյց ․ որ և առ իմս հոգեւորական խորտակումն զուգաձայնել՝ ոչ է սխալական ։ Քանզի մինչդեռ չուէի ես յանհոգութե՟ անտարակոյսն վստահութ՟բ , դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով՝ առ խորոց փոքր միջոցին , որ 'ի մէջ հանգստեանն և աշխատութեան , իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամարայնի , բքաբեր հողմով ժամանեալ՝ երեքալեանն դիմակցութ՟բ , ամբոխեայ զհանդարտութիւն։ Ուստի նաւն ՚ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտակեցաւ։ Թեւոցն ձեռնարկութիւն՝ քայքայեցաւ · կայմն ամբարձման՝ ՚ի կայից իւրոց խլեցաւ · առագաստին թռչարան՝ յանկարկառելի ծոծէնս ապատառեցաւ · շինուածոյն շուք՝ անզարդեցաւ · առասանք ձգողականացն՝ խզեցաւ · տեսարան գլխոյն դիտակի՝ խոնարհեցաւ · ապաւանդակին պարան՝ կտրեցաւ · ապաւինութեան խարսխին՝ լուծաւ · լուծք սոճարք ամոլիցն կցորդութեան՝ բաժանեցան · սամիք ուղղչացն հեռոց՝ գալարեցան · լաստ հեմանն հաստատարանի՝ ընկղմեցաւ · ղեկացն կառուցմունք՝ անդրէն սուզան · չրճոցն յարմարութեան՝ պակասեցան · ողնափայտին պատսպարան՝ իսկոյն բեկաւ · կապարանք զրաւին հաստոճածոյ՝ յօշատեցաւ · փողք ամփոփման ծոցոյն կազմածոյ՝ անարգեցան · խելք շղթանցն եզերաց՝ խախտեալ ոստեաւ · պաղպաջունք բազմականացն՝ անկեալ բարձաւ · վանդակապատին վայելչութիւն՝ յառակեցաւ · գահաւորակին հանգստարանն՝ շփոթեցաւ · մածմունք տախտակաշարք՝ ՚ի միաբանութեանց միմեանց անջատեցան · հեղոյսք ակնգման բեւեռացն՝ քարշեցան։ Արգասիք իւրին՝ յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ։ Նաւուղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն ՚ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս էջուցանէ։ Նշմարք սակաւ միացուածոյն՝ ՚ի ծայրից ծփմանց աղետելոյ ծովուն, իբր

խաղ֊

խողխողեալ բանաւոր՝ ողորմագին թախծանօք հեծէ։ Ո՞ զի թէ զբարի նաւապետն՝ երկնաւորօքն զօրօք՝ յաշխարհիս ծովու առ 'ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս՝ առցէ աշխարհէ բանիս յարմարուէ, ոչ ինչ վրիպեսցէ 'ի սուգութէ։ Քանզի արդարև ելաց բարեգութն ի̄մ՝ յառաւել մարդկութեւս՝ ըղթաղեալ ազգակցին․ ելայց առ նմին և զերուսաղէմ մոլեալ, և զյուդաս մոլեգնեալ․ յորոց երկուցն՝ կորեաւ վստահութի՝ յօրինակ նմանութե աղարտեալ նաւի․ իսկ միւսն՝ հասեալ յառակս անդընդոց, սաստան յուսոյն՝ ձեռամբ ունողին՝ յանդքոյթն արտաքերեաց խաղաղութեան։

Է․ **Ա**րդ՝ իցէ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ՝ նորոգեալ։ Իցէ արդեօք տեսանել զփրշրեալս նաւ ողբալի հոգւոյս՝ ողջացեալ։ Իցէ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ։ Իցէ արդեօք տեսանել զյոքնաթախիծ սիրտ վշտացելոյս՝ բերկրեցեալ։ Արդ՝ իցէ ակնունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան բնութեւ՝ կրկին հանդերձեալ։ Իցէ արդեօք թէ տեսից զքակեալ տաղաւար թշուառացելումս՝ միւսանգամ կանգնեցեալ։ Իցէ արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս՝ ազատեալ։ Ապաքէն դուցէ ակնունել՝ զանկեալս 'ի շնորհէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրեալ։

Աւ

Արդեօք տեսի՞ց զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան՝ յողորմութիւն ինձ երևեցեալ: Եթէ տեսի՞ց երբէք զամենատրխուր կերպարան հոգւոյս իմոյ՝ ժպտեցեալ: Արդեօք լուա՞յց ընդ ձայնի գուժին՝ աւետեաց համբաւ՝ ինձ առաքեցեալ: Արդեօք տեսի՞ց զբիւրակործան վնասեցեալս անօթ՝ կազմեցեալ: Իցէ՞ թէ տեսցեն սպառուհանք աչացս իմաստից՝ զմուրհակ պարտուցս իմոց՝ պատառեալ: Եթէ յայտնեսցի՞ օրն իմ անձկութեան՝ շնորհին քաւութեան՝ բարուոք ինձ ծագեալ: Արդեօք մտի՞ց 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ՝ քև առաջնորդեալ: Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ եզեկիէլի, ցամաքեալքս 'ի կենդանութենէ՝ եկաւորութեամբ ազդողական շնչոյս՝ զօրացեալ: Իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սուրբ քո, աղաղակաւն մարգարէին 'ի պորտոյ կիտին, հերքեալս 'ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ: Եթէ լինիցի՞ խաւարամանունդս մթացելոյ՝ ծագման առաւօտ: Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապեալս մշտասառոյց՝ յեղանակս գարնանն մօտ: Եթէ տեսից ըղցօղ անձրևոյն՝ կանաչացուցանօղն հողւոյ՝ ինձ արօտ: Եթէ իցէ՞ արդեօք նկատել զգազանաբեկ հերքելի ոչխարս՝ վերստին կամաց գթութեան քո հօտ:

Գ. Ի՛ւ քանզի ըստ բանին յոբայ, շուրջ պատեալ են չարեացն հնարքն՝ ընդ որ ոչ կարողից անցանել. իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց՝ ցուցցի.

գե

գթութ՟ե քոյ դասուն՝ բացցի • Ճառագայթ փառաց քոց՝ ծաւալեսցի • խնամք ձեռին քոյ՝ յայտնեսցի • արեգականդ կենաց որ՝ տարածեսցի • առաւօտիդ ըղձալի տեսիլ՝ մերկասցի • առատութ՟ի քաղցրութ՟ե քոյ՝ աղբերասցի • վտակ արարչիդ կողից՝ հոսեսցի • ծորումն անապական սիրոյ քոյ՝ հեղցի • ծաղումն աւետեաց շնորհի քոյ՝ երևեսցի • պարգևիդ քո ծառ՝ ծաղկեսցի • մասունք օրհնեալ մարմնոյդ բաշխեսցի • համառօտեալն ակնկալու՟ի՝ հանդիպեսցի • հաստուածեալ ձայն ողջունի քոյ մր՟՝ լուիցի • հեռացեալդ խաղաղութ՟ի մերձեսցի : Յայսոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանականաւ՝ հաւատարընկալ՟ել յուսոյ հաստատունոյ , ապաւինեալ 'ի հոգիդ քո սբ՟ , որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ քեզ փառաւորեալ 'ի լոյս անմատոյց , որով կեանք և երանութ՟ի քաւութ՟բ հանդերձ՝ ընծայեալ ինձ մեղապարտիս : Յաւանդ անկորուստ ընդ իս պահելով՝ առհաւատչեայ Ճշմարիտ յիշատակի • 'ի ձիր անեղծութ՟ե՝ անուամբդ անճառելեաւ ահաւորութ՟ե՝ հզօրի սբ՟յ միայնոյ և անքննելի տէրութ՟ե՝ երրեակ անձնաւորութ՟եդ • որ եսդ յիսկութեան յէութ՟ե և յարակայութ՟ի բարձրութ՟ե՝ քաղցրութ՟բ ողորմութ՟բ և մարդասիրութ՟բ՝ պսակեալ հանդերձեալ և թագաւորեալ : Այո՝ առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կարօղ ես՝ գթած • և քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի , և 'ի հանդերձեալ ձեռաւ մշտնջենաւորութե՟ն յայտնութե՟ն աւուրն մեծի, յաւիտեանս. ամէն:

* * *

Վերափին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. ԻԶ:

Եւ արդ՝ սուգաւորս և խրատուբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն՝ և զբանիցն յարմարութե՟ն հանդերձեն, 'ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից՝ առ արտասուացն բղխմունս. ուստի և բաղձեալ եմ 'ի գըրուխս պարու՝ ակմբից դասու այնր երախանոց, որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութ՟ի, և ես ընդ նոսին՝ նոցին հեծութեամբ՝ աւաղական ձայնարկու՟ք զանձինս տարածանեմ զվշտակրուն: Որ ոչ բնաւելին մեռեալ աշխարհի, և ոչ խոկաալէս կենդանի ա՟յ. ոչ ջերմ սուկ, և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին՝ գրեալ 'ի յայտնութե՟ն. երկցս առելի՝ երրեակ ակերուե՟ն, և ամենատես արարչութե՟ն: Եւ այս են պատկանեալ թախծականացն կերպագրութե՟ք, կըրկին ողորմելի այսու երևեցեալ, որ 'ի մի գի՛ծ սահմանեալ կացուցանեն զթշուառութե՟ցն զօրինակ, այսպիսի կցորդութ՟ք

շաղ.

շաղկապեալ :

Է. Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձեռով մեծաւ 'ի տուժի. ես ապիկար մատնեալ՝ անարժան գործովքս յիրաւի. վատնիչ արքունի գանձուց՝ կրկնապատ և անթափելի. պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի. ընդ քանքարոց խնդիր՝ ե՛ս չունիմ կշիռ մի ունկի: Անբարեխօս կապեալ 'ի պահեստ՝ դառն արգելանի, հեծումն և վաստակ ցաւոյ՝ ճաշակեալ յանինչոյ բանտի, անապաւէն տանջեալ անթօշակ՝ կամ՝ ողորմելի. այլ յեղանակ ինձ ողբականաց՝ տատուստ կնքեցի, փոխատրեցի սովին բարբառով՝ կոծ կակղծելի, կարգադրեցի շրջաբերութեամբ՝ 'ի նոյն պայմանի, անհատական թիւ խորհրդական՝ երկեակ տասնեկի: Աղքատութեանն հնոց՝ յամենուստ մասանց մրրկի. անպատսպար թշուառ՝ վտանգեալ սրտիւ 'ի գրաւի. տարակուսեալ հոգւով՝ ապաշնորհ այր 'ի վրիպակի. անխնամելի հայցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի: Մեղաց և մահու զինուք՝ զգայարան գաղտնեացս խոցի. անփրկելի մատնեալ բանութեան՝ չարեացս գերի. սուր սուսերասաստից՝ գոյութիւն բնութեանս յօշատի: Յիշատակաւ բեմին՝ ատենին 'ի դատաստանի, անծագելի մուայլ՝ չարատես աչացս երևի. անձեռնկալ կապեալ՝ եղկելիս 'ի տարակուսի, ահարկութիւն դիմաց՝ պատկերի վերինոյն տեսանի: Յոյժ անարև՝ և անվերարկու 'ի տարապաշասի. անապաւէն

մոմօլար՝ մորմոքեալ 'ի հուր գեհենի․ անյայտնելն կորուստ՝ կործանեալ 'ի մեղաց վհի։ Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբեք յարգի, և ոչ ընդունի և կամ համբարի՝ 'ի գանձ տէրունի․ հայցուած պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուէրելի։ Այլ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առեալ դարձի, զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ՝ մօրըդ յսի․ բարեխօսեա՛ մաղթեա՛ քաւութիւն՝ ինձ մեղաւորի․ դու զօրաւոր փրկանակ կենաց՝ խակուհի երկնի․ քեզ օրհնութիւնք ձայնից՝ և բուրմունք խնկոց 'ի յերկրի, և անուշից իւղոց մատուցումըն յամենայնի։

Գ․ Երգ՝ յասացեալ ողբոցս հիւսուածայլ մասն յաւելի․ բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի․ զկորըստեան խորս չափելով՝ զորքանն երբեք ոչ գտի․ մանաւանդ բանիւք՝ 'ի հանդէս նորին ջանացի․ զմտացս արագեալ զթևս՝ յերևոյթ իրին ոչ հասի․ զուշին պարտութե յանվճարելեացն՝ բաժակ բարկութե 'ի ձեռն իմ առի․ զտարտամութե տարակուսանացս՝ իբր ճաշակումըն մահու արբի։ Ես այժմ զյանցիցն յաճախութե՝ ողորմելի ձայնիւ յերգ արկի․ աներևոյթ կրակարան տապոյ՝ բորբոքմամբ մեծանղովանալն․ աննտեսական իմն քուրայս հալոցաց՝ սաստիկ եռացմամբ անշիջանելի․ սլաքս նետից սպառնականեալ դեղովք՝ 'ի շտեմարան խորուն սրտի․ խիթք ցաւոց խոցոտման մահու՝ 'ի գնացս երակաց գեութեան լերդի • կիրք երկանց անձարանի ձեւոյ՝ 'ի պատառուած աղեացս անելանելի • անզօրելի դեղոյ ջերմութեն՝ 'ի յերկամանց մասունս երկաթի • անհնարաւոր դառնութեն մաղձի՝ 'ի նախադուռն խմոյս կոկորդի ։ Աւաղս ձայնից լքուցանողաց՝ 'ի փողս շնչոյս խոշորս հնչի • բազմահառուած էութեն բնութեն՝ ներհակք միմեանց 'ի պատերազմի • երկշռութեն կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ 'ի վտանգի • հարազատաց դաւաճանութեն՝ անհաշտելի 'ի կոտորուածի • ոչ մեռեալ և ոչ կենդանի՝ թաղեալ 'ի մեղաց դարշութե տղմի • կասկածաւոր պատժապարտութե՝ վերակնարկելով քեզ բարերարի, յանակընկալս կենաց վհէ՝ արտաքերել 'ի լոյս անձկալի ։

Ը • Նոյն ինքն որ զայս՝ բան տպաւորեաց, ընդ երջանկա՝ ցըն պսակեսցի • ակնարկելով քո ողորմութեան, անարատ՝ ցըն հաղորդեսցի • վասն զենման քոյ բանիդ, բարեգործեալ՝ քեւ կենդանասցի • օրհնութե՝ դովեալ քո շրթանց՝ 'ի գլուխ բաշխողի՝ այսր մատենի • հաստատեսցի ըղձականութի՝ սողոմոնեան բանիս առակի • նկարագրեալ հոգւով քո՝ բարձրեալ, 'ի նորոգումն աներծանելի ։ Զի դու միայն ես երկայնամիտ, ներող՝ քեզ փառք յաւէնայնի • ամէն ։

* * *

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա͞յ։

ԲԱՆ. ԻԵ։

ա. Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութե՟ց վերընծայելոց զդրութ՟ն թուոցս յարմարեցի՝ կական և հեծութ՟ն, հառաչանք կոծկոծագինք, դառնութեան լալումն և արտասուաց երգ ; դարձեալ սկսայց զճառ պաղատանացս՝ խոստովանօրէն զղջականաբար, զգաղտնածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութ՟բ սկզբնամամբն՝ և վերջաւորօքն բառիւք, զնոյն համաձայնութ՟ն 'ի մի թախանձ նմին մաղթանաց՝ հոգեկեցոյցն խոնարհուե՟՝ աստանօր եդից։

բ. Մեղայ մեծիդ բարերարութե՟, անարգս մեղայ. մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ. մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարև մեղայ. մեղայ սիրոյդ վերնում գթութե՟, յայտնապէս մեղայ. մեղայ ատացողիդ յոչչութե՟, ստուգապէս մեղայ. մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց, անբաւս մեղայ. մեղայ աննուաճ լուսոյդ վայելման, նենգօղս մեղայ. մեղայ ճաշակման անճառուդ կենաց, բազումս մեղայ. մեղայ անհաս պարգևացդ ձրից, հանապազ մեղայ. մեղայ գովեալ մարմնոյդ ա͞յ, մահուչափ մեղայ.

ղայ · մեղա՛յ պաշտելի արեան արարչիդ , խնկապէս մեղայ ։ Ահա՛ արդարև օրհնեալ է հաստուած բանի՝ յուսադրական սրտի՝ ւոյր մեղայի · սոյն սա՝ պատուէլի աւանդ · անմոռաց պատուէր · հայրենեացն աւուր · նախահարցն օրէն · համայնից թոշակ · անհերքելի բան · զօրաւոր պատասխանի · կենդանուե՟ կամուրջ · ախորժելի վերնոյն · սիրելի սրբոց · անխզելի կապ · հրաշալի բարբառ · անշրջելի պատճառ · բաղձալի աղերս · փափաքելի սեղան · սըրտաբեկ հնչումն · անհնարից ճարակ · կարծրութեան վանիչ · ա՟ծապաշտից սահման · հեթանոսաց գիրք · վաղնջուց կանոն · քրիստոնէից հարազատ · արարչութեանն յաղթող · անջրպետ հզօր · խորոց ահաւոր · արուեստ բարձրութե՟ · խորութե անչափ · հիացման տեսիլ · խորհուրդ կընքեալ , ընդ որ չի՛ք ումեք անցանել , եթէ ոչ անըմբռնելի մտաց արարման՝ զսա ծանիցէ ։ Զայն բարեպատեհ հրաշալորական , որ ոչ յիշատակեցաւ ՚ի վերջին դատակնիք դատուն լքելոյ · գուցէ առ նմին խզեալ համառօտ զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ , յորմէ ընտրութե՟ն ապագործ եղեալ , զսահմանն յաւիտենական քակտեսցէ ։ Զարդ փառաց մեծութե՟ , որով նոյն ինքն ա՟ծուե՟ն պսակեալ բարդաւաճի ։ Քանզի ո՛վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութե՟ , և ոչ առժամայն պրծեալ ՚ի պատժոց՝ անարատ դասաւ ։ Իսկ եթէ աքար զարմեան , և սաւուղ կիսեան, և յուդա սիմոնեան՝ ատելով զայն ոչ արդարացան, և ես վկայեմ՝ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի • զի ակամայիցն բռնադատելոց՝ ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բռնադատապէս փրկութիւն : Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութե՟ հարազատս :

Դ. Մեղայ երախտեացդ մոռացութե՟, վերստին մեղայ • մեղայ մարմնոյ ձեռն յօդի հարեալ, յիմարս մեղայ • մեղայ առ կեանսդ դժրողութե՟, իսկ և իսկ մեղայ • մեղայ բանիդ ապախտ առնելոյ, չարաչար մեղայ • մեղայ 'ի յօր սատակման՝ ինձէն ընախպեալ, վատթարս մեղայ • մեղայ պարտականս անկենդան մահուն, ձաղելիս մեղայ • մեղայ անպատկառս քո բարձրութե՟, տապոտկալիս մեղայ : Վերջին ինձ կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ • զի անդարձս վարատեցայ • զի որդիս՝ Թշնամի գրեցայ • զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ • զի փուշս վարուց դիզի : Եւ ես առ սմին ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի • զի բագին կորուսչին գտայ : Այլ իմն կսկիծ դժնդակ սրտի, զի զիս ունին՝ առ որ չեմ, զարտաքնոյարդար բաժակս անմաքուր, զբռնեալ որմս գարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյս՝ 'ի մռայլ չոջեալ, զդերանակիր ակնս՝ թըշնամացեալ, զխաղս փառաց՝ չնջեալ, զամենայնիւք յամենայնի իմ իրօք ախտակարս , առ տնօրինականն տէրունականս․ առ յայտնութիւնն ա͞ծայինս · առ երևմունն արարչագիրս · առ խոնարհութեանն սարսափելիս · առ այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք ։ Առ որ մեծ է պատասխանատուութիւն , քան առ համօրէն աւետարանին՝ զարմանս · հիացմունս · հոգս հաղողականս · անդաճմունս անհնարաւորս · թուականութիւնս՝ մտաց անբարդելիս · եղմունս անկատարս · իջմունս անհասատատս · յուսահատութիւնս յարմարականս · յանդիմանութիւնս պատշաճականս · ձաղանս պատեհագոյնս · նշովս իրաւացիս · անէծս արժանահատոյցս ։ Արդ՝ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք , և ինքնահարուած տանջանաւորութիւն ։

է · Եւ քանզի կարօղ ես զայս ա͞մ զպարտս թողուլ , և զխայթուածս մահու բժշկել , տ͞ր ողորմութե͞ց , ա͞ծ բոլորից · ք͞ս թագաւոր՝ բարձրեալ հօր որդի , ստեղծիչ գթած , բարերար , օրհնեալ՝ առատ հարուստ , ահաւոր՝ հզօր՝ ողորմած , տեսաւ՝ ձեռնկալ՝ հաստիչ , ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ , երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն , բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր , անճառ՝ լոյս՝ [illegible]ինք , յարութիւն նորոգութիւն՝ քաւութիւն · եթէ հայեսցես մարդասիրութեամբ , ըստ որում քոյդ են սովորութիւնք , նայեցեալ 'ի քեզ՝ կողկողիմ և ես ։ Եթէ լուիցես , հառաչեմ · եթէ ունկն մատուցանիցես , պաղատիմ · եթէ անսայցես , աղերսեմ · եթէ ներեսցես , աղաչեմ ·

չեմ. եթէ առիս դառնայցես, գոչեմ: Ապա եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդվայր հարկանիցես, հերքիմ. եթէ զքոյ վհատութեանս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ: իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգնաակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տասցես, երկնչիմ: Զբարեայն պարգեւ մատնեալ. զերանութիւնն թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ. զաւանդն կենաց մոռացեալ. զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ. զստեղծիչն էից բարկացուցեալ. զանձառութիւն շնորհին ընդոտնեալ. զպատուոյն պատկեր այլայլեալ: իսկ եթէ առ այս խեղդմահու հեծութե̅ ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս ժամանեցուսցես՝ տր̅ յս̅ քս̅, զաղգեալն դիր ընանիլ ՚ի յիս, եթէ բժշկութե̅ դադարեցուցանէ զմեղս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութ̅ պատուէատեալ ՚ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ պնդե ցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին 'ի փըրկուե̃ անմահից կենացն անախտականաց . և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս . ամէն ։

* * *

Վերջին յաւելուած երկին հեծութեան՝ նորին ձայնողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

ԲԱՆ· ԺԲ։

ա̃ . Եւ արդ՝ զո՞րս յայտնեցից, և յաղագս ո՞յց նշանակեցից, և զի̃ ո՞րպիսեաց ճառեցից, և զո՞րքան ծածկեալս մերկացուցից, և կամ զի̃ որո՞ց խոստովանեցայց ։ Զներկայի՞ցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մթերեցի . զապագայի՞ցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմասահ շարժութե̃ցն՝ յորոց դղրդեցայ . զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է ա̃յ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելին չյիշատակելի . զնուա՞զն՝ որ է առաւել, թէ զթեթևագոյնսն՝ որ են ծանունք ։ Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ զմարմնական ախտից սպանողաց . զառդրունս հեշտականա՞ցն, թէ զծայրակոտոր վնասակարութե̃ց . զանե՞րևութիցն, թէ զաեռականացն . զառձեռն հպաւորութիւն, թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորուե̃ ։ Զըոյնակա՞մնն դիւրին խածմունս, թէ զերկրաւորն նեղաձգուե̃ . զխորութեա՞մնն զանչափուե̃, թէ զամենածախն յայտնա-

ռէ

տեսիլ. զյոգնադիմեալն պոռնկութիւն, թէ զառողջութեան անբժշկութիւն. զպարարտութիւն չարին մարմնոյս, թէ զսովին բարւոյն հոգւոյս. զխնամմունս հանդերձանաւ՝ յոչ ախորժելեան ոչ, թէ զբանադատութեան տառամեք ձգելն 'ի նոյն մոլեգնութիւն. զառ 'ի մահն մեղաց, թէ զընդունայնութեան կարծեաց:

Է. Արդարև որպէս կամաւ խելագար զերծեալ 'ի ձորձոյ, զառականացս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն գործեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց. օտարացեալս 'ի կրօնից. հեռացեալս 'ի կարգաց. 'ի սրբութե անսուրբ. 'ի կուսութե անմաքուր. յարդարութե ամբարիշտ. 'ի բարեպաշտութե վնասապարտ. բերանովս մերձ առ ստացօղն, և հեռի երիկամամբք. շրթամբքս պատուէ մատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս: Եւ եթէ պարտ է զքստմնելին ասել աստանօր, չար քան զտանջանսն յանդգնութի, իբր զսուր իմն պաշտօնատարս ոչ, 'ի մէտս անկայուն երկեակ ճանապարհաւ մահու վարեալս՝ ջանամ, և ոչ ինչ օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ. փութամ, և ոչ ժամանեմ. անձկամ, և ոչ տեսանեմ. փափաքեմ, և ոչ հանդիպիմ. կարօտիմ, և ոչ պատահիմ. ունիմ զամ երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ամ աշխարհի: Այլ թող զբազումս զայսոսիկ՝ բացի թող, և մի ունիցիս. դիւրինք են քեզ

զատակին եղծանել, քան ինձ տաժանաւոր աջով նկարել. վ̅ն այնորիկ գրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ջնջեսցես՝ օրհնեալ: Որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի՝ հեծութ̅ե սրտի՝ եզրի երջանկի. յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի՝ բանին յիշատակաւ, որ զայն պատմէ. յա̃մ կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ 'ի վիհ գարշութ̅ե մեղաց՝ անդընդականաց ապականութ̅եց. քանզի չհաւատամ, թէ լսես ինձ, ըստ յոբայ ձայնին: Արդ՝ ես ինձէն ինքնադատով անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ բնութ̅ես, արդելի փակեցի կնքեցի առ յինէն՝ յամենայն մասանց՝ զկենացն հնար, զի 'ի փրկութ̅ի մեղօք կապելոյս՝
կրկին մեծասցիս գովեալ:

Դ. Եւ քանզի 'ի մարգարէէն բարւօք խրատեալ փորձ գացուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատանով 'ի քեզ ապաստանեալ, առէք ընդ ձեզ բանս, ասէ ովսէէ, և դարձարուք առ տ̅ր ա̅ծ ձեր, և ասացէք ցնա, կարօղ ես թողուլ զմեզս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն 'ի բարութ̅ե անձինք ձեր: Ահա ա̅ծ խօսեցաւ, և ո՞վ է որ ո՛չ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ո՛չ հաւատասցէ: Արդ՝ այսուքիկ մ˟ու պաշտելի. նուիրեալ պայման. սահման նոյնագոյ. կենաց աւետիս. կէտ անբունի. դուռն բարութեան. ափոփանաց
հրա-

հրաւէր · ճշգրիտ պատկեր · անստգիւտ գանձ · անմոռաց յիշատակ ։ Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ · աստուած վկայեմ սմին՝ ընդ մարգարէին, կարօ՛ղ ես յամենայնի թողուլ զմեղանս բազմաբեղունս · և ևս զօրացելս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս ։ Յամենայնի իշխես · ամենայնի բաւես · ա̃մ ուրեք հասանես · ամենից բընութ̃եց յաղթես · զա̃մ կարծրու̃ն փըշրես · զա̃մ ընդդիմահար վանես · զա̃մ խըռովութ̃ի վատնես · զա̃մ սրացեալ ընդոտնես · զա̃մ դառնինս անուշես · զա̃մ դժուարամոքելիս քաղցրացուցանես · զա̃մ ըղպարտս շնորհես · զա̃մ յանցանս թողուս ։ Կարօղ ես՝ զօ՛րաւոր հզօր հնարաւոր ամենարուե́ստ՝ զամենեցուն զմեղս ընկըղմել՝ և չքացուցանել բառնալ 'ի միջոյ · իբր զձաձանչ փոքու կայծական՝ սահմանեալ 'ի չափ ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ՝ 'ի տիեզերատարածին ծովու ։

Է · Արդ՝ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի, ողորմեա՛ վ̃ն խաչի և չարչարանաց մահու որդւոյ քո՝ հայր գըթութ̃ ։ Սկիզբն առաքօղի՝ ողբերգութ̃ ձայնի՝ այսմ արտօսրածին նուագի, որ զայս դեղ փրկութե̃ կենաց՝ մեզ յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո հզօր ։ Որ հետս ելից խոստովանութե̃ մեզ՝ ընկառեցոյց, այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի անարատ յուրոցն պարտեաց ։

տեայ : Որ զհպարտութի՟ն թևս՝ հարթել մեզ վարդապետեայց 'ի սոյն կանոնի կենաց պատգամի, եկիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից սկզբնականաց՝ վերջնոց՝ և միջնոց, երրորդութե՟դ բարեգործեալ, 'ի նորոգութի՟ն լուսաւորութե՟ • ընդ որում և մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ սմին :

Ընդդիմամարտ դիւաց այս նահանգ աղօթից • և դիւահարաց ջերմատապագնաց ախտաւորութ՟եց աստուծով փարատիլ :

Է • Տէրդ՝ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձիչ հայր ամենատեսդ՝ անուանդ ահաւոր • ձայն սարսափելի • կոչումն ընտանի • բան համբուրելի • ազդումն սքանչելի • հրաման սոսկալի • էութի՟ն անքննելի • գոյութի՟ն անճառելի • խոկու՟ն անբաւելի • զօրութի՟ն անզննելի • կամք ամենաբարի • տրութի՟ն անսահմանելի • մեծութի՟ն անչափելի • բարձրու՟ն անբովանդակելի • որքանու՟ն անկշռելի • առաւելութի՟ն անհասանելի • պատճառ որդւոյ հայրութե՟, այլ ո՛չ նախադրութե՟ : Քև՝ և 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրութե՟դ՝ սաստեմ տագնապօղ և դիւական տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց՝ զի փախիցէ 'ի մարդոյս, զարհուրեալ 'ի սխրալի և յանբաւելի արեան վտակի՝ գառինդ երկնաւորի • որով սրբեցաւ միանգամ 'ի մշտնջենաւորս՝ համայն մարդ •

մաքրեցաք ։

Է. Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութե՟ արարչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ՛ սատանայ 'ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց. տանջեսցին և հալածեսցին, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ բնակութե՟՝ յարտաքին խաւարն ։ Եւ ջնջեալ մաքրեա՛ զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութե՟ 'ի սրտից մերոց ։ Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն՝ քամնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցաւեսցին չարին. Եւ 'ի կողահերձ սայրասուրն սլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խոպան սատակեսցի սկզբնարար մահուն ։ Եւ զի խոնարհեցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին 'ի ծոց քո՝ բա՛րձրեալ. ապստամբութ՟ին անբարի բարուցն բելիարայ՝ 'ի կո՛ր կործանեսցի, ամ՟ե հերքեալ 'ի կորուստ ։ Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն խորութ՟ի յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտութ՟ի՝ կարծեալ գոռոզին՝ 'ի յատակս մահու դժոխոց՝ մթին ստուերին՝ յառեալ դիմեսցէ. և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտուն թխենից վիշապին՝ կենարարն կրիւք ամենազօրին ։ Վ՟ն զի 'ի փառս քո՝ հայր ողորմութե՟, իբր 'ի գովեստ որդւոյ քոյ՝ հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ սուտ

Ղօ

զօրութեանն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր՝ ընդ անժամանակդ Հօր փառաւորեմք։ Եւ քեզ միայնոյ որ երրորդութե̃դ, հաւասարապատիւ տ̃րութե̃դ, համաբուն՝ անբաժին ինքնութե̃դ՝ օրհնաբանութ̃ի, գոհութ̃ի, զօրեղութ̃ի, և անճառ վայելչութ̃ի մեծութ̃ե, բարեգինճակ հարթութ̃ե, զուգակշիռ հաւասարութ̃ե՝ յաւիտեանս. ամէն։

* * *

Վերոյին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ։

ԲԱՆ. ԺԹ։

ա̃ծ. Եւ արդ՝ դու միայն սկիզբն բարեաց՝ գթութիւն անճառ՝ որդի բարձրելոյ միոյդ հ̃յ, որ զողջոյն զօրն՝ թողութ̃ե ցուցեր փրկարար, և ոչ կորըստեան դատապարտութեան, յեղանակեալ ինձ զաւուրն չար առ մեծ աւետիս ակընկալութ̃ե։ Բժիշկ՝ ախտացելոյս. հովիւ մոլորեալ ոչխարիս. տ̃ր՝ ապաւինեալ ծառայիս. գինի անապակ՝ մեծ տրտմեցելոյս. սպեղանեաց դեղ՝ վիրաւորեցելոյս. ազատութ̃ի մեղօք գրաւելոյս. օրհնութ̃ի բարեաց՝ մերժելոյս. կնիք շնորհաց՝ խոտելոյս. օծումն կոչման՝ կապտելոյս. կանգնումն վերստին՝ կործանեցելոյս. պատսպարան հզօր՝ գլորեցելոյս. օժանդակ վեհ՝ գայթակղեցելոյս. դուռն բարձրութե՟՝ տարակուսելոյս. սանդուխք երանութե՟՝ եղկելոյս. ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյս. թագաւոր ներող՝ պարտելոյս. քաղցր յուսադրուե՟ լքելոյս. ձեռնկալ կենաց՝ հերքելոյս։ Մեծդ միայն՝ և ամենառատ, որ զլիութի՟ բարեաց սահմանեալ, հեղուս անչափ յաճախութբ՟՝ քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութեանն։ Քանզի իննուց յիմնից, և թուոց՝ երից և չորեակ տասանց՝ 'ի վաղորդայնէ տուընջեանն՝ առ մուտս արևուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառամամբ՝ իսկ և իսկ 'ի սոյն՝ անարգել սրտիւ, 'ի վեր է քան զաղերսանաց ակնկալութի՟ մարդկան, բարեգործել միմեանց շնորհատրութիւն. իսկ առ իմս թշուառութե՟ և անարգուե՟՝ զքոյդ եդեալ փառս՝ ամենակարօղ զօրութիւն ահեղ՝ բոլորից ած՟՝ օրհնեալ տր՟ քն՟, որովք սահմանեացի կշռութբ՟ չափոյ՝ հաստատեալ ընդ հողոյս հաւասարութի՟ կցորդեալ։ Քանզի մ՟աս յայտնիկ անբաւ և անհետազօտելի, ամենևին բարի՝ անմասն բարկուե՟ խաւարի. ուստի յոյժ նուաղ են քում մեծութեան՝ աստեղացն թիւք. զորս գոյացուցեալ յոչէից, յորջորջմամբ անուանց կնքեցեր. և կամ հիւթ երկրի 'ի յօդս հեղեալ, զոր 'ի չգոյից հաստատեալ. տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նախագրեալ համարդ սակաւուե՟, որովք քեզ նմանել վարդապետեցեր։

Ե՟.

ԺԵ. Ի՛համ ծածկեցաւ և ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կամաց երկայնմտութե՛՝ համուրց չարութե՛, իբր դոյզն մնայր ՚ի տապարեու . և ո՛չ տասուստ իսկ կերք բնութե՛ց ըղհասարակաց բարուց ցուցանէ : Քանզի ո՛վ որ ՚ի մարդկանէ մեղաւ , և ո՛չ զղջացաւ . ո՛վ որ զազրացաւ , և ո՛չ ամաչեաց . ո՛վ որ գարշեցաւ , և ո՛չ պատկառեաց . ո՛վ որ սխալեաց , և ո՛չ ապաշաւեաց . ո՛վ որ կործանեցաւ , և ո՛չ հեծեծեաց . ո՛վ որ գայթակղեցաւ , և ո՛չ սորջացաւ . ո՛վ որ պարտեցաւ , և ո՛չ ինքեամբ ըմբերանեցաւ . ո՛վ որ պատրեցաւ , և ո՛չ յոգւոց եղաւ . ո՛վ որ Ճաշակեաց լեղի , և ո՛չ դառնացաւ : Ո՛վ որ անկաւ ՚ի բարձրութէ՛ , և ո՛չ ընդոստեաւ . ո՛վ որ կորոյս մեծութի՛ , և ո՛չ աշխարեաց . ո՛վ որ զրկեցաւ յերանութե՛ , և ո՛չ եղաց . ո՛վ որ կապտեցաւ ՚ի շնորհէ փառաց , և ո՛չ ողբաց . ո՛վ որ գտաւ ինքեան մնասակար , և ո՛չ ստգտաւ . ո՛վ որ մերժեցաւ յերեսացն ա՛յ , և ո՛չ հառաչեաց . ո՛վ որ լուաւ զա՛յ սպառնալիսն , և ո՛չ սոսկացաւ : Ո՛վ որ ընդ մի չարեացն՝ հազարս չուաղեաց . ո՛վ որ մերկացեալ յաւուրս ձմերայնոյ , և ո՛չ զոփացաւ . ո՛վ որ անօրինեցաւ , և ո՛չ քարամբք զմխոսն կոծեաց . ո՛վ որ ետես զատրուկն յիւրում մեծութե՛ , և ո՛չ զկծեցաւ . ո՛վ որ կա[illegible]րեաց չարիս , և ո՛չ զինքն իսկ նզովեաց . ո՛վ որ ախտացաւ , և ո՛չ զանձն դ[illegible]եաց . ո՛վ որ յամօթալեացն գործոց , և ո՛չ զիւրն մարմին ձաղեաց . ո՛վ որ ՚ի պատկա-

ռե

ռելիան հալեցաւ , և ոչ զօրն իւր անիծեաց ։ Ո՛վ որք զգործեցեալսն յիշեաց , և ոչ տապացաւ ․ ո՛վ որք զգաղտնիսն մտաբերեաց , և ոչ խոռովեցաւ ․ ո՛վ որք զծածուկսն նկատեաց , և ոչ մահ կորստեան խնդրեաց ․ ո՛վ որք զաններեւոյթսն կերպաւորեաց , և ոչ կրկին յերկիր կորացաւ ․ ո՛վ որք ընդ մեղացն հեշտութե̃՝ բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց ․ ո՛վ որք զվաստակարսն բնութե̃ն , և ոչ պարապեցաւ ․ ո՛վ որք ըղկամաւ ներգործեալսն , և ոչ սատակման ինքեան ազօթեաց ․ ո՛վ որք զանձառելիսն , և ոչ խռովեցաւ ․ ո՛վ որք զանկրելիսն էութե̃ն , և ոչ թախծեցաւ ․ ո՛վ որք զմեծամեծսն , և ոչ մաշեցաւ ․ ո՛վ որք զանբծութե̃ն ապականարարսն , և ոչ տոչորեցաւ ․ ո՛վ որք զտարադրութե̃ն պատճառ յանցմունս , և ոչ տագնապեցաւ ․ ո՛վ որք զերեսացն աղտեղի տեսիլ , և ոչ բարկութե̃ վերնոյն զանձն պարտ վարկաւ ․ ո՛վ որք զմի 'ի կարեւորացն մեղաց յաչս կերպացոյց , և ոչ զինուք մահու խոցեցաւ ․ ո՛վ որք զխայտառականացն , և ոչ վայս վհատութե̃ ընդ հեծութե̃ն ձայնին հիւսեաց ։ Ո՛վ որք յարքայական գահոյիցն տնանկացաւ , և ոչ կարկամեալ 'ի վայր գլորեցաւ ․ ո՛վ որք ընդ պսակին պերճութեան՝ հող 'ի գլուխ եղեալ , և ոչ կրկին չարչարեալ յոգի մահացաւ ․ ո՛վ որք ընդ պայծառ պատմուճանին՝ քրձազգած եղեալ , և ոչ տխրեցաւ ։ Ո՛վ որք զկեանս իւր կորոյս , և ոչ արեան արտասուս երկնեաց ․

ո՞վ ոք ընդ արկանելեաց լուսոյ՝ խաւար զգեցաւ, և ո՛չ նուաղեցաւ. ո՞վ ոք 'ի վե̃ագոյ սիրելւոյ ո՛չ թառամեցաւ: Ահա՛ այս կերպարանք ճշգրտագոյնք՝ պարտաւորիս յանդիմանութե̃, ոխուր դէմ. քաղեալ ճաճանչ. ցամաքեալ խոնաւութի̃. երիթացեալ շուրթն. անշքեալ տիպ. տրտմեցեալ ոգի. այլայլեալ ձայն. կրկնեալ պարանոց: Եւ զի թէ ոք զխնկուե̃ն իսկ նշանակեսցէ, ո՛չ անօրինէ, անանբարտաւան միտ. անհպարտ սիրտ. անխնդրող պարգևի՝ թշնամառ. անայլերալի պաքեալ. ինքնակշտամբելի դեգերեալ. իրաւամերժ սովեալ. արդարալլուկ քաղցեալ. պատշաճադատ հարուածեալ. ինքնալկայ մահապարտեալ. արժանապէս հանեալ. անձնանէծ եղկելի: Եւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ:

Դ. Եւ արդ՝ եթէ զչարիսն՝ հնարաւորութի̃ բանսարկուին՝ գտողին զմեզ գայթակղեալս, զիւրսն 'ի մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիա՛րդ ո՛չ զբարիսն տընկեալս 'ի մեզ հոգւոյ արութեան՝ 'ի խնամակալութենէ կամաց կեցուցչիդ՝ օնեօն գրեսցես՝ տ̃ր բարեգութ, հզօր և յաղթօղ. քաւիչ մեղուցելոց. կարօղ յամենայնի՝ առ ամենայն փրկուե̃: Եթէ զանդունդս առ երկինս փոխես, և կամ ըզխաւար մթուե̃՝ 'ի լոյս հաստատես, եթէ զդառնութիւն լեղւոյ՝ 'ի մանանայն քաղցրութ՟ե կազմես, և կամ՞ զկոծ սաստկութ՟ե վշտաց՝ 'ի պարս դասու բերկրութեան հարսանեաց կարգես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ : Եւ ես քան զսոսին բաւես առ նոսին՝ տիրեալ համայնից ահաւորապէս . և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն :

* * *

Վերստին յաւելուած վերին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ :

ԲԱՆ. Լ:

Ա. Եւ արդ՝ ճշմարտեսցի բան քո՝ ո՛ղորմած՝ բոլորից ա՟ծ՝ ներօղ և օրհնեալ, 'ի բազմապատկելին դարձաւորութ՟ե աւուրն պատկերի զղջման մեղաւորին , թէ և առ յետին խակ շունչն իցէ ընտրութ՟ի , և կամ 'ի մէջ չարութ՟ե՟ն՝ փոխադրութիւն : Մանաւանդ զի՝ դժնեայ կցորդս այս անձնիշխանական՝ մշտամարտիկ . խաբօղ շողոքորթ , յարեալ 'ի սուտութ՟ի , բաստաւկողին , արագօղ հողմոց դժուարունեալի . հասստողին փախչօղ՝ գերեալ որսողին . մոլեկան մարմնոյս՝ ներհակ անկակից , յոգնապատճառեան ամենավարան . զոր քո՛ է գիտել զքանեացն յաճախութ՟ի : Եւ զկնի մեղանացն , ողորմագինս ե՟ն ողբարկութ՟իս վհատականս՝ տաժանակոծս՝ բազմաւաղելիս , քո՛ առաջի տ՟ր գթարկութիւնս՝ գրեալս արտասուօք , թաւանչս թշուառութեց կարգելոց՝ անբաւս չար վտանգից մեղսատագնապ պատկառուցելոյն :

Է. Եւ զի մի՛ կրկնաբանութիւն 'ի շատախօսութեն կրթեսցի, առաւել քան զայն այսու ողբալի. քանզի ո՛չ երբէք համարձակի խնդրել իւր զարքայութիւն, այլ ըզտանջանացն թեթեւութիւն. ո՛չ ընդ կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ դերեզմանականացն՝ զգայական շնչումն 'ի խաւար. ո՛չ ընդ ամբարձելոյն, այլ ընդ բեկելոյն եւ ընդ խորտակելոյն : 'Ի հանդստեան իւրում վաստակելոյ՝ 'ի խրախուսութե՝ ինքեան որոտմեցելոյ. դիմօք ժպտելոյ, եւ մտօք խոցելոյ. կերպ 'ի ծաղր, եւ աչք 'ի յողբումն. երեսք զփոփոխումն ձեւացուցանէ, եւ արտասուքն զդառնութիւն սրտին ճշմարտէ : Ըմպանակք երկու՝ յերկոսին ձեռին, մինն արբեամբ եւ միւսն կաթամբ : Երկու բուրվառք կայծակնաւորք, մինն խնկով եւ միւսն ճենճերիւ : Սկաւառակք երկեան կրաւորականք համոյ, մինն քաղցու եւ միւսն դառնութ : Բաժակք զոյգ առ երկուս բերմունս, մինն արտօսր եւ միւսն ծծումբ : Տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց, մինն գինի եւ միւսն լեղի : Գրուածք տեսանելեաց ներհակաց, մինն 'ի լաց եւ միւսն 'ի վերխաղումն : Խանութք հալոցականաց հակառակութեց, մինն արծարծէ եւ միւսն շիջուցանէ : Հայեցուածք դիմաց երկուց, մինն զոյգն ողոքանօք եւ միւսն անհանխայելի բարկութ : Համբարձումն երկակի բաղկայ, ոմն 'ի հարուածս և ոմն 'ի մերժումն ։ Գտեմք կրկնակի կերպից, մինն տխրեալ և միւսն ցասուցեալ ։ Նշանաբանք՝ ընդ միոյ երկու, մինն ատեացս և միւսն սպառնեացն ։ Ապաւինութիւնք կարծողականք, մինն գոնէ և միւսն թերևս ։ 'Ի մի բերան երկակի բարբառ, մինն եղկութիւն և միւսն խռովութ՟ն ։ Երկուս ազդմունս 'ի միում սրտի, մինն կեղակարծ յուսոյ և միւսն ճշգրիտ կորստեան ։ Ամպլրթագոյն սհագնատեալ՝ կրկին տեղացմանց, մինն նետս և միւսն քարինս ։ Որոտումն ահեղ՝ երկոցունց բերմանց, մինն կարկուտ և միւսն հրացան ։ Ցայգ ցաւագին՝ երկուց վտանգից, մինն լալոյ և միւսն մահու ։ Առաւօտ սգոյ՝ երկուց բողոքմանց, մինն աստից և միւսն սպառնալեաց ։ Արեգակունք երկու՝ 'ի յերկուց ծայրից, մինն խաւարի և միւսն կիզման ։

Դ. Եթէ հարուածոց աջ կառուցանի, ինքեան վարկանի. և թէ ձեռն պարգևաձիր, ոչ իւր ակնունի ։ 'Ի պարծանս ուրուք՝ կորանայ. յամբարձումն գլխոյ՝ ընկճի. 'ի չարեացն յիշատակ՝ հեծէ. 'ի ճառս մաքրոց՝ պատկառէ. 'ի պատմութիւս հանդերձելոցն՝ երերի ։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի, 'ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ ։ Եթէ գարշեսցի սատակապէս, ինքեամբ ինքեան վըկայէ. եթէ ձաղեսցի ուժգին, ամբահատուցումն՝ առաւել պարտուցն գրեացէ. եթէ ըղձումն մահու ինքեան լինիցէ, այն առէ, և դարձեալ կրկնէ: Եթէ որոգայթ մահու ճայթեսցէ յերկնէ, հազիւ զդէմն համբառնայցէ: Զիւրոց և բաւանցն մատեանն՝ խփեալ. զպատասխանութիւն յոյս՝ լքուցեալ. զհամարձակութիւն ընթացս՝ փակեալ: Եւ եթէ ո՛չ էր անփրկանաւոր կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ո՛չ ինչ դանդաղէր: Արդարև վա՛յ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ 'ի մէջ երկուց ճանապարհաց, ըստ հոգելից բանի իմաստնոյն:

Է. Եւ արդ՝ զիարդ ո՛չ ողորմեսցիս՝ բարեգութ, այսքանեաց ձայնարկութեանց՝ կողկողագինս հեծեծանաց, որ անձամբս այսու մեծացար, թէ ողորմած եմ ես տր: Ահա՛ առ չարութիւն գերելոյս, բարութի քո. առ մահապարտիս դատանութի, քաղցրութիւն քո. առ կորուսելոյս յայտնութի, ճառագայթ քո. առ յանդգնելոյս մոլութի, ողորմութիւն քո. առ խակութի մեծասակարիս, հեզութի քո. առ կործանելոյս այցելութիւն, աջ քո. առ ընկղմելոյս վերբերութի, ձեռն քո. առ բժշկութի անողջանալի խոցոտածոյս, դարման քո. առ պակուցելոյս պաշտպանութի, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահութի, երկայնմտութիւն քո. առ օծումն անձնադժնէիս, զօրութի քո. առ մեղաւորիս քաւութի, հրաման քո. առ փախուցելոյս ապաւինութիւն, ոտք քո.

առ սրացելոյս պատսպարութ՟ն, բազուկ քո· առ վրիպելոյս առաջնորդութիւն, լոյս քո· առ տարակուսելոյս հնարաւորու՟ն, հանճար քո· առ անիծելոյս կրկին ստացումն, օրհնութ՟ն քո· առ վհատելոյս քաջալերու՟ն, խրախոյս քո· առ վշտագնելոյս մխիթարու՟ն, բաժակ քո· առ նեղելոյս ընդարձակու՟ն, կամք քո· առ ատեցելոյս կոչումն, սէր քո· առ հաստատումն սասանեցելոյս, բան քո· առ հոգւով վիրաւորելոյս, կաթուած արեան քո· առ աներեւոյթ մթերս ցաւոցս, ակնարկու՟ն քո· առ յուսահատելոյս անդրէն ընտրութ՟ն, իշխանութիւն քո· առ պատուաստումն կտրեցելոյս, կցորդութ՟ն քո· առ խաւարաւ մահու ծածկելոյս, նշոյլ կենաց քոյ· առ խռովեցելոյս իմ հանդարտութ՟ն, խաղաղութիւն քո· առ վայրագութ՟ն օտարացելոյս, ողջոյն քո· առ մոլորելոյս դարձաւորութիւն, ձայն քո։ Զի դու տիրես ամենայնի գթութ՟բ, և չիք 'ի քեզ մասն ինչ խաւարի· և ոչ է բարութ՟ն առանց քո· և քեզ վայելէ փառք յաւիտեանս· ամ՟ն։

Վերոյին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա̃յ։

ԲԱՆ. ԼԱ։

Ա. Եւ արդ՝ քանզի բազմացուցի ողորմանաւ բանիս՝ զաղէտ տագնապի հեծութե̃ ձայնիս մեծ հառաչանացս՝ անդրափոխելն խնդրս վտանգի, զի դու՝ ողորմած սկզբնահայրդ խոստովանութեան անձայնածածկութից՝ որդի Ա̃յ կենդանւոյ Տ̃ր Յ̃ս Ք̃ս, քաղցրութ̃բ նայեցիս քաւել։ Արդարև կարօղ ես. Ճ̃մարտապէս բաւական ես. եթէ կամիս, հնարաւոր ես. կամիս առաւելապէս, որպէս և կարես։ Հարստանաս մեծապէս ընդ տալն, քան եթէ ընդ առնուլն. բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն, քան 'ի ժողովելն. յաճախեն տացուածք քո 'ի սփռելն, քան 'ի ճշդելն. կուտին քեզ համբարք 'ի տարածանելն, քան 'ի շտեմարանելն։ Հաւատամ այսմ ամենայնի՝ Տ̃ր, գտանել քև ելք փրկութ̃ե. հաւատամ անարգս՝ ընդ պատուականին. յուսամ ընդ աբրահամու, և ընդ աննայի. զի մինն բանիդ քո հաւատոյ, և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Վասն որոյ և ինձ 'ի խորին ծերութ̃ե՝ անհամար որդւոց հայր հաստատեցաւ, զառաւանցեալն և զամուլն արգանդ սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութե՟ բաղում ժողովրդոց՝ մարգարէից սր՟ց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայրել յուսացաւ : Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկիր՝ որովայնին սենեկի՝ եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց · որ է թիւ մի անբաւութե՟, զբնաւն նշանակելոյ զէութի՟ ա՟ծութե՟ն յարակայութե՟ սահման անհետազօտելի , և աւազանին նորածին որդւոց՝ անհատ յորդութիւն : Այս թիւ պանծալի՝ որում ոչ է կէտ կցորդի , և ոչ սպառուած վախճանի · այլ կոյս ումն է՝ ուրոյն ընտրութ՟բ նուիրեալ՝ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենից , դժուարաթարգմանելի մերոյ իմաստից :

Ե · Որդ՝ համարեա՛ արդարութե՟ անյուտալի փրկութե՟ հոգւոյս՝ զամենավարանձայն կողկողանաց սրտիս հեծութե՟ , ընդ նախագրելոցն երջանկաց եղեալ և գտեալ զայս դաւանութի՟ փոքր հաւատոց՝ իմոյս խնդրուածոց · զի կեցից և ես աննօքօք՝ բերկրեալ ընդ նոսին , բուռն հարեալ քան զիմոց գործոց՝ զքոյդ շնորհաց : Մանաւանդ զի՝ կրկին բարձունք են և փառաւորք՝ և քան զչափ կշռութե՟ բանի՝ գերագոյնք՝ իմուս խռովութե՟ հաշտարանք , և հզօրագէս քաւարանք , և կարծեաց թերութե՟ միայն սլացեալք : Ընդ արեան քո աչաւորի՝ և ըստ մարմնոյ ծընօղդ քո խնկելի : Պարք առաքելոցն · դասք մարգարէիցն · գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն հետեւակ՝ սպառազէն արիութե՟՝ մերկամարտիկն մրցութե՟ • գումարք միանձանց • բոյլք բանականաց ընտրելոց • ժողովք բարեկրօնից • հոյլք հոգեզինաց՝ յերկրէ երկնաւորաց • զինուորունք վերնականաց՝ ընդ մեզ կցորդելոց ։ Աւանդք երախայրեաց • մատուցմունք զոհարականաց • լուցմունք ղամբարաց • բուրմունք խնկոց՝ իւղոց հանդերձանօք • յաղթանակք փրկական նշանաց • կառուցմունք խորանաց տաճարականաց , ձեռք քահանայից՝ շնորհիւ կատարելոց ։ Առ շարժումն անձին յիշատակ ա՟յ • առ փոփոխումն դարշապարի • առ կարկառումն աջոյ , և ամբարձումն բազկի • առ բարիս՝ գոհութի՟ , և առ գթել՝ աղաչանք • առ բանս ընթանալս • առ խօսս հասարակաց • առ ձայնս բնաւորականս • առ գործոց յաջողուածս • առ առաքինութե՟ ջերմութիս , որ 'ի տուընջեան և 'ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քե՟ առաջնորդեալք • 'ի նիրհել և 'ի զարթնուլ • 'ի պատերազմի ազգաց • 'ի մարտս դիւաց • 'ի հակառակութիս հերձուածողաց • առ փոքունս , առ մեծամեծս • առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց • և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպարանան , եթէ հեշտականս՝ եթէ տաժանելիս • վ՟ն ամենից աղօթս՝ մատ՟ 'ի նասին , և յաղագս ամենից՝ զի զերծ արասցես սքանչելապէս հնարիւք անճառելիւք • հաւատացեալ յամենեցունց , թէ բաւական ես ամենայնի , կաթնաբոյծ հասակաց ,

տիոց

ուխից պատանեաց, մտաց վայրենեաց, սատամբակաց գոռոզաց. մինչ զի առ Թատերս տեսարանաց, և առ կոյտս խառնիճաղանճ բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ:

Փ. Որդ՝ դու ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բարեգութ. զի Թէ և մեղիցեն՝ քո են, վն զի ՚ի քում համարի են, քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ առակողին մաղթանաց: Որում և ես կցորդիմ Թշուառս բանիւ՝ վկայեալ սորին յանցաւորակէս. յանդգնիմ ասել, Թէ որ կարգայ զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ Թէ իցես, Թէ և եօԹեամբք իցէ վարակեալ՝ կրկնապատիկ պատժաւորութբ, առ այս օրինակ կիրԹ ձեռնարկութե, զխորդ ոչ քո իցէ: Յորս է տեսանել ՚ի մէջ արջնատես ագուաւուց՝ ապխտակենիչ երամս աղաւնեաց. ՚ի մէջ խորոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդապատաբարս. ՚ի Թիւ չանց գազանականաց՝ գառինս նուէրեալս. Հեզութի ՚ի խստութե. կատարելութի ՚ի Թերութե. խոնարհութի յամպարհաւաճութե. Ճշմարտութիւն ՚ի ստութե. միամտութի ՚ի մանկութեան. անբծութի յայլամտութե. քաջութի ՚ի չարութե. պարկեշտութի ՚ի լկտութե. ողորմութի յանգթութե. ապաշաւանք յանյուսութե. քաղցրութի ՚ի բարկութե. հաշտութի ՚ի Թշնամութե. անոխութի թե՟ն 'ի խածանողութե՟ն. քաջալերութե՟ն 'ի լքութե՟ն. օրհնութե՟ն 'ի նեղաձգութե՟ն։ Յոր ոչ բաւականացայ երբ 'ի դատել ճշգրտապէս, թէ ով յերկրածնաց աստի կանխեսցէ ժառանգել զքեզ. որ միայն անաչառաբար կշտամբես խրատամբք զարդարութիւն՝ առ ամբարիշտ մաքուրն, և առ պոռնիկն զղջացեալն. առ ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ 'ի բարձունս, և յամենայն յաւիտեանս. ամէն։

* * *

Վերստին յաւելուա՛ծ կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ։

ԲԱՆ. ԼԲ։

Ա. Եւ արդ՝ ես յետնեալս 'ի նախադրուե՟ց արժանաւորաց գրեալ ինձէն ընդ պարտաւորսն պատժոց, հայցեմ զողորմութ՟ի ընդ ամենեցուն մաղթանաց։ Ընդ նկունս և անհամարձակս. ընդ տկարսն և փոքրկունս. ընդ ընկեցիկսն և արհամարհեալս. ընդ տարագրեալսն և առ՛քեզ դարձեալս. ընդ երկուա՛ցեալսն և ճշմարտեալս. ընդ կործանեալսն և յարուցեալս. ընդ ընկճեալսն և հաստատեալս. ընդ գլորեալսն և կանգնեցեալս. ընդ մերժեալսն և ընկալեալս. ընդ ատեցեալսն և կոչեցեալս. ընդ ապշեալսն և զգաստացեալս. ընդ անառակեալսն եալն և զաղեալս. ընդ հնացեալն և մերձեցեալս. ընդ հերքեալն և սիրեցեալս. ընդ պատկառեալն և զուարթացեալս. ընդ ամաչեցեալն և խնդամիտեալս: Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեղսն երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանատուութեն, որ առ ժողովուրդն նախկին, և կամ տանն յակոբու զանօրէնութիս նր, այլ իմոյս ժամանեցից յայտնութեան. քանզի առաւ ընդ աղէտս մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն՝ ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին. ուր զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութե՝ ոչ կարօտայեալ կրկնակին, միանգամայն իսպառ սրբեցայց՝ օրհնեալ հրամանաւ երգ:

Է. Եւ արդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրութե, տարածեալ զձեռն իմ առաջի, զ'ի մահ գլորմանն ցուցից կերպարան. որ 'ի հող խոնարհեալ մածայ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝ անասնական գետնաքարշութե աղնոյ տահեցմամբ՝ կամօք բևեռեցայ: Այլ 'ի քեզ տր յեցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց դաւազան՝ 'ի յարմարոյն դաւթի ընծիւղեալ մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ ածունդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ 'ի քոյդ երախտեացդ՝ 'ի վայր կորացեալ գխօք, աչք 'ի բարձունս յառեալ ողորմագինս տեսութե 'ի քեզ՝ մերձ 'ի հեծութիւն, բնաւին ողորմութ՟ն, բոլորովին քաղցրութ՟ն, զլի՛ճ լուսոյ արարածօք լցեալ՝ պայծառանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից։ Լո՛ւր ամենառատ աննու՛ազ երկայնմտութ՟բ՝ քո դառնայուցչիս, միայն դու ՚ի յամենայնի սահման փրկութ՟ե, ա՟ծ բոլորից· անճառ մեծութ՟ն· անբովանդակելի բնութ՟ն· անքննելի իսկութեան· հզօր զօրութ՟ն· կարօղ բարերարութ՟ն· անպակաս լրութ՟ն· անճառ ժառանգութ՟ն· վայելչական վիճակ· առատ պատրաստութ՟ն· անստուեր իմաստութեան· տենչալի տուրք· անձկալի ձիր· բաղձալի բերկրութիւն· անտխուր հանգիստ· անտարակոյս գիւտ· անկապուտ կեանք· անծախելի ստացուած· անփոխանորդելի բարձրութ՟ն· ամենարուեստ բժիշկ· անսասանելի հաստատութ՟ն։ Դարձուցիչ մոլորելոց· գտիչ կորուսելոց· յոյս ապաւինելոց· լոյս խաւարելոց· քաւիչ մեղուցելոց· ծածկարանդ փախուցելոց· անդորրիչ խռովեցելոց· փրկութ՟իդ մահացելոց· արձակիչդ կապելոց· ազատիչդ մատնելոց· պատսպարանդ սահեցելոց· վշտակիցդ գայթագղելոց· երկայնմտութ՟ն տարակուսելոց։ Լուսոյ տեսակ· ցնծութ՟ե ցոյցք· օրհնութ՟ե անձրև· հոգի երեսաց· զօրութ՟ն դիմաց· հովանի գըլխոյ· շարժարան շրթանց· աղդումն բանի· կառավար անձին· բարձումն բազկի· ձգումն ձեռին· երասանակալդ սըրտի։ Ընտանի անուն· մերձաւոր ձայն·

կցորդութ՟ն հարազատ․ խնամածութիւն հայրենի․ խոստովանեալ անուն․ պաշտեցեալ պատկեր․ անպարագիր տիպ․ երկըրպագեալ տրուն․ բարեբանեալ յիշատակ․ խնդութ՟ե մուտք․ անվրէպ շաւիղ․ փառաց դուռն․ Ճշմարտութ՟ե ճանապարհ․ երկնաձեմ սանդուղք ։ Եւ այլ բազմութ՟ն բանից գովեստից անհամար կարգաց՝ և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և
ոչ կշռեն խղձք հոգեղէնք ։

Գ․ Առ քեզ հայր ամ՟ ակն տեսողի՝ մ՟ծդ ամենայնի․ նայեա՛ ՚ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից, և թէ յաղախնեաց ոք աղաչեսցէ ։ Եւ ընկա՛լ զցօղ ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս ցանկասիրի՝ յանարատ ոտս մարդեղութ՟ե քոյ՝ ք՟ո, և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝ զառ քեզ դարձն և ըղդաւանութ՟ն․ և համբուրիւ՛ շրթանցս առձաշակ փրկութ՟ե կենացդ հաղորդութ՟ե՝ համաշնչապէս զանքակ միութ՟ի․ և զնոյն դթութ՟ի նորին ողորմութ՟ե ընկալեալ՚ի քէն՝ բա՛րերար, գրաւականեսցես զմեծդ պարգև՝ ընդ փոքու հաւատոցս․ և ՚ի ձեռն գթութ՟ե սիրոյ քոյ առ քո անձկալի անունդ խոստովանեալ ծառայիս, դարձցին ձմերունք հողմոյն խստութ՟ե՝ ՚ի յօդհանդարտութ՟ե․ և մրրկին սաստկութ՟ի ՚ի սիկ անխորժութ՟ե․ և կարծիք երկիղին՝ ՚ի մեծ վստահութ՟ի․ և պատուհաս դատաժոյն՝ յերանութ՟ե պատահումն․ և

վը

վտանգք Թախծանացն՝ 'ի հոգևոր խրախճանութի· և աղէկոծութի ծփանացն՝ 'ի խոր խաղաղութիւն· և զեկացն Թևարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն· և բերք բեռանցս մեղաց՝ փոխարկեսցի 'ի Թոշակ շնորհաց: Եւ յայսքանեացս ամենից բերուց բարութեցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ և խոստովանեալ· ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հերքեալ և հալածեսցեալ· ունայնասցին մուրհակք մեղացս· խզեսցին խայծքն· որոշեսցին որոգայթքն· կապտեսցին կապանքն· վանեսցի վիհն· վերասցին վիրաքըն· պարսեսցին պատրանքն· ջքեսցին մեղքն· պատառեսցին պարտիքն· խորտակեսցի լուծն· քակտեսցին քեղէքն: Եւ ընդ մառայլ մթութե չարեացն յանցանաց, և դիւացն բանակաց պաշարողաց՝ արև փառաց քոց ժամանեսցէ՝ կեցուցանել փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի դիմաց և 'ի Թիկանց· և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ գարնայնոյ ընդ ակնկալութե սպասողացն քումդ երևման: Զի դու ես բարերար առ ամենեսին, և հնարաւոր են քեզ ամենայնք· և ամենեցուն զկեալն կամիս, և զփրկութին բաղձաս:

Դ· Ո՜վ ամենապարգև ձեռն յո՜ր քո՜ր, և առ իս դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ ո՜չ բնակեալ միացեալ, և ո՜չ հեռացեալ յանձկութե սրտէ սիրոյ սենեկիս· և անեղծական քո նկարագիր՝

նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչմանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի մատեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝ հոգւոյդ աւետեաց՝ երկնից յօրինողիդ ։ Եւ քեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, և ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորութե̃ և միոյ ա̃ծութե̃դ վայել են փառք յերկնաւորացն վեհից . 'ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

* * *

Վերստին յառաջադրած կրկին հեծութեան՝ նորին հակողէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

ԲԱՆ. ԼԳ ։

ա̃. Արդ՝ զյարմարութիւն պաշտաման բանիս՝ 'ի խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ՝ օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազգեստիցն զուգամանապէս՝ խառնեսցես 'ի յանուշուե̃ կազմուե̃ իւղոյն մարխամու՝ կնոջ բարեպաշտի ։ Յոր հաւասարեալ նոյնութե̃ ընդ երջանիկ պոռնկացն՝ 'ի քէն ընկալելոյն՝ յաւէտասահրաշ յարգանօք, պարարեսցես մեծապէս խմորս բանիս՛ նուաստիս՛, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գըլուխ բարձրելոյդ, անկշտամբելի 'ի բամբասանաց սաղմոսին, մի օծցէ զտերև ուտոց դաղաղթան՝ իւղ մեղաւորին ։ Այլ

տրաս

տրացես զօրանալ կրկին յաճախութ՟ք՝ բուրման խոստովանութ՟ե այսր մատենի՝ ՚ի բազում ազգեալ, համասփիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութ՟ե նոցայն յիշատակի. քանզի դու նոյն տ՟ր զգաստացուցիչ՝ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց: Որոց առակեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ սոսին անճառ ներգործութ՟ք՝ ՚ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն: Ընդ անասնական դարուոյն կերակրոյ, ընդ բազմահամբաւ պտուղ ցորենոյդ՝ կենացդ հացի. ընդ ապականացու արծաթոյն, զարքունական պատկեր. ընդ յիմարաբար թմբրութ՟ե գինւոյն, զբաժակդ արեան արարչիդ. ընդ իւղոյն աւելոյ ՚ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն, զօծումն շնորհին առ իս դարձելոյ. ընդ զերծման գլխաշուք կտաւոյն, զանապականութ՟ե վերարկուն. ապարանջանին պճնութ՟ք, զթուլիչս բարեմասնութ՟ե. օրինին և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութ՟ն. ընդ ունկանն գնդի՝ փայելչականն զարդու, զանստուէր յիշատակ տ՟րունականդ ձայնի. ընդ քոյս պերճութ՟ե լանջացն, զյոքնահաւաք աւանդս ուղղութեան՝ քոյինակրօն լծոյդ քաղցրութեան:

Ը. Բայց զի՞ է յայսոսիկ ինձ պարծել, և ոչ վերստին ՚ի սոյն պատկառել: Այլ յայլ օրինակ փոխեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնի՛ւ հատուցից ընդ պատիժ պարտուցս իմոց մեղանաց, 'ի մարգարէիցն տասուեից բերեալ համառօտ՝ 'ի սոյն յարկ մուծից սաստիկ դատախազ․ ընդ ողբոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ բերկրութ՟ն նց՟ պարել․ յորս հառաչանս, ձայնս հեծութ՟ե, բողոքս բարկութեան, նախատինս խորտակման, լալումն կարեւոր։ Այլ մեծիդ ա՟յ գթութ՟ն ամենաժաման՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութ՟ն․ առ որս՝ զղջմունս, խոստովանութ՟իս, աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս, խրախոյս ա՟ծայինս, փառաց ժառանգութ՟իս, հրաշից յայտնութիւնս, սքանչելեաց տեսութ՟իս։ Յորոց ոմանք յոյս ընձեռեն, և ոմանք վհատութ՟իս բազումն մատուցանեն․ յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ։ Զի եթէ զգեստ ա՟յ զվարագուրին պատրուա՛կ ասաց եզեկիէլ, յորում արար ժողովուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել ա՟ծ 'ի նմ՟․ իսկ որքան պատիժ անմաքրութեան եղիցի՝ զա՟ծ զգեցողիս ներքոյ և արտաքոյ։ Զարմանամ, թէ զիա՛րդ ո՛չ կիզում․ հիանամ, թէ ի՛բր ո՛չ այրիմ․ ապշիմ, թէ ո՛րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջախեալ, մանրեալ, խորտակեալ, կոտորեալ, բաժանեալ 'ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ըստ գրոյն։ Այլ այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի՝ փրկութե՟ յուսոյ, զի ք՟նեան աւետարանն՝ կեանս է ամենեւին, 'ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ։ Որով առ մեղաւոն՝ դարձն. առ պարտեան՝ շնորհն. առ եղծուածն՝ նորոգութ՟ին. առ անօրէնութ՟ենն՝ քաւութիւնն. առ վէրն՝ բժշկութ՟ին. առ վտանգն՝ անդորրութ՟ին. առ պատիժն՝ ներումն. առ պատերազմն՝ հանդարտանալն. առ հուրն՝ անձրեւն. առ պատուհասն՝ պարգեւն. առ անկարութիւն սատակմանն՝ ձիրն. առ գործարան մահուն՝ կենացն ազատուե՟ն ։

Գ. Եւ զի՞նչ է ինձ զայսքանեաց յիշմանց 'ի թիւ արկանել, եւ ո՛չ զանճառելիսն աստանօր դասել։ Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութե՟. յանուն միածնին՝ առ հայրն ընտանութե՟. սոցին անկարկութե՟՝ ընդ հոգւոյն հաղորդութիւն։ Խաչին փրկանք. բանին սփոփութիւն. բարուոք վարձ կամացս՝ առ կշռութե՟ գետողին. աւազանն կենդանարար՝ հաշտութե՟ն միջնորդութե՟։ Եւ այլք ամենայնք անթիւք բարիք՝ 'ի բարերարէն բարդեցեալք, ազատք 'ի հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք՝ եւ ո՛չ իշխեցեալք ։ Այսոքիկ են՝ որ ինձ 'ի մէջ դառնութեան մահու՝ կեանս անապականս աւետարանեն. քանզի եթէ ո՛չ զայսոսիկ ունէի, կանխաւ աղետօք կորուսեալ էի խակ եւ խակ ըստ բանի երգողին ։ Ո՛չ փոքրկութեամբ որդւոյ՝ զհայր փառաւորեմ, ո՛չ նուաստութե՟ հոգւոյ՝ զորդի նախատեսեմ.

սեմ. համափառ ունիմ զերեսեան՝ և նոյն արարչութե՟ : Քանզի և 'ի դէմս հոգւոյն մե՟յ՝ այս են աղաչանք, նախընծայ սկզբան պատարագին՝ յորում գառնդ երկնաւոր զենանի, զայս աղօթեցի :

Աղօթք՝ որ նախ քան պատարագն մատուցանէ :

Դ. Ամենակալ բարերար մարդասէր Ած՟ բոլորից, յօրինօղ երևութից և աներևութից, փրկօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար, հօր հզօր հոգւ. հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ. հեծութե՟՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ. Մատչիմք մեծաւ դողութե՟՝ սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննին զօրութե՟դ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի՝ հայրենի անկասկած պատուոյդ, և քննողի ծածկութե՟ խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի : 'Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութի միասնական էութե՟դ, յորոց մի և դու ճանաչիս անհաս : Քև՝ և 'ի ձեռն քոյ առաջինքն նահապետական առ հմին շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալք, զանցեալն և զգալոցն, զեղեալն և զոչ գոյացեալն՝ անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին : Սքի մեզ քարոզեալ զքեզ մովսէսի , որ 'ի գնալն քոյ 'ի մ՟ջ ջրոցն՝ անպարագիր զօրութ՟ի , անհեղ շրջարկութ՟բ տածողականաւ՝ թևապարփակ պաշտպանողօրէն՝ դթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր : Յոր կերպարան օրինակութ՟ե՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մածու՟ած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր կարօղ տիրապէս զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամ՟ էից՝ յանէից : Քև ստեղծանին 'ի նորոգութ՟ի յարութ՟ե ամ՟ եղեալքս առ 'ի քէն՝ յայնմ ժամանակի , որ է օր վերջին՝ այսմ կենցաղի , և օր առաջին՝ երկրին կենդանեաց : Քեզ հնազանդեցաւ միութ՟բ կամացն որպէս հօրն իւրում , ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի՝ մերովս կերպիւ . զքեզ աւետարանեաց ճշմարիտ ա՟ծ՝ հաւասար և համագոյ հօր իւր հզօրի , և զառ 'ի քեզ հայհոյութ՟ին անքաւելի քարողեաց , և իբր զա՟ծամարտիցն զքո հետևելոցն՝ չարաբանական բերանս կարկեաց , և զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն՝ գտիչն ամենայնի . որ վասն մեղաց մերոց մատնեցաւ . և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ : Նմա փառք 'ի ձեռն քո , և քեզ բարեբանութ՟ի ընդ հօր ամենակալի , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

⁂

Դուռն

Դարձեալ կրկնեալ 'ի նոյն կարգ բանի, մինչև [illegible] [illegible] [illegible] յայտնեալ [illegible] աւետարանել [illegible] [illegible] [illegible]:

Է. Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ ընդ փառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ հոգւոյդ գթածի. որ բարեխօսդ ես վ՟ն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ ողորմածդ Հայր. որ ընդ սուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր: Արդ աղաչեմ զքեզ յա՟մ անմաքուր գործոյ. որ ոչ է հաճոյ քում բնակութե՟ն. և մի՛ շիջցին առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վ՟ն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց: Եւ քանզի մինդ յերրորդութ՟էդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս ոպ՟ պատրաստութ՟ե 'ի վայելչութ՟ն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան: Եւ հալեսցի 'ի հրոյ յայսմանէ գայթագղութիւն մեր, ոպ՟ մաքաբէին կենդանախառնոյն կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութ՟ի, որպէս որդւոյդ ա՟յ հօր քաղցրութ՟ի. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութ՟ին, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութ՟ին՝ արդարոցն երանութ՟ե։ Այո՛ այո՛ և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրու՟ե կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ ք՟սի ստացեալս։ Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո ա՟ծութ՟իդ՝ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութ՟ի գոլութ՟ե. զի քո՛ է գթութ՟ի, և կարողութ՟ի, և մարդասիրութ՟ի, զօրութ՟ի, և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հայցողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ։

ԲԱՆ. ԼԴ։

ա՟. Արդ՝ առ այսոքիկ թշուառացեալ չնչոյս խոցոյ իղձք, և առ քեզ դաւանութ՟իք յարմարականք, որ բովանդակես բանիւ զա՟ծ՝ ա՟ծ, զոր 'ի նախնին Մովսեաւ՝ և յերկրորդումս ցուցից։ Իսկ յանդիմանութ՟ես գրաբանականս՝ 'ի կոյս բազմութ՟ե ազգաց, և թարգմանութ՟ին՝ ժողովրդոց, զայս արդահատութ՟իս մաղ-

թո

Թողականս նուէրեցի, զոր ներբնաշարեալքդ սահմանագրեն գոհաբանութե̄ք :

'Ի հանդիսարանս խօսից ատենի՝ բանս մաղթանաց, որով հոգին ա̄յ հաղորդեալ՝ հասանէ յօգնականութեան :

Է. Պաշտեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքեմ զշօղ քաղցրութե̄ քոյ, և բարեգործեմ 'ի յանձին՝ և յիշխանական ազդման զգայութե̄՝ զամենալից շնորհս բազմապատկե քո ողորմութե̄ : Եւ հերկեմ զբանական անդաստան՝ մարմնեղէն կարծրացեալ սրտիս, յընդունակութե̄ արգասեաց հոգևոր սերմանդ : Քում ամենիմաստ էութե̄դ խոստովանիմք զիմ պարգևս 'ի մեզ ծաղկեալ և աճեցեալ․ որ ձեռնագրես առաքեալս․ ցուցանես մարգարէս․ ուսուցանես վարդապետս․ քարոզեցուցանես համրս, և բանաս զփակեալ ականջս խլից․ ո̄վ ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի, քոյին գործակցութե̄ ներգործելով զայս ա̄մ՝ քարոզեալ զքեզ՝ ա̄ծ հաւասարակից իսկութեանդ հօր : Շնորհեա և ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ․ հեռացեալ արագաթաւիչ ընթացիւք մտաց՝ ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց : Եւ 'ի մատչել իմ 'ի գլուխ հանդիսի՝ մեկնութե̄ բանի, նախաժամանեալցն առ ի գթութ՟ն քո, խօսելով յիս զխորժանն և զպիտանիսն և զհաճոյսն քո՝ 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ ա՟ծութեդ քո, և 'ի լրութ՟ն շինութ՟ե կաթուղիկէ եկեղեցւոյ: Եւ կարկառեա՛ 'ի վ՟ր իմ զամենամերձ աջ քո. և զօրացո՛ զիս շնորհօք գթութեանդ քո: Փարատեա՛ 'ի մտաց իմոց զմէգ մթութ՟ե մոռացութ՟ե, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝ 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս: Լուսաւորեա՛ 'ի յիս վերստին՝ զծագումն անստուեր հրաշից գիտութ՟ե ա՟ծութ՟ե քոյ՝ հզօր, արժանի լինել՝ առնել և ուսուցանել յօրինակ բարեաց տեսակէր լսողաց: Եւ քեզ ամենայն փառք՝ յ՟ամի, ընդ հօր ամենակալի, և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն: Իսկ զհաւատոյ սահման բանի՝ ընտրութ՟ե շնորհի՝ կենաց կանոնի՝ առ համագոյ ս՟բ երրորդութ՟ե՝ զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ:

Երրորդութ՟ե անայլայլական նորին աստուածաբանութ՟ե, ապաւինեալ յս՟յ, զոր ինչ 'ի Նիկիայն սահմանեցաւ հաւատ:

Ծդ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զզուգափառ միութ՟ի ամենասուրբ երրորդութ՟ե: Ա՟ծութ՟ի անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից թևոց սլաց.

սքանչացման, 'ի վեր քան զօրհնածս և անդր քան զնմանութիւն, դերազանց գոլով սահմանի՝ անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհնումն յաւիտեանցս անտարրափակ էութեանց, ստեղծականացս կարգաց․ օրհնաբանութեամբ անթարգմանելեաւ՝ ամենահարուստ մեծութեամբ՝ յաւէտ պսակեալ․ Հաստիչ ժամանակաց՝ և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք․ Ինքն պատճառ հանդերձից՝ և յարմարապէս յօրինիչ՝ տեսականաց և աներևութից ։ Ո՛չ անոճամբ չափեալ, և ո՛չ յորջորջմամբ նշանակեալ․ ո՛չ որակութեամբ նմանեալ, և ո՛չ քանակութեամբ կշռեցեալ․ ո՛չ օրինակաւ ձևացեալ․ և ո՛չ որպիսութեամբ ծանուցեալ․ ո՛չ 'ի թերութենէ տարածեալ, և ո՛չ 'ի լրմանէ ամփոփեալ․ ո՛չ ուրեք երբեքի գրաւեալ, և ո՛չ 'ի տեղւոջ վայրի երևեալ ։

Ե․ Հայր գթութեանց՝ ունօղ ամենայնի, և ամենայն հանուրց՝ որ յերկինս և որ յերկիրս․ բաց 'ի բանէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի ։ Ստեղծիչ և տուիչ ընչից ամենից, բաց 'ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհամայնն կազմեաց ։

Է․ Մինն յերջանկափառ համաղօր ահաւորութեան երից անձնաւորութեանց, խոնարհեալ 'ի վերուստ՝ աստուստ 'ի ստորինս․ որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներքնոցս՝ անկապուտ միաւորով փառացն աթոռոյ, և անկարօտ դիմացն ծնողին Հօրոյ ։ Մտեալ 'ի սենեակ կուսին արգանդի պարզաբար, և եղեալ անտի յօդաւորաբար քառ մարմին էապէս՝ անորոշելի · անթերի մարդկութեամբն, և անպակաս ա̃ծութե̃ն : Մի որդի հօրն միայնոյ, և միածին անդրանիկ՝ ա̃ծամայր տիրածին կուսին, արարիչն՝ յեղականութե̃ն մարդ եղեալ ճըշմարիտ սկզբնածին · ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանութե̃, այլ նոր և չքնաղ · Թագաւորաց վեհափառ, որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամանակս, անդրանիկ՝ ըստ սաղմոսողին, քան զա̃մ Թագաւորս երկրի · անապական խառնութե̃՝ կերպացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ · ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ : Նոյն ինքն եկեալ կամաւորութե̃ 'ի խաչն մահու, իբր զգառն անարատ՝ 'ի սպանդ վարեցաւ, և հանդերձեալ զօրէն ինքնիշխանութե̃՝ զարարածոց իւրոց փրկութե̃ն · չարչարեալ խոկութե̃ կենդանեօք՝ եդաւ 'ի շիրմի անորոշելի յա̃ծութե̃ն · եռօրեայ Թաղմամբն՝ 'ի դժոխս սանդարամետականացն վհատելոցն բանտարգելեցն՝ քարոզեալ ցուցաւ նորոգութե̃ն և լոյս : Եւ աւարտեալ զտնօրէնականացն զփրկանաւորն զտնտեսութե̃, ա̃ծապէս վերակենդանացեալ · և կառավարեալ 'ի Թևս հողմոց՝ ելեալ 'ի քըրովբէս՝ ամպով անքննութե̃ ծածկեցաւ · համբարձեալ գեր 'ի վերոյ ա̃մ երկնի, նստաւ ճոխութեամբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հաւասարութե̃, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ , անկորուստ ունեցելոյն , և անձնուէաղ սեպհականօքն ։ Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման , քննել զծածկեալսն կշռութե՛ք չափոյ՝ արդար իրաւանց ։ որում սպասեմք , և յոր աղօթեմք ։ հաւատացեալք յամի՝ ամի՛ ամենակալ տրուե նորա ։ որ արդարև մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փառակցութե՛ն յաւիտեան երկրպագեալ ։

Է. Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ հօր՝ և զհոգի էութե նոցին , ամենազօր , ճշմարիտ , կատարեալ , և տք ։ որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ամ ։ Ինքնագործ համիշխան երկուցն և ընդ նմին՝ անեղծ և անսահման թագաւորութե ։ որ ինչ պատճառն առաջին , և բանն ահաւոր նորին ինքնութեան , նոյն ինքն և հոգին բարձրացեալ ։ Բարի ինքնակալ , ամենից բաշխիչ զհօրն պարգևս՝ 'ի գովեստ անուճան փառաց միածնին ։ որ ուղղեաց յօրէնսն , շնչեաց 'ի մարգարէսն ։ փչմամբ ազգակցին տպաւորեցաւ յառաքեալսն ։ կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի յորդանան՝ 'ի մեծուի փառաց եկելոյն ։ փայլեաց 'ի գիրս աւանդականաց ։ աչաւոր հանճարեղս ։ զօրացոյց իմաստունս ։ լցոյց վարդապետս ։ օծ արքայունս ։ օժանդակեաց թագաւորս․ և վերակացուս ։ հրամանատրեաց փրկութս ։ շնորհեաց ձիրս ։ հանդերձաւորեաց քաւութիս ։ զմկրտեալս 'ի մահն քն՝ 'ի բնակութի իւր

մաք

մաքրագործեաց ․ զոր Հայր և Որդի , ընդ նոյն և Հոգին ներգործեաց ․ և ինքն է ամ

խնկեալ տիրապէս՝ ամ յամի ։

Է ․ Վասնզի ոչ՝ նախաթուելովն յերրորդութեն՝ ոք մեծ ինչ քան զմիւսն ․ և կամ զկնի անուանիլն՝ նուաստագոյն առ նըմանն ․ և կամ 'ի մինն ասելով՝ խառնակութիւն գոլ դիմացն ․ և կամ յերիցն տրոհումն՝ ուրոյնութե եւ կամացն ։ Քանզի անմեծար Հայր՝ ամին , եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութի ․ ոմ ոչ գոլով ընդ նմա Հոգւոյն՝ անհագապ ոմն և անկենդան՝ և առ ամ Հրամանն նուաղեալ ։ Իսկ բանն՝ եթէ ոչ անուանմբ Հօրն ծանիցի , որք ոմն՝ և կամ լքեալ , և կամ 'ի մահացուէ ումեմնէ ոչէի ։ Որպէս և Հոգին՝ եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի , ապաշուք ոմն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի ։ Այլ եթէ ոք հակառակական բանիւ՝ յաւակնի կապանել զՀայր 'ի յիւրմէ բանէն , որ թէ էր երբեմն , յորժամ և չէր , և անբանութեն բամբասանօք պատուել վարկանի զմեծին մեծութի , և կամ սորկութի տայցէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով Հոգւոր , որով այլ իմն գոյութի օտար՝ մուծանել , և կամ ամբոխումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութե սբ երրորդութեն , զայնպիսին՝ քարամբք պարսից՝ Հաւատոյ բանից , իբր զդժնդակ դևս դիմամարտիկս գազանականս՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց Հալածեմք ․ եդեալ 'ի նշովս զնոյնս ընդ-

նոծտսին, փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի։ Ուստի զմ͞ք երրորդութիւնն փառաւորելով 'ի նոյն տ͞րութե͞ն միակցորդ հաւասարութե͞, զուգաձայն սրբաբանութ͞բ, հանգունատիպ հարթութ͞բ, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի, 'ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

ը͞․ Արդ՝ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ տ͞յ ընծայեցուցի․ սովիմք սպառազինեալ, և ապա մուծի 'ի հանդէսն։ Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ստեղծեալ էր քո զա͞մ՝ նախ քան զլինելն երկնի, փառաբանչօքն անմահից՝ և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն 'ի քումդ լրութէ՝ փառաւորեալ իսկ էիր, այլ զի զմերժեալս զիս յարգեսցես՝ անճառ քաղցրութեն, ճաշակել զքեզ բանիս հաղորդութ͞բ։ Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կենաց կանոնիդ՝ առնել ադոնայի տ͞ր, և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել․ որ ինձէն իսկ զիս զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ տ͞յ՝ եղծի, որ և խորտակելն է իրաւացի․ և ես տխրատեսակ մրով՝ զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ։ Այլ արդ՝ քանզի բազմօք պաղատեցայ դրուակօք խանդաղատականօք, որ ոչ է գրեալ

'ի

'ի յայս կարգ ձայնի, ըստ բարեգութ, ըստ սմին բանի՝ այնմ ամենայնի: Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից՝ յօդեալ ընդ նոսին. թերևս 'ի մաքրոց և 'ի կատարելոց այս նուէր հացի՛ պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց՝ 'ի սեղան փառացդ քոց մատիցէ:

Ծ. Բայց դու բարերար և յա̃մի մարդասէր, քո̄դ մի՝ ո̄յ միոյ. հզօր և ամենակալ. որ յաղթես գթութե̃ խնամոց քաղցրութե̃ քո, ոչ հասարակականաց միայն մարդկուե̃ս՝ իմոց գոյակցաց, այլ որս յաւէտ է ամբոխութի̃ և բիւրաւմանեայ հակառակուե̃, այլ և հրեշտակացն անախտականուե̃. նաև՝ և ևս քան զայս՝ սրբասընելոցն անարատուե̃, յորոց մի էր և հեղինաս. որոյ ցոյցք խստութե̃ն՝ 'ի քորեբ լերինն նշանակեցաւ յերկիս օրինակս. 'ի շարժումն մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեզութի̃ երկայնմտութե̃՝ 'ի հանդարտութի̃ մեղմութե̃ օդոյն քաղցրութե̃. քանզի կամաց ողորմութե̃ց՝ դու միայն ես, ըստ գրեցելումն: Վասն զի թէ և հաճոյք դատան մերասեռքս՝ առաքինութե̃ն յեղանակեալ յայլ նմանութի̃ վերնային, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք 'ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ՝ խակութե̃ բարիդ. յամենայնի օրհնեալդ. ամենևին փրկութի̃դ. ամենայնիւ՛ հանգիստդ. համայնից անդորրութի̃դ. համօրէն ախտացելոց՝ դեղ առողջութեան.

աղբիւր ջրոյ կենդանւոյ , ըստ Երեմիայ : Դա՛րձ առ իս և ողորմեա՛ ինձ ․ որ այնքան ծարաւես պապքիս անկարօտդ մեծ՝ խմում փրկութե՟ , մինչ զի զուարթնոյն երկնից անմահից օրհնաբանողաց՝ բան ինն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութբ՟՝ մշանջենաւոր պաշտանս օրհնեալդ քո գթութե՟՝ 'ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութե՟ մաղթել , ողորմեա՛ երուսաղէմի ․ որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութ՟ , առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց , 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութբ՟՝ աւետարանեալ առակաւ այսր օրինակականս երուսաղէմի :

Ժ․ Արդարև լուար՝ բա՛րեգութ ․ անսացեր թա՛գաւոր ․ ունկնդրեցեր կեա՛նք և յոյս ․ 'ի միտ առեր երկնաւոր ․ յարգեցեր հզօր ․ նկատեցեր ծա՛ծկագէտ ․ տեսեր խնամակալ ․ կարեկցեցեր ա՛նպատում ․ խոնարհեցար՝ մի՛շտ բարձրեալ ․ նուաստացար ա՛հաւոր ․ յայտնեցար ա՛նճառ ․ ամփոփեցար ա՛նսահման ․ քանակեցար ա՛նքըննին ․ մածար ճա՛ռագայթ ․ մարդացար ա՛նմարմին ․ շօշափեցար ա՛նքանակ ․ կերպաւորեցար ա՛նորակ , լցեր իսկապէս զաղաչողացն բաղձանս : Դու իսկ եղեր թըշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս ․ միջնորդ կենդանի ․ պատարագ անմահ ․ պատանդ անվախճան ․ նըուէր ռճէր մաքրութ̃ե․ ողջակէզ անծախ․ բաժակ անսպառ։ Ահա մտերմած, մարդասէր, օրհնեալ, մինչ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ․ և քեզ վայել է փառք յաւիտեանս․ ամէն։

⁂

Վերստին յաւելուած երգին հեծութեան՝ նորին հաջողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ։

ԲԱՆ․ ԼԵ։

ա̃․ Եւ արդ՝ տ̃ր զօրութեանց, մեծութ̃ի ահեղ, անտարակոյս տեսաւորութ̃ե, կամք ամենընդարձակ, առատութ̃ի անսպակաս, ո՛վ որ զօրեսցէ տանել հանդիսի̃ պարերգութ̃բ՝ 'ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարութ̃ե, որ ցանկ դեգերիս պատրաստել սպառնաս հնարից՝ իմում փրկութ̃ե։ Եւ զոր մեծն է գրեցից՝ պատմել յապառնիսն․ քանզի ո՛չ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութ̃իս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս զամբարօք նոցին՝ զմտատանց քոց գործ, ո՛չ գրեցեր երբեք սիրել զնոսա․ այլ պատուեր 'ի պատի̃ մեծաց գովեստից՝ առաջին դասեալ զմարդասիրութիւնն։ Վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անձառ 'ի խորհուրդս սոսկալիս․ զերկնայինս զուսակերպեցն կոչեցեր զնոսին սպասա-

թ̃․ ւորս

ւորս և գլխաւորս յատուկ մատակարարուե̃ց ․ իսկ զատորնային ծնունդս մանկանացուցայ՝ տիրական և ա̃ծական պաշտելի անուամբք պերճացուցեր ։ Անցեալ վերստին ըստ սահման կշռութե̃ չափոյ , լայնեցեր քեզ կտակս գրոց՝ ճառից անբաւից՝ զանապակ ծորմանն ծայրագունին վերնում բարութե̃ն ։ Եւս և 'ի մարդանալդ քո միդ յէութե̃ն , ոմանց վ̃ն ինքեանց , և կիսոց վ̃ն այլոց՝ զեղեր առատութ̃ զտուրս կենաց ․ արուեստս բազմօրինակս ․ սքանչելիս ա̃ծագործս ․ նշանս ճշմարտատեսիլս ։ Որպէս զի թէ անդամալուծին սպսկանելոյն 'ի հաւատոցն , հոգաբարձացն առաջարկութ̃ զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար , և որչափ զօրեսցէ առաւել բան քո ամենակար՝ առախտալից մարմնոյս մաքրութ̃ աղաղակողիս հառաչման ․ քանզի արդարև մեծ են չափք հրաշից՝ քան զանմաքրեալս հոգի՝ մ̃բ հասանել , զլուացեալս պատկեր՝ անտիրելի աղտոյ ներգործել ․ նա զի և երկբորդս սաստկութ̃ յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառսն հայրենի բարձրացուցանէ ։

Է ․ Դու ես Տ̃ր , որ սրբես զմեզ , ո̃ր ընտրեցելոյն քոյ նախատպաւորեցեր մովսեսի ․ դու ես , որ 'ի մեղս և յանօրէնութիս՝ վերակացու եղեր տոհմին յակոբայ , մինչ յեգիպտացւոցն երկրի՝ ընդ խաւարին հեթանոսաց ընտանենային ։ Դու ես , որ օրէնսգէտ առնես զմեղաւորսն 'ի ճանապարհի , ըստ բանի երգողին դաւթայ . դու ես , որ փոխատրես զքարեղէն սրտից կարծրութե՟՝ 'ի լոյծ կակղութե՟՝ մարմնոյ գոյութե՟՝ բանի ընդունելութեան : Դու ես , որ բաւես ընծայել սիրտ այլ , և ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն՝ զբովանդակ կենացն սահման . դու ես , որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութե՟՝ առ քեզ ուշ ունել հաւատովք , ըստ մարգարէիցըն ձայնի :

Է. Օրհնեալ քո շրթանցդ՝ զաշխարհաստեղծ բերանոյդ՝ զիծեղէն անձրևացդ զկեցուցանօղդ կաթուած՝ մատու՛ լսելեացս դրանց բացարան , որով զօձին խորամանկութիւն՝ բանսարկուին թիւնից՝ բարձցես և բժշկեսցես : Ամենակալդ ձեռօք՝ զխօսնականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեամ զօրութե՟ ձայնի , որ տաս բնաւից ընտրութե՟ բանի . զի դատխարակեալ զպատշաճականն մի՛ յանդգնաբար խօսելով իբր զնախնին՝ լքայց 'ի յուսոյդ , և անբանութե՟ մատնեցայց փանեալ յորսողէն : Լուսաւորեա՛ վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ , զի մի՛ համարձակութե՟ն շիջեալ լապտեր՝ շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ գրուանին ստորածածկեցայց : Բարձ զանօրէնութիս իմ՝ Տ՟ր , և ընկեա՛ 'ի խորս ծովու . որ է փոքր առակ մեծութե՟ քումդ անբաւութե՟ , ըստ մարգարէին , զիմս ընկղմել չարութիւն : Կանգնեա՛ կործանեալս անձին՝ նշան վը-

տա

տաճութե՟ , զի մի՟ յուսահատութեան կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն բորոքեսցէ ։ Բայց հզօ՛ր և գթած՝ զբժշկարանիդ կենաց վարդապետարան , զի զառ՚ի ներքոյն մշակութե՟ կորուսչին սերմանց՝ մանկաղաւ համայդ՝ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես ։ Դիմեդեալ հեռեել առ քեզ բոլորիցդ ո՛վ՝ պետրոսեան օրհնակութե՟ն , ՚ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց՝ ընկլուզայ . մատո՛ ժամանեա՛ զաջդ կեցուցի՛՝ յօգնականութի՟ ինձ սասանեցելոյս ։ Ընդ քանանուհւոյն ձայնի՝ ՚ի խորոց սրտիս պաղատիմ , սովեցելոյս՝ ապականասպաս կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս , ապրուստ կերակրոյ փշրանաց հացի՝ ՚ի բազմազեղդ քո սեղանոյ մասնաւորեսցես ։ Արա՛ փրկութի՟ նիւթոյ խորանին՝ որդւոյս դառնութեան , որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս ։ Զի քո՛ է մեծութի՟ , յաղթութի՟ և զօրութի՟ . և դու ես քաւութի՟ և բժշկութի՟ , նորոգութի՟ և երանութի՟ . և քեզ վայել է փառք և երկրպագութի՟ յաւիտեանս . ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. ԼԶ:

ա. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ և դերազանցութի՟ք միշտ առաւելեալ, փրկանաւորդ արդասիք շնորհաց՝ առ. պարտուցս իմոց առաւելուի՟, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն: Զափդ ամփոփիչ ամենից հոգւոց՝ գոյից արարիչ՝ 'ի գործարանի մահուն՝ նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկուի՟ իմ ընդդիմութե՟ կամաց քոց՝ լքցես: Զընթացողականդ լծակցուի՟ երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեա՟ պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագուի՟ թշուառացելոյս՝ գրաւականեսցես գթածաբար:

բ. Ո՛չ գօսանալ ձեռաց կռփողացն հրամայեցեր՝ օրհնեալ գագաթանդ, որ ընդթզենւոյն տունկ՝ առժամայն չորացուցեր, զի և զառ. իս ներելոյդ օրինակ՝ կանխաւ աւետարանեսցես: Ո՛չ դանողացն ապիրատութե՟ զխոստովանեալդ տծ՟՝ սպառնացար, որ զարուեստակն մթացուցեր, զի մահացելոյս անձին՝ բարութիւն հանգստեամբ հանդերձ գործեսցես: Ո՛չ ընդհայհոյչացն հնարաւոր չարաքանութիւն կապտեցեր, որ զլուսնին պատկեր՝ երանգաւ արեան գունեցեր, զի զանհամարձակ լեզուս՝ 'ի գովեստ քեզ զօրացուսցես : Ո՛չ նախատողացն մոլեգնութե՟ սաստեցեր, որ զտարերս սասանեցեր, զի զթշուառացեալս գլուխ՝ գթութե՟դ օծմամբ իւղեսցես : Ո՛չ 'ի մոլորեցուցիչն կարդալ զքեզ ա՟ծասպանիցն՝ զօդուած ծնօտիցն բաժանեցեր՝ քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրութ՟ի վիմացն հերձեր, զի զանունակս բարեաց հոգիս՝ 'ի բերմանէ ընդունայնութ՟ե՝ ողորմութ՟բ հանդարտեցուսցես: Ո՛չ զպահապանացն սուրս՝ ընդերաց իւրեանց մատուցեր, որ զորովայն օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս՝ իբր 'ի գանձարանի պահեալ, կենաց յարութե՟ արժանացուսցես : Ո՛չ 'ի կնքելն զշիրմին փականս՝ կենդանակիր քո գերեզմանին՝ անդրէն յորայսեալս զնոսին՝ յանդունդս երկրի սուզեցեր, զի 'ի տապանակի անձինս՝ զնշխար լուսոյդ հանգուսցես : Ո՛չ 'ի համբարձեալն զքեզ կորուսեալ, և իբր զերկրաւոր մարմին գողացեալ, համայնս ջինջ և ամենասպառ՝ զսերմն ծննդոցն կրճատեցեր, զի զիս զանարժանս յիշատակի ընտրութե՟ բարեաց՝ անկորուստ և անմնաւելի՝ ընդ փրկեցելոցն հաղորդեսցես : Ո՛չ յարծաթոյն կրկնակապէն կաշառաձգութիւն, որ 'ի գանձարանէ հօր քում նուիրեաց՝ քեզ գրաւ մատնութե՟ և անարգութե՟ մասնաւորեցին՝ զուարացղացն մոլեգնելոյ, ըստ հին հարուածոյ հանուոյն մոլարու՝ 'ի յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զվրիպեալս 'ի հաստատութ՟ց՝ և ընդ իշխանութ՟բ մահու վաճառեալս՝ արեամբ քո փրկեալ՝ 'ի հաստատութ՟ին վիմին կառուցես։ Օրհնեա՛լ կրկին, օրհնեա՛լ վերստին, յա՟մի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից· ամէն։

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ։

ԲԱՆ. ԼԵ։

ա. Արդ՝ այդ գումարտակ վերադասեցեալ բարեշնորհութ՟ց քոյդ արդեաց առ իմս երախտիս, ո՛չ ամենագութ բարերար գոլեալ և ամենազօր, թէ և սակաւք շարագրեցան աստանօր եդեալ, այլ անքայլագունք են, և իշխանականք ինքնակալութ՟ց· որդիք զօրութ՟ց, ծնունդք վեհից· մեծափառք, լուսանորոգք, և հրաշապատիւք։ Յաղթողական վերամբարձութ՟բ՝ դրօշիւք հռչակեալք ըստ գլխոց գլխոց՝ պսակապանծոյց գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթի՟ պետութիւնս օրհնաբանողաց, համբոյրս՝ հեզս՝ երջանիկս և խաղաղականս՝ ա՟ծային հարազատութ՟ց՝ այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զայ-

թն

Թէ տ՟ր զզօրութիւն քո , և ես կեցուցանել զմեզ · որք յոյժ զօրեն հալածել ըզմեզ , և զանյուսութ՟ն կարկուտ հալել և փախուցանել , քան թէ նախամարտիկն զինուորու՟ն երկնային պարուն՝ զգիշերավարն խաւարասէր սկզբնաներհակ՝ բարւոյն ա՟յ : Քանզի և զբնաւն այսքանեացս ձրից՝ որ 'ի բարձրելոյն ինձ անձրևեցաւ , տկարիս՝ թշնամւոյս՝ և ապախտաւոր ծառայիս , անճառ է ասել · իսկ եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել , զպակաս 'ի բազմացն՝ քան թէ զլսկութ՟ն համամայնից · առ այսոսիկ՝ զառաջին նիւթն յիշելով՝ յորմէ հատեցաւն , իբր զտկար ոք նկուն՝ 'ի զօրութենէ մեծէ հերքեալ

պարտեսցի :

Է · ԹՈՂ թէպէտ և սոյնպէս գրեցի , և դարձեալ զնոյն վկայեմ առ թերի խակութ՟ն հողոյս՝ և կատարելութ՟ն հաստողին , և առ բարին՝ իմ չարժանութ՟ն , սակայն ամենալոյս աննախանձ և բազմազեղուն գովեալ արարչութ՟եդ զօրեղութ՟ն՝ վանեալ են կարծրութիւք արատաւորութեան սրտի բանսարկուին · որ քարին սուտակայուսահատն վհատութ՟ն , սպառնալիք խոպանացման աղբերացս երկուց , որ 'ի ըզգայականս եղեմայ բղխել պատրաստեայց անկօղն , զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ 'ի յիս բարեգործութ՟ն կենսատունկն դրախտ , ահա մի ցամաքութ՟ե արտասուաց՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խորամանկեսցէ վերստին հանել 'ի

փափկուէ̃ նախնում վիճակին ։ Իսկ յորժամ կացցէ ա̃ծ՝ համբարձեալ հրաշիւք արուեստից՝ 'ի մէջ աստուածոց հաշտաբանացն խաղաղութե̃ , բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ , առ որ ամենայն վնասակարութիւ̃ք խարդախութե̃ց՝ և կարծմըտութիւ̃ք սրտնեղութե̃ց , իբր ընդ վիմեղէն լերին պնդութե̃ բաղխեցեալ ցնդին՝ ջրոյ օրինակաւ սակաւու հեղեալ , և կամ
հողոյ՝ խորտակմամբ փշրեալ ։

է̃ · Արդ՝ չև իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին յոբայ՝ 'ի մարդկանէ իցեն , այլ յամենատես աչաց վերին հրամանիդ՝ մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս , սոսկմամբ սասանեալ յա̃մ կարծեաց , ապաւինիմ և արդ անձամբ բեկելով 'ի յոյժ հաստատութե̃ կենդանի անեղծ · զի ողորմութի̃ նայեցեալ 'ի յիս՝ իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոց , առաջի բարերարութեան երկնայնոյդ յանդիմանեղեալ՝ ապաձեռն անթոշակութե̃ , զքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ · որ ո՛չ մոռացմամբ զքաղեալ նիրհես , և ո՛չ թարթափմամբ աչաց ընդմիջեալ զհեծութի̃ կրից անտեսես ։ Վերացո՛ յինէն աղաչեմ զքեզ , խաչիւդ լուսոյ՝ զխեղդ վտանկիս · հոգարկութե̃ տրտմութե̃դ՝ զտարակուսելի տխրութիւս · փշանիւթ պսակաւն՝ զբողբոջ մեղացս · պարկուճածով դանիւն՝ զհարուած մահուս · ապտակին յիշմամբ՝ ըղկայլիս ամօթոյս · թշնամանօք թքոյն՝ զան֊

գոմնելի գարշութիւնս . լեղւոյն ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութի ։ Ահա՛ քո են այս ա՟մ բարութի՟ք անբովանդակելիք՝ ա՟յ միոյ միածին որդի . առ որովք զշարութիս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ՝ իմանալեացս պաղատանօք ։ Տես 'ի խոստովանութի՟ զղջման պարտութե՟ ամաչեցելոյս , և տուր ողորմութի՟ որդւոյս սատակման մահուն անմահի . զի 'ի բազմութե՟ իմոցս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աճեցմամբ առաւելութե՟՝ քո ողորմութիւնդ աւետարանեսցի , հռչակեալ հնչմամբ ահաւորութե՟ յերկնի և յերկրի ։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով՝ փառք յաւիտեանս . ամէն ։

* * *

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ . ԼԲ ։

ա . Բայց արդ՝ որպէս երբեմն յոյլ ընթերցուածի՝ որ 'ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն զխաւարային ծնունդս գլխաւորացն՝ օրինացն՝ մարմնականացն անդամոց՝ գրեցի , յորոց տիրեցայ ժառանգս մահու , նոյնպէս և յայսմ սահման ընտրութե՟ բանի՝ զլուսածնելոցն զազատարարն օրէնս հոգւոյն կենաց՝ որ 'ի տ՟ր յ՟ս՝ յիշատակեցից նուաղս յոքունց , իբր յանքաւ բազմութե՟ց ծովու՝ կաթիլ մի առեալ:

է̄· Քանզի են արդարև կայսերականք ոմանք 'ի բարձրութե՟ն գահի բազմեալք, թոշակաւն շնորհաց լցեալք և հարստացեալք: Թագաւորն՝ և սիրեցեալք իւր · արքայն՝ և պատուաւորք իւր · պսակեալն՝ և իշխանականք իւր · բարեհռչակեալն՝ և հնչմունք իւր · յաղթողականն՝ և փողք իւր · զօրաւորն՝ և մարտիկք իւր · գովեցեալն՝ և փառք իւր · փեսայն՝ և պարաւորք իւր · գլխոյն՝ և օրհորդք իւր · փեսաւէրն, և հանգերձանք իւր · ազատութե՟ն՝ և շնորհք իւր · այցելութե՟ն՝ և ձեռն իւր · խոստումն՝ և քաւուե՟ իւր · պահպանութե՟ն՝ և աչք իւր · պարգևն՝ և զարդ իւր · նշանն կենաց՝ և ամրութի՟ իւր · կնիքն՝ և նկարագիր իւր · ամպն և հովանի իւր · արուեստն՝ և հրաշք իւր · հոգին՝ և անեղծութիւն իւր · բանն՝ և կատարած իւր · ուխտադրութե՟ն՝ և լրումն իւր · զօրութե՟ն՝ և հրամանք իւր · լուացարանն՝ և սքանչելիք իւր · մանանայն՝ և անապականութիւն իւր · վէմն կենդանի՝ և վտակք իւր · սիւնն հրոյ՝ և ճառագայթ իւր · որոտումն՝ և ազդմունք իւր · յոյսն վերին՝ և փրկութե՟ իւր · ծառն օրհնութեան՝ և պտուղք իւր · բարունակն՝ և բարութե՟ք իւր: Եւ զի մի զբնաւն ասելով՝ յամենայնէն վրիպեցայց, իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութիւն, 'ի շատն ասել լռեցից՝ և 'ի սակաւն ժամանեցից, բաւա-

կա

կանացեալ ամէնապիկար կարիճ ։

Դ. Բայց աւա՛ղ յաւէտ սատանօր՝ թշուառացելում եղկելի անձինս · քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս՝ բողոք գուժիս · վն զի ընդ այսոսիկ առընթեր սորին գայ, արդարութին՝ և կշիռքն · վճիռն՝ և հատուցմունքն · քննութին՝ և լոյսն · յանդիմանութին՝ և զամբարքն · մերկութին՝ և պատկառանքն · յայտնութին՝ և ամօթն · ամբիծն՝ և վասատակքն · թիւրեալն՝ և պատիժքն ։

Ե. Դարձեալ վերստին աշխար՝ կրկին եղկելոյս · քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս՝ անհնարին բարկութե, մանգաղն՝ առ հունձն · դատաւորն՝ առ ատեանն · հզօրն՝ առ բեմն · սպառնացեալն՝ առ կորուստն · բազուկն՝ առ դատապատանն · դաւազան խրատուն՝ առ հարուածն · սպառազինութին՝ առ նախանձն · հովիւն՝ առ ընտրութին ։ Քանզի բանն՝ զոր խօսեցար ընդ իս, նա դատի զդատապարտեալս ՚ի վերջնումն աւուր հատուցմանն ։ Այլ կանխեա՛ բարեգութ, նախընծայ քաղցրութե՝ առ նուաղ հեծութե վարանական երկիւղիս · և զօրութիւն ընձեռեա՛ ձեռամբդ օրհնութե ՚ի յետին տագնապիս՝ առաջինդ քո օգնութե մխիթարել բժշկել, քաւել և կենագործել ։ Եւ քեզ փառք յաւէտ՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Վերափէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հօկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ :

ԲԱՆ. ԼԹ:

Ա. Եւ քանզի զկերպարանն առաջին լքի 'ի չնաստակարին թեւագրութենէ՝ խմելս ծուլութ̅բ կորուսեալ խապառ, ցուցից արդ այժմուս զհնոյն յիստեսակ. ողորմելի հեծութ̅բ թախծեալ 'ի հոգի, անաչառ խայտառականօք հրապարակաւ՝ 'ի յեկեղեցիս բազմութ̅ե ազգաց՝ վերապատմեցից բարձր ձայնիւ՝ բարբառով մեծաւ աղաղակելով:

Բ. Մատեանս ընչական՝ բարդեալ 'ի յինքեան ներքոյ և արտաքոյ ողբս՝ և վայս՝ և ձայնս, ըստ տումարի տեսլեանն եզեկիելի. քաղաքս անպատուա՛ր և անմահարձան. յարկս ունայն՝ 'ի դռնափակաց ամրութ̅եց. առս տեսակաւ, այլ ո՛չ համեղութ̅բ. ջուրս աղտաղտին՝ անախորժելի ծարաւեաց արբման. գետինս՝ անօգուտ հերկագործութեան. սահմանս ընքեալ՝ հեղեղավայրս կնիւնոյ. խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս. Ա̅ծախնամ երկիրս անձնաւոր, որ բանսարկու՛ին պատրանաց մշակեցայ. եւ ընծիւղ փայտս պտղակորոյս. հատանելի ծառս ունայնաբոյս. կրկնամեռ խոսուն տունկս անյոյս. ամ̅ենաչէջ ծրագարանս անլոյս ։ Արդ՝ վերստին առ սոյն բերելովզայս նմանութ̃ն աւաղականաց , բազմօք կրկնեցից ․ որ ամօթոյն դառն պատուհաս՝ պահեալ կայ հեքոյս , կրճումն ատամանց , և անկէտ լալումն աչաց եղկելոյս ․ հայրական ցասումն անսպուժելի՝ դառնութե̃ն որդւոյս ․ ապականութին աննորոգելի՝ մեղուցեալ մարմնոյս ։ Նոր կշտամբութիւն գոռզիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս ․ տարտամ տագնապի տարակուսանաց՝ ելից գերելոյս ․ զոր երկնային զօրքն մատուցանեն՝ թշուառացելոյս՝ 'ի խրձունս որոմանցն վկայելով վըտանկեցելոյս ․ 'ի ձայն ահարկու՝ զանբըժշկութին աղգել լքելոյս ։

Դ ․ Ահա արդարև երգս կատակերգութե̃ն ընդարահար պոռնկի ․ յածեալ և կոծեալ քաջ հնչեցուցեալ , ողբս ողորմելիս և զկծեցուցիչս , ըստ առակաւոր բանին եսայեայ՝ որ 'ի պատգամին տիւրոսի ։ Զի թէ նա՝ զդիպուածն փոքր անցից ապանեացն՝ 'ի մօտոյ լինն տապաւորեալ , բողոքէր դիմակս դիմակս՝ կերպից կերպից աւաղականաց , ըստ կոծողացն կաքաւելոյ ․ իսկ առ իս ո՞րչափ և ո՞րպիսիս ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս ․ որ գալստեանն տ̃ն սպասեալ առանց վրիպանաց , մնացի անպատրաստ և անհանդերձելի ։ Արդ՝ եթէ զդատաստանացն ահաւորութե̃ կըրկնեցից , բազմացուցից ինձ աշխար ․ ապա եթէ զփորձն խնդութե̃ ցուցից , յաճախէ ինձ երկիւղ ․ իսկ եթէ զկերպարանացն

մե

տեսիլ գրեցից, տռաւելուն իմն հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զայսն՝ և ոչ անագան ապաշաւեցի : Այլ խնայեա՛ յիս՝ գթած, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգև Ք̅ս թագաւոր, օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն :

* * *

Վերափին յաւելուած իւրին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ :

ԲԱՆ. Խ :

ա̅. Ամենակա՛լ ա̅ծ բարերար ստեղծիչ բոլորից՝ լո՛ւր հառաչանաց ձայնիս վտանգի, և յերկիւղէ տագնապի աղաղակից կարծեաց՝ փրկեա՛ կարող զօրութ̅բ զերծեալ ՚ի պարտեաց. քանզի բաւական ես յամենայնի՝ առ ա̅մ հնարս զօրանալ անքաւ մեծութ̅բ և խնամատու̅բ անհամեմատելեաւ :

բ̅. Եւ քանզի ուշիմ մնացս՝ տեսեալ ՚ի հեռուստ զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ՝ նկատեմ ինձէն առատանօր կանխաւ զտիւն լուսոյ՝ որ̅ցն յուսոյ, զօրն խաւարի՝ պատժապարտս պատուհասի. ուստի ո՛չ զօրէ ոք յելից՝ առ պատսպարան փախստեան : Ո՛չ անդունդք խորոց. ո՛չ վիհք վհից. ո՛չ բարձրութիւնք լերանց. ո՛չ անձաւք քարանց. ո՛չ կարծրութիւնք արձանաց. ո՛չ ծերպք ծակաց. ո՛չ փապարք փոսից. ո՛չ սորք հեղեղաց. ո՛չ քաւիղք խորշից · ո՛չ շտեմարանք յարկաց · ո՛չ ծածկութիւնք սենեկաց · ո՛չ ամակք հովտաց · ո՛չ ծործորք դժուարաց · ո՛չ վերադրութիւնք բլրոց · ո՛չ արձակմունք շնչոց · ո՛չ անբաւութիւնք ծովուց · ո՛չ սահմանք յորձանաց · ո՛չ հեռաւորութիւնք եզերաց · ո՛չ ողբմունք ձայնից · ո՛չ հեղեղք արտասուաց · ո՛չ տատանմունք մատանց · ո՛չ համբարձմունք ձեռաց · ո՛չ պաղատանք շըրթանց ։

Գ · Ի յոյզին սաստկութե̃ց մատանց անծողոպրելեաց՝ դու ես Տ̃՛ր քս̃՝ հնարք և դադարք դիւրութե̃ և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ · որդ՝ հայեամ 'ի յանզերծ վտանգիցս շրջադրութիւն՝ միա՛յնդ քաղցր առ ամենեսեան ։ Խղեա՛մ սուսերաւ յաղթական կենաղէն խաչիդ՝ զցանցս վարմիս , որ յիմ՛ կայից պաշարեն 'ի մահ զգերիս · և հա՛ն 'ի յանդորր՝ զոտս սասանեալ թիւր ընթացողիս ։ Բժշկեա՛մ զհրատապ ջերմնական տոչորումն՝ մղձկեալ սրտիս · մերժեա՛մ զդիւային չարահնարութե̃ս շշուկ՝ քո պարտաւորիս · հալածեա՛մ զյուսահատ անձկութե̃ հոգւոյս մթութի̃՝ չարի կենակցիս · ցրուեա՛մ զծխամած թանձրութի̃՝ բռնութե̃ մեղացս երւոյթ՝ մոլեգնոյս 'ի յիս · կորո՛ զզազիր թխասախպ կրիցս՝ ապականութե̃ս կարիս ։ Նորոգեա՛մ զպատկեր լուսոյ՝ պաշտեցեալ փառաց մեծութե̃ անուան հզօրիդ՝ յոգիս · զօրացո՛ զշնորհիդ փայլումն՝ 'ի գեղդիմացս , և 'ի կերպարան տեսութե̃ մըտացս

տացս հողեղինիս , յարմար յերկուրմանց կացո՛ յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութե̃ զտեալ զմռայլս մեղաւորիս , Ածային կենդանի՝ անեղծ երկնաւոր լուսով քո ծածկեալ՝ յօրինակս երիս ։ Զի դու միայն ես օրհնեալ ընդ Հօր՝ 'ի գովեստ Հոգւոյդ սբյ՝ յաւիտեանս յաւիտենից • ամէն ։

❖ ❖ ❖

Վերստին յաւելուած նշխեն հեծութեան՝ նորին հանգոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ• ԽԱ։

Տր • Որդի Այ կենդանւոյ օրհնեալ յամենայնի , հօրդ ահաւորի անքննին ծնունդ • որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ ։ Որ 'ի ծագել անստուերեր նշուլից՝ ողորմութե̃ քոյ փառաց , հալին մեղք • հալածին դևք • ջնջին յանցանք • խզին կապանք • խորտակին շղթայք • կենդանածնին մահացեալք • բժշկին հարուածք • ողջանան վէրք • բառնին ապականութիւնք • տեղի տան տխրութիւնք • նահանջին հեծութիւնք • փախնու խաւարն • մեկնի մէգն • մերժի մառախուղն • փարատի մռայլն • սպառի աղջամուղջն • վերանայ մութն • գնայ գիշերն • տարագրի տագնապն • չքանան չարիքն • հալածին յուսահատութիւնք • և թագաւորէ ձեռն քո ամենակար , քաւիչդ Ամի ։

ե̄· Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել· թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմուբ̄դ· զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին·'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի· սկիզբն ա̃մի, և յա̃մի· ամենայն լրմամբ օրհնեալ 'ի բարձունս· և քեզ ընդ հօր և հոգւոյդ սբ̄յ փառք՝ յաւիտեանս· ամէն:

* * *

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա̄յ:

ԲԱՆ· ԽԲ:

ա̃· Տ̃ր ա̃ծ գթութե̄ն՝ փրկութե̄ն և ողորմութե̄ն, քաւութե̄ն և նորոգութե̄ն, բժշկութե̄ն և առողջութե̄ն, լուսաւորութե̄ն և կենդանութե̄ն, յարութե̄ն և անմահութե̄ն, յիշեա՛ զիս յորժամ գայցես արքայութբ̄ քո՝ ահաւոր՝ հզօր՝ բարերար՝ և ամենաստեղծ կենդանի՝ գովեալ՝ ամենակատար, մերձ 'ի հեծութիւն համայն եղելոց: Ընդ խառնեցելոյն ընդ քեզ՝ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քոյ՝ և ոչ կապեցեալ, ոչ կախեալ՝ և ոչ բևեռեալ, ոչ կռփեալ յանուն մեծիդ՝ և ոչ անարգեալ, ոչ լլկեալ՝ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ՝ և ոչ մահացեալ, և արքայութե̄ն արդարոց՝ մասին անձկալեաց լուսոյ՝ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենիմն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոցն, փառաւորեցեր առ յոյս փրկութեան իսպառ լքելոյս:

Բ. Օրհնեալ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք, կանգնեա՛ ՚ի կործանմանէս՝ բարերար. բժշկեա՛ ՚ի հիւանդութենէս ախտից՝ ողորմած. յեղերաց մահուս դարձո՛ զիս ՚ի կեանս՝ կենդանութիւն. քո՛ եմ և ես, կեցո՛ ընդ նմին՝ ապաւինութիւն. անձամբ մեռելոյս՝ կենդանական շունչ ընծայեցո՝ յարութիւն կեանք անմահութիւն. անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, ա՛ջ ամենազօր, ձեռն ամենիշխան, մատն ամենամերձ: Կամեա՛ց տ՜ր՝ և փրկեցայց. ակնարկեա՛ միայն գթութ՜բ՝ և արդարացայց. ասա՛ բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց. մոռացի՛ր զթիւս չարեացն՝ և անդստին համարձակեցայց. առատաձեռնեա՛՝ և արդեն ՚ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամէն յաւիտեանս. ամէն:

* * *

Վերոփէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս ծաղկանոյց բանի:

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՜յ:

ԲԱՆ. ԽԳ:

Ա. Բժշկական կրթականութեան ամենափորձ հնարաւորութեամբ՝ պատճառ-

կե

կենաց անախտականաց , Թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տ՛ր յ͞ս ք͞ս ․ տէր ամենեցուն , խնամողեաց և տեսականաց ․ ահա՛ դու 'ի յիս , ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդութե ․ առ որ բարեզարդ դաշամբ այս բանի՝ ընդ քեզ միութեան , լուսաւորեցայց կրկին ողջացեալ հոգւով և մարմնով , ամենայնիւ կարօղ և անվանելի ։

Ը ․ Որ ոչ կարօտանաս սպեղանեաց , առ պատրաստուն պատատանաց՝ հոգեկան վերաց ․ ոչ ժամանակի ․ ոչ միջնորդի ․ ոչ աւուրց երկարաձգութե ․ ոչ փոփոխմա մատուցանելոյ ․ ոչ հատման ․ ոչ խարման ․ ոչ սրագործութե , ըստ երկրաւորս դեղատուութե , առ որս միշտ է վրիպումն և ամենասխալ տարակուսութիւն ։ Այլ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց , ա͞մ ինչ՝ լուսաւորեալ է ․ ա͞մ ինչ՝ առաջի է ․ ա͞մ ինչ՝ գրեալ է ․ ա͞մ ինչ՝ դիւրին է ․ համայնն՝ հնարաւոր է ․ իմաստն՝ գլխաւորեալ է ․ խոստումն՝ լցեալ է ․ կամելն՝ կատարեալ է ․ քո կտակն՝ աւետարան է ․ քո վճիռն՝ արդարութիւն է ․ քո մատեանն՝ շնորհ է ։ Ո՛չ փակեալ ես ընդ օրինօք ․ ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ ․ ոչ արգելեալ ընդ նուազութք ․ ոչ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ ․ ոչ պարտադրեալ ընդ փոքրկութք ․ ոչ չափեալ ես ընդ սահմանաւ ․ ոչ վրիպեալ 'ի բարկութէ ․ ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ ․ ոչ սխալեալ 'ի խստութէ ․ ոչ ամբոխեալ 'ի խռովութ՟է. ոչ դղրդեալ յանգիտութ՟է. ոչ փոփոխեալ յողորմութ՟է. ոչ պակասեալ 'ի բարձրութ՟է. ոչ լքեալ յայցելութ՟է. ոչ տկարացեալ 'ի փրկութ՟է: Դու սկիզբն՝ և լրումն ամ՟ի. և 'ի քէն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութ՟ին յաւիտեանս. ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ:

ԲԱՆ. ԽԴ:

Ա. Ով անսահման, ծնունդ Ա՟յ հարազատ անթարգմանելի. արարիչ բնաւից եղելոց, Ք՟ս թագաւոր. լոյս 'ի խաւարի սրտից մթացելոց. ընդ մեզ լծամամբ, և ընդ առաքչիդ խոկութ՟բ. մերայինովս զքոյինսդ ծանուցանող հրաշապէս: Հայր քո օրհնեալ երկնաւոր անճառ՝ որ առաքեաց զքեզ 'ի վերուստ, ում՝ փառակիցդ ես արարչութ՟բ, այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ, մինչև զքեզ իսկ մատնեաց մարդկան: Իսկ դու կարող գոլով 'ի վեր քան զվիճուս՝ զանտեսութ՟են աւարտեալ խորհուրդ, համեցար ընդ պարտեցելումս՝ զմահուն ճաշակել բաժակ՝ անթերի մարդկութ՟բ, և անպակաս ա՟ծութ՟բ: Եւ հոգիդ Ս՟բ կենդանարար՝ որպէս քո, և հօր քոյ էակակից, և համապատիւ էութ՟բ

ծնող

ծնողիդ՝ և ծնիչելոյդ ։ Մի երրորդութ՟ կատարեալ 'ի դիմաց երից անորոշելի հատուածոց · անսկիզբն և անժամանակ · բնաւինբարերար · համայն կենդանարար · բոլորից խաղաղարար · ստեղծիչ գոյից · և յօրինիչ ամենից · անքակութ՟՝ և միով բնութ՟ փառաւորեալ ։

Թ · Իսկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէութ՟է՝ վս՟ մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ յանքննելին ծոցոյն, ոչ անխայեալ յորդիդ 'ի համապատիւդ և 'ի սիրելիդ, այլ կամաւ նուիրեաց մահու՝ չարչարողացն զինու, ըստ մարգարէուե՟ն զաքարիայ · վս՟ զի զարթնուլ սրոյն 'ի վր՟ հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցրուիլ ոչխարացն հօտին, որ՟ք օրինակն նուրբ նախագրին՝ և ուխտագրութիւն խորանին՝ և նուիրումն արեան սպանդին՝ և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին, զփրկուե՟ն Թշուառացելոյս՝ 'ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր · և արդ հիմ որոմիս՝ անձն իմ կործանեալ՝ ոչ յա՟ծուստ հնարաւորուե՟ց, այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտուե՟ց · կամ ընդէ՞ր զիս խռովեալ՝ յուսահատութ՟ սատանայական զմիտս հարեալ · յուսամ յա՟ծ, խոստովանն լեր նմա, և նա հոգայ վասն քո, ըստ դաւթեան սաղմոսին, և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի ։

Ժ · Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստաղին՝ 'ի վեր է քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և երկրականաց · և եթէ բիւրս կրկնեսցի, ոչ լինի չափեալ · քանզի անբովանդակելոյն՝ և բարերարելն է անճառելի : Նա զի ոմն օրհնեալ՝ զոմն օրհնաբանեալ՝ յերրորդական համագոյութէն առաքեալ · իսկ նա 'ի հաճութեն կամաց առաքչին մեռաւ · և միւսն ահաւոր՝ 'ի յերկուցն հաւանութե՝ մեծաջան բաղձանօք մաղթէ : Իսկ համաբարբառոյ միակամուեն ցուցակ՝ առ 'ի միոյն բարի ներգործել, որպէս հոգին՝ կենդանւոյն, և բանն՝ բանականին, պայծառութե՝ փառացն, և կերպարան՝ էութեանն : Առ կեանսն փոյթ · առ ողորմութին սթափ · առ ձեռնկալութին պատրաստ · առ փրկութին կազմ · առ առատութին յորդ · առ յաճախութին զեղուն · առ անբաւութին լի · առ աննուաղութին փարթամ · առ երկայնմտութին ձոխ · առ անհասութին բարձրեալ · մի երրորդութե կատարեալ 'ի յանձանց երից · օրհնեալ յաւիտեանս · ամէն :

* * *

Վերստին յաւելուած կրկին հետեւութեան՝ նորին հովուի, առ նոյն աղերս ճառընթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ · ԽԵ :

Ա · Եւ արդ՝ յոյս բարեաց անկեալ 'ի սրտի՝ անձն իմ՝ կործանեալ, և զօթեւան հաւատոյ անդեալ զերիկամանցդ երկակի մասունս՝ զկրկնապատոր խորհրդոցդ զցանկականիդ գործարան, խոստովան լեր բարերարին իմ ։ Զմտացդ՝ իբրև զգործոց ․ զխորհրդոցդ՝ իբրև ըղձութեանց ․ զանտեսիցն՝ իբրև զպայմանեցելոց ․ զսրտիդ ծածկութից՝ իբրև զբարբառումն ձայնից ․ զակնարկութեանցն՝ իբրև զարդիւնականաց մեղանաց ․ զաղտեղ շրթանցդ՝ իբրև ՚ի գլուխ ելելոց չարեաց ․ զոտիցդ հետոց՝ իբրև զղատոճիրանաւն իմ վազողաց ․ զձեռացդ ձգումն առ ցասումն՝ իբրև ՚ի հեղումն արեան գործողի ․ զծիծաղելն բնաւին՝ իբրև զկամաւորական լքումն շնորհի ․ զերդմնականն, որ թէ ՚ի հանդէպս՝ թէ ՚ի տարադէպս՝ իբր զգործակցուն խաբողին ։ Զամբարտաւանութիւն՝ իբր զհին կործանիչ նախաստեղծին բարձրումն ․ զսրտին նեղութիւն՝ իբրև զթերութիւն հաւատոց ․ զմեղկութիւն՝ իբրև զպարտութիւն զօրաւորին անդութեան ․ զորանուջն առ վտանգակրիցն՝ իբր զուրացումն ուխտին, որ առ տէրն ․ զապերասանութիւն՝ իբր զթուռն իմն անգթութիւն ․ զամբարհաւաճութիւն՝ իբր ոչէիւք առ վեհսն գոռոզութիւն ․ զհպարտութիւն՝ իբր զկամաւոր հարազատ գտողին չարեաց ։ Զակամայիցն՝ ընդ կամաւորացն ․ զբռնացելոցն՝ ընդ հաւանականացն ․ զեկամուտիցն՝ ընդ բնաւորականացն ․ զանօրէնութիւն՝ ընդ ապաստամբութեանն ․ զփոքունսն՝ ընդ սաստկագունիցն ․ զնուազունսն՝ ընդ յոլովիցն ։ Զանձանօթիցն եմոյ՝ իբր զծառելեաց գխոտողին · զանդրելոց մնասուցն՝ իբր զնկարելոց տեսողին ՚ի յարձան մագնեստիս վիմի · զթեթեւագունիցն առ խոտիր մտաց՝ իբր զաստոճար ծանրուե̃ի բեռանց · զխնդիր չափոյ ծածկելոցն՝ իբր զճշգով պահանջումն սատերն սակի՝ ՚ի թերանոյ կխտին կորիւնի՝ չորեքդրամեան կշռութ̃ն · զանդնդականացն գործոց՝ իբր ՚ի յականջս ոչ արագ ժամանելոց ։ Զայսոսիկ յաճախեալ կուտեալ կրկին յանձնառութ̃ք , վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութ̃ք զչէոցն՝ իբրեւ զելելոց , ընծայեալ ոչ զպարտութ̃է վանեցեալ անձինդ · զի ընկալցիս ՚ի փոխատուէէն զշնորհօք թողուե̃ պարտուց մեղաւորին՝ զոր տ̃րն արդարացոյց, եւ հրաշափառապէս հաշակեաց , ամենապատիկ ներբողիճ կրկնեալ զգովեստ զպճմանն՝ քան զպարտաւանս մեղացն ։

Է · Նարդեամ եւ գիղեամ անձինդ մեղապարտի՝ բամբասանս յորջումս , զքոյին խոհերս բազմամասնեայս՝ անձն իմ կշտամբեալ յորջնախթանդ բանիւ ։ Զչարութին , զանօրէնութ̃ին , զվրիպութիւնն , զաւ ՚ի մարտին հանդիսէ փախուստ · զպարտութիւն , զմոլեգնութ̃ին , զամբարշտութ̃ին , զապշութ̃ին , զթմբրութ̃ին , զքունն արթնականն , զաւ ՚ի յընթացսն՝ զնիրհումն , զխորհուրդն օտարոտի , զբանիցն նանրութի , զպաղրութե̃ն հաճութ̃ի , զյամենայն ՚ի նմին , զփափագելն՝ ոչ անելեացն , զաներկիւղութ̃ին , զանսաստութ̃ին , զանհարթութիւն , զթերութիւն . զթիւրութիւն , զլուծութիւն , զճշդութիւն , զանկայուն արձակումն : Զծիծաղականն , զվերնջողականն , զկատակերգականն , զդոյթադղականն , զպատրողականն , զանդէպ քաջութիւն , զանյարմար մարտոն , զառանց օրինի արիութիւնն , զխեղդմունս հոգւոյն , զտատանողականն զերկչոտութիւն , զբազմաստեղնեան ճիւղն զրահետականս , զանպատկառ փարաքմունն , զպժտութիւն , զդժպնդութիւն , զանդատ ատելութիւն , զմարմանջմունս դիւրընբռնողականս , զփոքունց զանկշռութիւնս , զխոստմանց դժրողութիւնս , զուխտից մոռացութիւնս , զնմանեաց այլակերպութիւն , զկեղծեաց քողարկութիւն , զփառամոլութիւն մորոսութիւն , զյօնից յաւակնութիւն , զապերասանութիւն , զինքնասիրութիւն , զնախադահից տենչութիւն , զհատուցանելն եղեռնականաց , զնոցինն՝ զանչափ աղճատանսն , զվայրապար բերմունսն , զընթացակցութիւնս խորամանկութեան բանսարկուին : Զբանին ներքնակայթութիւն , զվաճառումն կենաց՝ ընդգնոց սաստկմանն , զկորուստ աւանդից , զհայրենեաց ծախս , զկապարանն ձգողական՝ զփոկով լծոյ երինջոյ անխզելի ըմբռնմամբ՝ զանօրէնութիւնս , զյարաթաթաւտղմաքսակութիւնս , զլքումն լաւաց , զմխիթարութիւն անկարծից , զկնի դարձին՝ առ նոյն դարձ դաժանական : Զնորոգ մասցն , զօտար խորհրդոյն , զանկաուն կամացն , զհաչման հագագին , զէութ̃ն չնչոյն , զևսն քան զսահման կանոնացն գրութեան՝ զիշխանականին զամենասփիւռ բացարձակութ̃ի • և զոր չէ՛ ճառելն , և կամ՝ գրելն , և կամ՝ պատմելն , և կամ՝ յերեսս գիմաց բերելն :

Դ. Եւ արդ՝ զիարդ բժշկեսցիս՝ անձն իմ եղկելի , 'ի յայսքանեաց ախտից խոցոտեալ , բարձեալ թողեալ այր մի տարագիր անողջանալի , ըստ մարգարէին • քանզի մի 'ի վերագրելոցդ՝ բաւականայցէս զօրէ սատակման , թող թէ այսքան դառն սպանողաց՝ դժնէից դահճաց՝ շուրջ պաշարողաց : Մանաւանդ զի ոչ այսու եւեթ նմանագրութ̃բ կշռի տարացոյց տարժանեցելոյս • այլ զոր օրինակ անթիւ բազմութ̃ի կայտառաց կարճաց խայթողականաց՝ 'ի սաստին մասունս ծայրից տանոյն զօրհաստական թոյնս բերելոց , և յաման մաշկեղէն արկեալ՝ ամփոփէ զելցն շաւիղ՝ կապարանին շրջափակութ̃բ • ցուցանէ արտաքուստ բարւոք , իսկ 'ի ներքուստ համբարք չարի , և պահեստ կորստեան , և կոյտ կսկծման , և գործօնեայք սատակման , և մշակք մահու : Արդ՝ այսոքիկ են ամբարեալք քո՝ անօրէնութեան տաժանեաց թշուառաքերոն թոշակք՝ անձն պարտական կրկին սատակման • որ կամաւորաբար ընկալար 'ի քեզ , զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս • ով այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ , բնաւին ատեցեալ , սիրողդ մեղացդ մտացդ ախորժմամբ զլցեալսն ամ՛ անառակութեամբ. և զոր առաքեալ ցուցանէ զթիւս բանիցն՝ սարսափելեացն կշտամբողաց, ստատուտ սկսեալ մինչև 'ի կատար կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են առէ՝ յոյյ կրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսան գործեն, և կամ կամակիցեն, արժանի են մահու: Արդ՝ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կըլկին հատուցման՝ կորստեան սատակման՝ 'ի մահ դատապարտութե. այլ անխայեմ յիս ողորմութբ՝ բարեգութ, կենդանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

ԲԱՆ. ԽԶ:

ա. Արդ՝ վրիպեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ դժնեայ վայրենաբարոյ՝ անձամբ անձին մահու կշտամբիչ. արածօղս զերամակս զազիրս՝ վայրագասունս խոզից արօտականաց՝ դարչութե մեղաց, նախատ չարձկանուէց: Հովիւս տածողական զհօրանս ուլուցն ամայաբնակաց՝ 'ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առ իս առակին. որ ոչ բուն ծանեայ զիս երբեք գիտել, թէ յով, և յումէ պատկեր, և վն որ գոյացայ:

բ.

ԺԵ · Ի՛ հա՛ ի յոտս տանողականս կրողաց երկուց՝ միակցորդ խորհրդականաց, ԺԶ ձևոյ հրեշտակի կառուցար, իբր ՚ի Թռիչս Թևոց կրկնաբարձ բազկաց վերատարողաց՝ յաշխարհն հայրենական հայել. ո՛վ յիմար, զիա՛րդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիռս անապատականս համարեցար: Իբր զՃրագ բազմաբերանեան՝ ՚ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ գլխոյդ բոլորութի, զի և այսու ՚ի յօրինակէն շնորհէ մի օտարացիս զա՟ծ տեսանել, և զմնացականացն իմաստասիրել: Բանականութե՟ն յարդանօք՝ կրկին ճոխացար, զի զյաղթանակ բարեմանութ՟ենն՝ որ առ քեզ եղեն, անարգել լեզուով խօսեցիր: Ձեռինդ հաստամամբ՝ յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն անբինել զտնտեսութ՟ի, իբր կցորդ համացեղութ՟ք ամենաբաշխ աջոյն ա՟յ՝ ա՟ծ կոչեցար: Երից հարիւրոց՝ և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ ՚ի քեզ ընդ նոսին ՚ի նոյն՝ և պատշաճական մասունս չափոց ազգողականաց՝ հինգ զգայութ՟ց, զի մի և երևելիդ նիւթականութիւն քումդ տեսութ՟ե՝ մնացդ դիտամամն անդստ եղիցի. զի ոմանք ստուարք են՝ և զօրաւորք. և այլք փոքունք են՝ և պխտանիք. կէսք կարծրակերուք՝ և ազգողականք. են և գողտրականք՝ և պատուականագոյնք. դարձեալ կարևորք՝ և պատկառելիք: Իսկ Թարգմանութիք սոցին տեսութե՝ 'ի քեզ են նկարեալ, երբ յարձանի անշնչականի՝ անձն իմ եղկելի · ուր զի և տարր ժամանակաց՝ և շարունակ հետևման աւուրցն առ պսակ ամին, երբ կանոնաւ իմք սահմանեալ մասամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի ։

Է · Դարձեալ այլօրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քև խորհրդածի · երբ զի առանց բնաւից զուգամասնութե՝ կապակցեալ ծով հաւանականաւ զմեհն ընդ փոքուն, վնասեալ է հաստատածոյն անարատութե՝ յանուն քնի ժողովելոցն · ուր 'ի հատումն և 'ի նուաղութիւն միոյ յանդամոցս անարգացս պատուհասելոցս 'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմուե մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութեն պատկերին յանարգ փոփոխումն ։ Եւ արդ՝ այսպիսեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակերտութեք եղական պատկեր ոմ՝ կրշտամբեալ խայտառ ոգի իմ գերի · և թէպէտ յառաջին նմանութէն կողոպտեալ գտար պատուէրանին յանցաւորութեք՝ 'ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսոյ զարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութե ևս կերպարանին · և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս, երբ նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր՝ յադին դարաստանի · ընդէ՞ր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերբերելիցն դուռն աղխեցեր · ընդէ՞ր խառնեցեր ընդ

Քրոյն մաքրութեան՝ զախտ արտասուացդ տարժանու՟ե • ընդէ՞ր զլուացեալ զձորձ վերարկուին՝ գարշելի գործովք զաղտացուցեր • հի՞մ զեդեալ հանդերձին մեղաց պատմուճան՝ անառակու՟ե վարուք քեզ արկեր • ընդէ՞ր զատանողացդ ոտից սրբութ՟ն՝ ճանապարհաւն ժանդից աղտեղեր • ընդէ՞ր կրկնեցեր իրաւադատին՝ զուխտազանցու՟ի հին պատուէրանին ։ Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զադամ 'ի ծառոյն կենաց • ընդէ՞ր նենգեցեր քեզէն քո կամաւ՝ զանսասուէր յուսոյն յարակայուն • ընդէ՞ր պատկառանք անհամարձակելիք՝ քոյին դիմացդ նպաստեցեր • ընդէ՞ր զինեցար ընդդէմ քո ներհակ, ով ընդունարան խելագարութ՟ե • ընդէ՞ր որսացար 'ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետն վստահութեան • ընդէ՞ր կարթի՜ պատրանաց ածար՝ հաղորդ մարմնոյ կենդանարարին ։ Այլ վերստին յուսացեալ 'ի նա՝ կարդամ նմա, ապաւէն և լոյս, քաւիչ՝ նորոգիչ՝ փրկիչ՝ կեցուցիչ և կենդանարար • ողորմած խնամօղ մարդասէր և անոխակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս • ամէն ։

Վե՛րջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ :

ԲԱՆ· ԽԳ:

ա· Եւ արդ՝ զի՞նչ գոյ առնել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութե̃, բայց եթէ համրանալ. և հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի, ըստ մարգարէուե̃ն խրատու, ահա 'ի բարւոյն կարկառեալ 'ի յոյս : իսկ եթէ զփականս չարժողուե̃ շրթանցս բացից բանադատեցից՝ խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգուե̃ լալեաց բազմուե̃՝ խէթ մնացս յառաջադրէ :

բ· Եւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղա՛յ տէ՛ր՝ մեղա՛յ, և անօրէնութե̃ց իմոց ինձէն վկայեմ: Հիւսեալ ընդ նմին ըղբանս յիսներորդի սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակ՝ անձինս մեղանաց՝ քան զհիւղ երկրի հողմահոս փոշւոյ՝ ընդ օդս ա̃մ տարածեցելոյ :

գ· Մեղա՛յ յերկինս և առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի դթոյդ վերստին դարձեալ՝ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերսանաց՝ արտօսրածին ողբովք դոչման՝ 'ի տխուր դիմս մատուցեալ առաջի քոյ ատ-

րաբաժանեմ՝ հայր գթութեց ած բոլորից, չեմ արժանի կոչիլ, և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան: Ընկալ զառվեալս տարագրական, պարտական ծառաուց . և զսա քաղցոյս՝ ըլկանաց նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես: Լեր ընդ առաջ քո ողորմութեամբդ՝ 'ի սկզբնաւորս ապաւինութե . զգեցո գըթած և անոխակալ՝ անօրինեալս մեղապարտի զնախակապուտ հանդերձին ծածկոյթ . աւանդակորոյս ձեռացս աղաւղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութե՝ ամենառատ կամօք մատուսցես . զգարշապարացս թշուառութե մերկութե ոտիցս՝ պատրաստութբ աւետարանական ամրավերարկու օդիցս կօշկաց՝ 'ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես: Զըւարակդ պարարակի եզինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ, իսկապէս մարդասիրութբ՝ կարօտելոյս բարեաց՝ նուիրեա . որ մատուցեալ միշտ՝ և անսպառ մնայ 'ի լրութե, յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոյ անսպառութբ, բոլոր յամենեսին՝ և բընաւ յամենայնում, էութբ յերկինս՝ և խակութբ 'ի ստորինս, անմնուաց մարդկութեամբ՝ և անթերի ածութբ՝ փշրեալ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ 'ի նոյն մարմին իւրում գլխոյ . քեզ փառք ընդ նմին՝ հայր ողորմութե յաւիտեանս . ամէն:

ժա Վէր.

* * *

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ՟ ։

ԲԱՆ. ԽԸ։

ա՟. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, անեղ, անբովանդակելի, աննիրհելի՛ ակնդ նկատող, ծնօղ անքննելին փառաց միածնիդ, խրաւացուցե՛ս զիմս ողորմութ՟ն հերքեցելոյս ընդունելութ՟ե՝ առ երկնայինս և առ երկրաւորս ։ Տօնեա՛ ըզկեալս կորուսելոյս՝ վերնականացն պարերգութ՟բ. աւետարանեա՛ բանիւ՛դ օրհնութ՟ե՝ զկենդանութի՟ իմ մահացելոյս. զբարեբաստութ՟ի կամացդ յայտնեա՛ գովեալ՝ բոլորից գոյից եղելոց. ստացի՛ր անուն քեզ՝ անձառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութ՟ն. կորուսցե՛ս զպիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան. զվճիռ հոգւոյս մահու՝ ջնջեսցես կայլակօք արեան որդւոյդ սիրելոյ. վստահութ՟ն փրկութ՟ե բարեաց՝ արեամբ քրի՟ քո նկարեսցե՛ս. ցո՛յց զսքանչելիս քո բարեգթութ՟եդ՝ 'ի ճաշ հարսանեաց քում հարազատի ։ Մի՛ փակեսցես դիմելոյս առ քեզ զառագաստ սրահի՝ կենացդ յարկի. մի՛ տրոհեսցես 'ի բազմականացդ, և 'ի բարեացդ քո զրկեսցես. մի՛ պահեսցես 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութի՟. մի՛ կնքեսցես 'ի քսակ բարեացդ՝ զզաղրուե՟ց իմոյ դարշութ՟ն . մի երկարս ինձ զվէր մեղացս՝ 'ի յախտալից մարմինս ծածկեսցես . մի՛ զփտութ՟ն նեխութեան ցաւոցս՝ ինձ տնկակից մահուն՟ացուսցես . այլ բա՛րձ բանի՛ւ քոյդ ողորմութ՟ե՝ զժանտութ՟ին ապականարար , որպէս զի զատեալ 'ի հիւծմանց ախտից՝ առողջութ՟են պատրաստեցայց . հնարաւորեա՛ գթութեա՛նցդ հայր՝ մեծ խոցուա՛ծոյս՝ զօրեղ սպեղանիս , կարեւոր կործանմանս՝ բարի այցելու՟ես : Չի քո՛ եմ տէ՛ր ոգեսէր , թէ և առ մի նուա՛զ բիւրս մեղիցեմ , բայց ո՛չ գրեցայց համայն մեղուցեալ՝ տուի՛չ կենաց իմոց բարերար՝ 'ի շնորհ պարգևաց կենաց քոց ապաւինել՟ . զի ճանաչելդ զքեզ՝ բովանդակ արդարութ՟ի է , և գիտել զզօրութ՟իդ քո՝ արմատ անմահութ՟ե , որ՟ և կանխաւ իսկ գրեաց իմաստունն . և դարձեալ՝ տիրելդ քո ասէ՝ ամենեցուն , խնայել տայ քեզ յամ՟ . և դարձեալ՝ մօտ է քեզ յորժամ և կամիս , կարօղ գտանել :

ժե . Այս սողոմոնի յուսոյ աղերսանք՝ և մոյս առեալ տիպ . քանզի ո՛չ այլ ոք բաղմամեզ՝ որ քան զնա՝ ինձ զուգաշաւիղ : Երբեմն որդի , ապա առեղի . երբեմն միջնորդ խաղաղութ՟ե՝ ա՟յ ժողովրդեանն , և յետոյ խորոց որոշման՝ բաղում խռովութ՟ե . երբեմն օրէնք կենաց կացեալ , և յետոյ մուրհակ մահու հաստատեալ . զերկնաւորին պաշտօն ընդունեալ , և զօտարոյին անուն ծանուցեալ : Անպատճառ օգտօղ .

ցտօղ · անկարօտ զեկօղ · անսովէլի գօղ · գրգեալ տրտնջօղ · փափկացեալ փախըստական · մեղանանենգ սարտուցեալ · անպատասխանի ամենապարտ · քաղցրանոյն հայհոյիչ · զաւակ հայրատեաց · կատակաբանաց մատնիչ · մոլեգնի չարախօս · մոռացօղ երախտեացն · իմաստուն սխալական · ամենագէտ յանցաւոր · ամօթապարտ զղջացեալ · տարակուսեալ աշխատօղ · աղաչաւոր կռապաշտեալ · յամրային դարձաւոր · կաղակարծ ընկալեալ · կասկածաւոր հաշտութե̃ն · յապայս յիշատակ · յերկբայս փրկութե̃ն · չաւատալի գիւտ · 'ի մասնէ մնացուած · խարդաւանեալ գերի · կիսակտուր պրծեալ · կամաւոր անձնամատն · տմարդի յղփացեալ · բազմավրէպ հանճարեղ ։ 'Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ ամ̃ ուրեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց , մեծ պարսաւ՝ և փոքր գովեստ · իբր 'ի մ̃ր ինքնագրաւկորստականի՝ երգիծանութե̃ն խառնեալ ընդ աշխար · բան ն̃ր՝ թելադիր բարգաւաճութեան ամ̃ հասակի , և խոտորումն նորին՝ 'ի շրթունս բնաւից՝ թշուառն · թախծութե̃ ողորմելիս իմ̃ ազդեալ ։

Գ · Զարմանամ , վհատիմ՝ տարակուսեալ տպշութե̃ · զի թէ նա այնքան գըթեաց , ինձ զի՞նչ պատահեսցէ · զիա՞րդ անկաւ ամբարձեալն · զիա՞րդ սասանեցաւ հաստատեալն · զիա՞րդ կործանեցաւ կառուցեալն · ի՞բր օտարացաւ ծանուցեալն · զիա՞րդ ղակատեցաւ զաւակն ընտրութե̃ ·

զիա՞րդ սրացաւ մերձաւորն • զիա՞րդ աղօտացաւ փայլեցեալն • զիա՞րդ պատանդեցաւ ազատեալն • զիա՞րդ անօրինեցաւ ուսուցիչն • զիա՞րդ նուաղեցաւ հաշակեալն • զիա՞րդ անարգեցաւ փառաւորն • զիա՞րդ փոքրկացաւ մեծատունն • զիա՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն • զիա՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրօղն • զիա՞րդ ունայնացաւ պատարունն • զիա՞րդ կորեաց զուխտն՝ որ ընդ բարձրելոյն : Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սանդարամետականին կապեցաւ • զի՞ կայր նր̅՝ և կռոց • ուստի՞ սէրն ընդ պատկերաց • վասն էր կամքն ընդ խորանաց : Զիա՞րդ ո՛չ յիշեցաւ յանդիմանութ̅ին սամուէլի՝ առ սաւուղ եղեալ • հմայք ասէ՝ մեղք են , և ցաւս և աշխատութի̅ ածէ թերափ 'ի վր̅ : Զիա՞րդ ո՛չ հայրենի յանդիմանութիւնն , կուռք ասէ՝ հեթանոսաց՝ դևք և անշունչք են , և նման նց̅ լիցին պաշտօնեայք նոցա : Տր̅ միայն ածէր զնս̅ , մինչև նախագրեալ յառաջաձայն ձաղանօք՝ սաստիկս իմն ամբաստանէ , ո՛չ էր ընդ նոսա ասէ՝ ածս̅ օտարոտիս , զոր ո՛չ ճանաչէին հարք նոցա : Ո՞ւր է մահամատոյց այլազգեայ արձանին փառաւորայ • ո՞ւր տագեղն և անպանծալին սիդոնացւոց՝ իգական ամենանզով ձուլածոյն • ո՞ւր կանացի կերպին անդրելին խայտառակութի̅ զազիր տեսակին , որով ամօթոյ մարգարէքն զանասնօրէն զխլեցումն անխտրաբար , յանուն չարութե̅ անժուժկալ դիւին՝ անամօթաբար ձօնեալ մոլէին : Տարաւ զէուն բարեբաստութեանն՝ որ զնախնին որսաց 'ի կորուստ • յաղթեաց մեծութ՟ին՝ իմաստիցն առաւելութ՟ե • գերեաց զուղղութ՟ին • յիմարեցոյց փափկութ՟ին • վանեաց արծաթն ծառայեցուցիչ • յոգի դառնացաւ զայրն տօնելի՝ հին զէնն կործանողին •'ի գրկացն ա՟յ հանեալ՝ 'ի յոստս ստամբակին գթեցոյց • մեռոյց մեղկութ՟ին • թմբրեցոյց ծուլութ՟ին • արբեցոյց շռայլութ՟ին : Ո՜վ դիւրապատիր մարմին երկրածին, որո՜վք ձայնարկութ՟ք զքեզ աւաղեցից • քանզի ոչ որպէս առ նա հանդիպի ընդդիմաբանութ՟իս , այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց • վ՟ն զի նովաւ է իմանալ , թէ անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ , եթէ ոչ աստուծով դատեալ ընտրեսցի • որ զի թէ առ այս պայմանի՝ յիմար ոք իցէ , և 'ի հաստչին կամս յուսասցի , ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ :

Է • Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի սողոմոն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապարսաւն կշտամբութ՟ք , իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնատրութ՟ե • զոր եթէ զիւրն ոք նկատեսցէ , ունայնութ՟ն է իմանալի • այլ և 'ի մատեանս քահանայիցն՝ և 'ի գիրս աքիայ սիլոնացւոյ , յորում զփոյթն իւրում ընթացիցն՝ արտասուելիս իմն յեղանակէ : Զուր ջան • անօգուտ վաստակ • անմիտ հետևումն • անշահ արշաւանք •

անկայուն երկք · օտարին իմաստք · ոչընչից հոլովք · բամբասելի բերք · անյարմար վարկածք · անոտի սերմանիք · աւազափուլ շինուածք · ապականացու սոսացուածք · քամահանաց տաժանմունք · ինքնամարտ կռիւ · ընդ օդոյ իւրում դատ · ընդունայնաթող քիրտն · վնասակար փափաք · կորստական շաւիղ · վրիպակ ճանապարհ · կործանական կրթութիւն · մոլորապատիր վարժութիւն · հանապազասխալ տեսութիւն · ակնայայրասա պչրուն · պոռնկակերպ կերպարան · ախտաբորբոք նիւթ · գժնեատեսիլ գոյն · յոքնատխուր դեղ · յոլովամեղծ ծուխ · շոգի ցնդելի · վաճառ մերձ՚ի յառ · տաղաւար քակտելի · ընդվայր աղաղակ · անպատճառաւոր ծաղր · արհամարհելի ասպարէզ · անձնավաճառ գիր · սատակչական ելք · անմիտ մտածմունք · ստայօդ ճառ · զայրացուցանող զրոյցք · եպերանաց խծբիծ · խելագարութեան խնդիր · ամօթանաց ցոյցք · խայտառականաց յայտնութիւնք · առակ սպառնեացն · ապաշաւանաց գործ · ըմպահկանաց պատմութիւն · հեղգացելոց որջնակ · խորխորատ ծածուկ · որս խաւարային · մահագուշակ վիհ · անյատակելի անդունդք · ուղեկցութիւն սպանողաց · յիմարութեան բարբանջմունք · դարանակալաց վայր · խարխուլ յարկ · շինուած սասանեալ · կամուրջ խախտեցեալ · երեւոյթ փախչելի · խաբօղ շողոքորթ · անոպայ մատնիչ · ընդդէմ բարձրելոյն հակառակութն : Զայս իմ մասունս բանից խոստովանական կանոնագրութն , 'ի սիրտս բնաւից նախասերմանեաց ժողովոյս՝ կանոնագիր դարձելոց զղջման . որպ զի մի պարծեսցի ոք 'ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով . քանզի կռապաշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանս միայն ունի , և զոչ ախորժելիս ստեղծչին կատարէ :

Է . Լու սրդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ , որքան զղջացաւ , մի իսպառ ապախարակեսցի . այլ յիշեսցէ այրն այն 'ի բարի , իբրև զհինն յուսադրութեան 'ի տրունի սան դիմելոց , յորժամ հոգւոյն էջ յայցելութն եծութեն անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալսն . զոր մեռեալքն՝ ահա կենդանեայս անտարակոյս բերին աւետիս : Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեն ոչ ժամանելոյ , 'ի մեղանացն մասն կարգել , բարեբանեալ մեծիդ պաղատիմ . լից ըզնուազդ իմ բանագրութն՝ 'ի յերջանկին հանճարեղութն , նիւթեցին ներկայիս հայցմունք՝ 'ի բարգաւաճին յարդաւորութն 'ի գերաշխարհ երքային ալերս . այցելութն խնդրոցս դիցէ քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն , զոր միածնիդ օրհնակեցեր : Յարեանն կցորդութէ՝ զքո փառակիցդ ճաշակեցաք . տուր փրկութիւն քոյոյ ծառայիս՝ ամենահնար զօրեղ ահաւոր , 'ի ստեղծողիդ փառս անճուցեալ

զանքաւելի մեղացն ընչուիս ։ Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ Տէր ողորմեալն նորոգեսցես ․ որ ամենահա՛մ անխորժաճաշակ բազմապաճոյճ առասակագրութեամբ՝ զմեծութիւնդ քո քարոզեալ՝ 'ի մատեան լուսաղարդ կտակին եկեղեցւոյ, ընծայեայ հետս բարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ՝ հայր ։ Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է խնամալի, թէ անյուսութեան կաթուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից , որ զձեռս
զզղջմանն փոքր ինչ կասեաց ։

Ը․ Արդ՝ 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բարեմասնութիւնք , զգթութիւն քո ողջունեսցես ․ որով զկոչկոճեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարաձգութեամբ , երանութեան վերարժանացն ․ որ յոգնահատան սրտասուացելիւք՝ զմէջ յատակի յարկէն հեղեղեալ՝ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սատակակիծն ապաշաւանօք , հօրն կրկին գերազանցեաց՝ ողորմելի որդւոյն հեծութեամբ ․ զոր 'ի յաչաց բանիդ քո արտօսր՝ առ որ մերովս 'ի յիւրն ախտակրեաց , երկայնամիտդ ներողութեամբ՝ միացուցեալ խառնեսցես գթած ․ և զանյագմարն առ նա կարծեցեալ զաղմասին բարեբանութեան , 'ի փառս էակցի որդւոյդ՝ կնքելով նովաւ՝ կեցուսցես զնա քաղցրութեամբ՝ ընդ աղքատս ժողովրդոց ։ Զայս ապաւէն ասիկաս ամն բարեշնորհ՝ արգահատէր ընդ սողոմոնի , ամենայնիւ վարձս վարկուցեալ համեմիցորդ զուգաձայնութեամբ՝

թ՟բ՝ իբր կենդանեօք նովաւ՝ ը՟ նմին վ՟ն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ տնտեսէ: Քանզի և աւստացուոյն 'ի նմանէ ստեղծեալն՝ բազմահրաշաւորն՝ մարգարէաճառն պատմագրութ՟ե՝ ա՟ծութ՟են արդարացուցի՛ զադամն ողորմեալ կարգէ, որ զի անպարտ է ազօթելն, քան չարաբանելն վ՟ն նորին:

Է. Օ՜ որ և ես մաղթեմ մեծ վստահութ՟բ՝ նմանակից այսր հեծութե՝ և զինս ընդ նմին ընծայել գոչումն. զի թէ կորուսցես զմեզ դատել ըստ գործոց, ո՛չ պակասին փառք քո, զի խրատամբք քո ճանաչիս. իսկ եթէ գթացես, ա՛յնքան բարձրանաս, որքան մեծութեանդ քում վայել է. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութ՟բ, քան նախահրամանն սաստկութ՟բն: Դարձի՛ր տէր դարձի՛ր քաղցրութ՟բ 'ի խնամս գթութ՟ե՝ ձրի և ամենառատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ զտրտմեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տոչորման անբժշկականի: Ձեռն եդեալ փրկութ՟ե՝ նորոգեսցես զերատին, քաւեալ և ապատապարեալ 'ի մեղակործանս խորտակմանէ: Եւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկզբանց՝ ա՟բ երրորդութ՟եդ և միում ա՟ծութ՟եդ՝ փառք և իշխանութիւն՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

※

Վերստին յաւելուա՛ծ երկին հեծութեան՝ նորին հակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ։

ԲԱՆ. ԽԹ։

ա̅. Եւ արդ՝ մի՛ տիրեսցեն անօրէնութիւնք քում պատկերիս կայսերական արքայութե̅դ վերնում՝ ա̅ծ բոլորից լուսոյ . մի՛ կապտեսցէ գոռոզն ապստամբ՝ զզարդ փչմանդ շնորհի՝ 'ի քո ստեղծեալս կերպէ . մի՛ թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի՝ առ 'ի գրաւել զիս 'ի նոյն ։ Չի՛ք իմ՝ թագաւոր առ իշխել շնչոյս՝ բայց 'ի քէն ք̅ս , որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութե̅ . որ բառնաս զկարիս մեղաց ամենակատարդ բանիւ . որ արեամբդ քո ստացար , և մարմնովդ կերակրեցեր . որ կարդեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի . որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ գրելով՝ հօր քում մատուցեր ժառանգակցայքս . որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց՝ առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր , ստեղծիչ ամենից և կեանք ։ Դու ես ա̅ծ ա̅մ հոգւոց , որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց՝ քան զա̅մ գործոց քո հրաշից . ո՛չ զերկինս իւրովքն զարդուք և հրեշտակացն պայծառութե̅ք . ո՛չ զերկիրս և ըզմարդկութե̅ս , և որ առ սոսա են զար-

միւ

մանութիւք · ո՛չ զսահման լայնութե՟ ծովու, և որ 'ի նմա են եղելութիւնք · ո՛չ զանդունդս աղխիւքն հանդերձ, և որ 'ի նմա են անբաւութիւք · ո՛չ բարձրացար յօրինմամբ այսքաներօք վէհիւք · որչափ առ իմս կարեկցութի՟ յասելն քո ընդ մարդաբեկին՝ քաղցրութեանց յուսոյ բարուն, ով է ա՟ծ իբրև զիս կարօղ, թողուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս ։ Ահա՛ արդ խնկեալ են բանք քո՝ ողորմած, և խոստովանեալ բարերարութիւք · փառաւորեալ խորք խորհրդոցդ, և երկրպագեալ զեղմունք շնորհացդ ։

Է · Արդարև ո՛չ ոք բաւէ յէիցս թարգմանել խօսիւք նիւթական լեզուի՝ 'ի մասանց այտի քումդ գթութե՟ց՝ զոր առ իս ցուցեր՝ յօրինիչ · քանզի և մեծ իսկ է զօրութի՟ զհնացեալն անդրէն նորոգել՝ 'ի առաջնումն պայծառութե՟, քան յանգոյից ստեղծագործել ։ Եւ զի ո՛չ է քո տկարութի՟, որ զօրութի՟դ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ՝ զլրումն գործոցն գլխաւորէ, ահա յարիցես փառաւոր լինել՝ բարեգործ, 'ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկութե՟ս · զի երաւամբք ուխտի բարձրացի, հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեաց քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութե՟ լուսով ուղերձեալ, քան 'ի Ճանապարհ ստեղծանելոյն ։ Զի առ մինն՝ արարիչ միայն Ճանաչիս · իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն՝ և երախտուող · ընդ կերպացուցանելոյն՝ և քաւիչ · ընդ նորոգելոյն՝ և բարերար · ընդ հաստելոյն՝ և ողորմած · ընդ կազմելոյն՝ և հնարաւոր · ընդ յօրինելոյն՝ և հեզ · ընդ նկարելոյն՝ ամենազօր · ընդ առաջնորդելոյն՝ և լոյս · ընդ տածելոյն՝ հովիւ · ընդ դարմանելոյն՝ խնամիչ · ը̄ ողջ պահելոյն՝ բժիշկ · ընդ ձեռնկալութե̄ն՝ զօրավար · ընդ անպարտութե̄ն՝ թագաւոր · ընդ արարչութե̄ն՝ քաղցր · ընդ ամենատուր պարգևացն՝ առատ · ը̄ միշտ անսալոյն՝ ներօղ · ընդ ոչ բարկանալոյն՝ անոխակալ · ընդ կարեացս վշտակցելոյ՝ ծածկադէտ · ընդ յանձանձելոյ գթոցն՝ ապաւէն · ընդ գերունակ գործոյն՝ ա̄ծ · ընդ անսպառ բարութե̄ն՝ օրհնեալ յամենայնի ,

գ · Արդ՝ ո̃վ ստեղծեր մինչ ոչն իսկ էի · և ծանուցար ինձ գոյացուցիչ, և այժմ զհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ՝ յարդարեա՛ անդրէն վերստին յանարատութ̄ի մաքուր սրբութե̄՝ նախնի լինելութե̄ն · զի բազմասցի առաւել աճեցուն եղեալ՝ յաճախ տուչութ̄ի անսահմանելի քոյդ սքանչելեաց՝ նորոգ ներկայիս ,քան զանցելոց հնոցն ստուերականաց ։ Եւ ընդ ճառելոյս զթիւս մեղացս՝ որքան մտացս թևս ընթանայ զանբերելիան յիշատակել; արդարացոյց յանուն քո հզօր · և 'ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ , և դու թողցես զամբարշտութ̄ի բազում մեղանաց խոստովանելոյս՝ հզօ՛ր ծածկատես ամենափրկիչ. զի մի՛ ծայրագոյն ընրուք՟ աւետեացս, դարձեալ նախնումն կարօտասցայց՝ երանելով սաղմոսիւն՝ ըղշնորհօք փրկեալսն մկրտութե՟ն. և փշովք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեսցի յիս առաւելապէս այժմէն վերստին. ծանրս առնելով զբեռն պարտեացս՝ քան զքաղցրութ՟ի պարգևացդ. այլ աղաչե՛մ զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝ տէ՛ր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու: Քա՛ւ լիցի, թէ անկցի ընդ տկարութե՟ սահմանաւ ճշմարտուե՟դ ծագումն՝ իբրև զգրոյն օրինակ. քանզի ուր քաւութ՟ի է թագաւորեալ, վտարեալ են մեղք. և՚ի խրախոյս կենդանի բանիդ. ոչ է յուսահատութիւն. և ամբարձեալ քոյոցդ շնորհաց, հալածեալ են պարտիքն. և մերձ գոլով ձեռինդ ո՛յ՝ ոչ գոյ անհնարութ՟ի, այլ ամենևին լուսաւորութ՟ի, բովանդակապէս զօրութ՟ի, անպարտելի կարողութ՟ի: Քո՛ է փրկութ՟ի. կենդանութ՟ի. նորոգութ՟ի. ողորմութիւն, միանգամայն և քաղցրութ՟ի. արքայութ՟ի. անեղծութիւն, և փառք յաւիտեանս. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ:

ԲԱՆ. Ծ:

ա. Եւ արդ՝ քանզի որպէս ոչ է առանց ք̅ի ա̅յ՝ ոգւոց փրկութ̅ի, եւ ոչ առանց ուսման աչաց՝ առ լոյս զուարճութ̅ի, եւ կամ՛ առանց արուեստին նշուլից՝ արեւու երբէք քաղցրութ̅ի, այսպէս եւ ոչ առանց խոստովանութ̅ե ծածկութեից՝ եւ սրտադատանաց անձին՝ քաւութ̅ի: Զի զի՛նչ օգուտ քեզ է մաքրութ̅իդ, եթէ ը̅ փարիսեցւոյն դատեսցիս. եւ կամ՛ զի՛նչ շահեսցեն զիս պարտիքս, եթէ ը̅ մաքսաւորին զովեցայց. եւ կամ՛ ո՞ւր առն պարսաւեալ՝ մարգարէն յովէլ, երիցս կրկնելով զանձինն եղկութ̅ի. եւ կամ՛ զի՞ գուցէ սոյն դատաստան՝ առ 'ի յիշատակ աւուրն մեծի. եւ կամ՛ ի՞բր արդեօք անմաքուր իմացի շրթամբք եսայի՝ հեռին 'ի գործոց տանն իսրայէլի. եւ զի՞արդ մ̅ծ պարտաւոր պաշտօնի ադամեան մարմնոյն՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. եւ կամ՛ յո՞րս թարգմանի առած առակին, թէ սիրտ իմաստնոյն 'ի տան սգոյ, եւ սիրտ անմտին՝ 'ի տան ուրախութ̅ե: Զի որ զխայլեւն ադամայ՝ անձին իւրում ոչ գրեսցէ, եւ զմեղս ամենից՝ իւրեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զհարցն, կորոյս զիւրն արդարութի̃ն՝ ոտ̃ղ անախտակիր գոլ բընութե̃ս. և ոչ բերկրի սիրտ՝ առ զուարթութե̃ն երեսաց աւետաւոք յուսոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաջբերելոյն. քն̃ի ուսեալ՝ ամենայնիւ՛ ահա ըստ ի̃յ արտմեսցի :

Է. Որդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանճարեղին, զոր ի̃րն իսկ երկրորդեաց, երթալ նստել, ոչ յառաջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրախորհուրդ ժողովելոց, ուստի դաւիթ և երեմիա՝ ուխտիւ՛ կանոնի սահման հաստատեալ հրաժարեցուցին. այլ ընդ զղջացեալսն սրտիւ՛ պատկառեալսն մեղօք՝ և 'ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ՛ հատուցմանն, յետնոցն հաւասարեալ աստէն 'ի յերկրի կամաւ խոնարհութեան, ուստի բարձրեալն ա̃ծ պարարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն 'ի բազմականսն երանութե̃ համարձակեցայց, թէ ես՝ և թէ նա՝ հետևեալ սովիմք : Առ որ զերծեալ 'ի բամբասանաց բանի մարգարէին, որ 'ի վէսս ոմանս ակնարկէ, մի յիս ասէ՝ մերձենար՝ մաքուր եմ, և մի զիս տեսանիցէ : Այլ զանկչելն խոնարհութե̃ երջանկին դաւթի՝ ինձ նոյաստ առեալ ասել ընդ նմին, ես իբրև զանասուն համարեցայ, հերքեալ 'ի զգայութե̃. և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան և փտեցան վէրք իմ 'ի յանըզգագամխս անբժշկութե՟ն ։ Եւ զայլոց ոմանց ընտրելոց 'ի յասորեստանի՝ զկամաւորն կշտամբութի՟ն մեղապարտութե՟՝ անձանցն անարատից․ ընդ որս և զեզրի մեծի քահանայի զասեղն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զերեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ քեզ՝ ա՟ծ ։

Գ․ Արդ՝ ես ճշգրիտ պատկեր նմ՟ երկրի՝ զեմս խառնեալ ընդ նոցին պարտիս, և 'ի նոցայոցն զառ իս դառնութի՟ն կրկին առաւելեալ, նոքօք հեծեծեցից․ թէպէտ և չէ ինչ պիտոյ գարշութե՟ գունոյ՝ գարձեալ տգեղութի՟ն ։ Ահա արդ մեղայ՝ զի անմտութեամբ գործեցի զոչ հաճոյսն քո՝ բազմօք սխալեալ յանցաւորութեամբք․ նայեա՛ յիս գըթած, ո՜վ երբեմն յուրացութե՟ն ըմբռնեալ պետրոս, զի յոյժ ունայնացայ ։ Լուսաւորեա՛ ինձ զողորմութե՟դ քո ճառագայթ՝ ամենևին բարերարութի՟ն, զի ընկալեալ զօրհնութիւն քո տէր, արդարացայց կեցից և մաքուր եղէց յանստեղծիցն քո՝ իմոց լկողաց ։ Զունիմ համարձակութի՟ն զմեղապարտ ձեռինս հաստո՟ւած՝ առ քեզ տարածանել, մինչև մատուսցես զօրհնեալդ քո զաջ՝ 'ի նորոգութի՟ն դատապարտելոյս ։ Արդ՝ յաղթեա՛ վերստին իմումս յամառութե՟՝ քոյին հեզութե՟դ առ իս ժամանեալ մարդասիրապէս․ և զա՟մն յամենայնի ամենայնիւ քո կարողութե՟դ, զառաջին չարիսն՝ միջնովքն և վերջնականօքն թո՛ղ ինձ՝ հնարաւո՛ր անհասից՝ ք՟ս թագաւոր լուսոյն արդարոց ։

է. Զեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի վնասակար եմ բարեգործիդ՝ մահու հարուածոց ։ Ես կնիքն · առ շնորհն · առ փչումն · առ պարգեւն · առ աւանդն · առ ձիրն · առ անուանն · առ որդեգրութեանն · առ պատուին արքայական · առ պատկերն · առ դրոշմն · առ օծումն · առ ճոխութին · առ համարձակութին · առ ընտանութին · առ կեանսն · առ լոյսն · առ երանութին · առ յոյսն · առ փառսն · առ անխոնարհելի բարձրութեանն · առ պսակն անկապտելի · առ խոստմունսն ծածկեցելոցն, որ քեւ՝ տէր ք̃ս, բազմօք աւետարանեցաւ ինձ յամօռելոյս՝ իժիս եւ քարբիս՝ ունկնախից եւ լսելափակ անլուր ականջացս · որ միշտ յառաւելութե քումդ բարութե՝ յոքնապատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաճախեալ, իսպառ կործանեցին · մերժեալ 'ի կենաց՝ ը̃ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականութեան ։ Եւ արդ՝ դու միայն իրաւացի եւ ճշմարտադատ բարերար՝ օրհնեալդ 'ի գթութեան, մեղայ քեզ՝ անօրինեցայ՝ անիրաւեցայ · վ̃ն որոյ եւ եղծայ՝ պղծայ՝ յանցեայ՝ ամբարշտեցայ · եւ ոչ լուայ խոստովանեալ եւ երկրպագեալ գովեալ քո բանից · որ դու իսկ երեւեցար անճառելեաւ քո սիրովդ · զոր գրելն իսկ մեծ է, եւ նշանակելն սարսափելի ։ Քեզ արդարութիւն եւ փառս եւ մշտնջենաւոր գովութի, եւ ինձ պատկաուեցելոյս ՚ի վերէն՝ խընամակալ , քաւութեն և ողորմութեն և բժշկութեն • օգնութեն և պահպանութեն սրտի և ոգւոյ • բարեբանեալդ յամի յաւիտեանս • ամէն :

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի :
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

ԲԱՆ. ԾԱ:

ա • Եւ արդ՝ առ երկրածին ոք պաղատեցայց այս մահացու ամենապատիր եթէ , ընդունայն է աղաղակելն • առ մահկանացու բանական եթէ , սուտ լիցէ փրկութիւն առ յուսոյն վստահութե • առ մարդ որ եղծական եթէ , ընդ տկարութե բանին՝ և նմանիր է զօրութիւնն • առ իշխանս երկրաւոր դահից եթէ , անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութե • առ եղբայր որ հարազատ եթէ , կորօն է կամելոյն առ անձինն անդորրութե • առ հայրն իմ երկրաւոր եթէ , պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուաղութեն • առ մայրն իմ որ երկնեաց եթէ , կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեն • առ թագաւորունս աշխարհի արդեօք , որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն , քան զկենդանագործելն • այլ առ քեզ՝ բարերար մծ օրհնեալ ՚ի բարձունս , որ կենդանին ես՝ և զկենդանութի տաս մեզ • որ և յետ վախ

ճան

Ճանկին զօրէս անեղծանց նորոգել։

ծ․ Որ եթէ փախնումք 'ի քէն, դու զկնի ընթանաս․ եթէ տկարանամք, զօրացուցանես․ եթէ վրիպիմք, շաւիղ դիւրուե̃ ուղղես․ եթէ պատկառեմք, քաջալերես․ եթէ ախտանամք յանձն և 'ի մարմին, բժշկես․ եթէ դարշանամք մեղօք, մաքրես․ եթէ ստեմք, քո ճշմարտութե̃դ արդարացուցանես․ եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք, յերկինս ցուցանես․ եթէ 'ի կամաց մերոց ո՛չ դառնամք, դու դարձուցանես․ եթէ մեղանչեմք, ողբաս․ եթէ արդարանամք, ժպտիս․ եթէ օտարանամք, սգաս․ եթէ մերձենամք, տօնես․ եթէ գամք, ընդունիս․ եթէ յամրանամք, երկայնամտես․ եթէ մեք ժխտեմք, դու առատապէս շնորհեալ ընձեռես․ եթէ լքանիմք, տրամխս․ եթէ արիանամք, խնդաս։

ծա․ Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշափառական՝ զվհատելոյս զկիրս սփոփէ, և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեանն հանդէս․ որ յաղթականն է դիւաց, և տարակոյս բանսարկուին․ որ իբր զխաչին տ̃րունի նշան բարեբաղդ պանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութ̃ լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութ̃՝ կանգնեալ է ախոյեան անվանական և անշարժական՝ ամենայնիւ յաւիտենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնութեան բելիարայ․ որ ունի յինքեան զանձս հոգևոր օգտից գիտուղաց մտաց՝ ընծայեալս շնորհատուին մահու և զլուծումն մեղաց, և յոյս կրկինս՝ յերկուս յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութե՟ արդարոցն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուրս՝ գրեալս հոգւոյն այ՟. ոչ ամենայն իսկ երգ սաղմոսացն՝ մաքուր սրտից է տեսանելի՝ կտակ կենաց մարդկան նկարեալ։

Գ. Օի թէ ՚ի նախնումն ակար կերպարանն՝ զայս աւետիս և վստահութե՟ն ընդդոգեալ ունէր՝ կործանման մահու նախաժամին մեծ աւետագիր՝ և կեանս երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անձառելիս. և այն՝ չնչական գիրն, և յեղանակաւոր օրինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատուե՟ յանցաւորացն, և խափանելի կտակն երկրայինն, և տկար հաշտարարութե՟ միջնորդացն, և թերութե՟ բանից մաղթողացն։ Որ զի թէ մանաւէլի փրկութե՟ն խոստովանելի է, անտուստ վկայեալ յետ այնքաննեաց մեղանաց անբժշկականաց. որ արեամբն արդարոց ելից զնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք հայրենի, ըստ մարգարէաչիր անսուտ պատմուե՟ն. որ և զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախտս ձեռնկալութե՟՝ խնամողօրէնն պաշտպանութե՟՝ նախնակերտ յարկին տեսչուե՟, մանկավարժ ինքեան և նախնի, մեքենայի՛ մահու ոգոցեալ, ՚ի յերկուս մասունս խըզեալ՝ դժնդակ սանձանօք մաշեաց, իբր խորհրդով սպասաւորուե՟՝ զլուսոյն փըրկանակ կորեալ ։ Առ որով զչար յաւելուածն մոլեգնական՝ զքրէական վերնամարտութիւնն ՚ի բարձրեալն յանդգնուե̃․ քանզի ոչ պատկառեաց երբէք զատ̃ւծողին պատիւ և զանուն՝ յիւրաբնակ խորանէն մերժել․ հալածեալ զա̃յ հոգւին , բելիարայ զանձն դաւանեաց ։ Քանզի ըզնոյն տաճար տիրական՝ խնկարկութեան հաստատողին սահման՝ հռչակաւորն երկրի տեսարան՝ զսարսափելին ազանց սրբարան․ ուր տեսիլք հրեշտակականք և ա̃ծային հրամանք յաղթողականք՝ լուսաւորապէս յայտնութբ̃ ազդեալ երևէին․ զայն վայր երկնանմանն ահաւոր սքանչելատես , քենանայ ումեմն քառագլխակի՝ նախանձարկու պատկերի՝ աւերածոյն անապատի , պաշտօնատեղ գարշելի և դիւաձենձեր զոհարան պատրաստեալ կազմեաց ։ Զրկեալ զարքայն երկնաւոր՝ ՚ի յարքայականն կայից․ զամենահարուստն՝ ունայն ՚ի ստացուածոց իւրոց․ զտանուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ ։ Բէհեղզեբուղայ ձեղուն նկարեալ , և զանուանն ահեղ՝ վարանդի արարեալ․ գերի տարեալ զաւանդ զօրէլոյն , ողբալի՝ զողորմածին մասն նուաղեցուցեալ․ աղօթատուն փոքու ապարանք՝ զորահն լուսոյ կարգեալ , և բնաւից ունողին՝ և ոչ գլխոյն տաղաւար յիւրայնոցն եղեալ․ հատեալ զցանկ հզօրին , բախտից հմայից՝ զսեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման՝ երևեցուցեալ ։ Լայնեալ հետա բաղումս՝ ընթացելոց 'ի գայթակղութե՟ն . հովիւ՟ կորստեան՝ հօտին սատանայական . մոլորութե՟ բուռն վարդապետ . և այն՝ գիտութ՟բ կրօնից օրինաց , հայր ունելով զմեծն եզեկիա՝ զնմանակիցն դաւթի :

Է . Այնքան ստացե՟լ դառնութիւնս չարեաց , որ և զՔ՟յ պատրիճ՟ն՝ որ զարքայութեանն փառս ընծայեացն նմա , հայհոյեալ և թշնամանեալ . և զաղօթիկերացն բաղմութի՟ սուսերաւ մահու խողխողեալ : Ընտանի դաւաճան . մերձաւոր վատնիչ . հարազատ սատանայիչ . կցորդակից սպանող : Առ ա՟ծ ոչ գոյր դառնալ , զի ուրացեալ էր զնա . զաբրահամ ոչ էր յիշել , զի խորթացեալ էր 'ի նմանէ . քահանայաւ ոչ էր աղօթել , զի նզովեալ էր 'ի նմանէ . իսրայէլի՟ ոչ էր պարծել , զի տարագիր էր անուանն կոչմանն մեծախորհուրդն շնորհի . զդաւթեան երգ ոչ էր նուագել , զի կշտամբիչ էր նորին . 'ի քաւարանն ոչ էր մերձենալ , զի այրեալ էր զնա . 'ի տապանակին ա՟ծագիծ ոչ էր ապաւինել , զի ընդ դարշութե՟ ձուլածոյին էր փոխանակեալ . առ մովսէս ոչ էր կարդալ , զի անքաւելի էր պարտիքն՝ որ առ նա . առ ահարոն ոչ գոյր աղաչել , զի ըն՟աստապարտ էր առ նա . առ մերձաւոր մարգարէիցն դունդ ոչ էր դիմել , զի սպանող էր նոցա : Եւ ն՟ր քաւութի՟ մեղաց , և արքայութեան թագաւորութե՟ վերստին պարգևեալ տուեալ . զի քեզ՝ բարերար , բազմա-

մա

մնացուսցես կարգեսցես գովեստս անձառս եւ անլռելիս՝ 'ի յազգս տոհմից եւ 'ի դարս ժամանակաց · եւ զդուռն յուսոյն մտից անփակելի պահեսցես՝ 'ի փառս քոյդ բարձրութե՟ եւ 'ի փրկութ՟ն դատապարտելոյս · անմահութեանց պարգեւաց ողորմիչ քդ՟, գովեալ յաւիտեանս · ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ:

ԲԱՆ. ԾԲ:

ա. Օրհնեալ տիրաբար 'ի քումդ էութե՟, անսահմանելի եւ անփոփոխադրելի, խոկապէս բարի · պաշտօն խնկելի, եւ երջանկութիւն խոստովանելի տ՟ն երկրի · երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութ՟ն · գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բարկութե՟ ամաց մեղանաց՝ քըթթել մի ական · որ հրաշալեօքս զարմանալիս՝ գեր քան զմտ՟ ազգինս նախնեացն՝ անսահման առաւելութե՟՝ կրկին ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութե՟ վերնահոս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութեան նորում: Եւ զանստուեր զմուստ լուսարանի պատուհանին անձկութե՟ նշուլիցն աղօտականաց, չափով գիտութե՟ցն ըստ սողոմոնի, եւ իւր իսկ նմին, եւ ինձ ընդ նորին՝ բացեր ընդարձակեցեր թըշնամացելուցս զառագաստն անջրպետարան եւլիցն ողորմութե՟՝ ձրի պարգեւացն մ՟ծականաց. զոր ընդ մէջ իմն մանկաւորօք աւետաւոր յէշատակաց, եւ 'ի հնումն զայսր տպաւորութե՟ օրինակաւ նկարագրեր, զդարձարուքն առ իս, եւ ես դառնամ առ ձեզ. եւ յորժամ դարձցիս եւ հաւանեսցես, յայնժամ կեցցես: Նաեւ եւ զանջնջելին սեւու՟ն գունոյն՝ փոխարկել 'ի ձեւն պայծառութիւն. եւ զարանցն արեամբ ներկելոցն՝ յեղանակել 'ի պատահումն դեղման, ըստ Եսայեայ եւ Զաքարիայ. եւ 'ի մէջ բարկութե՟ն՝ դարձեալ զոյգ զողորմութե՟. քանզի անապատանալ քաղաքայն Իսրայէլի, եւ դարձեալ բնակիլ. եւ ճանապարհացն ամայի լինել 'ի չգոյէ մարդկան, եւ անդրէն հետեւիլ. եւ լքանիլ 'ի տոմլոյն ուղւով, եւ դարձեալ զօրանալ ձեռամբ. եւ գնալ ա՟յ 'ի տեղի իւր զայրացմամբ, եւ դառնալ ողորմութ՟բ. ըստ ներողութեան՝ գելյն, եւ 'ի մէջ սաստիցն սպառնալեացն՝ կրկին պաշտպանութե՟, եւ 'ի սրտին խռովութեան՝ յուզումն խնամոց գթութեան: Այս մարգարէիցն ձայն խնկելի, որ զօրհնեալդ քո գալըստեան զազատարարդ հրաման կանխաւազդէին:

Ի՟. Եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկանել մ՟ն անբաւութե՟, փոքունքեն եւ նուաղունք՝ օրինակք եւ նմանութիւք, հինք եւ ժամանակաւորք՝ առ աւետեայդ քո յայտնութե՟, եւ խաչիդ փըրկագործութե՟: Որ յա՟մ վայրի կառուցեր

զիս

զխորանն վկայութ՟ն արեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն՝ քան զդատակնիք մահուն հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի, կեանս կրկինս և անմահականս՝ շնորհաց, մկրտութեան, յարութ՟ն, նորոգութ՟ն, առ քեզ ընտանութ՟ն, ընդ հոգւոյդ սբ՟յ միութ՟ն, քաւութ՟ն, ազատութ՟ն, լուսաւորութեան մշտնջենաւոր մաքրութ՟ն, խնկաւէտ երանութ՟ն, ընդ վերնայնոցն կցորդութեան, անկապուտ փառաց․ ՚ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Եւ զոր ահաւորն է ասել, կարդեմ սատանոր՝ յիշատակ եդե՟լ մեծիդ երախտեաց՝ ա՟ծ լուկ լինել ընտրութեամբ շնորհին, և ը՟ հատուցիդ միանալ՝ տ՟րունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութ՟բ․ զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ պօղոսի բանին, ոչ ունէր օրէնն։ Այլ դու փրկութի, եկիր հայրենիդ քո հաւատութ՟բ, արարեր և կատարեցեր զյուսոյն յերկարաձգութ՟ն, որ առ քեզ պահեալ անհամառօտելի՝ քաւիչ ամենայնի։ Եւ քեզ փառք ը՟ հօր քում՝ ՚ի գովեստ բարեբանութ՟ն հոգւոյդ քո սբ՟յ, յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ :

ԲԱՆ. ԾԴ :

ա՟. Տէր զօրութե՟ց՝ բոլորից գոյից թագաւոր, օրհնաբանեալ ողորմութի՟ն ա՟ծ ամենեցուն : Որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութե՟. ա՟մ անքաւուե՟ց գոլ ես որքանութե՟. մինչզի կարծրն՝ քեզ հոսանուտ է, և լոյծն՝ քեզ պնդակապ. և չիք քո իր անհնարաւորական՝ յաղթօղ զօրուե՟ ահեղ. հուրն՝ ցօղ իմն է զովական, և անձրևն՝ բոց կիզանողական : Զքարն բաւես ցուցանել կերպարան աղդման, և զբանականն դընես անխօս և անշունչ արձան : Զպարտաւորն ողջքեալ՝ պատուէական առնես, և զկարծեցեալն մաքուր՝ խրատամբք քըննեալ դատես : Զմատուցեալն 'ի մահ՝ բերկրութ՟բ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տեսութ՟բ օծեալ՝ դարձուցանես : Կանգնես զմատնեալն հաղբեց գլորման, և զսասանեալն՝ 'ի վստահութիւն վիմից հաստատես : Զախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ կարգես, և զյառաջատեալն՝ դարձեալ անդրէն 'ի յետս նահանջես : Եւ յորժամ սպառնիս առ 'ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալին յայնժամ ներգործես. քանզի վ՟ն քո գե-

ռես

տես թողուլ զմեղս՝ և ջնջել զանօրէնութ՟իս, և քաւիչ լինել անիրաւութ՟եց՝ և զմեղս մեր ոչ յիշատակել, ըստ եսայեայ և երեմիայ։

Է. Այլ առ շնորհ նորոգ փրկութեան՝ բազմօք գոհաբանութ՟ք հետեւեալ, 'ի յաճախութիւն անբաւիցն՝ լռեալ առ ամ՟ն իսկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ զլուսոյդ անսպառ բարիսդ, որ 'ի քէն առ իմ յանմաս թշուառութ՟ի, քոյին աղերսիւ առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանից զտառ ողբերգութեան այսր մատենի, լցից թախծութ՟ք և հեծեծանօք։ Այլ առեալ խառնեցից 'ի տուողիդ հաճութիւն, ընդ ցաւոցն՝ զդեղն. ընդ վհատութ՟ն՝ զխրախոյսն. ընդ յուսահատութեանն՝ զյիշատակդ անոխան հաստողիդ. ընդ տխրութ՟ես՝ զփոփանսդ. ընդ խմելս դառնութ՟ե՝ զքաղցրութ՟ն կենարարիդ. ընդ պատիժ օրինին՝ զշնորհն. ընդ պարտս անիծիցն՝ զազատարար օրհնութիւնդ. ընդ մարմնոյ մահուն՝ զամենայնիւ նորոգութիւնդ։

Ը. Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վըկայեմ. լուր լռութ՟ե սրտիս՝ տ՟ր յ՟ս, որ հնչումն է առ քեզ մեծութ՟ե ձայնի երկար գոչելոյ։ Որ մարմնակից և պատկերակից մեր եղեալ, և քահանայապետապէս անօրինակդ՝ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ, ան-

մա

մաչապէս մինչ մատուցանիս, և ունիլ ոճազաբար քաւուն շնորհես. ոչ սակաւամեղիցն միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութ՟ի առ եւս կենաց: Զի ո՞րքան զօրէ մարմնոց անդամոց առ մեզս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգու՟ն, յորժամ ա՟ծդ բոլորեցուն զմ՟ սորին կամաւ և յօժարութ՟ք զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ ՚ի քաւութ՟ի: Զի ոչ եթէ մաքրութեանդ այլիւր՝ պարտական գոյ մահու յօրըստօրէ կատարիլն, այլ կամօք քովք՝ հոգւոյդ գործակցութ՟ք, ՚ի հաճութիւն հօր՝ և ՚ի մեր հաշտութ՟ի ցանկ մատուցանիս: Իսկ եթէ ամենիցդ ա՟ծ անքննին՝ խնամս զմ՟ իմ՝ առ իմ՝ փրկութ՟ի, ՚ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան եւս էցեմ մարմնով՝ պարունակեալդ կցորդ միացեալ. և դու բարերար, յաղագս իմ ՚ի յիմս կերպի՝ փոխանակեալ ընդ իմում պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ՝ զմահապարտիս մասուց պատուհաս, և ՚ի յիմ անուն յանցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ, բազումս մեռեալ՝ և մնաս կենդանի. ոչ ուրացազացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ա՟ծապէս նուիրեալ, և ՚ի մասունս
անհատս բաշխեալ:

Գ. Տէր ոմն ողոքաւոր՝ հաւատալեացն պաշտօնատար. մեծ իմն և անկշռելի առ ամին դատէր՝ անյարմարագիր անձին յուսադիր, հաւատամ զփառս և զերջանկութ՟ի, թիւն, քան թէ մարտիրոսութիւն իսկ՝ թող թէ ողջութիւն իմս թշուառութեան՝ յանցաւոր մարմնոյս վախճան ընդունել: Իսկ զանձաւութիւն խորհրդոյս՝ այսու դիտեցի. դաւանէր ինքոյն, որ զի և մաքրոցն անձինք առանց նուէրման այսր յիշատակի՝ չեն են ինքնայէս կատարեալք լինալ, եթէ ոչ ընդ այս հրաշակերտութեան մեծութեան՝ հոգւով խառնեսցին: Ապա թէ մեղաւորիս մասին՝ կրկին մատուցար բաժին ասելով՝ յուսայր, իբրև այն թէ ես ինքն եղէր ճշմարտին, գրաւեալ զիմս դաժանութիւն ընդ քում համեղութեան, պատարագեալ քոյին անխէթ զանգուածոյ նշխարաւք կենաց լուսոյ: Այսու ամենայնիւ 'ի վերնատանն նախանուէր բարեշնորհութեան՝ անհնարաւոր ախտիցն ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց 'ի քաւութիւն, 'ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ. յուսոյս օրինակ յարգաւորութիւն գրել զիս 'ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երևեցուցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ մեծականիդ առ մարդ զօրութեան. և տիրական մեծախառն մարմնոյն կամաւորական նուէրումն՝ առ անմահական սպանդին մատուցումն. և անմահն՝ առ մահկանացուս. լոյսն ահաւոր՝ առ ստուերայինս. յաւիտենականն՝ քան զանցաւորս. բարձրեալն՝ քան զերկրաւորս. անստեղծն՝ քան զեղականս. բարին ինքութիւն՝ քան զթիւրեալս բնութե՟. մանաւանդ զի ճար է կամելն, և ճար կենդանագործելն. օրհնութե՟ն առիթ՝ քան զանիծիցս պատճառ:

ե. Որդ՝ տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի՝ աղաչեմ՝ գըթած, զառ 'ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց. մատի՛ր քաղցրութե՟՝ առ ախտացեալս մեղօք. քաւեա՛ 'ի պարտեաց՝ ամենակատար բաւականութե՟: Իսկ առ 'ի յինէն՝ այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հատիչդ ամենից՝ 'ի մերս բնակես. և ըստ տարազու սերմանն՝ և հնձելն է իրաւացի, ըստ ճշմարիտ բանին պօղոսի. և աչացուացն՝ 'ի տապ արևու ոչ է զօրութի՟: Այլ դու բարերար հաստիչ յոչէից՝ յարդես յաւէտ խոկալես համայն, և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութի՟. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի. այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն ես այս պայման աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տարակուսելոց: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութի՟ յաւիտեանս. ամէն:

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոկողէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. ԺԴ:

ա. Եւ արդ՝ յամենայնի առ քեզ ակընկալութի՟ քո՛ է ողորմութի՟, ընկըլնակզբնալո՛յսդ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից՝ Յ՛ս ․ քո՛ է բարերարութիւն՝ կեանք և անմահութիւն ։ Դարձ առ իս գթութ̅բ , և հանդերձեսցես դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութ̅բ ․ զի առանց քոց կամաց՝ ո՛չ ունիմ լինել նորոգ փոփոխեալ ․ և եթէ ո՛չ կամք քո գթասցին , ո՛չ զօրեմ փրկիլ մահու պարտականս ․ և եթէ ո՛չ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ , վի՛հ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ ։

բ̅ ․ Ահա ո՛չ պարծիմ՝ ա̅մ իրօք նախատեալս ․ ո՛չ պանծամ գարշելեալս ․ ո՛չ խըրոխտանամ լքեալս ․ ո՛չ մեծաբանեմ պապանձեալս ․ ո՛չ ըմբոստանամ ձաղեալս ․ ո՛չ երջանկանամ եղկելիս ․ ո՛չ արդարանամ ամբարիշտս ։ Զի ո՛չ երբէք հարթ ընթանայ երիվար՝ առանց սանձահարի ․ և ո՛չ նաւ համբառնայ հանդէպ՝ առանց ուղղչի ․ և ո՛չ արօր կշիռ ինչ գործէ՝ առանց մաճակալի ․ և ո՛չ երկուօրեակք լըծոյն 'ի ճահ ճեմեսցին՝ առանց եզողի ․ ո՛չ ամպ վերաշուէ՝ առանց հողմոյ ․ ո՛չ աստեղք ցնդին և կամ գումարին՝ առանց ժամանակին ․ ո՛չ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի՝ առանց տարրական օդոյ ․ և ո՛չ ես նորօք հանդերձ՝ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութ̅ե ։ Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց , և խնամիչ կարգաց հոլովման արարածոց ․ և 'ի քէն է ինձ փրկութ̅ի , ըստ սաղմոսողին , զէն, և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման՝ յականջս լսելութեան ա՟մ հասակի, եկայք 'ի հանդիսա իմ բնաւին աշխատաւորք, և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց: Իսկ զի՞նչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զազրացայց. և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց: Եւ կամ զիա՞րդ յաբրահամ պարծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին. որդիս դարշութեան հօր ամովրհացւոյ, և մօր քետացւոյ կամ քանանացւոյ, ըստ մարգարէին որ առ իս՝ յանկաւոր ձայնի. ժառանգս մերժելի եթովպացի՝ և ոչ սենեկին սառայի, ըստ անսանողին առ իս առածի. եղբայրս շամրնի՝ և կամ գոմորայ. համբակս անլուաց և անաղելի՝ խակակութ պորտոյն խակութ̅ե տղայ և ողողիքայ, ըստ եզեկիէլի կրկնանախատն կշտամբութ̅ե:

Դ. Եւ քանզի 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկացեալս զլուեալ ուժգին ըլկանօք խոյառ տագնապմամբ 'ի ծովլին՝ փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս՝ զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր 'ի հոսանաց բռնութեանց դարնանաղայր գետոց, արտաձգեալ յականմոյ ընթացս ողորմագին գլորման՝ ջրահուլ ոգեսպառ պղտորարբութ̅բ՝ դաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախառնի՛՝ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուզխիցն հեղեղիցին՝ հեղձուցեալ: Այսու առակա և ես եղկելիս՝ խօսին, և ոչ իմանամ. գոչեն, և ոչինչ լսեմ. բարբառին, և ոչ զարթնանամ. հնչեն, և ոչ փոխադրիմ. փողեն, և ոչ դուամարիմ. վիրաւորիմ, և ոչ ևս զգամ, կռոյն գարշութեան նմանեալ՝ թափուր յազդմանէ բարեաց իմաստից: Արդարև չար առաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ՝ ճշմարտութիս, ատելի և մեղադրելի, և ատենին քնի արժանապէս մատնելի:

Դ. Եւ քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ՝ աստեացս պարտեաց՝ զայս կտակ թողի որոց ընթեռնուն, իմով բանիւ առ ա̄ծ կարդալ հանապազորդութեամբ, այս կացցէ սահման յանձնառական խոստովանութե̃՝ մշտնջենաւոր ձայնարկու առաջի քոյ՝ ամենակալ. զոր գիրդ ընդմարմնոյս, և բանդ ընդ հոգւոյս՝ զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յիմոյս ձայնէ՝ բարեգութ մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

* * *

Վերստին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս խորհրդոց բանին: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ:

ԲԱՆ. ԾԵ:

Ա. Եւ վ̃ն զի սպասցեալ ուղղոյս թևօք 'ի թիչս անբաւից ծննդոց մարդկան՝ եղի 'ի կշիռս իմանալեացս մտաց, ոչ գտի զոր համեմատ ինձ սպարտաւորք ․ և առ այս զգուշութեան սաղմոսին զբանն 'ի յերգ ինձ առնի՝ գտանի կշտամբութե՟ գաւազանաւոր գործավար ․ ո՞վ յարիցէ ընդ իս 'ի չարիս՝ հաւասարել յանօրէնութիւս ։ Եւ քանզի այս բան սմին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատել ․ առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զկեղծանիլ իսպառ, քան խմելս բանիւ՛ բազմաց ստորագրել ․ Թերևս սովիմք առ այսու արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնորհողիս զպարտիս իմոցն ։

Է․ Եւ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական 'ի յայսմ և 'ի սոյն, և ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից՝ գովե՛լ Թագաւոր երկնաւոր քո, եթէ ո՛չ զառ 'ի յինէն անիծեալսն՝ օրհնել մաղթեմ ․ զկապեալսն արձակել ․ ազատել զդատապարտեալսն ․ բարեգործել զնզովեալսն ․ պսակել զթշնամանեալսն ․ սփոփել զարտամեցեալսն ․ դարմանել զխորտակեալսն ․ խնամել զապարտուցեալսն ․ պարսպարել զնենգեալսն ․ զվիրաւորեալսն 'ի մարմին՝ յոգի բժշկել ։ Եթէ օրհնութե՟ բանիւ՛ առ ոք մատուցայ, լուիցես ․ իսկ եթէ անիծիւք, մի՛ հայեսցիս ընդունել գըթած ։ Ես տառապեալս ամենաթըշուառ՝ 'ի վերջին ապաստանութե՟ մաղթանաց այսր մատենի, 'ի բովանդակ մտաց շնորհեցի իմոցն՝ փակեալ առ 'ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաչուք ձայն ․ և դժնէից նենգաւորացն իմոց՝ ընդ բարիսն

'ի

'ի բոլոր սրտէ հաշտութեան արգահատեցի • վասն որոց և ծունր պաղատանաց կրկնեցի • որչափ դու ինձ ահա յայց ելեալ առաւել ողորմեցիս ըստ քոյդ մեծութե՝ գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուցիս • հզօրդ՝ տկարիս • ամենակարդ՝ վարանելոյս • իմաստութեդ աղբեր՝ յիմարիս և թմբրեցելոյս : Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրև զողողակ մթային ոչ ընդելական՝ 'ի հոգւոյս մահու անզգայապէս • չիմացայ զկորուստն • չգիտացի զորոգայթն • չտեսի զմերձենող որսոյն ծածուկ մերձենայր • չկարծեցի զխաբուսն կերպարանաց կեղծաւոր վարմին • չնկատեցի զգայթագղութիւն շուրջանակի • չշօշափեցի զպատուանդիչ զցանցարկ կարթին • ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին :

գ • Քանզի և ոչ խնամակալ ումեմն արտաքնոյ բարւոք թուեցաւ չար առնել ըզմահ՝ առ չխնայելոյն պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ • քանզի իբր զանըզգայ պատճառս անասնոց մեռանիմք՝ և ոչ զարհուրիմք • կործանիմք՝ և ոչ հիանամք • թաղեցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք • առբագրիմք՝ և ոչ տագնապիմք • եղծանիմք՝ և ոչ զղջանամք • մաշիմք՝ և ոչ մտանեմք • պակասիմք՝ և ոչ պատրաստիմք • գնամք՝ և ոչ զգուշանամք • գերիմք՝ և ոչ ես ըզգամք : Իսկ հանդիսա առնել երջանիկին յոբայ զվախճան մարդոյ, և ես խոստավանիմ զայն ընդ սմին, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան մահացու գործոց քաւանձնեալ։ Մանաւանդ զի՝ որոգայթն գաղտնի, և հնարագիւտն աներևակի․ տարր ժամանակիս յանէից, անցեալն անյայտ, և ապառնին կարծողական․ ես անհամբեր, և բնութիւն թերահաւատ․ ուք անհաստատք, և միտք ցնդեալք․ կիրք հարկաւորք, և բարք անժուժկալք․ մարմին մեղսամակարդ, և յօժարութիւն երկրասէր․ դիմամարտութիւն անկակից, և խառնութիւն ներհակական․ բնակութիւն կաւեղէն, և անձրևք ուժգնակիք․ կառիք անթուելիք, և պատահարք ամենագրաւք․ միտք չարախնամք, և տենչմունք բարկատեայք․ կեանք առօրեայք, և զմբայլք սակաւաւորք․ խաբմունք յիմարութեան, և խաղալիք տղայականք․ աշխատութիւնք ընդունայնք, և վայելմունք երազականք․ համբարք ոչնչից, և պահեստք հողմոց․ նմանութիւնք ստուերաց, և կերպարանք ծխածաղելիք։ Քանզի իբրև եկն եհաս պատուէրանն, ըստ սօղոմոնեան բանին, անպատրաստ գտեալ զիս ինքեան, մեղքն կենդանացան յանդիմանել յարդարութեացն, և ես մահացայ կենացն, և կենդանացայ կորստեանն։

Դ․ Պաղացան օտարք չարին գումարք զատացուցածս սրտիս իմաստից, ըստ գրոյն կանխաքանուէ․ որով եկն եհաս իսկոյն ստորանօր իմաստութեան ինձ նուաղման, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութեան։ Ո՜չ յառնեցի զակն ոգւոյս՝ ի

գլուխն իմ՛ կենաց քս̃, որով ընդ ուղիղն
հետեւեցայց: Քանզի կամելով ուժգինս
ընթանալ՝ ընկլայ սաստկապէս. յանչափն
ձգտիլ՝ իմոյն ոչ հասի. 'ի մեծագոյնն ամ-
բառնալ՝ աստուստ գլորեցայ. յերկնայինն
ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ, 'ի զգու-
շանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ. յա-
նարատն պահել՝ մանր խորտակեցայ. կար-
ծելով ընդ ահեակն մրցել՝ յաջն գթեցի.
'ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորու-
սի. 'ի խնդիր սակաւուն՝ 'ի կարեւորացն
զրկեցայ. 'ի յուխտին պահել՝ դաշինն
դժրեցի. առ սովորութեն կարել՝ կորու-
սիչս գտի. 'ի փոքունցն փախուցեալ՝ մե-
ծամեծացն մատնեցայ. զոր ես ինքն ին-
ձէն ստեղծեալ՝ չարաչար դատախազ ան-
ձին կարգեցի: Յորոց փրկեա զմատնեալ
գերիս դու միայն զօրեայես, կենաց մա-
տուցեալ՝ զընծայեալս մահու՝ զհոգիս.
զի դու միայն՝ տէր յս̃, ճանաչիս բարե-
րար, անսահման փառօք՝ ընդ հօր և հոգ-
ւոյդ սբ̃յ օրհնեալ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն:

⁂

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին
հոլովէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

ԲԱՆ. ԾԶ:

ա̃. Իսկ զառիթոն՝ մահու դիպուածոյ՝
դժոխարմատ ծառոյս դառնութե̃

պտուղք , ընտանիք Թշնամիք , հարազատք հակառակք , և որդիք դաւաճանօղք , ստորագրեցելովք մատամբքդ նշանակեցից՝ դրեալ յանուանէ , որ են այսոքիկ ։

Ք . Սիրտս նանրախորհուրդ , բերանս չարախօս , ակնս յայրատատես , ականջս վրիպալուր , ձեռնս մահաձիգ , երիկամունքս անփորձ , ոտնս մոլորաշաւիղ , ընթացքս աներկիւղ , հետք խոտորնակ , շունչք ծխախառն , գնացք խաւարային , գոյուն̅ լերդի վիմական , խորհուրդ ծորեալ , կամք անկայուն , չար անփոփոխ , քարեմասնուն̅ սատանեալ , անձն տարագիր , ուսանող վաճառեալ ։ Գաղտն վիրաւոր • Թռչուն նետահար • փախստական քարավէժ • ըմբռնեցեալ մահապարտ • աւազակ ծովակուր ։ Զինուոր նենգաւոր • մարտիկ անպատրաստ • սպառազէն անժուժկալ • մշակ հեղգացեալ ։ Աղօթական անխրախոյս • բեմական ստորնաքարշ • քահանայ անկնդրուկ • օրինական անոնէր ։ Դպիր կշտամբեալ • իմաստակ խելագար • Ճարտասան անձոռնի ։ Կերպ անպատկառ • դէմք անամօթ • երեսք լպրշեալ • գոյն անհամբոյր • ոխս անմարդի • դեղ ծանուակեալ ։ Խորամիկ խանգարեալ • Ճաշակ գարշեցեալ • այգի գաղձնաւոր • որթ որդնահար • պարտէզ փշաբեր • հասկ ուտճահար • մեղր ՚ի մկանց ճարակեալ , անպատսպար անկեալ ։ Անապարծ յուսահատ • անհամոզելի նզով • անհաշտական բամբասեալ • ունայնաբան շաղակրատ •

պա_

պաճարամիտ դոռոզ · սնամոլորէն ապիրատ · դժոխային ադաւհ · աներասան յանդուգն ։ Մոլեգնութիւն անմտի · ձեռնաձըգութիւն սպանօղ · տատանակացան երկրագործ · երջանկութիւն եղկելի · մեծութիւն վատթարեալ · վայելչուն անշքեալ · կարողութիւն ակարացեալ · բարձրութիւն խոնարհեալ · փառաւորութիւն ընդոտնեալ · պատուիրանազանցութիւն յարակայ · սխալանք ինքնակամ ։ Մատակարար կամակոր · խորհրդակից նենգաւոր · բարեկամ հատուածեալ · հալածարապետ դողամիտ · մերձաւոր կծծի · բաշխօղ ժլատ · վերատեսուչ կարկամ · ոգի անախտակիր · իղձք անսէր · բարք ատեցօղ · աղիք անգթականք · գնացք անխոհեմ · աներեւոյթք վնասեալք · ծածուկք անիծեալք · գիտուածք թշնամանեալք ։ Աշխարհական վատնիչ · շահարար շուայտեալ · պաշտօնեայ արբեցօղ · գանձուց ստոիկան երկմիտ · պատգամաւոր բանսարկու · դռնապան քնէած ։ Աղքատ հպարտ · մեծատուն ժխտօղ ։ Գիտնապետ անօրէն · պահապան մատնիչ · բնակակից չարախօս · սուրհանդակ անժաման · թղթաբեր պարտաւոր · առաքեալ խռովարար · միջնորդ անիմաստ ։ Արքայ արտաքսած · թագաւոր թարմատար · կայսր ոգէկործան · իշխան տիրադաւ · զօրավար զրկօղ · դատաւոր ակնառու · ռամիկ ինքնագործ ։ Նախատողի ծաղր · սիրելոյ աշխար · բանագրի դարով · յանդիմանչի դատախազութիւն ։ Քանզի և 'ի վեհագունիցդ կոչմանց՝ էր ուրեք ա՞րդեօք՝ զի էի . իսկ 'ի վատթարականացդ մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ : Արդ՝ այսքան չնաստակարութիւնք խարդախութեց յաճախագունից ,յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար . և յոմանց աւրեցայ իբրև զտկար՝ կամաւ մատնեալ զիս ինքն մահու :

դ̃ . Արդ՝ զո՞րս 'ի վերադրելոցդ մասանց՝ քեզ ատելեաց , և իմ կորուսելեաց՝ 'ի սպաս պաշտաման քեզ ընծայեցից . զո՞րպիսիս ապականութ̃ պարագրեալս՝ ամենասուրբդ քո մեծութեան հանդէպ կացուցից . և կամ ո՞րքանեօք երկայնմտութ̃ք համբերեսցես այսքանեաց պարտուց . ո՞րքան ներես . ո՞րպէս լռեսցես . զի՞արդ իսկ անսայցես . ի՞բր ոչ մատնեսցես հարուածոց զանից զարժանիս սատակման մահու : Արդ՝ այսոցիկ աննշոյլ մթութեց՝ հոգւոց խաւարի՝ ողորմութ̃ լուսոյ քոյ պատահեսցեն՝ բժշկել քաւել և կենագործել՝ զօրեղութիւն անվթարելի . և քեզ փառք յամենայնի . ամէն :

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հաջողի , առ նոյն աղերս մաղթանաց բանին :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ :

ԲԱՆ . ԾԵ :

ա̃ . Ո՜վ ա̃ծ անուն ահաւոր . մեծութե̃ տեսակ . անքննին բարձրութե̃ թե՟ պատկեր․ անհասանման զօրու՟ն․ կերպարան փրկութե՟ լուսոյ․ պաշտպան կենաց․ դուռն արքայութե՟՝ վերնում հանգստեանն․ ճանապարհ հանդարտու՟ե․ ապաւինութի՟ նորոգ և անախրական երանութե՟․ ամենակալ ինքնիշխանութի՟ բոլոր էականութե՟․ օրհնութե՟ կոչումն․ աւետեաց ձայն․ բերկրութե՟ բարբառ․ անմահու՟ե դեղ․ որդի անճառ հ՟յ միոյ։

Որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է․ որ ինձ անհասն է, քեզ սահմանեալ է․ որ ինձ անանցն է, քեզ հպաւոր է․ որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութե՟ մերձաւոր է․ որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է․ որ ինձ անկշռելին է, քումդ անճառութե՟ չափեալ է․ որ ինձ յուսահատութե՟ն է, քեզ սփոփանաց է․ որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է․ որ ինձ հեծութե՟ն է, քեզ խնդութե՟ է․ որ ինձ ծանունք են, քեզ թեթևագոյնք են․ որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրեցեալ է․ որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է․ որ ինձ անճառն է, քեզ համարեալ է․ որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է․ որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է․ որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է․ որ ինձ փախչելին է, քեզ վանելի է․ որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է․ որ ինձ մահաբերն է, քումդ էականութե՟ զօրու՟ե՝ ընդ ոչ-գոյսն համարեալ է։

Է · Այլ դու ողորմած ած՟ բոլորից տր՟ յս՟ քս՟, և այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս · վն՟ անուան փառաց մեծութե՟ հօր քոյ օրհնելոյ, վն՟ կամաց գթութե՟ ոգւոյդ քոյ սբյ՟, տե՛ս ՚ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութի՟, և ՚ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութի՟ · նայեա՛ ՚ի բնութես ամենապատաղ խակութի՟, և պարգեւեա՛ բժշկութի՟ վիրացս, և հնարաւորութիւն կորստեանս · զերծումն բազմամասնեայ մահուս, և շաւիղ կենաց ապականելոյս · նորոգութի՟ եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս ։ Եթէ ես զանձնամանն ինձ կամս ցուցի, որչափ առաւել դու զբնաւորական քո զընտանի բարերարութիւնդ · եթէ ՚ի փշոյ պտուղ ընծայեցաւ քաղցրութե՟, որչափ առաւել ՚ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութե՟ · եթէ ես իմոց ատելեաց ողորմութե՟ մաղթեցի, դու քոյոյս զիա՛րդ ոչ կրկին մատուսցես հզօր՝ յաննուազդ առատութե՟ ։

Գ · Արդ՝ տե՛ս ՚ի քոյդ մեծութի՟ բարձրեալ, նայեցեալ ՚ի յիմս փոքրկութի՟ · ընկա՛լ զաակաւ խոստովանութիս անհամար մեղացս, որ զբնաւն համայն տեսանես · և որպէս զվիճին գթել՝ ոչ գրեցեր, և զաւաղոյս փոքու ստասանել՝ մի համարեսցիս · և իբրև զգաւթին ընդ մեղոյն ատել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցըն, և առ իմ ձայնիս հեծութե՟ զնոյն գործեսցե՛ս երկայնմտութի՟ · որ տաս ամեմենեցուն առատապէս անպակասութ՟բ՝ ո՜վ յաղթօղ բարի բազմիմաստ․ և ո՛չ նախատես զյետնեալ ստրուկս՝ ո՜վ ողորմած և ամենաստեղծ․ ստացի՛ր վերստին, և մի՛ կորուսա՛ներ զբուժեալս արեամբ քո, և զբուծեալս ստեամբ քո՝ գը՛թած։ Զի քո՛ է փրկութի՟, և 'ի քէն է քաւութիւն, և քեզ վայելէ փառք յաւիտենայնի յաւիտեանս ամէն։

* * *

Վերջին յաւելուած ներեն հեծութեան՝ նորին հոկողէ, առ նոյն աղէրս մաղթանաց բանի։
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ։

ԲԱՆ. ԾԸ։

ա. Օրհնեալ տ՟ր յ՟ս ընդ հօր, 'ի կամս հաճութե՟ հոգւոյդ քո ս՟բյ․ և օրհնեալք ա՟մ՝ առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան․ օրհնեալ միայն՝ որդի օրհնելոյ․ չի՛ք իմ՝ թագաւոր իշխեցօղ շնչոյս բաց 'ի քէն՝ ք՟ս։ Այս է օրհնութիւն յակոբայ՝ ասէ եսայի, յորժամ՝ բարձից զմեղս ն՟ր։

բ. Արդ ողորմեա՛ց ինձ տ՟ր բարեգութ՝ ըստ նախնիդ քո սովորութե՟, և օրհնեա՛ զանօթս քո բանական, ըստ ձայնին դաւթի՝ և ըստ մովսէսի․ զի բանի՛ւդ քո փրկութե՟ ժամանեալ, հասից քաւութե՟ օրհնեալ առ 'ի քէն։ Այսպէս ինձ հրաշագործեա՛ ո՛ղորմած արքայ երկնաւոր․ ո՜վ անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոցն 'ի սրահն բեթհեզհեղգայ ։ Յորոց մի էր և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ , որում ոչ անխայեցեր զբժշկութեն ձեռնտուութեն , իբր գիտելով զանբոյժ չարութին՝ որ նիւթեացն քեզ յաւուր մանկութեն դառն գիշերին տիրամարտութեն՝ երախտաւորիդ , մեծիդ և բարերարիդ ։ Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր , թէ մի՛ մեղանչէր՝ զի մի՛ կրկնեսցին կրկին քեզ չարիք , ոչի՛նչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին ։ Եւ դու այնպիսւոյ անյարիր ջատուկ մահու ծնդեցեալ չարաչուք առն ողորմեցար , անճա՛ռ բարութեն ․ սիրալի՛ մարդասիրութեն ․ սարսափելի՛ ներողութեն ․ տոկալի՛ երկայնմտութեն ․ անբաւելի՛ քաղցրութիւն ․ փառաւորելի՛ հեզութեն ։ Որ միշտ յաղթիս 'ի գթութենէ , և ոչ թշնամանիս ․ պարտիս յողորմութէ , և ոչ պարսաւիս ․ բռնադատիս 'ի մարդասիրութէ , և ոչ անգոսնիս ․ հարկիս 'ի բարութէ , և ոչ հայհոյիս ․ ստիպիս 'ի սիրոյ , և ոչ բամբասիս ։ Պաղատիս դարձին իմ առ քեզ , և ոչ ձանձրանաս ․ արագես զկնի ապերասանիս , և ոչ լքանիս ․ ձայնես չլսողիս , և ոչ սրտմտիս ․ փութաս մեղկելոյս , և ոչ խափանիս ։ Առ չարս՝ ես բարի ․ առ ամենապարտս՝ ես ներօղ ․ առ մեղաւորս՝ ես քաւիչ ․ առ խաւարեալս՝ ես լոյս ․ առ մահացեալս՝ ես կեանք ։

Է ․

Դ. Լոյս ե՛ն գիրք ամ՟ հոգեշունչ օգտակարութե՟, որ յաճախս ծնանին երկնաւոր սրտուղս՝ անճառս և զարմանալիս: Այս և ինձ թշուառացելումս՝ օրհնեա՛լ ամենապարգև, այլ՛ ո՛ւ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ ժամանեա՛ յանդորր հանգիստ անաշխատ կենաց: Խզեսցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝ զերիզապնդեալ մահազդեստս պարփակութե՟՝ դժոխայնեայ կապանացս. և լո՛յծ ինձ զհանգոյցս խեղդողական ոգեպահանջ սաստկութեա՟ս, առաքելով զարժանաւորս մահու՝ յազատութիւն վերին անանց բերկրութե՟ն, կենսաբեր և ա՟ծային քո բանիւդ: Մի՛ տակաւ տակաւ աղդեսցես, և մի՛ օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի՛ ստո՛ւար ծանրութիւն բեռանցս մեղաց՝ տիրեսցէ թիկանցս աղդերաց, և կործանեալ զիս կորացուսցէ՝ հայել 'ի դժոխս. և ուժգնակի գոռոզ բռնութե՟՝ անպարապ հոգևորական զինուն արարեալ, մահու ծառայեցուսցէ: Այլ օգնեա՛ ինձ՝ բարի՛ վշտակից՝ հեծութե՟ կարեացս մահու երկանց, առեալ յինէն զփայտ սատակմանն, ո՟զ երբե՟մ յուսոյ պահակին. որով կառուցես զվայելչականն յաղթանակի արի զօրութե՟ն, պնդապէս հաւատով յուսոյն կարծրութե՟՝ ընդ քեզ բևեռել անսայթաքելի: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութի՟ յաւիտեանս. ամէն:

Վէր

Վերաբերին յառաջբերեալ ներքին հեծութեան՝ նորին հովուէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. ԾԹ:

ա. Աստուածն վկայեմ մտաց գիտութի՟՝ 'ի քէն ազդեցեալ օգտոյս իմաստութե՟ ուշիմս տեսման. զի ըղձալի են քեզ՝ բարերար, աղաչանք մեղաւորաց՝ քան զխնդրուածս արդարոց: Զի մինն զպարտուն անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ. առ որ ծանուցեալ զբնութես չափ, և մեծ կշտամբիչ աստէն համբարձեալ՝ ինքնոգոր մարտակից նմին իսկ ինքեան, և գտան գարովլիչ և ծածկատես դատախազ: Իսկ միւսն՝ յարդիւնս բարեացն իւրոց նայելով, յանձին հաշւե՟լ ձեռն վստահութե՟, մոռանայ զսահման բնութե՟ն, և պարգևաց՝ քան ողորմութե՟ դիտեալ ակնունի: Վ՟ն որոյ առ մինն՝ անթի՟ են ստեղծուածք ձեռաց, որ զողորմութեցդ քո՝ փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն՝ լուեալ են քոյդ՝ անքննելին ահաւոր և աննախնամ. ամաչեմ ասել, թէ և երկրաւորիս գործոց պատմութե՟՝ զքոյդ յառաջեալ: Արդ՝ արի տ՟ր, և մի զօրասցի քան ըզքոյդ՝ աջ հողեղինի. մի կշռեսցին ողորմութիւնք քո՝ ընդ ջանից մարդկան:

բ. Իւ արդ՝ առողջքն անդամօք՝ անկարօտք են բժշկութե՟. և տեսանողականքն աչօք՝ չունին պէտս առաջնորդի. և փար-

թամքն

կամքն ընչիւք՝ ոչ դեգերին առ դուրս ընոցն • և ձմին յղփացեալքն՝ ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի • և որքն վարուք՝ ապէնխնդ են ողորմութ՟ե։ Եւ արդ՝ ինձ դթասցիս ողորմել՝ բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատեսուր վարանեցելոյս։ Քանզի թէ էի իբրև զյոբ , ասէի զանձն իմ իբրև զնա արդար և անարատ • Թէ իբրև զմովսէս , ասէի վստահութ՟ի զնորայսն , ծանիցէ տ՟ր զայնոսիկ՝ որ իւրն են • եթէ իբրև զդաւիթ , ասէի՝ արարի զիրաւունս և զարդարութ՟ի • և դարձեալ՝ զմեծն քան զբնութ՟ի մարմնոյ, զմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմում՝ մի՛ լուիցէ ինձ տ՟ր։ Թէ էի իբրև զեղիա , ասէի զանձն իմ այր ա՟յ • Թէ էի իբրև զերեմիա ,զքոյդ ձեռնարտուն յանձն օրինակէի • Թէ էի իբրև զեզեկիա , պարծէի զբարուոքն և զիրաւացին՝ գնացի առաջի քո արդարութ՟ի • Թէ և իբրև զպօղոս , ասէի զիս բնակարան՝ ազդարան՝ և ընդունարան ա՟յ բանին։ Այլ ես անօրէնս 'ի մէջ գիտու՟ե օրինացն , ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարգանօք բանից իբրև զնոսա , և զբնաւին չարս՝ ո՟չ զբարեան զայնոսիկ առաջի քո յիշատակել , այլ և ոչ զամենուստ գոյից զբարեհաճակեալ անունդ հզօր՝ ամբարշտեալս լեզուաւ գովել ։ Իսկ դու առ ի՟մ հնարս զօրաւոր՝ մատո ինձ ոգի փրկու՟ե • աջ պաշտպանութ՟ե • ձեռն այցելութ՟ե • հրաման բարութ՟ե • լոյս ողորմութ՟ե • բան նորոգու՟ե • պատճառ քաւու՟ե • դաւազան՝ կենաց ողնու նութե՟ ։ Զի դու ես յոյս ապաւինութե՟՝ տ՟ր յ՟ս ք՟ս , օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով՝ յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

* * *

Վերադրին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հանգոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ․ Կ։

ա․ Եւ արդ՝ տ՟ր զի ոչ վայելէ օրհնաբանութի՟ն 'ի բերան մեղաւորի՝ 'ի Ճշմարտին առակէ կանխաւ իսկ ուսայ , զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն դաւանութի՟ աղաչաւորս բազմապատկաւ , որ հանապազ ընդունիմ՝ անէծս 'ի սաղմոսիս բարեբանութե՟ ։ Զի իբր երգեցից ինձ վտանգս , և արձանացուցից նախատինս ․ և 'ի մերկութե՟ս գրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցից ։ Զիա՞րդ ընդ դաւթի համարձակեցայց ասել , թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես ։ Զիա՞րդ դարձեալ , թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց ։ Զիա՞րդ , թէ դա՛տ արա ինձ տ՟ր ըստ արդարութե՟ քո , ըստ անբծութե՟ իմոյ որ յիս ։ Զիա՞րդ , թէ կատարեսցի՛ն չարիք 'ի վերայ մեղաւորաց ։ Զիա՞րդ , թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի , և զոյլն որ գտնի ։ Զիա՞րդ , թէ տեղասցէ՛ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ ։ Զիա՞րդ , թէ սատակէ տ՟ր զշրթունս նենգաւորս՝

և զլեզուս մեծաբանս ։ Զիա՞րդ , թէ փորձեցեր զսիրտ իմ , և ոչ գտեր անիրաւութի̅ ։ Զիա՞րդ զյաջորդն ամին , թէ ես պահեցի զճանապարհս խիստս ։ Զիա՞րդ զևսն , թէ ես արդարութ̅բ երևեցայց երեսաց քոց ։ Զիա՞րդ , թէ և ես եղէց անբիծ ընդ նմա ։ Զիա՞րդ զմիւսն , թէ հատուսցէ ինձ տ̅ր ըստ արդարութե̅ իմում , և ըստ սրբութե̅ ձեռաց իմոց ։ Զիա՞րդ անձամբ ինձէն զստու̅ի իմ ծանուցեցից՝ առել ընդ ս̅բյն , թէ լուացայց սրբութ̅բ զձեռս իմ ։ Զիա՞րդ 'ի մէջ նանրութեան , զամբարշտացն աթոռս բամբասեցից ։ Զիա՞րդ զերջանկին պարծանս՝ թշուառացելումս կերպաւորեցից , թէ դա՛տ արա ինձ տ̅ր՝ զի ես յանբծութե̅ իմում՝ գնացի ։ Զիա՞րդ օտարս 'ի բարեաց՝ գետողիդ գայլոնեաց արդահատեցից , թէ մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ ։ Զիա՞րդ ես ինքն գոլով՝ զայլս անիծեցից , թէ տո՛ւր նոցա տ̅ր զգործս ն̅ց . և 'ի կարգ բանիցն համարձակեցայց ։

ը̅ . Քանզի թէ զյետինս բանիցն՝ առաջնովքն աստանօր եդից , կրկին ծանրանան ինձ ցաւք , և յաճախեսցեն դառնութիւնք ։ Բայց 'ի չեղջեցելոցն արտասուաց՝ դոյզն մի չափեալ , բաւականասցայց հանապազորդեան յանդիմանութ̅բ սաղմոսարանին ընտանի ձայնիւն , որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ . առ որս՝ և սպառուած քառաներորդի իններորդի հատուածի բանիւ յանդիմանողի՝ զիս գարշեցուցեալ , հանապաղ խայտառակէ . խցեալ զբերանս 'ի փառաբանութենէ , եղկելի զանձն իմ ցուցանէ . Ոծայլն ձայնիւն դատապախաղեալ , յակնկալութենէ կենաց լքանէ , միանգամայն և վիրգս մահու ինձ' իբր 'ի պատոնչէ տուաքէ : Քանզի թէ չար է անէծս ստանուլ յօտարէ , ապա անձամբ զանձն անիծանել' կրկին չարաչար . իսկ եթէ չառնուլ նախատինս 'ի մերձաւորաց' օրէնք են , ապա 'ի տեսողէն հայել զայսոսիկ , կրից արժան տաժանմունք' վիշտք աղէտից , և խէթք մտաց : Բայց թէ առ խոնարհութե անձին իւրում' մատնեացի , ընեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ իւրմէ , 'ի խոստովանեալ և յամենիշխան շրթանց բերանոյ վերնոյն' օրհնեացի . զի ճշգրտեալ թարգմանեաց զդարձն իւր առ նա' զհետս կենաց ոչ լքանելով . սահմանաւն սիրոյ' զպարտեացն արմատ կրճատեաց , ոչ տիրեալ 'ի խարդաւանաց չարաբանողաց . ոչխար հօտին քնի գտաւ բժշկեալ' դիմելով 'ի յաղն բուժիչ աղեացն արկածից : Բայց և անբանական բարոյից է' սասուն կենդանեաց 'ի մէջ դալարոց ծաղկածին վայրից' կենածիր բանից' թըմբրութեամբ մտաց 'ի յարօտս մահու ճարակել :

Է . Եւ արդ' քանզի իմ է սաստս վերջին կշտամբողական , և առ իս ակնարկէ ըզդիպուածոյն չար պատահմունս . որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիզանողական հրոյ տոչորման , հոսեալ 'ի

յերկ.

յերկնուստ զգոյին գագաթանս իմաստնարանի բազմակնի : Քանզի զիարդ 'ի յարդիւնս ինձ օգտից սաղմոսն եկեսցէ, յորժամ անպտուղ 'ի բազմերգութէն լինիցիմ, ոչ նուաճեալ հոգւով, ըստ թելադրելոյն պօղոսի : Զիարդ ընդ մարգարէին եւս զիորունին խառնեցից՝ մեծս մեղաւորաց՝ նկունս պիտանեաց՝ ասել ընդ նմին, թէ 'ի բաց կացէք յինէն ամ̃քն՝ որ գործէք զանօրէնութի̃ : Զիարդ ոչ ունելով 'ի բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ ինքն արար՝ զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս քո պահեցի զայս. և որ զհետն գան ասացեալքն : Զիարդ թափուրս 'ի լրութէ իմաստից կենաց՝ ընդ երկիւղածս տ̃ն օրհնեցից : Զիարդ ընդ մեծին մաղթանաց զիմս յօգնեցից, թէ զմին խնդրեցի 'ի տ̃նէ՝ զտեսիլ վայելչութե̃ նորա, և զհրաշամանատրութե̃ տաճարի նր̃ : Զիարդ 'ի հրաժարելին ինձ ձեռնամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայելէ օրհնութիւն : Զիարդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զկնի յոլովից առեալն, թէ երեսք տ̃ն 'ի վր̃ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ. զմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սատակեսցին : Զիարդ զկերպարանացն իմ նմանութիւն, թէ բազումք անբարշտաց խորտակեսցին : Զիարդ սատակման ինձ պաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն :

ցեն ։ Զիա՞րդ զբազմայածեան ընդոսս 'ի յօրհնեալն բա՛ն մխեցից, թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով ։ Զիա՞րդ փշովք մեղաց հեղձեալ՝ զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութե՟ իմում ընկալայր ։ Զիա՞րդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր՝ զհանդունակիցսն դարովեցից ապրել 'ի նոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս՝ ա՟ծ ։

դ․ Օիա՞րդ երբ ոչ կուսապաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ դաւթի, միթէ մոռացեալ իցէ մեր զանուն ա՟յ, կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց ․ քանզի որ 'ի մեղս պարշութե՟ խոնարհեացի, առաջի կայնորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն յաւանականացն ախտարծարծիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ աստարտայ և քամովսայ և մեղքոմայ արուեարձանի, և թարահատայ թարմնասարի, ընդ զազրատեացն կանացեաց՝ իշանդամիցն պատկառանք՝ անմերարկու ծանակութիւք ։ Իբր ոչ պատկառեցից սովիմք ասել ընդ նահատակին, որ զայս դիմադրաւութե՟ առ բարին ունէր միշտ, թէ վ՟ն քոյ մեռանիմք զօրհանապազ ․ և որ 'ի կարգին է սորին՝ սաղմոս ։ Իբր յիմարս յարս և վատթարս՝ ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զիմաստութի՟, և սիրտ զհանճար ․ Իբր մարդկեղէն կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ձայնիցն ոսկերս ցրուել մաղթեցից: Իբրև զկրկին երկրորդեալսն մեծանունն բարութիս, թէ հաճոյ եղէց առաջի տ՟ն յերկրին կենդանեաց: Զիա՞րդ ունօղս անբաւից մեղաց՝ զարդարոյն առեալ կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք· առանց մեղաց ընթացայ, և ուղիղ եղէ: Զիա՞րդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յասելն զայս բան, թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնութ՟ի: Զիա՞րդ, թէ ած՟ հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց այ՟: Զիա՞րդ գրգեալս ապականացու փափկութ՟բ՝ սահմանեցից զաննմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ· և զազգակիցս նորին ընդ նոյն, թէ ես 'ի նեղել նց՟՝ քուրձ ըզգենուի· և իբրև զսգաւոր և զտրտում խոնարհ առնէի: Որպէս հանդարտեցից զնմանեացն իմ պատիժ մինչ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեանն այ՟ ոչ սպառեսցի, և արբցեն 'ի նմանէ ամ՟ մեղաւորք երկրի: Իբրև զևսն առ ամին, թէ զամ՟ եղջիւրս մեղաւորաց փշրեսցէս: Զիա՞րդ զապերախտութիւնն յակոբայ 'ի ճառ առեալ հեգնեցից, որ ընդ ստուերին զճշմարտութ՟ին ընկալեալ, մոռացայ ընդ նոսին՝ նոցին թերութ՟բ զերախտիսն ք՟ի ա՟ծայնովքն արուեստիւք խաչին փրկականօք, քան նոքա զզօրավարութ՟ին մովսէսի՝ ցպոյն սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տ՟րունական տնտեսութ՟են: Զիա՞րդ զյարուցելոյն 'ի վեր՝ դիւաց դապէտս ցուցից , իբր նոքա զօտարացելից խուժադուժ ազգացն՝ ասելով , թէ արկին զդխակունս բարեացն որ 'ի մեզ՝ կուր վնասակարացն թռչնոց , այս է՝ այսոցն օդայնոց ․ որպէս զանկեալ զսերմն բանին 'ի ճանապարհին , և զմխաբանեալ զկամս ըստ չարին՝ մք անուանեցից ․ Երբև զնըմանակիցն սա 'ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ գուպար գաղտնամարտ մտացս ցանելոց , զոր ես զօրացուցի՝ գործակցեալ հնարից բանսարկուին : Եւ ո՛չ ունիմ աղերսել , թէ մի լռեր և մի դադարեր՝ ա՛ծ ․ և խորհեցան 'ի վ՟ր ս՟րց քոց և ասացեն , զոր 'ի կարգէ սաղմոսին է ադօթել : Քանզի յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վ՟ր բռնութե՟ն մոլեկան դիւաց միշտ ճակատելոյ՝ առ ներկայիս խռովութիւն , և ըստ նոսին՝ նոցին մշակայ :

Է ․ Զորոց դու տ՛ր ք՟ս՝ որդի բարձրեալ մեծիդ ոյ՝ պահեսցես և ամրացուսցես , երկնային զօրութ շրջափակութ՟՝ յամ ընթացից խաբողին հողմոց՝ խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ ․ որ զի՝ թէ և դըցին յիս անօրէնութիւնք բազմօրինակք , այլ ոչ հայհոյութիւնք : Որ ոչ հանդերար 'ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց , այլ ամենագորով թախանձմամբ ըստ եղծմանն ջրողոյն զազրագործաց՝ կրկին վըշտացար , տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ դրեցեր , ասելով զզարմանալիս [illegible] բան , ածեալ զմտաւ ոչ ես

յա․

յաւելից անիծանել զերկիր վն̃ գործոց մարդկան ։ Եւ մխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմաքրից՝ և պարտաւորաց սատակման ․ որ երբեմն առակաւ դդմենւոյն՝ զանխայելն 'ի կործանելեան ցուցեր՝ ողորմած ․ և առ այլ ումեմն՝ նեղեցար սաստիկ վտանգեալ , ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարման ։ Անճառելիս ցուցեր բարութե̃ տեսակս յիշատակաց տօնելիս՝ 'ի վերջին աւուրս ․ քև 'ի ձեռն առաքելոցն քոց՝ ողջոյնս հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր ։ Ահա՛ և յիս ցօղեա կենդանի զհայրենի գթութեցդ զսէր , զի և ես փրկեցայց քաւեալ ամենաառատ քո այցելութեամբդ ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սբ̃վ փառք՝ յաւիտեանս ․ ամէն ։

* * *

Վերափոխեն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

ԲԱՆ․ ԿԱ։

ա̃․ Եւ ընդէ՞ր է ինձ բնաւն որ 'ի սաղմոսին այնպիսեաց բանիցն՝ 'ի կիրարկանել․ որ 'ի նախատինս՝ միանգամայն և 'ի նշաւակս ինձ յարակային , հանապազ երգել իմովս տաւղօք ։ Քանզի՝ զիամբրդարդեօք պչրուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին , թէ ո՛չ մերժեցաւ առ խաթիւրեալն սրտին : Զիարդ զկարգադրութիս տանցն՝ ՚ի յայսմանէ զկնի թռչելոցն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրէնաւորին՝ զինուորին և թագաւորին , և մարմնական հրամանատուին , որք և երկնայնոյն են համբուրելիք՝ ասելով , ո՛չ յուսահատ եղէց ՚ի կենաց պատմօղս աւետեաց և նորոյս աշակերտ՝ անմահն յաւիտենուստ բարեկարգութեց : Զիարդ ըստ իրաւախորհ արդարոյն , ընդդէմ մեղաւորացն՝ մահու զինեցայց տուակաւ առաւօտին ՚ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ , որ և ո՛չ զանդամս մարմնոյս գանեալ խրատեցի . զիարդ մանակցեալ մեծին արութե՝ սատակեցից ՚ի քաղաքի տն զանօրինեալսն , որ և ո՛չ ընբռնեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի : Զիարդ սատեցից գրողին չե՛ յայտնելոցն , թէ զմոխիր որպէս հաց կերայ . զիարդ , որ ո՛չ միացուցի յիմոցս կրից կաթիլ մի պղտոր՝ ընդ յստակ արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին , թէ զըմպելիս իմ արտասուօք խառնեցի . և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի : Զորս ինձ գրեցից մեղօք մահացեալս , յորժամ երգօղն տյ ՚ի բոլոր սրտէ՝ զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի , թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք . և որ ՚ի վախճանին յանգի սաղմոս՝ իրաւամբք առ իս , քան առ խարուէլ : Որովք յարդեցայց դասիլ ընդ բաբիլան , յորժամ մարդկային հնարից այս դեղ պատրաստեցաւ՝ որ ո՛չ ելս գտաւ, 'ի գարշութենէ կերակրոց 'ի մահ սովեցեալք՝ և յաճախութէ ճգանց 'ի հոգւոց նուաղեալք, ըստ խորութե ինքնորէն կրօնից՝ հրէից և հեթանոսաց: Զիա՛րդ արդարութիւն իմ մնայ յաւիտեանս, զոր ո՛չ բնաւ իսկ կատարեցի:

Բ. Եւ զի մի՛ տաղտկացայց յամենայն 'ի բանիս, համառօտել զայն փութացայց: Զի՞նչ ունիմ ասել 'ի տեղի բանիցն՝ զոր ծծաշունչ ձայնն նուաղեալ օրհներգոյն դաւթի, թէ բոլորով սրտի՛ իմով խնդրեցի զքեզ. զիա՛րդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յամենայն ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. Իբր ընդ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքուցի զբանս քո՛ որպէս զի մի՛ մեղայց քեզ: Որպէս զունայնութեցս իբր զչրութեց ծառեցից ընդ պարս մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց իմացեալ, ատեցի զա՛մ ճանապարհս չարաց: Զիա՛րդ զհեզոյն ճշմարտութե՛ իմում ստութեամբս մշտնջենական երդմնահարութե կարգեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երդուայ զոր հաստատեցի պահել՝ զդատաստանս արդարութե քո: Զիա՛րդ ինձ հրեշտակ մահաբոյժ անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութի: Զիա՛րդ չարս իսկապէս՝ զբարեացն դրեցից՝ որք 'ի տնէ անուանն զնոյն հատուցանեն՝ զայս տուն յեղյեղել, Թէ բարի առնէ տ՟ր ուղղոց սրտից ։ Զիա՛րդ զհամառօտն փոխատրութե՟ անաչառութեան՝ վրիպեցելոյս ինձ սահմանեցից , Թէ զԹիւրեալն յափշտակութբ՟՝ տանի ընդ այնոսիկ , որ գործեն զանօրէնութիւն ։ Զիա՛րդ զԱ՟ծազգեստին պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուհասեցից՝ ասել զնորայն , Թէ տէ՛ր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ , և ո՛չ զբօսան աչք իմ ․ և որ յետ սորին պատմին սասացեալքն ։ Զիա՛րդ զանճառն քան զմարմին բան՝ 'ի ցոյցս տւից քաջալերութե՟ վհատելոց , ես գանձ գեհենին՝ ասել ընդ օծեալն տ՟յ հոգւոյն , Թէ յառաջադոյն տեսեր , զի ո՛չ գոյ նենգութ՟ն 'ի լեզուի իմում , 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսին՝ մինչև 'ի լրումն աւարտման բանին ։ Զիա՛րդ դատակցութե՟ դժնէից մարդոց համաբան՝ այրս մահու և որդիս սատակման՝ բարբառիմ ըղբարեշնորհին , ո՛չ ահա զատելիս քո՝ տէ՛ր ատեցի ․ և զմնացուածն սորին կարգի ։ Զիա՛րդ մեծաւն վստահութե՟ տանել վեհին՝ անձն իմ և դու աշխար աշխարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պաշտելոյն , Թէ փորձեա՛ զիս՝ տէ՛ր և տե՛ս , Թէ իցե՟ն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ ․ և զյաւելուածն որ զհետ սորին ։ Զիա՛րդ ես գոլով և յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոցն յԱ՟ծ ձայնակցեալ , պահեա՛ զիս՝ տ՟ր 'ի ձեռաց մեղաւորի , և 'ի մարդոյ չարէ ։ Զիա՛րդ համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել տ՟յ ,

տր̃, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց ։ Զիա՞րդ իբր հանդիսացեալ ընդ ճգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով՝ զյառաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից, թէ ինձ սպասեսցեն արդարք քո մինչև
հատուսցես ինձ ։

դ̃. Բարեբանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և տր̃ունի գործոյն նմանի, որ ըզփորձիչն պատկառեցոյց, յորժամ զամենայն արհամարհեցէ՝ և զսկզբնապատճառն եղելոց միայն ընտրեցէ՝ ասելով, թէ երանի՜ ժողովրդեան, որոյ տր̃ Ած̃ է նր̃ ։ Մեծ է և այս բարձրուն̃ շնորհի՝ և ըզգուշական համարձակութ̃ն լցեալ երանութբ̃, թէ սբ̃ք քո օրհնեսցեն զքեզ ։ Ըղձալի է և այս ընտանութ̃ն մերձաւորական հոգևոր հաղորդութ̃ն՝ յած̃ յուսալ և ՚ի նոյն արձանանալ՝ բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր̃. և զկարգ բանին կատարէ, մինչև զողբալին և զզուարճալին աղդեսցէ, թէ պահէ տր̃ զամենեսեան որ սիրեն զնա. և զա̃մ մեղաւորս սատակէ տր̃. ՚ի գլուխս լրման գրոց նուագարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վերջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց ։ Զուգակցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս. զի թէ ընդունի զհեզս տր̃՝ և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր, ապա ինձ որքան եղկութիւնք կան առաջի. իսկ եթէ հաճի տ̅ր ընդ ժողովուրդ ի̅ւ , և բարձր առնէ զհեզս 'ի փրկութե̅ , ապա հերքեալս 'ի բարեմասնութեանց ես՝ ո՞ւր հաստատեցայց ․ իսկ եթէ օրհնելի է ա̅ծ 'ի մ̅տս ն̅ր տիրապէս , ապա օտարս ես 'ի մաքրութե̅նց՝ ընդ ո՞րս դասեցայց ․ իսկ եթէ 'ի կանխերգելցն մերձ այսր եդից յի-շատակարան ինձ կշտամբութե̅ , թէ սի-րեցէք զտ̅ր ս̅բք նորա , զի ստուգութիւն խնդրէ տ̅ր՝ և կրկին հատուցանէ ամբար-տաւանիցն , ապա յո՞րում գնդի ես գը-տայց՝ գերեալս 'ի գաղտնեաց գտողին չա-րեաց : Քանզի զո՛րօրինակ տատասկին տագ-նապաւ տերևք տնկոց եղևին ծառոց՝ շարժեալք 'ի հողմոց ուժգին բախելոց՝ հոսեալք 'ի խոնարհ , այնպէս ջանացաւ ջարդել զընթացից իմոց վերարձակութե̅ քաջաբեր ուղէշս՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշակիդ : Զոր հաստատեսցես ար-մատացուցեալ վերստին դարձեալ՝ նոր պտղաւորութ̅բ անապականաւ , յանդաս-տան կենաց խնամոց քոց կամացդ՝ ամե-նապարգև թագաւոր ք̅ն , օրհնեալ յաւի-տեանս ․ ամէն :

* * *

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ ։

ԲԱՆ. ԿԲ ։

Ա. Այլ արդ՝ ընդէ՞ր ոչ 'ի վերագրեցեալն սաղմոս նախանձաւորական՝ և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից ։ Քանզի զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ . և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ 'ի միտ առնուցում ։ Քանզի նշովեմ զիս ինքն 'ի նոսին, և ոչ իմանամ . լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ . արևու ծագեալ, և ոչ լուսաւորիմ . մեղր ճաշակեմ, և ոչ քաղցրանամ . ռետինիւ լնանիմ, և ոչ բժշկիմ . միշտ կանխեմ 'ի նոյն, և դատարկ երևիմ . համապազ ձաղիմ, և ոչ երբեք խրատիմ . ողոքիմ դարձեալ, և ոչ զգաստանամ ։

Բ. Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաչիմ 'ի նոսին, ըստ մարգարէին՝ որ 'ի դիմաց պարտաւորացն՝ բանի . և տ̄րունական առակին՝ հին տկոցն և նոր գինւոյն ։ Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ Եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէխանդոյն բաժին հանդերձեալ պահի ։ Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն .

և կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր տ՟ն 'ի վ՟ր հպարտից և ամբարտաւանից · ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ · յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի՛ յերկրէ, և անիրաւք մերժեսցի՛ն 'ի նմանէ : Ո՛ղբք ինձ կարդացէք առ ձայնն, թէ զո՛րօրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն · լացէ՛ք առ սաղմոսն, թէ արկցէ՛ս 'ի վ՟ր նոցա կայծակունս հրոյ · աշխա՛րհ պատմեցէք 'ի բանս ա՟ծեան վըճռին՝ մարգարէի՛ն ազդեցեալ, թէ ո՛չ կամիցիք լսել ինձ, սո՛ւր կերիցէ զձեզ · կոծեցարո՛ւք առ սաղմոսն, թէ մա՛հ հովուեսցէ զն՟ն · աղի արտասուս՝ ողորմ՝ հառաչմամբ ընդ հեծութի՛ւն իմ յարմարեցէ՛ք, յորժամ բարձրեալն ընդ ի՟էլի և ինձ ատասցէ բանի՛ւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ո՛չ լուաւ ձայնի իմում · աւա՛ղ կարդացէք թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վա՛յ նոցա՝ զի վազեցին զինև : Բարբա՛ռ փողեցէք 'ի սիրտ մղձկեալ նո՛ր աղաղակի, յորժամ տեսանողն սաստուծով ամաչեցուցեալ զիս կըշտամբեսցէ՝ ընդ ապարասան տանն յակոբայ, տեսէ՛ք ա՛րհամարհողք՝ զարմացարո՛ւք և եղծարո՛ւք :

գ · ԱՅԼ դարձուցես և ամփոփեսցես զբարձրացեալ զաւուր բարկութե՛ն ահաւորին դատաստանաց՝ 'ի սարսուցելոյս յերե_ բեսայց մեծիդ . և խնամովք աջոյդ բարեբաշխութեան առ ի ժամանել , օծութիւն կենաց պարգևատրեսցես քո աղաչողիս ։ Եւ քեզ փառք՝ յերկինս 'ի բարձունս , և 'ի մահկացունաց յերկիր 'ի խոնարհ ,'ի սահմանս բոլոր ազանց , և յաւիտենայն յաւիտեանս . ամէն ։

* * *

Վերստին յաւելուած նշխին հեծութեան՝ նորին հոգւոյ , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ։

ԲԱՆ. ԿԳ ։

Ա . Բարերար և բազմագութ , մարդասէր և երկայնամիտ՝ միայն թագաւոր , ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբանեալ ը̅ր ամենայնի , որդի ա̅յ կենդանւոյ ։ Անպատճառ միշտ իմում կորըստեան . որ ամենևին անփոփոխ ես 'ի չարեաց . որ ոչ կամիս զմահ մեղաւորի . որ փրկուն ես 'ի քոց կամաց ընծայեցեալ . որ դարձուցանես զմոլորիկ մեղաց՝ 'ի յօդքաւութե̅ . որ զհուր բարկութե̅՝ յանձրև փոխարկես ։ Որ զյետնեալ զկենսն 'ի բարեաց՝ կրկնակի գոյիւ նահանջեր՝ երկեակ բնութե̅ 'ի նոյն արձանի , ոչ խակապէս ընդ անպարտան , և ոչ համայն ընդ պատժաւորան ։ Որ զլուծութիւն ծովուն սահմանաց՝ իբր զկարկառս քարանց կառուցեալ յեզանակեցեր ։ Որ զկարծրանիւթ վէմն անապատին՝ 'ի վիժակս վըտակաց հոսեալ բղխեցեր ։ Որ զյորդանանու ջրոյն սրաշարժ վայրէկութիւն՝ հրաշաւոր անդրադարձուեբ՟՝ 'ի յետնորդս հեթանոսաց լոճացուցմն՟ աւազանին՝ 'ի թէ կունս տուաքեցեր ։ Որ զպատոճասատեալ պարիսպն Երիքովի՝ յօրինակ կործանման բռնութեն՟ սատանայի՝ իբր զթեթեւութե՟ յարդի ցնդեցեր ։ Որ զխաստակար ջուր նորին՝ 'ի յառաւակ այլայլութե՟ առ 'ի բարին փոխարկութե՟՝ քանանացւոցն փրկութե՟՝ խորհրդական աղիճն համեմեալ անուշեցեր ։ Որ զմեռային դառնութի՟, իբր զմտաց անհաւանութի՟, կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝ պիտանի արարեր ։ Որ զառեալն 'ի գետոյն, 'ի գծագրութի՟ անսահմանդ քո հրամանի անորակելդ գունակութե՟՝ 'ի նոր երանգ բոսորային՝ մածեր արիւն 'ի ցամաքի ։ Որ զանկենդան ցուպ գաւազանին, 'ի կերպարանութի՝ առ 'ի զքոյդ մերովս նկարագրիլ, այլ եւ յօտարազնեցն ընտրութիւն՝ 'ի տխուն ապաթոյն կերպիւ վիշապի՝ նմանեալ ցուցեր ։ Որ զերջանիկ ձեռն աջոյն մովսէսի, 'ի ցոյցս տեսուե՟ ապագայիցս հրաշից մարդեղուե՟դ քո՝ բորոտեալ, եւ քեւ՝ ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրութեբ՟՝ կրկին գուշակեցեր ։ Որ յայսքանեացս շրջադրութի, բարեխնամապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց կորստականաց նշանակեցեր օրհնեալ ամենագութ ։

Է ․ Որ բուսուցանես յերկրէ դալարի,

զմեռեալն՝ յանշնչականէն · որ զանշարժն՝ իբր զընթացող կառավարես · որ յանարգ արգանդէ՝ կոչես քեզ պատկերակիցս · որ տաս պատանեկաց՝ աղօրիս ըմբոշխնելիս · որ՝ յայտս մաքուրս՝ հերս ընծայես · որ զսաղարթ սնութ̅ե վարսից՝ 'ի ձեռն կերպարան զարմանագործես · ցուցեալ՝ թէ առ ա̃մ սահման հեռաւորական՝ յաղթող ես հզօր · որ փոփոխես զշրթունս բնաւորականս, ըստ բանին յոբայ, 'ի կամս հաւատարիմս ։ Որ սասանես զերկիր, և զսիւնս նորին 'ի հիմանց, նշանակեալ հաստատածին գոյի̃՝ թէ դու միայն մնաս անկործանելի · որ հոլովես զտարերս՝ իբրև զանցաւորս, և դարձեալ 'ի նոյնն կայես՝ իբրև զյարակայս · յայս արարեալ՝ թէ և առ մեղաց բազմութ̅ե՝ դիւրապէս ունել կամ թողուլ՝ գոյնպէս զօրաւոր իցես ։ Որ զարուսեկին անզգայ էութ̅ե՝ իբր երասանաւ իմ̃ն դաստիարակես · երկեցուցեալ այնր իրի կերպի̂՝ թէ զբնութ̅ես չար դիմեցուսն՝ յորժամ և կամիս՝ հանդարտ առնիցես ։ Որ զանբարբառ բոլորակ լուսնին՝ կարգես ունայնս և պատարունս, լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝ թէ 'ի նուազութ̅է բարեաց զպարտաւորս մարմին՝ դու ածես 'ի լրութիւն առաջնաստեղծ հարստութ̅են ։ Որ զպատկերս անխօս աստեղաց՝ իբր ըղդասակս գոյգն հօտից՝ տրոհես և ժողովես · յոյս իմ̃ն կենաց առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահայեաց տեսութ̅ի, թէ և անապաշաւորաց լեզուաց՝ կարողապէս բաւես ողորմել : Որ 'ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ վստահութեան ուղղես 'ի ծովու․ վկայութի՟ եղեալ հաւատոյ, թէ և յանկասկածաւորն վայրի՝ քև պաշտպանիմք անգայթագղելի․ որ երբ զջուր կաթսայից 'ի հրոյ եռայեալ, ոչ զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խափուցանես : Որ հայիս յերկիր և տատանես զսա, զի անբանիւն՝ զմտաւորս ըղգաստացուցանես․ որ երբ զակատ մի անձուկ նաւի՝ 'ի վերայ շարժութե՟ ալեաց՝ զանբաւ թանձրութի՟ գետնոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաստուածոց՝ թէ լիցես աներկբայելի, որ 'ի բան քո զօրեղ՝ հնա՟նացեալ ունիս զա՟մ : Որ սերմանես զարտաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկորուստ պահեալ՝ կրկին կենդանածնես․ որ ապականացուս աւանդեալ՝ անեղծս ստանաս․ որ ընդ մահացունիւթոյս՝ զնշխարս կենաց խառնես․ որ հրամանաւ ակնարկութեան՝ 'ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կացուցեր զանզարդութի՟ ամենից եղանակաց : Քո՛ է զօրութի՟ և կարողութի՟, որ շրջանակես զժամանակս ամաց հոլովման աւուրց՝ յայլ նմանութիւն բարեպատեհ տեսողութե՟ : Որ կարգաս զանմռունչսն՝ իբրև զկենդանիս․ որ ողջես միայն, և նոքա ընթանան․ որ միայն հենուս անկանես անճառ արուեստիւ հնարագիտութեան՝ մէգ և առաւօտ : Որ յետ նախակարգ յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութեն , արարեր զփառաւորեալն մեծամեծս հրաշակերտիցն հանդիսից , ըստ դրոյն երջանկութե կանխահնացն զարմացման , այլ իմն գոյացութիւն տօնելի տեսակի՝ անեղծ աշխարհագործութեան և քան զայն՝ 'ի մարդանալդ քո , որոյ ոչ գոյ թիւ :

Է. Որ ահա զնշան մեր՝ քեզ գրեցեր . որ զարդարութին քո՝ մեզ շնորհեցեր . որ ընդ քեզ կրեցեր զհաշտութեն մերում փրկանակ . որ ոչ երբէք լքանիս յողորմութե . դարձն զամբարշտեալս՝ 'ի պաշտօն բարի երկիւղի . զթմբրեալս՝ 'ի ըզգաստութի արթնութե սրտի . զանմաքուրս՝ 'ի սրբութի պայծառութե կերպարանի . զբազմաբիծս՝ յանբծութի հանդարտական մբ պատկերի . զբեկեալս՝ յողջութի , որ 'ի դիպմանց ոչ խորտակի . զլացեալս՝ 'ի խնդութի զուարթութեան անախորժելի . զյուսահատեալս՝ 'ի սէր միաւորիչ անքակտելի . զամաչեցեալս՝ 'ի վստահութի հաստատութեան անշարժելի . զխաւարեալս՝ 'ի լոյս երանութե անմեկնելի . զմահու գերեալս՝ 'ի կեանս , որ ընդ եղծմամբ ոչ անկանի : Զի փառաւորեսցի անուն քո՝ յս , խոստովանեալ յամենայնի , ընդ հօր և ընդ հոգւոյդ սբյ՝ 'ի բարձունս երկնի և 'ի ստորևս երկրի՝ և 'ի բնակիչս նց , յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հայցողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ։

ԲԱՆ. ԿԴ։

ա̃. Լու արդ առ ա̃մ բան՝ յամենայնի ուղիղ ես՝ ա̃'ծ. իրաւամբք դատիս. արդարութբ̃ կշռես. ճշմարտութբ̃ չափես. օրհնութբ̃ հետևիս. բարւոք ընթանաս. ստուգութիւն սիրես. յստակութիւն կամիս. լուսաւորութիւն համբուրես. փորձիւ յանդիմանես. երկայնմտութբ̃ քննես։ Ո՛չ ունիս նենգութի̃՝ և ո՛չ գոռոզութի̃, այլ ամենևին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն։

բ̃. Արդարացար վերին իմաստութի̃ անայլայլական հօրդ հանճարոյ՝ կրկին վըկայեալ անզեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբութե̃՝ որ աւետարանաւն կենաց 'ի քէն ընկալաք. որ ո՛չ 'ի կոծելն ողբացին, և ո՛չ 'ի փողելն կաքաւեցին։ Ասացեր անօրինիս՝ թէ մի՛ անօրինիր, և ես 'ի նոյն չարիս սնդեցայ. մեղաւորիս՝ թէ մի՛ ամբառնար եղջիւր 'ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի. և ո՛չ զգացի երբէք զառածեալս, թէ 'ի ձեռին քո են եղջիւրք արքայութե̃՝ հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ

սամ

ամբակումայ, դաւթի և զաքարիայ : Օրհնութեն ինձ կամեցար՝ ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագրութք̄ խոտորեցայ յարժանին ինձ մասն · սիրեցի բարկութին՝ և ոչ բարութեն · շօշափեցի ըստ դրոյն՝ զխաւար՝ և ոչ զլոյս · կենդանի ձայնիդ քո գըթած՝ ապառուամս պատասխանեցի : Զորդնն՝ անմահ ասացեր բանիւ եսայեայ, և զհուրն՝ անշէջ, և զկըշտամբութենն՝ անվախճան, և զտեղին՝ յաւիտենից, և զօրինակ նմին՝ սոսկալի, և ես ոչ իմացայ, ըստ սաղմոսողին, և ոչ մոտաւեցի · այլ 'ի մռայլ մտաւորական կուրութե գնացի : Ցուցեր մարգարէին, թէ զօրհնութեն սատանայի՝ որ զօրէնս դնէ, և ես համառօտել զնոյն փութացայ : Արձան հոգևոր վիմի գրեալ մատամբ քո՝ տ̄ր յ̄ս ք̄ս, զդաւիթ լուրովքն բանիւք կանգնեցեր, ասելովն ինքեան ընտրութեն առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յա̄մ ժամ, յաւիտեան · անդրադարձութք̄ բանին միջնորդեալ զիրկին հաստատութին, թէ և յաւիտեանս յաւիտենից · ընդ որս՝ և զսորին նմանիս պարծանաց՝ առ իմս խրախոյս, և ոչ զկծեցայ · Ձեպեցայ 'ի տունս բանհաղու, և ոչ եմ · 'ի յերկուս հետս երկմտութե՝ կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց, ըստ երգիծանելոյն հեղինու : Ունիմ զմովսէս լուրովքն օրինակօք՝ եկեալ 'ի մեռելոց, և զտասուս մարգարէիցն՝ գրեալ 'ի յոգի, և զմատեանս առաքելոցն՝ ընդ միտս մնան յեռեալ , և զորդ հասարակաց՝ կատակաւն աւեստեայ՝ յարուցեալ 'ի Թաղմանէ անթիւ ննջեցելովք . և անհաստատագոյն քան զհնգեսին եղբայրակցութիւն այնր մեծատան , որ է ապաւէն իմն յարմարական , ներմանեալ զգայականացն մասանց՝ անողորմիցն յղփացելոց , մինչ իբրև զսալ դարբնաց անոստ՝ յամառեալ քարացեալ սըրտիւ , որպէս օրինակին է բելիարայ , և ոչ ապաշխարեցի :

Դ . ՏԷՐ ազդեա՛ վերստին առ. սոյն կերպարան լքեալ՝ կրկին ողորմութե՛ բարի , ա՛հաւոր , մա՛րդասէր , խնամակալ , կենդանի , սուրբ , լուսաւոր և անվախճան Թագաւոր , զօրութե՛ պանծալի խաչիդ խորհրդոյ , 'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան՝ երկնամանցս յիմարութե՝ և անպատուղ սրտիս լքութե . զի առեալ նպաստ օժանդակութե 'ի գթութե կամաց ամենակալիդ , որոտացէ բղխեսցէ հոգիս , ընծայեալ աչաց վշտագնեցելոյս՝ վտակս արտասուաց աղբերացանողաց՝ իմն 'ի փրկութի և 'ի մաքրութի , և քեզ 'ի հաճութի ընդունելութե՝ ամենապարգև տէր բոլորից ; փառաւորեալդ յաւիտենից . ամէն :

* * *

Վէր

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

ԲԱՆ. ԿԵ։

ա. Եւ արդ՝ ես նախնիս ամբարշտաց · գլուխս մեղաւորաց · պետս անիրաւաց · առաջինս պարտաւորաց · պատկերս յանցաւորաց · առաքինեցելս ըստ վատթարութե, այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա զանձաւոյն իմոյ ձաւեցի · զպատկառելին խայտառակեցի · զգաղտնիսն հրապարակեցի · զծածուկսն յայտնեցի · զթաքուցեալսն ցուցի · զամփոփեալսն տարածեցի · զդառնուես մաղձ ժայթքեցի · զգործակցուե չարին՝ մատնեցի · զամբարեալ թարախ վիրիս՝ քամեցի · զխորս պարտեաց իմոց՝ ծանուցի · զպատրուճակն կեղծեաց՝ առի · զքօղ տգեղութեան՝ վերացուցի · զամօթալեացն զգեստ՝ մերկացուցի · զգարշելին՝ յանդիմանեցի · զմրուրն մահու՝ փսխեցի · ընդ պալարս հոգւոյս խածուճածոյ՝ քահանայապետիդ քու բացի ։ Յանձինս վտանգ՝ ոչ անխնայեցի · մարմնոյս սիրոյ՝ ոչ աչառեցի · զարմատն հնութեան՝ անեսիլ արարի · բնութես կարեաց՝ ոչ ողորմեցայ · զմիաբանութեն կապ՝ խզեցի · զդղեակ սրտիս քանդեցի · ընդ կամացս որպէս՝ իբր ընդ դարանակալի մահու՝ կռուեցայ · զպահեստ անյայտից՝ արտաքս հանի • զմթերիցն գանձ՝ մեծին գուշակեցի • զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի • զապաւինեացն զփորձ՝ այժմէն իսկ գտի • զդաշն կործանողին՝ կտրեցի • զուխտն խաբողին՝ ցրուեցի • զկատարած մարտին յաղթութեան՝ 'ի քեզ տ̄ր յ̄ն՝ ապաստանեցի • զպատերազմին խումբ՝ գրգռեցի , զդիմադրուն̄ դիմեցմանն՝ բանիդ տ̄յ յուսացայ • զխաւարասիրացն փաղանգ՝ լուսեղինացն զինուց սադրեցի :

Է • Եւ արդ՝ ստեղծիչդ ա̄մ եղելոց ք̄ս որդի բարձրեալդ ա̄յ , զաստէն գովեալս յայսպիսեաց բանից , և զհարուածեալս յայսքանեաց դանից՝ մի՛ կշտամբեսցես կրկնակի դատել 'ի մեծի աւուրն : Ահա հզօր անքննելին անճառ բարերար թագաւոր անմահ , առ այս կերպ պատկառանաց՝ ինքնապարսաւ խոնարհութե̄ , որ ինձէն զանձն՝ մեծաւ ձաղանօք յոդի դատեցի , լե՛ց նուաստօք այսր մատենի՝ անարգանօք ամօթոյ՝ զդէմսն սատանայի • և զերեսս կերպի պատկառեցելոյս՝ նըշանաւ խաչիդ զօրացո՛ : Մխացի՛ կնիքդ լուսոյ՝ 'ի գեղ տեսակիս • ամրութեանդ նշան հաստատեսցի՝ 'ի տիպ դիտակիս • երեւակ կենացդ փայտի ձեւասցի՝ 'ի պատկեր այտիս • արուեստդ հրաշից՝ 'ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի : Մի՛ այլայլեսցի յինէն՝ դրոշմդ լուսապաճոյճ • մի՛ բարձցի 'ի տեսանելեացս բբաց՝ ճաճանչդ օրհնութեան • մի՛ մերժեսցի 'ի գլխոյս՝

առ

առհաւատչեայդ վստահութե՟. մի՛ սասանեսցի 'ի բերանոյս ամրութեան սեմոց՝ փառք տ՟նադրութեանդ ։ Պահպանակդ երկրպագելի՝ 'ի զգայարան սրտիս միասցի՛. չորից նիւթոց իմոյս գոյութեան՝ քառաթեւիդ նշոյլ ազդեսցէ. ձեռինս կարկառման՝ փրկչիդ իշխանութի՟ օժանդակեսցէ. մատուցման հաստատածոյ մատինս՝ խորհրդարանդ համարձակութե՟ բարեգործեսցէ ։ 'Ի մեկնելս իմում, մի՛ հեռասցի սրբութիւնդ. մի՛ լքցի պատիւն՝ 'ի պատիլն պարտաւորիս. մի՛ մերժեսցի 'ի յոգւոյս՝ անդաւաճանելիդ փըրկութիւն. մի՛ ջնջեսցին գիծք կենդանատուրիդ՝ 'ի քո՛ գրեցեալս շնչոյ. մի՛ եղծցի նկարումն արեան զօրութեան՝ 'ի տիրատիպ խորանիս. ընդ իս բնակեսցէ յիմում գերեզմանին. 'ի ծորել մարմնոյս թշուառաւք՝ օծումն շնորհիդ առ իս պահեսցի. 'ի նորոգութեանն աւուր՝ առջաւ հանդիպեցայց փառաց փեսայիդ. 'ի քոյոց այսր ծանուցայց, քոյովքդ վաստակօք պճնեցայց, երախտեօք մեծիդ յարդեցայց, աւազանին զգեստիւ սերճեցայց՝ քաւեալ ողորմութ՟։ Սառն բարեգութ՝ զծերաբերկուդ անապականութե՟՝ տաժանեցեալս մեզօք մարմնոյս. մի՛ յարիցէ ընդ քոյս՝ բանսարկուին. հնացուցիչ հոգւոյս՝ վատնեսցի. խաւարաբնակացն պատիրք՝ մի՛ ընդ իս վերբերեսցին ։ Օրհնեսցի՛ անուամբ քո զբլթած՝ վիհն իմ հանգըստեան. ողորմութ՟ քո լցցի գուբն իմ գերութե՟ • ընդարձակեսցէ քև ինձ՝ տեղին թշուառութե՟ • անդորր եղիցի խրնամօղ՝ ինձ բանտն բարկութեան • սնուսցէ զիս առ յաճնումն՝ արգանդն մթութե՟ • յուսով քո շտեմարանեսցէ զիս՝ յարկին այն անձկութե՟ • ձեռամբ քո պահեսցայց՝ ՚ի խշալին տարտամութե՟ • թևօք քո ընկալայց՝ ՚ի տուննն տաղնապի • դու դիմեալ ընդ իս՝ ՚ի սենեակն վտանգի ։ Աւաղս ինձ տառապանօք՝ ՚ի թիւս հազարաց, զի երբեմն էի վերնային, և այժմ անդնդային • երբեմն տօնելի, և այժմ աշխարելի ։

է • ՏԷՐ և արդ՝ կրկին դու օրհնեալ ՚ի բոլորից գոյից՝ յերկնայնոց և ՚ի ստորնայնոց՝ և ՚ի սանդարամետականաց մեռելոց՝ անպարտականդ այս տարադրութե՟ ։ Ես վրիպեցայ • ես օտարացայ • ես յիմարեցայ, պարտեցայ, և խոտան գտայ • ես լքայ, կամեցայ, և կործանեցայ • ես մոլորեցայ • ես մատնեցայ • ես մերժեցայ • ես խորթացայ, գերեցայ, և գայթագղեցայ • ես նզովեցայ • ես թշուառացայ, աքսորեցայ, և վատթարացայ • ես ընկլոզայ • ես խաբեցայ • ես անօրինեցայ • ես տապականեցայ, մահացայ, և իսպառ եղծայ • չիք քո առ այս՝ ինչ մասն չարի, որ ես միայն անփոփոխ բարի ։ Արդ՝ կամք քո յիս, և խաւարն ինձ ճառագայթ • ճրագ յուսոյ քո անդ, և գիշերն վաղորդայն • մարմնոյ քո հաղորդեալ, և յամօթոյն կարծեաց ապրեալ ։ Իսկ ես ոչ գիտեմ զանձն իմ կենդանի՝ վասն անփախ.

չփախչելի վախճանին · դարձեալ՝ զիս ոչ վարկանիմ կորուսեալ՝ վասն աներկեան նորոգմանն ։ Որ եւ փակեալ համարիմ ինձ զեւս կենացդ՝ վասն անքաւելեացն պարտեաց · դարձեալ՝ բացեալ ինձ զդրախտն՝ վ՟ն փրկութե՟ն աւետեաց · քանզի ոչ այնքան վհատութե՟ն գոյժ տագնապէ՝ որչափ փրկութե՟դ քաջալերեալ ձեռն կարկառէ ։ Արդ՝ տուր տ՟ր՝ տուր ողորմութիւն, առ ա՟մ ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

* * *

Վերոյգրեն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ· ԿԶ։

ա· Արդ՝ որ ոք եւ առցէ զայս դեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտականի պաղատել սովաւ, եթէ 'ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց եւ ես ինմին բանիւ կցորդեալ նմա · իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց եւ ես արվեմք՝ ընդ նմին ողորմեալ նովաւ ։ Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զերկութին, եւ ես ինձէն վկայեմ այսմիկ ։ Բայց յիշեսցէ նա զսողոմոն եւ զբանս ն՟ր զհոգեշունչս, թէ ո՛վ ոք վստահասցի սիրտ ս՟բ ունել, եւ կամ ո՛վ պարծեսցի մաքուր լինել 'ի մեղաց · եւ զի ոչ յարեաւ մարդ երկրածին՝ ազատեալ 'ի պատուիրանեաց · և ոչ ընտրիր ինքնայրշաւ փաղխուքն , և ոչ՝ թէ և 'ի թշուառ ամբարձման թևոց բերիցի · առ որ զգոյշ լինիցի կրկին երկուցեալ 'ի վիժին խոկ հաստատութե՟՝ ուսեալ 'ի պօղոսէ , գուցէ անկեալ 'ի յերկիր՝ սահմանողէ այսմ՝ կանոնի խրատատուի՝ կշռեալ նմանեսցի : Այլ տացէ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պսակաց , առ 'ի չխջանել անընտրոզաբար յանձնեանհաւան բարձրութենէ · և պատճառապարան՝ առիթ ազատութե՟ , որով ամբարձեալ 'ի կործանմանէ հոգևորական մահուն՝ ապրեսցի յուսով : Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի՝ արձան փորագրեալ՝ ամենևին անեղծանելի , որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծութե՟ լալոյ՝ առանց լռելոյ միշտ աղաղակէ · լիցի և ունկերացս քակտեցելոց 'ի հողապատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս խոստովանել · հայցէ և մարմնոյս 'ի հողլուծելոյ՝ բարբառով իմն անպաղդելեալ՝ ծածկատեսիդ զայն պաղատել :

ե · ՏԻ՛ գթութեաց , աղբի՛ւր ողորմութեաց , պարգևի՛ք բարութեաց , որդի՛ բարձրելոյ տր յն քն , ողորմեա՛ , խնայեա՛ , մարդասիրեա՛ · նայեա՛ 'ի վտանգս · աննարկեա՛ 'ի բեկութի՟ իմս · խոնարհեա՛ց 'ի թշուառութիս · տե՛ս 'ի տարակոյս անձնանհաս տագնապիս · հասի՛ր հաղորդել կորստականս կարեաց : Շօշափեա՛ բժշկապէս՝ զամենաթշուառ ախտաւորութիս ·

մանկն

ծունկն մատուցես քաղցրութբ՟՝ ողորմագին հեծութեանս. լո՛ւր 'ի խորոցն անդընդոց մահուն գերեզմանի՝ անմռնչելի հառաչմանս. մոյծ՛ յականջս ամենալուր լսելեացդ՝ ձայն պաղատանաց վատնեալ անդամոցս : Եւ մի՟ զի գրաւական կենդանութեանս անապական է, անփոփոխ լիցի և սիրոյդ քո գթութիւն. կցո՛րդ լեր հեզութբ՟՝ տաժանաւորս տկարութեան : Մեռեալ պատկերիս՝ մի՛ ոխս պահեսցես. ընդ անշունչ կերպարանիս՝ մի՛ 'ի դատ քննութե՟ մտցես. մահու տանջեցելոյս՝ մի՛ հարուածս յաւելցես. ընդ բեկեալ խեցեղէն անօթոյս՝ մի՛ ուժգնութ՟ մարտիցես. վճռեալ կոշկոճելոյս՝ մի՛ բարկութի՟ կրկնեսցես. կործանեալ շինուածոյս՝ մի՛ պատուհաս մատուցես. շանս սպանելոյ՝ մի՛ քարինս արձակեսցես. լուծոյս ջախջախելոյ՝ մի՛ սաստիկս որոտասցես. հողոյս անպատուելոյ՝ մի՛ իբր ամբարհաւաճի ուժգինս մռնչեսցես : Զմոխիրս մերժելի՝ մի՛ 'ի դատ ընտրութեան կոչեսցես. զփոշիս ցնդելի՝ մի՛ իբր զքո դիմամարտ գտցես. զտիղմս տապալելի՝ մի՛ իբր զոսոխ վարկանիցիս. զգարշութիս՟ անգոսնելի՝ մի՛ իբր զբռնամարտիկ վանեսցես. զխէթս 'ի բաց ընկենլի՝ մի՛ նիւթ գեհենին պահեսցես. զայսքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս՝ մի՛ վերստին յանդիմանեսցես :

Դ. Այս ամենաթշուառ և խաւարարդեալ շիրմին են ահա սրտաբեկ և յոգնաթախիծ արգահատութիւնք · հաստատեսցէ օրհնեալդ քո բան՝ անփոփոխական լինել, ըստ սրտի արգահատելոյս · քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ · ո՜վ ՚ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի՝ անէղծ եմ հաւատովքս : Արդ՝ աղաչեմ զքեզ՝ տ̄՛ր յս̄ քս̄, հայեա՛ց յիս ողորմութբ̄, և մի՛ թողացուցես լինել տնակից ինձ բելիարայ · և զմահաղեկոյց տապանին աղդումն անկենդանաւորն թնդման՝ թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հաւաչման լալեաց՝ քեզ հաշտեցուցչաց՝ յարգեսցես լսել, միա՛յն բարեգործ, հոգեսէր, հզօր, մարդասէր · և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ ՚ի խաւարին : Մնասցեն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մասունք, զի իբր զաւանդ գանձու զիս պահեալ ՚ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցեն · օծմաւք անխառնելի զինուց ինձ պատկանեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից՝ հոգեւոր հնարից՝ զչարին հալածել զգունդ : Մարտն որ առ իս՝ քև տ̄՛ր վանեսցի · զի եթէ յարիցէ ՚ի վ̄ր իմ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունայն ՚ի զօրաց՝ և զազգողականացն գործի ապաձայն, զքեզ տ̄՛ր ունիմ մշտնջենաւոր և աննիրհելի պահապան :

Դ. Օ ի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ քան զօրն կատարածի, և անշաւիղ արդելան ինձ պատրաստեսցէ,

առա

առաքեմ զաղօթսն տէրունականս՝ նմին դան մահու. եթէ 'ի վայր զիս հնարի կործանել, զծնրադրութեն արարչին. եթէ 'ի մախիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երեսացն իմ 'ի նոյն մածուցումն՝ զնա հերքեսցէ. եթէ վաստակս ինչ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն զանդեալ փրկչին աշխարհի՝ զնա խոճեսցէ. եթէ յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կապանք ամենաստեղծին՝ զիս արձակեսցէ. եթէ յուրացուն պարգևաց լուսոյն բռնադատեսցէ, հայհոյութեն համբերութե յածամարտիցն՝ զնոսին ընդ նոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից դաղտնաձիգ զինուց՝ ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան փառաց հօրն կապարճից՝ նմին պատահեսցէ: Եթէ քօղով լուսոյ խաւարականի՝ մտանել ը̃ աչս անամօթեսցի, կուփումն գլխոյն ձորձով պատեցեալ լռմանն ամենից՝ զնա տանջեսցէ. եթէ մոլեսցի ըղվստահութիւն ձեռինս կապել, եղէգն մտուցեալ 'ի յաջ գոյացուցչին՝ զնա չարչարեալ ըմբերանեսցէ. եթէ ձաղանօք ապպանման՝ զիս կատակեսցէ. տանելն ծաղու ամենազօրին՝ զնա հեղգնեսցէ: Եթէ բժժանօք ինչ յուռթից՝ կախարդել խորամանկեսցէ, ապտակն դիմաց հզօրին իմ՝ զնա սաստկապէս ամաչեցուսցէ. եթէ 'ի մուտս գիշերային մթութե՝ խաւարաւ խաբէութե ըկնեալ մարտիցէ, 'ի ծառագայթից լուսոյ երևման քո տէր՝

խայտառակեսցի ․ եթէ 'ի միջօրէական տապոյ փորձութեանցն՝ արեգակնակէզ վառանիւք խորշակին՝ զիս 'ի յարմատոց խախտել կարծիցէ, 'ի զօրութ՟է նշանիդ լուսոյ խլեալ դօսասցի ։ Եթէ 'ի փչմանն շընորհէ ունայն զիս առնել հնարաւորեսցի, թուքն զոր ընկալաւ տ՟րն քրովբէից ընդ մեղաւորիս, զնա պատկառեցուսցէ ։ Եթէ ժանիք խածօղք իմ ցուցանիցէ, լռութ՟ի երկնաւորին բերանոյ՝ զնա պապանձեցուսցէ ․ եթէ խածմունս աղու՛ականս հոգւոյս ազդեսցէ, բեւեռացն հարմունք հաստողին բնաւից՝ զնա կսկծեցուսցէ ։ Եթէ յընթացս անիրաւութ՟եց խորհրդոց զիս մոլորեցուսցէ, սեւեռք ոտից անհասանելւոյն՝ զնա կապեսցէ ․ եթէ հրապոյրս իմ դժնեայս արբուսցէ, քացախն ընդ լեզուոյն խառնեալ 'ի յարբումն բարերարին՝ զնա դառնացուսցէ ։ Եթէ առաջին ճաշակմամբ փայտին զիս դատեսցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ՝ խապան պարտաւորեսցի ․ եթէ ընդվզել ընդդէմ հնազանդու՟է տ՟ն հրամանի զանձն իմ ուսուսցէ, բերումն պարանոցի անսահմանելւոյն՝ զնա կործանեսցէ ․ եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւորեսցէ, ստուա՛ր տէգ զինու մխելոյն 'ի կող՝ ստեղծչին ադամայ՝ զնա հերձեսցէ ․ եթէ երկամբք վշտաց դժոխականաց զիս պարփակեսցէ, պատանացն կըտաւ՝ էից ունողին՝ զնա ըմբռնեսցէ ․ եթէ յսատակս մահու հայել զիս խարդախեոյցէ , բնակեալ կենդանւոյն 'ի վէմն մահու՝ զնա մեռուսցէ. եթէ խնդասցէ ը̃ մարդկորէնս իմ դայթագղութ̃ն , կրկին կորասցի կարկամեալ կամաւ , յորժամ անմահն ա̃ծ յարուցեալ փառօք՝ ընդ իւր նորոգեաց զբնաւ մահացեալս ։ Եթէ ը̃ լուծանել փոքր կապանաց հազարամեից՝ բերկրեսցի , դողասցի կրկնեալ վերստին իսկոյն ը̃ վերջին շղթայս անզերծ տապնակին ըմբռնման՝ սատակագունի յանվախճան տանջանարանին ։ Եթէ ընդ աւաջին հարուածն դժուարեսցի , գոյժ կորստեան յետնում սատակմանն անշէջ գեհենին՝ որ պատրաստեալն է նր̃ և նորին հրեշտակաց՝ նմա պատմեսցի , որ յաւուրն մեծի՝ մեծին ատենի ։

Է. Իսկ ինձ ապաւինելոյս 'ի քեզ՝ տ̃ր յս̃ , միայն թագաւոր ինքնակալ զօրեղ՝ արարիչ երկնի և երկրի՝ և ա̃մ զարդուն որ 'ի նմա , որ գալստեանդ քոյ ակն ունիմ , և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ. 'ի յոյս քո անկանիմ , և զգաշապարիդ հետս համբուրեմ. զպարտութիս խոստովանիմ , և զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կոծիմ , և հառաչանօք սրտիս տապանամ. 'ի խէթ խղճիս խոցոտիմ , և բոցով շնչոյս ճենճերիմ. աղի ցօղով արտասուաց այրիմ , և երիկամանցս աղդմամբ կխղանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ , և դառնաշունչ հողմով չէջանիմ. թախանձանաց բանիւս երերիմ , և կողկողագին հեծութ̃բ դաղամ.

զամ․ տաժանելի կրիւք առճայտիմ, և տագնապաւ հոգւոյս տատանիմ, 'ի կոծ մրրկաց ծփիմ, և 'ի բախմանէ ալեաց սասանիմ․ 'ի լրութէ̃ համբաւոյն սարսեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ․ կերպարանօք ատենին հալիմ, և սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լո՛ւր՝ բա՛զմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնամիտ․ քաղցրութի̃ անճառ, որ բարի և ոխէ́ անինչալի: Քանզի կարո՛ղ ես յամենայնի և առ ելս շնչոյս իմոյ՝ փրկութե̃ մեծի․ և քեզ ընդ հօր հոգւովդ ս̃բվ փառք՝ յաւիտեանս․ ամէն:

⁂

Վերափոխին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հանգոյն, առ նոյն աղերս ծաղկանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

ԲԱՆ․ ԿԲ:

ա̃․ Բայց քանզի յոյժ արդար է բան և բաւանցն քննի̃ ա̃յ առ իս՝ քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ: Զի վ̃ն ն̃ր յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին․ և վ̃ն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ․ առեալ զկերպարանս բոլոր էութի̃՝ կերպին իսկութե̃ մեծին ա̃յ՝ միացոյց ի̃նքեան անշուշտ խառնութբ̃: Նորա ոչ են շնորհեալ 'ի բաղձանցն, և ինձ զբովանդակն եհեղ առատութբ̃․ վ̃ն ն̃ր ոչ երբէք չարչարեալ, և վ̃ն իմ՝ հանապազ պատարագի․ Նա ան-

հա

հաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ 'ի փրկութենն. նա վանեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն: Նա հերքեալ 'ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. Որ ոչ խոստացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց. զնորայն կտրեաց զաւահաւատչեայ, և զիմն՝ առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս խոզից արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կարծեաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց. զնա ստուերոց նմանեցոյց, զիս իւրովն անձամբ կնքեաց:

Ը. Իսկ ես զերախտիսն քո լքի՝ զայսքանեաց բարեաց արարողի, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ նմին յաստակս դժոխոց՝ առհամ անարժանս բարեաց. անձիս երախտեաց. անընդունակս սիրոյ. ատամբք մեղաց ձգեալս. յերկնամուտս խորոց խոցեալս. քանդեալ ծառս արմատենւոյ. գինիս յեղաշրջեալ. ցորեանս հեղեղեալ. մուրհակս ջրեալ. վճիռս պատառեալ. կնիքս այլակերպեալ. նմանութիւնս փոխեալ. արկանելիքս կիզեալ. ըմպանակս կործանեալ. նաւս ընկղմեալ. մարգարիտս մանրեալ. ակնս պատուականս սուզեալ. տունկս փօսացեալ. նեցուկս խորտակեալ. փայտս ամենեւին փտեալ. մանրագորս աղաւաղեալ. յարկս տապալեալ. խորանս խարխալեալ. բոյսս արմատաքի խլեալ. ձէթս հեղեալ 'ի գուբս աղբևաց. կաթնս հոսեալ 'ի կոյտս մոխրոց. այրս մահու 'ի յարեանց գնդից:

Քանզի միշտ խրատեալ ընդ երուսաղէմի՝ առակաւ բաբելոնի՝ 'ի մարգարէից հայնից՝ անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ. որ աստէն անդոսնեալ եմ, և անդէն խայտառակեալ. աստ դսրովեալ, և անդ կշտամբեալ, աստ ձաղեալ, և անդ նախատեալ. աստ թշնամանեալ, և անդ յանդիմանեալ. աստուստ ապշեալ, և անդանօր լքեալ: Աստ հեծումն, և անդ հառաչանք. աստ կարծիս, և անդ կատարած. աստ խէթ, և անդ հատուցումն. աստ արկածք, և անդ հանդէսք դատաստանի, ուր ո՛չ է բան իրաւանց, և ո՛չ ձայն պաղատանաց. ո՛չ թիւք աւուրց, և ո՛չ ելք ժամանակաց. ո՛չ ուղք յուսոյ. և ո՛չ դըրունք ողորմուե̅ց. ո՛չ աջ պաշտպանութ̅ե, և ո՛չ ձեռն այցելութ̅ե:

Դ̅. Տէր, դո՛ւ ապաւինութիւն. դու ինքն փրկութ̅ի. դու այցելութ̅ի, դու և քաւութ̅ի. դու երանութ̅ի. քև բժշկութ̅ի. քո ողորմութիւն, միայն հզօր՝ կենդանի՝ անճառ տ̅ր յ̅ս ք̅ս բարերար ա̅ծ. օրհնեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, ը̅ հոգւոյդ քո ս̅բ յաւէտ բարձրացեալ՝ 'ի փառս հայրենի իսկութեան մեծիդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վէր-

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ ։

ԲԱՆ. ԿԲ ։

ա. Եւ արդ՝ 'ի յիշատակ ահարկութեան վերադրեցելոցդ՝ որք յա՟ծուստ են սպառնալիք ինձ ժամանեցեալք, զիա՛րդ դադարեցայց 'ի նորոգ ողբերգութեանց, և կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս ։ Զի եթէ զչորեքվտակեան առաջս գետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ զեդեմ և զերկիր առհասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութեամբ բաշխեալ ա՟մի, և զըղխումն ելից իւրեանց՝ առ աչս իմ եդեալ, զանձինս մեղաց սաստկութեամբ զբոց զովացուցանել ոչ բաւականասցին ։ Եւ կամ մարգարէին ս՟բյ ըղձականութիւն՝ կրկին ինձ լցցի գըլուխս ջուրց բազմութիւն, և ծրագարան տեսութեանց կերպիւ՝ աղբերց կայլակմունք, զբեկման ոգւոցս չափել զվտանգ ոչ ձեռնարկեսցեն. և ոչ եղերականք ջայլից համօրէն՝ բանահիւսից կանանց լալականաց՝ 'ի սիրտ և յոգի վիրաւորելոց, զայլս վտանգս 'ի յերգ արկանել, և կամ 'ի նուագս ձայնից բերել ։

բ. Ի՛մ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ յոբայ՝ կամ երեմիայ. քանզի տօնելի է օրն ն՟ց՝ զորոց մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի · ապա ուրեմն զիս նկատեղեալ զոչ արժանիս լուսոյ՝ և կամ միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծին՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու դրացիս, մըշակս մեղաց և արբանեակս անօրէնութեց: Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր՝ տ՛ր բարերար · ոչ գընացի 'ի քո պատուէրանն կենդանական անմահացուցիչ · ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեռանն՝ աւուրցն խոստովանութե՛ կերակրել պատրաստեցայց · ոչ կառուցի ամրութի որմոց՝ և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի չնչմանէ մրրկաց օդոց պահեցայց · ոչ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական, որով զապագնաց ասլոյն իմ բժշկեցից · ոչ համդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց · ոչ կազմեցի թռչակ փըրկութե՛ վարուց մաքրութեան, որ զնորագունն ինձ երաշխաւորէ · ոչ ետու զընրուն հաչիճն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ իմոյ մատուցին, զի 'ի դատաւորին ձեռանէ՝ ասպէն խակ փրծայց · ոչ լրութի ձեռին օրհնութե մատեայ յանդիման, որով օրէնսդրին մասնակից գտայց արքեցեալ: Ո՛չ գիմաց ետու զդուշութիւն, և ոչ թիկանց պատսպարութիւն, ոչ աջոյս իմ զինուորութի, և ոչ ահեկիս պարածածկութի, որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց · զերիվարս ոչ զգեցուցի զը-

րաքահիւք , և ո՛չ զմարտիկս՝ սպառազինութե՟ , որով զճակատն յարդարեցից ։ Զկանուխն ո՛չ կապատեցի պտուղ , և անագանին ո՛չ ժամանեցի ․ և ահա տարակուսիմ ունայն ՚ի բարեաց ․ մաքրութե՟ ծաղիկ ո՛չ ունիմ , և ո՛չ իւղ ողորմութե՟ , և գիշերոյն մռայլ աննշոյլ ․ ՚ի նիրհումն մահու նընջեալ եմ , և տագնապ կոչողին փողոյ սաստէ ․ զզարդ հարսանեացն կրկին մերկացայ , և զձէթ վառուցն վերստին լքի , և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի ։ է ․ Եւ արդ՝ զիա՛րդ առից մխիթարութե՟ այսքանեաց վշտաց , և կամ ը՟ ո՞րքանեաց տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութե՟ յուսոյ կենաց խառնեցից ․ և կամ ո՞ւր արդեօք զգարշապարս ոտին կառուցից ․ և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից ․ և զի՞նչ անդորրութե՟ ծփանացս նկատեցից ․ և կամ յո՞ր ըղձական դիւրութե՟ ձեռն համբարձից ։ Զի եթէ ՚ի ձեղուն բարձրութեան երկնի , անտի անձրևեաց հուրն սոդոմայ , ոպ՟ ասացեալ է ․ իսկ եթէ յատակ խորութե՟ երկրի , սա՛ եբաց զկոկորդն ըմբռնողական՝ և եկուլ զդադան բանակօքն աբիրոնի ։ Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն , գուցէ կալցի զիս վիշապն ահագին ։ Եթէ ընդ դաշտս ինչ թափառեցայց , արագունք են խնդրել զվրէժ ստացողին առաւել առիս՝ քան երբեմն զեղիսէին՝ առ մատաղ մանկունս բեթելացիս քրմորդիս ։ Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն , այն եղև եգիպտացւոցն՝ խաւար շօշափելի ։ Եթէ 'ի Թռչունս բարձանց, նոքա են կաջեցեալք 'ի սպանդն զոհին՝ բոսորայ դիականցն ։ Եթէ 'ի տկարսն խիզախեցից ․ վատնիմ 'ի պիծակացն, և զի՞ պիտոյ են ինձ առիւծունք ։ Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց, մժխիքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն ։ Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ, մժղուկքն անարգագոյնք իբր ցնցուղս հրոյ եռացման՝ զինև մաղեսցին ։ Եթէ յեղջերէ միեղջերուոյ փախնուցում զերծեալ, նկուն ձիրանք աղկաղկաց ճանճոցն մորմոքողաց՝ զիս կեղեքեսցեն ։ Եթէ 'ի սեննեակս շտեմարանաց խորշից զգուշեալ ամփոփիցիմ, տաղտկատեսակ գարշութիւն գորտոցն՝ մեղաց օրինակքն՝ զիս զազրացուսցեն ։ Եթէ 'ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց, շարք շանաճանճոցն տարմից՝ զինև պատեսցեն ։ Թողում ասել զխառնիճն և զջորեակն զզօրն զօրաւոր՝ ընդ Թունաւորն Թըրթուր, և ընդ անկենդանական երևիլն ․ հանդերձ ջրակարծ կարկտիւն, և ապականագործ եղեմամբն ․ որ առ աչաց տեսիլ՝ ապազէնք և նուաստագոյնք, բայց 'ի յանկնարկելն ա՟յ՝ յաւէտ գոռոզաբար ուժգնութեամբ հարին՝ հանին՝ վանեցին զհպարտն ամբարհաւաճու՟ն փարաւոնի բռնութե՟ն բուռն գաւազանին՝ յաղթող վիճակաւ ․ որ են կերպարանք Թաքուցելոցն կրից լլկողաց՝ անձնականացն աներևութից՝ եգիպտացւոցն անօրէնութե՟ց՝

յորդի և 'ի մահ տանջողաց՝ գազանի վնասողաց:

Է. Ով դու ամենազօր արարիչ բնաւից տրդ բոլորից, 'ի յատելիսն հանդիսացիր հերքել զնա. և ինձ ողորմեա կրկին գըթութբ՝ ձեռն մատուցեալ փրկութեան՝ տարակուսեցեալ կոչկոճեալ վարանեալ 'ի մահ պարտելոյս: Զի դու միայն ճանաչիս Ած փառաւորեալ մինչ ընդ Հօր հոգւովդ սրբով՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

ԲԱՆ. ԿԹ:

Ա. Եւ արդ՝ վս զի 'ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմս եղանութե տն և այ՝ իբր 'ի քրայս ընտրութե փութոյ քոյ սիրոյ՝ հանապազ եռամ, և ոչ երբեք պարզիմ, մինչ խառնիմ զուգիլ՝ և ոչ ևս միանամ, ահա զուր՝ արծաթագործդ երկնաւոր՝ իմ ճարտարապետ, 'ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, զի մարգարէին յայտնի առակի, և չարութիւնս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զխելագար գիւտաքաւի իմս ողորմելի՝ յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմս զպարտիս անձեցուցանել, քան հաշտութե հնարս ինձ այսուկալ.

կամել : Եւ զի մի՛ անընդել դիպուած՝ և անկիրթ պատահումն՝ և անհաւասար հանդիպումն՝ պատրաստութիւնք հանդերձելոյ տանջանարանացն ինձ երևեցին , ամենևին անմոռաց պահեաց տատասկին 'ի յիմում մարմնի՝ նշխար մնացուածոց նախնումն անիծիցն • զոր 'ի փոքուէ տարրէ անարգէ՝ զմեծն է ուսանել :

Ե. Ո՛ անդի խաղաղն ինքնաբերական գիւղք որոմայնի՝ բոտոտք ճապուկք չարժողականք , և աղդի ազդիք • որդունք ողեայ դաշտանակուրք • խաղաւարտք հրակայծակք • և բիծք բոցակիծք • և անիծք անկերպաւորք • և երամակք ոմանք քրտնածինք զաղրաթորմիք կսկծեցուցիչք և մարմնջողականք : Ապաստակք այլոց վայրենեաց , ըստ նմանունէ գիւաց գիշերամարտից՝ և մեկնաղէն բարբարոս գնդից խաւարասիրաց , և գաղանութ̅ք քանասար դայլոց արաբացւոց՝ կորակոր գնացիւքն , արընաթոյր գունովն, կրկնապարոյր կառծագ կոցաւն , որ զօրէն ունի խայթոցաց կարճի , իբր դժնիկ փշովք խոցոտեալ՝ ծծեն ձգեն զարեանն խոնաւութիւն , և յանկողինս մահճաց հանգստեանն՝ վաստակս կրից ցուցանեն : Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհատուցումն ն̅ց նոցին , վաղվաղակի զգան զմնաս վտանգին՝ զոր ազդեն մարմնոյն , և անդէն իսկոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թեւօք իմն թռիչս արձակեն , և ըստ մարախի ձևոյ ոստոստեալ՝ այսր անդր տաբաքերին . և ըստ բազմապատիկ նենգութե բարոյից դաւօղ աղուէսուց՝ խորամանկեալ խուսափեն 'ի պատուհասս բազում երկից , զի յերկիւղէ մահուան ապրեսցին : Եւ այնքան չքնաղ և անքատ անձամբքն՝ ոչ միայն զռամիկսն և զխառնիճաղանճս , այլ և զթագաւորս հզօրս և ահագինս՝ փախուցանեն հանեն տարագրեն 'ի դստիկոն յարկի ապարանիցն բարձրութե , և կամ 'ի բացի բնակեցուցանեն . քաջք արանց արեաց , որք իշխեցին ամբոխից , և տիրեցին ժողովրդոց , և առին զքաղաքս ազգաց , զպարտուէն իւրեանց զօրաւոր ձեռին՝ ինքեանք վկայեն , թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել զեհիցն բռնութե , վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի :

Դ . Եւ զինչ է ինձ զփոքունց և զանկածից ծաղրականաց ոմանց գոյութեց 'ի կիր արկանել , որք զօրեղ և անհերքելի ջատագովք են ածութեանն՝ յիշատակել ինձ զհանդերձեալսն , որք 'ի մարմնոյս անօրինելոյ՝ ընծային պտուղք դառնութե : Ընդ որս և եկամուտ սատակչականացն ախտից դիւաք , և կերչացն կոյոք անողոքելիք . յորոց չէ՛ զերծանել , քանթէ հարկաւ մարմնոյն վտանգի՝ զապագայիցն աքօք իմաստասիրել . և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նմ . այլ առանց կամաց քումդ ակնարկութե՝ և մարդկային կարք և հնարք վրիպեցան : Իսկ դու բարերար՝ զիմ՛ ունիս բաւականացէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բըժըշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ:

ԲԱՆ. Հ:

Ա. Արդ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի փոքունց աստի երկրայնոց՝ չհամարելոյ ընդ գոյս եղելոյ 'ի մեծագունիցն տեսակս, աստացից զտօնելի հանդէս իրաւանց ահաւորին անաչառութե̄: Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն ա̄յ՝ իբրև զնախածանօթ հայրապետութի̄ն, և կամ մաքրագոյնք՝ ո̄պ մարգարէսն, կամ անբծագոյնք՝ իբրև զառաքեալսն, կամ ընտրելագոյնք՝ ո̄պ մարտիրոսսն, եթէ ո՛չ դու մարդասիրեսցես աննուա՛զ բարիդ՝ և անփոփոխ խնամակալութի̄դ՝ և անպակաս ողորմութի̄դ, ընդունայն է ինձ փրկութիւնն առ 'ի նոցանէ:

Բ. Զի եթէ առ նոյն ինքն աբրահամ ձայն արձակեցեմ, իբր ողորմագին աւակ ընչեղին ինձ վարդապետէ, 'ի տապոյ անտի սպառնալեաց, կաթի միոյ ջրոյ ո՛չ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հաստատակաց անհնարութե̄: Իսկ եթէ առ մովսէս, և նա զգածեալ է տըկարութ՟ք, որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ զհայթայթանաց կրկուան՝ 'ի պահպանութե՟ն աւուր ժողովէր : Իսկ եթէ առ ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի : Իսկ եթէ առ դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութեան՝ ստգտեալ է և նա : Իսկ եթէ առ նոյ՝ և յոբ՝ և դանիէլ, զայս եզեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակե՟լ ըզնոսա, և զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց ա՟յ ազդեալ, կենդանի եմ ես՝ ասէ տ՟ր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս և զդըստերս իւրեանց 'ի բարկութ՟էն՝ որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին : Իսկ եթէ առ պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամնոյ ձայն մի խաթացեալ՝ և նա ընդ կրիւք իմն գրաւեցաւ : Թողում ասել զբազմացն գումարութե՟՝ խոնարհեալ առ կարիս կարիս, թէև յաւէտ երջանիկք իցեն : Ընդ որս և յովասու ոմն մարգարէի՝ 'ի մէջ ծառայքն սպասաւորութե՟՝ մարդկօրէն դայթագղութե՟ մնայ յոլովից անթարգմանելի, թէև 'ի դէմս իմն մեկնութե՟ ձևակերպեսցի :

Է. Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութ՟ի փրկութե՟ մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ՝ և զօրացեալք ամենակալիդ · կոչեցեալք պաշտպանողիդ՝ և քաւեցեալք հնարաւորիդ · շնորհեալք ազատեցուցչիդ՝ և բժշկեալք անախտականիդ · կենագործեալք անապականիդ՝ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետև գիտացեալ զսակն որքանութե՟ց հողածին բնութե՟ս, որք մխիթար են օրինակաւն նմանաբար հարազատապէս վհատուե՟ յուսահատելոց, ահա՛ առ քեզ դիմեցից՝ ո՛րդի ա՟յ կենդանւոյ ք՟ս օրհնեալ յա՟մի: Մանաւանդ զառակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ, զվերագրելոցդ բան վերստին արդարացուցանէ ․ բարի է, ըստ իմաստնոյ ումեմն երջանկի, անկանել 'ի ձեռս տ՟ն, և մի 'ի ձեռս մարդկան ․ զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին: Եւ այս բան՝ թէև զդաւթին իմն գծագրէր, որ զերեքմասնեան հարուածն ա՟ծեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զդատակնիք մահուն սատակման՝ իբր զկենդանի ք՟ի հաւատոյն յաճախութեամբ, քան զերկուսն եւս այլ փոքրկունս՝ որք տանջենն և ոչ ողորմին ․ սակայն և իմն օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ ․ զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ 'ի մասնենի այսր ողբերգութեան, առանց որոց ոչ է մատչել առ ա՟ծ, այլ զփրկողին անուն պսակեմ, և զշնորհ նորին՝ առ ամենեսին բարեհռչակեմ ․ և զբնաւին բարձունս 'ի թռիչս վարուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ, յաւէտ կարօտեալ ողորմութե՟ն դեղոյ:

Է. Ահա՛ դու կեանք, դու փրկութի՟, դու բժշկութիւն, դու անմահութի՟, դու երանութի՟, դու լուսաւորութի՟, արա՛ ինձ անդորր 'ի մեղաց աշխատութե՟ց, զի և քե՛զ լիցի հանգիստ 'ի մշտադատս հեծութե՟ց՝ ձանձրացուցիչ թախանձանաց. որ ո՛չ այլ ինչ, քան թէ փրկութի՟ մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս.

ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. ՂԱ:

Ա. Եւ քանզի երջանիկքն և փառաւորեալք սրբ՟ցն պարք, յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին, և յաճախագոյնս հաստատեցան. փոքունս սաստանեցան, և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութ՟բ լուսաւորեցան: Յորոց մինն՝ ըղձանկու՛ածոյն յայտնէ զհաստատակաստեղծն տկարութի՟, իսկ միւսն՝ զգերազանցն քան զբնութե՟ն օրէնս, վարս և առաքինութի՟ս հրեշտակականս: Եւ արդ՝ նոքա որ օրհնեալքն են յամէնիշխան բերանոյ ա՟ծութեան հօրն քո՟ի, ընտրեալքն՝ տօնեալքն՝ խնկեալքն՝ և բարեբանեալքն, իբրև զանդամս քո՟ի պաշտեցեալք, և իբրև զօթեվանս հոգւոյն ա՟յ յարդարեալք. յորս չեք ինչ նշմարանք և կամ դիւաց խաւարի, րի, այլ ամենևին անկեղծուն՝ և լուսաւոր արդարութիւն, և որքան մա՛րթ է՝ զմարդն ա՟յ՝ ա՟յ նմանեցուցանել: Երեսք պարզք և անպատճառելիք. կրօնք բարձունք և անխոնարհելիք. կեանք ըղդաստք և անստգտանելիք. պաշտօն առ ա՟ծ՝ կարծր և անփոխարկելի. ընթացք արիականք և անկասելիք. Ճշմարտութի՟ միատարր և անցնդելի. դիմադրաւութի՟ զօրեղ և անհերքելի. տեսաւորութիւն պայծառ և անապշելի. իմաստասիրութի՟ վերինական և անկոխելի. պատկեր մաքուր և անաղարտելի: Զորոց կերպարանս և զյիշատակս անոճանցն աղաչել՝ ա՟ծ իսկ վարդապետաց, և նոքօք հաճութի՟ 'ի մէջ խռովութե՟՝ արարչիդ բան լուսաւորեաց:

Բան պանծալի հաշտեցուցիչ ա՟յ:

Է. Այլ ես անպխտանս յա՟մի, և որքան բան զօրէ՝ պարսաւեալս. որ մինչդեռ արթունս եմ, ննջեմ. մինչդեռ ըղդաստ երևիմ՝ թմբրիմ. 'ի բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ. մինչդեռ աղօթեմս՝ և վրիպիմ. 'ի յընթանալս իմում՝ և կասիմ. յարդարանալս իմ՝ և մեղանչեմ. 'ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ. մինչդեռ արշաւեմս՝ առ 'ի յետոյսն հակամիտեմ. 'ի չոճելն իմում՝ ընդ կրունկն դառնամ: Ընդ լուսոյն մասին՝ և խաւար յարեմ. ընդ քաղցրութե՟ն ճաշակ՝ օշինդր խառնեմ. ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանգնելն՝ և կրկին գլորիմ: Ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ. ասեմ, և ոչ առնեմ. խոստանամ, և ոչ կատարեմ. ուխտեմ, և ոչ վճարեմ: Կարկառեմ, և անդրէն ամփոփեմ. ցուցանեմ, և ոչ ընծայեմ. մերձեցուցանեմ, և ոչ մատուցանեմ: 'Ի ճորակել խոցուածոյս՝ անդրէն վիրաւորիմ. 'ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ. զուր հանդիսանամ, և իրաւամբք պարտաւորիմ. գրիմ, և խնկոյն եղծանիմ. նուազեմ, և 'ի դիծն թուլանամ. սկսանիմ, և 'ի հանդիսան ոչ ժամանեմ: Կարգիմ, և դարձեալ սասանիմ. լնանիմ, և կրկին հեղում. շարունակիմ սաստ, և անդ 'ի ստորևս հոսիմ. բարդիմ, և անդէն տոշորիմ: Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. գոյզն գանձեմ, և անթիւս սպառեմ: Զայլս խրատեմ, և ես ինքն անփորձ եմ. միշտ ուսանիմ, և երբէք 'ի ճշմարտութե գիտութեան ոչ հասանեմ: Զշիջեալ չարիսն՝ նոյնչափ արծարծեմ. սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս լքանիմ. լարիմ, և իսկ և իսկ առ նմին մեղկիմ. զայս կարկատեմ, և զայն պատառեմ. խլեմ զեղինջն, և տատասկ տնկեմ: Ընդ ամբառնալն՝ և այսրէն բերիմ. մտեմ 'ի բոյնն աղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. ժամ սակաւ մի սպիտակ, և շրջանս մ դառնամ բնաւին սևացեալ. ասեմ զիս քեզ դաւանել, և սպանողին նուէրիմ․ ընդ յանդիման լինելն, և թիկունս դարձուցանեմ։ Մաքրիմ, և այլ մրճոտիմ․ լուանիմ, և նովին զաղտանամ․ կերպարանիմ զդաւթին, և գործք զաւուղայն կատարեմ․ շրթամբք ճշմարտեմ, և ստեմ երիկամամբք․ աջովս մատակարարեմ, և ահեակ կողմամբս աւերեմ։ Ընդ երկրագործութե՟ ցորենոյն՝ որոմն սերմանեմ․ 'ի բարձրագոյն իմաստիցն՝ վայր իջեալ ես ինքն գտանիմ։ Հրեշտականամ յերեւս, և 'ի խորհուրդս դիւանամ․ 'ի յոյս հաստատիմ, և 'ի միտս տատանիմ․ սուտ ձեւանամ, և իրօք խոստոբիմ․ կեղծաւորիմ արդար, և արդեամբք ամբարշտեմ։ Դասիմ 'ի պարս հեզոց, և ընդ այսս կաքաւեմ․ 'ի մարդկանէ գովիմ, և 'ի տեառնէդ պարսաւիմ․ 'ի հողածնելոցս երանիմ, և յորդւոցն լուսոյ աւաղիմ․ հաճոյանամ յետին ռամկին, և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ։ Զատեանն դատաւորին թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ․ հերքեալ 'ի վեհիցն, սոսկականացն սպրդիմ․ մարմնովս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնէ ճայլին ճանաչիմ․ հպատաւորիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ։ Այսօր մաքուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար․ զտ՟րունի պատուէրն լքեալ, թելադրութե՟ օձին հետևիմ․ արիանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ․ զծանրութի՟ աւուրն բառնամ, և

'ի

'ի ժամ վարձուն անմասն եղանեմ· 'ի բացուստ ծոռոմս խօսիմ, և 'ի պատասխանատուութեն պահու պապանձեալ կարկիմ· 'ի յելս արևուն հարուստ երևիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ: 'ի յաթոռս ծերոց բազմեալ, և խեղայեղից կցորդիմ· ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհուրեալ զարթնում: Զանդաստանս կամացս՝ չարաչարս հերկեմ· փոյթ խնամով 'ի չարիս· միշտ անառակ որդիս· անդարձ տարագրեալս· անզղջական զառածեալս· անմխիթար տրտմեալս· ինքնագրաւ գերեալս· մահու և ապականութեան ծառայեալս· անողոքելի տանջեալս· անփրկելի մատնեցեալս· անպատուաստելի հատուածեալս· անարծարծելի չիջուցեալս· անկազդուրելի խորտակեալս· անհանդերձելի կործանեալս: Եւ եթէ պարտ է զսաստիկն աստանօր ասել անօրինեալս անձին նախատինս, ահա գրեմ, գրեմ և ոչ անխայեմ 'ի խուղս նիւթեալ գեհենին: Ստացուածս նախանձու նորոյս ադամայ երկնայնոյ, ոպ և կայենն առաջին՝ հնոյն և հողեղինին· որ ունիմ ըզբնաւն աստուստ 'ի յանձին զնշանակ ամբաստանութես, ոչ զշնչոյս տուրևառութե, այլ զբանիցս կշտամբութե:

Դ· Եւ արդ՝ ո՞ւր լցեն փրկութիւնքն, ուր սկզբնահայրն հաւատոց՝ 'ի յուսահատութեն վայրի՝ զանգթութեն իմ չարիս կրկնէ· մեծն մարգարէից՝ քարամբք բանից կոչկոճէ· արին բարեփառ՝ աշտէին

Նիզակաւ՝ 'ի մահ սատակէ ․ պատկեր ճշմարտին՝ ընդ աքարու համայնիւ ընչէ ․ ա̃ծարեալն վեհից՝ յաբագողացն վրիժուց մատնէ ․ մարգարէածին տեսանօղն՝ ընդ ամաղէկացւոյն առաջի տ̃ն սպանանէ ․ նախանձաւորն ա̃յ՝ երկնատեղաց բոցովն վատնէ ․ սառներին լրումն՝ և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտրութ̃ հասէ ․ պետն առաքելոցն՝ ընդ սափիրայի 'ի կենաց զրաւէ ․ զարմանալին քննութ̃ հոգւոյն՝ բուրումն ինձ մահու՝ ընդ կենացն քարոզխառնէ ։ Արդ՝ անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժգնութեան հրամանի վերնոյն՝ արի սպառազէնք ․ ընդ հրեշտակացն՝ և մարդիկ ․ ընդ տիեզերաց երկրի՝ և տարերք ․ ընդ անզգայիցն՝ և շարժողականք ․ որովք դատեալ միշտ լինիմ տուժիւք ըլկանայ՝ յօրինակ և յիշատակ սակալեացն ապագայից ․ իբր հողմով փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վստահութ̃ի, մինչ անկայուն 'ի հաստատութեանց ։ Զոր եթէ ոք իմաստութ̃ 'ի քննին առեալ խուզեսցէ, զլուզակացն բազմատեսիլ զանազանութ̃ի, զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դասեալ, որ առանց թուոյ և քանակութե̃ համարոյ՝ թինդս առեալ անբաւ երամոց, եռան զեռան սլանան 'ի մարմինս ծովու, վըկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանագրութ̃ի ։

Գ․ Եւ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր՝ բարի երկնաւոր մարդասէր

քս̃,

քն , ո՛վ կենդանւոյ միածին որդի , հզօ՛ր բա՛րձրեալ ա՛նքննին ա՛նճառ քա՛ւիչ ա՛հաւոր , սաստեա՛ 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց . արձանացո՛ զծարաւս մոլեգին շարժման սրտիս խռովութեան . ընդոստնեա՛ 'ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման՝ զցնդեալ միտացս վայրագութի՟ : Եղիցի խաղաղութի հրամանաւ մեծիդ՝ ամենավարան բքոյս սասանման . սատակեա՛ խափանեա՛ զբազմագլխեան անդամս ուրուականս գաղտնեաց ամօթոյս՝ երկրակենցաղս հինից : Գրեսցես ազօթս մտամատոյցս զայս նորընծայ տառ ողորմաղերս թախծագին ձայնի ողբերգակութե՟ այսր մատենի : Զա՛ն 'ի խորոց մահուս անդնդոյ՝ չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ . ընկա՛լ զխոստովանութի՟ անձնադատ բանիս 'ի հոտ անուշից . շնորհեա՛ մխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութե՟ յուսահատելոյս : Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութի՟՝ յաւիտեանս . ամէն :

* * *

Վերստին յաւելուած կցկէն հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ . ՀԲ :

Ա . Տէր ահա ձեռք ասեմ ո՛վ եկեղեցիք միաձանց՝ և աշակերտութե՟ք կրօնաւորաց , որք մերկամարմին մատանցդ ձեռօք՝ առ ակնկալութիւն յուսոյն պարգևաց բարեացն անբաւից՝ տ՟ն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց բանից ընծայեցուցի, ընկալարո՛ւք զայս աւանդութ՟ն խոստովանութ՟ե՝ 'ի շինուած փրկութեան հոգւոց: Ծաներո՛ւք սովիմք զմարմ՟նոյս պարտութ՟ն. յիշեցէ՛ք զմարգարէականն՝ ընդ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ, զի մի՛ պարծեսցի ա՟մ մարմին առաջի ա՟յ, և զի՛նչ ոք է արդարն և ո՛չ մի: Զտ՟րունականն մի՛ մոռանայք, 'ի կատարածն իսկ պատուիրանին դողջի՛ք զձեզ ծառայս անպիտանս. մի՛ եղիցի լինել ձեզ որսք խաբողին. զգուշացարո՛ւք և գրոյն, թէ կերակուրք ն՟ր՝ ընտիրքն: Քանզի և ես իսկ, որ զայս նուաղութ՟ն մասնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ստգտանք բիւր բամբասանաց՝ անբըժշկական մեղանաց, 'ի սկզբնահայրն ըսկըսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութեամբ հաստեցի եղի զիս ամենայնիւ պարտական չարեաց:

Ի՟. Ւո՛ւայ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ո՛չ հաճեցայ, 'ի յասելն ն՟ր անյարմարակէս առ այն, որոյ առաջի ո՛չ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ո՛չ երբէք շնացայ, ո՛չ պոռնկեցայ, և ո՛չ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու: Այլ ո՛չ ընդհատ ինչ յանօրէնութ՟է. Թողցէ՛ ինձ տ՟ր ա՟մ զայսոսիկ, թէև ճշմարտի՛

իսկ

խակ դրեցաւ, ո՛չ ընթացաւ, որքան թէ գթեաց. 'ի յաւել զանյարմարն 'ի դիմաց ժողովրդեանն իսրայէլի բանի՛ւ զաքարիայ օրհնեա՛լ տէր, և մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան: Բայց ես քանզի գիտողին ա̃յ մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս անիրաւութիցն մտաց 'ի կշիռս եդեալ՝ համարի դատել զիս նոքօք ամենիրաւ հատուցմամբք, ո՛չ կերպարանեցայց տեսողին. ո՛չ կեղծաւորեցայց քըննողին. ո՛չ ստեցից զոչ գործեցեալսն նըկատողին. ո՛չ խաբէութե̃ ընդ միտ ինչ մտից մեծին. ո՛չ 'ի տեսիլ բարւոյ ցուցաթեան զչարս քողարկեցից. ո՛չ 'ի պատկեր ընտանի՝ զապիկարս երբէք յարդեցից. ո՛չ խենեշեցայց 'ի զարդ օտարոտի. ո՛չ պըղծնեցայց այլով պայծառութե̃. ո՛չ պաճուճանս յարմարեցից տգեղութե̃ս գեղոյ: Ո՛չ ոք մեղաւոր իբրև զիս. ո՛չ ոք անօրէն. ո՛չ ոք ամբարիշտ. ո՛չ ոք անիրաւ. ո՛չ ոք չարագործ. ո՛չ ոք վրիպեալ. ո՛չ ոք սխալեալ. ո՛չ ոք մոլեգնեալ. ո՛չ ոք խարդախեալ. ո՛չ ոք շաղախեալ. ո՛չ ոք ամաչեցեալ. ո՛չ ոք դատապարտեալ. ես միայն եմ, և այլ ո՛չ ոք. ես ամենայնն, և յիս ամենեցուն: Ո՛չ հեթանոսք, զի ո՛չ գիտէին. ո՛չ հրէայք, քանզի կուրացան. ո՛չ տգէտք և խուժնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից: Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգօնեստն առ ա̃ծ՝ եղծի. բարի ասացայ՝ առ եղկութե̃ն ժաւանդութ̃ն · Որ վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի ա̃յ · արդար դաւանեցայ՝ ա̃մ իրօք ամբարիշտս · Հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին քս̃ի · յաւազանէ կոչեցայ արթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի · 'ի փրկութե̃ն աւուր հսկօղ յորջորջեցայ, բայց զզգաստութե̃ն այս կափուցի ։ Ահա դատաստան · ահա յանդիմանութի · ահա նոր կշտամբանք, և հին դատապարտութիւն · ահա ամօթ դիմաց, և տագնապ հոգւոյ · ահա խնդիրք փոքունց, և կշիռք մեծամեծաց ։

Գ. Դու դո՛ւ միայն՝ տէր ա̃ծ մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համօրեա՛ց մեղապարտս անձին՝ ընդ վերջին պարտաւորութե̃ աւուրն ահաւորի՝ զայս կսկըծեցուցանօղ ինքնաբանական նախատինս ։ Մի լռեայց 'ի քէն զայսոսիկ գըթած, փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի ։ Այլ՝ բարձցես և վերացուսցես զպահ պարտաւորութե̃ կանոնիս՝ ընդ քեզ կապելոյս տեսչանօք հոգւոյս ։ Զան զնախատինս պատկառանաց խայտառակութես · ծածկեա՛ աջովդ կարողութեան զոգեղ տեսակ մարմնոյս մերկութեան · մանաւ հանգստեան զթոյլեալս ուժգին մեղացս բեռամբք · կարգեա՛ ինձ սահման հետոց բարութեան՝ առ ելս կենացդ · պահեա՛ յիշատակ ինձ ողորմութեան՝ և զկնի մահու՝ կեանք ամենեւին, օրհնեալ յերկինս, և գովեալ յերկրի · բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

◆ ◆ ◆

Վերափին յաւելուած նշէին հեծութեան՝ Նորին
հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'ի խորհրդոյ որպէս խօսք՝ ըստ ոյ ։

ԲԱՆ․ ՀԴ ։

ա̅․ Թագաւո՛ր բարձրեալ հզօր ահաւոր՝ օրհնեալդ միայն տ̅ր յ̅ս ք̅ս, քո՛ է փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութե՝ զաստատիչ անձս՝ առ կեցուցանօղ օրհնութիս․ զպարսաւանս վըհատութե՝ առ զուարթացուցիչ գովութի․ ընդ ամօթոյն՝ համարձակութի․ ընդ պատկառանացն՝ պատիւ․ ընդ տարագրութեն՝ յոյս բարութե․ ընդ բաժանմանն՝ ակնկալուն միութե․ ընդ սպառնականացն բանից՝ ողոքական սփոփանս․ ընդ միանգամ դատապարտութենն՝ կրկին ազատութիւն ։

բ̅․ Ողորմեա՛ տէր՝ մահու մեղապարտիս յաւուր արձակման շնչոյս կենդանութե, մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողիցի, զբազմարկածեան ուղւոյն զանգերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով՝ մնացս առ սմամբ ամենայնիւ վտանկեալ․ և 'ի յերդբնակութե յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութե, դիմօք այլայլութե, տառապանմամբ մատանցս,

կար․

կարկամ հառաչմամբ, նուա՛ղ հեծութ՟բ՝ նրբական ձայնիւ, յոգի թախծութեան յոքնամանեայ տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ողբալով հառաչեմ: Կարօ՛ղ ես բա՛րեգութ՝ և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութ՟բ՝ ասելով, թէ ո՛ղջ եղիցիր յոգւոյդ խորտակմանէ. և կամ թողեա՛լ լիցին քեզ մեղանք քո. կամ թէ երթ 'ի խաղաղութ՟ի սրբեալ 'ի մեղաց: Եւ զոր յայնմ ժամու ո՛չ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց: Յորժամ՝ որ այժմս բանապաճոյճ խրոխտաձայն սիգացօղ բարձրապարանոց՝ անկեալ դնիմ դի անկենդան. կարկեալ 'ի խօսից. կաշկանդեալ ձեռօք. լքեալ անդամօք. խփեալ շրթամբք. կափուցեալ աչօք: Տախտակ անշարժուն. կոճղ կիսայրեաց. արձան անզգայ. պատկեր անբարբառ. գոյութ՟ի անշունչ. ողորմելի տեսիլ. աշխարելի կերպարան. ողբալի օրինակ. եղկելի դէմք. արտասուելի նմանութ՟ի. լռեցեալ լեզու. ցամաքեալ խոտ. թօթափեալ ծաղիկ. ծորեալ գեղ. շիջեալ ղամբար. դատարկ կոկորդ. խոպանացեալ սիրտ. աղխեալ ազդարան. ապառեալ աղբիւր. թալկացեալ մարմին. ժողխեալ որովայն. քակտեալ տաղաւար. կոտորեալ ոտք. բաժանեալ յօդք. հատեալ ծառ. սղոցեալ արմատ. թողեալ տուն. հնձեալ արտ. ստորախուզեալ բոյս. օտարացեալ բարեկամ· մոռացեալ պահեստ · թաղեալ գարշութի̃ · մերժեալ ատելի · բարձեալ խէթ · անարգեալ կմախք, և իբր զանպիտան առ ոտն կոխեալ: Կարօտեալ այլոց մաղթանաց, որք զհաւատոց թշուա՜ռիս՝ ձայնի՜ւ նո՜ւագեալ աղերս հառաչման, ցօղով արտասու՜աց՝ բարերարիդ գըթութե̃ 'ի բարձունս տարածանեն: Զառ քեզ դարձն յեղանակեն յարգահատելով· զոր օրհնեմ· զնշան խաչիդ փրկութեան, զոր երկրպագեմ· զյարուե̃ն ճշմարտութիւն, որում հաւատամ· զփառացդ քո յայտնութի̃, զոր փառաւորեմ· զդատաստանիդ ահաւորութի̃, զոր խոստովանիմ· զբանիցդ յանդիմանուե̃, յորմէ զարհուրիմ· զհոգւոյդ ս̃բյ ինձ ուղեկցութիւն, զոր պաշտեմ · զօծմանդ տեառնագրութե̃, զոր և համբուրեմ· զթագաւորելն ընդ քեզ՝ տ̃ր յ̃ս, որում պաղատիմ: Արդ լքաւ՝ մերժեցաւ՝ բարձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տեղի ետ կցորդութիւն զուգութե̃ կենցաղոյս կենդանութեան · և յուսոյդ որ 'ի քեն պարգև՝ մնացական և անջնջական յիշատակարան պահեցաւ:

Է. Տես ողորմութ̃ 'ի տարակուսանս վտանգելոյս՝ միա՛յն բարեգութ՝ փառաւորեալ որդի ա̃յ, քաւել, բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագործել յերջանիկն անարատութի̃ · քո՛ է կարողութի̃, քո՛ է փրկութի̃, քո՛ ողորմութիւն. չի՛ք քո անկարութիւն, այլ ամենայն զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան թագաւորութիւն, իսկութիւն, ինքնութիւն, ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լուսաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և անյաւելուած, ինկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդութեան սրբում, գոհաբանեալ յաւէտ. և ես առ ամին 'ի նոյն պաշտօն հաւատարութեան միապատիւ զուգականութեան, երէկ և այսօր՝ և յաւետենից յաւիտեանս. ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ:

ԲԱՆ. ՀԴ:

Ա. Արքայ երկնաւոր՝ Աստուած բոլորեցուն, առ Աստուած բան՝ յԱստուծմէ միշտ երկայնամիտ, Աստուծոյ կենդանւոյ անքննելին որդի: Ահա՛ անդ է ողորմելն խնկապէս, յորում հատուաւ անկնկալութիւն վատասրտոյն. անդ է բարեգործելն, յորում տեսութիւն իմաստիցն խափանեցաւ. յայնմ ժամու է մարդասիրելն, յորում տկարութեան վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և արտաքոյ: Անդանօր է բժշկութիւն աստուածայինն քոյ ձեռինդ, յորժամ բնաւ անդամոցն տեղի ետ կենդանութեան. ա՛յն վայր է այցելութեան, յորում ելք հնարից ոչ գոյ: Այն է քո մեծութ՟ին, յորժամ զյուսահատութեան վէրն ողջացուցանես· այն է հարազատ քումդ ազգակցութ՟են, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեսցես փրկութ՟ին: Այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մուտս կենաց 'ի սպառուածն շնչոյս՝ բացցես· այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեսցես: Յայսմ ես անոխակալ, եթէ տոլախտաւորիս՝ է̅ երախտաւորացն խնամարկեսցես· 'ի սոսին ծանեալ գիտացից, եթէ նայեցար 'ի նուէր բանիս՝ նախնի գթութե՟դ, եթէ զսովորու՟ն չարեացս բարձցես:

է̅· Յաղագս այսորիկ հիւսին բանք, և եղանակիննուագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի՝ զբարեգործացն պարգևեսցէ· որ մինչ իրաւամբք մեռասցէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հանգուսցէ· մինչ հրաւիրեալ է 'ի դուռ տղմոյ, նա 'ի բազմականս ամենապատիկս դահուց դրդեցուցանիցէ· մինչ բրելոյ զաչսն դիտեսցէ, նա 'ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ· մինչ ծայրատու՟ե մատանցն սպառէ, նա մատանի համարձակու՟ե մատուցանիցէ· մինչ հայի հարուածոց գանից, նա գթոց գիրկս արկանիցէ· մինչ պատրաստեալ յուսայ կորստեան, նա երևելի տեսողաց բազմոց ածնիցէ· մինչ ակն ունի սատակման մահու, նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ, մինչ հատման գլխոյն նայեսցի,

եսցի , նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ : Այս պտուղք օրհնութե̅՝ գըթած , սքանչելարմատ քում շառաւիղաց · ա՛յս արդասիք կենաց՝ արարչականդ քո հրամանաց · ա՛յս իղձք խորհրդոց՝ խոստովանեալդ քո տենչանաց · ա՛յս նշոյլք լուսոյ՝ ամենասփիւռդ ճառագայթից · ա՛յս ախորժութի̅ ճաշակաց՝ բարեբանեալդ քո քաղցրութե̅ :

Է · Ո՛չ միայնոյ են այսոքիկ՝ տ̅ր · 'ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին · ահա զքոյադ յատուկ աղերս աղաչեմ՝ օ՛րհնեալ , 'ի քոյոց այտի պարգեւեալ շնորհեա՛ · բա՛յց տ̅՛ր զգանձս քո բարիս , ըստ աղերսանաց առակին : Մի՛ խառնեսցես , 'ի համբարս բարեացդ քոց՝ 'ի չարեացն իմոց · մի՛ ընտեմարանեսցես զատելիսն քո՝ որ են ոխութի̅ք և ցասմունք , ընդ սիրելիսն քո՝ որ են գթութի̅ք և ողորմութի̅ք · մի՛ պահեսցես՝ 'ի ստացուածս քո պաշտելիս՝ զանախորժելիսն քո՝ որ են մթութիւնք և դաժանութի̅ք , և զիմ՝ չնաստելիքն՝ որ են մեղք և թշուառութիւնք : Մի՛ գրեսցես աջովդ օրհնութեան 'ի մատենիդ կենաց՝ զմուրհակ պարտուց իմոցս անիծից · այլ զանհնարաւորան ինձ համարեալս՝ մեծացուսցես կրկին առաւել զանուն քո տ̅՛ր 'ի նոսին , ցուցանել զգոյն ինձ դիւրինս և հեշտականագոյնս : Շա՛տ են իմ պարտիքս և անդր քան զթիւ · այլ ո՛չ այնքան հրաշալիք իբրև զքո ողորմութիւնդ · բազո՛ւմ են մեղանքս , այլ յաւէտ են նուազեալ առաջին քոյդ ներողութեան . յաճախ են չարութիւնքս, այլ յաղթական են համայնից՝ հզօր ամենակալ՝ քոյդ մարդասիրութ̅ի . Ինձ են անհամար՝ իմոյս անձին բիծք, այլ քեզ՝ յոյժ գրաւեալ են ընդ սահմանաւ: Ո՛չ են այնքան զօրաւորք առ կենդանութ̅ի՝ զէնք մեղանաց պատկառեցելոյս պարզաբերութ̅ե, որքան յիշատակ մահու կենդանւոյդ՝ առ վանումն կործանողին բռնութ̅ե: Զի՞նչ ազդեսցէ փոքր խաւար՝ աւուրդ իմ . զիա՞րդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայթից . զիա՞րդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակութ̅ի հեշտութեան մարմնոյս տկարութեան: Զի՞նչ երեւեսցի յաչս ամենակալիդ քոյ առատութ̅ե՝ կոյտք մեղանաց իմ ախեզերաց . ահա կոշտ մի հողոյ դիւրափխրելի՝ 'ի կարծրութենէ բախման վանեցեալ, իբր զպղպջակ անձրեւոյ բազմաշեղ հոսմամբ քո կամացդ՝ չքացեալ պայթեալ անդստին: Զի՞նչ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ կարողութ̅ե՝ ժամանակաց առաւելութ̅ի առ յանցուածոց իմոց քաւութ̅ի: Ո՛չ քըթթել միական . ո՛չ լուն մի տեսութ̅ե ածանցական, ո՛չ սակաւ մի նուազեցուած փայլական, ո՛չ կիսամամանեայ յամրութ̅ի, ո՛չ փութացելոց ոտից յեղեղումն, ո՛չ յելից բարձրութ̅է միոյ կանգնոյ կաթիւ անկելոյ, ո՛չ գիծ մի չափոյ՝ մնաց հետեւեցելոյ . ո՛չ նշուլից արագութիւն, ո՛չ շնչոյ տուրեւառութ̅ի, ոչ ի՞նչ յայսմ յանդգոյ և յանտապաւորական նմանութէ̃ անձև օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առժամայնք, կամ հարևանցիկք, որքան եղծմունք, ցնդմունք և հալմունք մեղացս սառնամանեաց պահեստի՝ քում զօրութե̃՝ ա̃ծ ամենայնի տ̃ր յ̃ս ք̃ս որդի անքննելին կենդանւոյդ ա̃յ: Որ տաս պարգևս արև քաղցրութե̃՝ չարաց ընդ բարիս. և անձրևես երկաքանչիւրոցն անաչառապէս: Ակշռես սահմանես իրաւամբք՝ և զվտանգս կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանդիստն առ ակնկալուն պարգևին, փոքր խթանաւ փորձութե̃՝ զակաւութիւն սպարտուցն աստէն վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութեամբ, տալով և սոցա դարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպասես: Եւ քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամենայն հրաշագործութե̃ բարեխնամօղ երկայնմտութե̃, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Վերջին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

ԲԱՆ. ՀԵ:

Ա. Եւ արդ՝ ընկղմեալ զմայլեալ և խապառ ծածկեալ 'ի յանճառութե̃ առաւելութեան՝ բազմամամանեայ յաճախութեան մեծիդ երախտեաց, որ ամենագաստ լումամբ աննուազելեաւ՝ յաջմէ և յահեկէ՝ 'ի դիմաց և 'ի Թիկանց համբարեալ կան անբաւութիւնք :

Դարձեալ առ նմին կրկնապատիկ երկրորդութե̄՝ ա̄ծային հոգւոյն ազդեցեալ, որ ինչ յառաքելոցն սահմանեցաւ աւանդութի̄՝ առ ա̄ծ լուսաւորութի̄ եկեղեցւոյ դաւանութեան՝ մեկնապէս եդեալ առփանօք : Եւ որ առ անշնչականս նիւթեղէն՝ ցուցանի երանաւոր կերպադրութե̄ անճառելի :

բ̄ . Մատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ գովեստի դաւանման ճշմարտականի : Զի ոչ երբեմն հերձուածականին չարափառութ̄՝ ամենապատիրն խաբէութ̄՝ նենգողին կարթին հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ելեալ 'ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութ̄՝ 'ի յաւանդ խնկապէս շնորհի՝ անդրէն միւսանգամ համբարձեալ ոգւովք՝ 'ի Թուխս Թևոց լուսոյ, ահա յերկինս ժամանեցից հետևեալ :

գ̄ . Այլ քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հոգևոր երկամբք ծնեցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ՝ ամենից կուսից իսկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի՝ պայծառ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի . զի ծանիցի ցուցցի՝ և այլոց ևս ապագայիցն ազգաց պատմեսցի որքանութե̄ փառաց խնկելոյն՝ արժանաւորապէս պաշտամամբ պատուեալ իբր մաքուր մարմին՝ ընդ գլխոյ մարդեղութեան բանին ա̄յ, 'ի յիշատակ [illegible] հաւատոյ՝ երրորդութեն դաւանութե : Եւ արդ՝ 'ի յայս օրինակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լուսոյ յարմարի, ընկա՛լ զիս՝ գթած օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ 'ի սմին : Հա՛ն սովաւ 'ի հոգւոյս զնախատինս մեղացս. անմեղս և անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցո՛. յաւէ՛լ զտկարս 'ի տունն դաւթի, և անտուստ փոխեալ 'ի տունդ այ, ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ՝ յս ակնարկի : Մի՛ սոսկ զմոլիցն, և մի՛ անօգուտ զեղիցն հետևութիւն արարցես. մի՛ զհաւատոյս ջերմութե՝ ցուրտ համարեսցիս, և մի՛ զհամբոյր ողջունիս՝ անկարգ ինչ վարկանիցիս. մի՛ զպաշտօնն՝ ապաշնորհ գրեսցես, և մի՛ զերկրպագութիւնն՝ անխորհուրդ լիցես. մի՛ անպտուղ լիցի տեսականութե պատկերին, և մի՛ աննշոյլ կերպարանին սքանչելութե. մի՛ անհուր ողջակիզին սպանդ մնասցի, և մի՛ պատարագ ուխտի այս ճառի՝ արտաքոյ ցրեսցի. մի՛ ճաշակդ լուսոյ՝ ինձ մահու լիցի, և մի՛ բաժակ քո կողիցդ արեան՝ 'ի դատապարտութե եղիցի :

Դ. Աղաչեմ զքեզ՝ տէ՛ր յս միդ յեւուէդ, որով զգթութի հօր քոյ և հոգւոյդ սբյ ճաշակեալ ծանեաք. քանզի 'ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգև կարգս եկեղեցւոյ, և 'ի սմին աղօթանուէր լուսարան կենաց փրկութե բարեաց, տարածեալ զսիրտս՝ ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ բանի ընծայողիդ 'ի սմա՝ տե-

րո

բոլից բնաւից երեքսրբենից մատուցեալ, յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութե՟ն :

Յաււ որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան , այլ Էծ խորհրդածութե՟ն ա՟ծային աւանդութե՟ն :

Է. Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութե՟ն երգոց' 'ի հաւատ պաշտաման բանի' զբարեհրաման պատճառն եղելոց' զերրորդութի՟ն անսկիզբն' անհամեմատ բարձրութեամբ' անհասական խորհրդոց եւ անըմբռնելի իմաստից , անզննելի զգայութե՟ց եւ անբերելի եղելոց . քանակութի՟ն վերնականն երկնի , եւ անտահման ներքնային խորոց . լրութե՟ սպառմանց , եւ նախադրութի՟ն սկզբանց . մի' յերից անշփոթ կերպից , եւ երիս' միոյ անհատուածելի իսկութե՟ց . 'ի վեր քան ըղմտաց անարգելութե՟ն' յարաձգեալ ա՟մ' ուրեք բովանդակ : Անփոփոխ բարի . անսասանելի ուղղութի՟ն . անխառն կերպարան սիրոյ . մեծութի՟ն անյաջորդ . բարձրութի՟ն անխոնարհելի . անսպառնելի անսահմանութի՟ն . բարերարութի՟ն աննուաղելի . կամք կայուն . հրաման կենդանի . ակնարկութի՟ն փրկչական . երանութի՟ւն ճշմարիտ . ակնկալութի՟ն հաւատոյ . խոստումն անստելի . աւանդ արդարատուր . ստոյգ աւետիս . վերամբարձութի՟ւն անձեռնարկելի :

Ը. Մի հայր' միայնոյ որդւոյ' միածնա

հոգւոյն պատուեալ․ ամենահարուստ բարութ՝ ամենևին ունայն 'ի չարէ․ օրհնաձայն գոհաբանութ՝ անքննելին ներբողիւ գովեալ:

Է․ Մին բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կցորդութեց, անպատումն ազգականութեց, եռալուսեանն զուգակցութեց, անյաւերժական լրականութեց․ ինքնիշխան կամաւորութեամբ պատուասիրեալ առ հայրն հանգունատիպ՝ գործակցութ հոգւոյն սրբութե՝ խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, աննուաղ գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի ածածին կուսին մաքրութե․ յորում աճեցոյց զբոյսն օրհնութե՝ 'ի լուսապահման անդաստանին անարատութե․ ընդ ամենակատարն էութե համասնեալ յանանջրպետ միականութե․ թափանցական խառնութ յածութեանն ոգի բաղկացոյց զգոյութի չնչոյս հրաշալէս: Որով անստամբակելի երասանասանձաց կրթութե՝ լատահակութեւս իմ հանգարտեցոյց․ և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց 'ի ծայրս լրութե անմահականն տնկոյ․ 'ի մահ վիրաւորեցաւ՝ ածութեն անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ, որով կենացոյց զգործին պարտեաց, արարչութեն խակութե՝ 'ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վերացեալ: Իջեալ 'ի վայրս խաւարային դժոխոց, եհան զկապուածն իւրաստեղծ 'ի կապանաց

օձոտ

ցտողին ․ և իբր 'ի ներհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն նահանջեալ զդիմեցուցումն մահու, կանգնեցաւ կենդանացաւ ա՟ծապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց ։ Հաւատարիմ եղև յաշխարհի ․ և երևեցեալ նոյնութ՟ք՝ ամենևին անկնոճաղելի, ո՟պ էին համայն, և համբարձաւ բովանդակ ․ բազմեցաւ նստաւ 'ի գերունակն դահոյս՝ նախնականին պարզութեան՝ արարչական փառաւորութ՟ք ։ Զոր խոստովանիմք ա՟ծ բարերար և տ՟ր բոլորից ․ որ դատի զա՟մ երկիր արդար ընտրութ՟ք յաւուրն մեծի ․ որ ինքն է սկիզբն՝ և ինքն կատարած ․ նոյն առաջին՝ և նոյն առյապոյ, անպակաս բովանդակութ՟ք թագաւորեալ 'ի լոյս անմատոյց ։

Է ․ Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ՝ և զանբաժանելի բղխումն նոցին փառակից հոգւոյն տ՟րութեան ։ Որ ստեղծ զբնաւս և կենդանածնէ զա՟մ ․ որ անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մ՟թութ՟ք աշխարհակալն միգի՝ շրջէր նկարէր և կերպարանէր ամե՟նունակ ջուրքն անբաւութ՟ք երկրատարածն ծովու՝ 'ի կատարումն արգեան խորհրդոյս՝ զո՟ր աւազանին լուսոյ ։ Նախ արար, և այժմ գործէ ․ գոյացոյց ․ և միշտ կատարէ՝ արուեստս, սքանչելիս, նախատեսութիւս սրբանելոց ․ ազդմունս ածօրէնս, զօրութիւնս զարմանաւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս՝ վարժօղս կրթութ՟ք հանճարոյ ։ Զարբարորն մատուցման արեանն քսի՝ յարգարեաց. քաւութիւն անձանց՝ առողջութիւն մարմնոց՝ ըստ նմանութե քսի՝ ողորմութե հրամայեաց: Մկրտեաց և գեր քան զջուր, ինքեան միայն բաւականութե՝ նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նովին բարեգործութե զօրանայ: Վկայեաց միածնին ածութեն՝ 'ի հոսանսն յորդանանու. օրինակաւ տեսուե աղաւնոյ՝ ցուցաւ ձայնիւ Հօր 'ի լերինն թափօրական: 'Ի նոյն տիպ նմանութե՝ հովանի եղև յակոբեան տոհմին՝ 'ի յելսն եգիպտոսի. յուղեգնացութի զօրավարութեն մովսէսի՝ հողմով սաստկութե՝ զփարաւոն ընկղմեաց: Քահանայս կատարագործէ. իմաստունս կազմէ. թագաւորս զօրացուցանէ. քաւութիւս ընձեռէ. կեանս շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութի յարութեն: Նոյն ինքն է օծումն մարդացելոյն այ. մշտնջենաւոր հաւասարութե ընդ Հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մեծութե որդւոյ. անսահման փառաւորութե օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Նորին ասացեալ 'ի խորհուրդ սբյ եկեղեցւոյ. ընդդէմ պիղծ աղանդաւորացն Նեստրականեցւոց, Նոր մանիքեցւոց:

Թ. Դաւանեմք 'ի հաւատս ուղիղ և անխոտորնակ ամբծութե՝ համբուրիւ շրթանց ողջունեալ, զկառուցեալս խորան յանշէջական արձանաց՝ ածային բը-

նաւ

նակութեան եկեղեցւոյս շինուածոյ : Որ գերազանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութ̃բ • որ 'ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ , յաշակերտաց վերնոյն խնկեցաւ , 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ : Սկիզբն առեալ կենացս այս գանձու՝ 'ի վերնայարկն սրահէ , խորհրդակատարն վայրէ , զոր հոգին ա̃յ լցոյց , փայլեցուցեալ 'ի նմա զօրութե̃ յաւուր մեծի պենտակոստէին • նախ ըզտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութե̃ , յորում այս և 'ի նմին բնակչացն՝ տուեալ լուսանորոգ բարեփառութե̃ն : Ուստի արիւն հզօրին ա̃յ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան ըզհաբէլին մահու գուժարկու , մեծաւ բարբառով ձայնի բերկրութե̃՝ կենդանութե̃ անմահութե̃ 'ի սմա ազդելով : Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնայանդիման արեգական՝ 'ի սպասաւորութե̃ խորհրդոյ այսր ահաւորութե̃ ձեռնարկել , եթէ ոչ ընդ թևօք սորին պահեսցի • նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տ̃րունի մարիամոյ , եթէ ոչ զայս ձեղուն օրհնութե̃՝ ծածկոյթ ունիցի • վ̃ս զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրէնին , որ արտաքոյ խորանի այս վկայութե̃՝ զա̃ծային պատարագն մատուցանէ • մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեսցի , որ ոչ զանձինն օրինակ արիւն՝ յայս նուիրան ընծայեցուսցէ : Մե՛ 'ի սմա լըու̃ացումն 'ի մահն քնի, զի մի՛ յանդէտս անարգեալ ա̃ծութիւնն 'ի ծանուցելումն զնախնին կրեսցէ : Մի՛ ձեռնադրութիւն 'ի պատիւ օծութեան լուսոյն, զի մի՛ յանբծութիւնն խաբէութիւն խառնեսցի : Մի՛ և շնորհօք, քան թէ ապաշխարութեամբ՝ քաւութիւն, զի մի՛ ճշմարտութե̃ն կերպարանօք խորամանկեսցի : Մի՛ յընտրութե̃ն ապառնի՝ հաւատ, զի մի՛ ապառնալեօք հատուցմանն՝ զրոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի : Մի՛ երկաքանչիւրոց գոյութեց մերոց իրաւամբ կշտամբութիւն, զի մի՛ կիսամանեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութե̃ն՝ կարծիցի յանմահ զօրութե̃ արքայական որդեգրութե̃ն . զի ընդելութեամբ երկրայնովս՝ առաւելութե̃ վերնումն թագաւորութե̃ յայտնապէս ճշմարտեսցի : Մի՛ յոյս կենդանութեան առ անեղծութե̃ն ա̃բց, զի աներկևանութե̃ խոստացելոցն՝ 'ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի :

Ժ. Այս դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի՝ տայ կեանս, և մահու իշխէ . բայց օրինակի ադամեան պտղոյն յարմարապէս ճաշակելի . գերազանց քան զբանականն՝ յանշնչութե̃ն հրաշագործէ՛ . մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ : Գրեալ ևս է տեսակ մեծութե̃ վերնումն կամարին՝ սկզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն 'ի նմա զօրութեանց ։ Զո՛ր իմն ընծայէ թռիչս մարմնոյ՝ ընդ թեթեւութիւնս հոգւոց , պատուականին հարստութեամբ՝ զանարգն յարգաւորեալ ։ Ո՛չ ինչ ինքնակիր մեղօք զազրանայ , եթէ ո՛չ՝ 'ի մարդոյ չարաց , և կամ անհաւատից կոխեցի ։ Տիպ իմն է զարմանաւոր՝ յաղթօղ իմաստից մերս տեսութեանց ․ անբանն 'ի բանաւորէն կառուցեալ , նմին օժանդակեալ՝ իբր վեհագոյնն յաւէտ նուաստի ։ Մեծ է քան զմարդ , ո՛րքան ընտրեցելոյն մովսիսի՝ ցուպն յաղթողական ․ առաւել քան զբանաւոր , ո՛րքան զահարոնի՝ գաւազանն խորհրդական ծաղկեցեալ ․ գերազանց քան զմտաւոր , ո՛րչափ քան զեղիա և զեղիսէոս՝ գետահերձ մաշկեակն սքանչելահրաշ՝ փայլեալ արուեստիւ ։ Օգնութիւն պարգեւէ կրկին ամենակատար սրբանեալ ձեռաց՝ մաքրաբար , քան թէ զինապէս ․ մարմին նիւթական՝ քարի և հողոյ գոյակից , հարազատ զգայականաց և սրբոց ։ Իբր զվէմն անմահ կենդանի՝ 'ի կործանումն է և 'ի կանգնումն ․ որպէս զգաստաւորն ամենից հոգւոց՝ հանդիսանայ հրաշապէս աղդմամբ՝ յանէծս և յօրհնութիւնս ․ իբրև տեսօղ աներեւութից՝ զոմն հրապարակէ , և զոմն տածէ ․ առ ինքն կոչէ զգրեալ յանուանէ՝ իբր զախրոզ հրամանատար էից ։ Իբր զեւառն յաւիտենական՝ անհարուածելի է 'ի դիմամարտից ․ ըմբռնէ զհոգեւորս՝ իբր զհնարագործութե

մբ

մեծին արուեստի․ անմեղս և անվրիպութ՟ին՝ ըստ քր՟ի հետոցն ընթանայ․ բարձր ճոխութեամբ անպատկառաբար համարձակապէս՝ զօրէն գոմէշոյ գլուխ ամբառնայ ։

ժա․ Ո՛րքան մեծ ունի սրբութ՟ին, մինչ զի զորս ըստ պատկերի ա՟յ եղեն, կանոնաւ խտրէ ։ Յետ յոգունց ընտրութ՟եց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ ոք սխալեալ՝ 'ի գաւիթս նորին մտանել՝ ո՛չ պղծի, այլ ընդ անպատրաստից թերութ՟եց դժուարի․ ո՛չ նզովի, այլ տեղի տայ ո՛չ գխտողացն զշնորհին զչափ․ ո՛չ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրոյն գտեալ, այլ 'ի մերոց գործոց խրթնանայ․ ո՛չ թողացուցանէ երկիցս մտանել յըմբռնումն ոտից կենդանատուաց, ըստ տիրական անձառ խորհրդոյն․ ո՛չ կրկին յաւուր՝ ըզնոյն ցուցանէ, զի մի՛ անընտրաբար՝ նըուէրանն խայտառակեսցի ։ Վշտակցէ կարեաց զօրապէս՝ իբր անախտակիր պականութ՟եց՝ որ 'ի մեզ շարժմանց․ առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ դատի ։

ժբ․ Նա զի և տապան նմ՟ն է մաքրական, կրկին երջանկական, 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց սպահապան ։ Ո՛չ բազմօք անբանից գազանաց դասուք՝ և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հաւաքէ․ ո՛չ յալիս խռովութ՟ե բերի, այլ 'ի բարձրութ՟ին երկնի համբառնայ ։ Իբր զաշակերտ հրահանգեալ հոգւոյն ա՟յ՝ փախչի 'ի նենգութ՟է․

ո՛չ 'ի բողոք մահու՝ մարմնոյ հարուածոց , այլ 'ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ . ո՛չ Նոյին ձեռնարկեալ գործի , այլ հաստողին հրամանաւ շինի . ո՛չ Մովսէս ընդ Բեսելիէլ , այլ միածինն այ՟՝ հոգւովն սրբով զսա հանդերձէ . ո՛չ յարաշարժ հանապազափոխ , այլ մշտակաւոյց հիմամբ անսասանելեաւ զսա հաստատէ : Դարձեալ իբր զտապանակին անխօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեն՝ տեսողականաց մեզ առաջնորդէ . որպէս կերպարան անքանակ էին յառաջ հետեւեալ՝ 'ի հանդերձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ : Ընդ ողիէլի անտո՛ւսա սատակէ , եթէ ո՛չ խաչապէս յոդի բերիցի . սպանանէ վատնեալ վաղվաղակի առժամայն , եթէ անսանայինն ըծակցութե՟ երկրասիրաբար գեանակոխ սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնազինին բարձեալ տանիցի : Ո՛չ լեզուաւ մարդոյ , այլ բանի՛ն հրեշտակաց խօսի . ո՛չ ունկան գոյականութիւն , եւ արտաքապէս մտառեալ լսէ . ո՛չ ձայն կերպաւորական բարբառոյ , եւ զպատգամս գործոյն յիւ՝ համօրէն ազանց պատմեալ հռչակէ . ո՛չ խաղալեաց շարժականութիւն , եւ ա՟ծայնով իմն կենդանութեան հաղագաւ ազդէ : Ո՛չ ոսկերաց եւ ջլաց յօդուած , եւ երկուք հազարօք կանգնօք լայնութեամբ՝ իբր ընդունդն անհամար՝ բարձրեալն այ՟ , ընկենդանական զօրուն գումարտակ՝ հերքայական վառեալ ամբոխին , եւ ոյժն ընդ նոսին՝ իբր զանմաքուրս 'ի սրբու՟է զոմանս ախտիւ մեղանաց ջեռուցեալս՝ հալածեալ յինքենէ, հեռի ուղեկցէ, արբեցելոցն 'ի տաժանաւոր աղխասարկութեանցն: Նոյն իսկ էութի՟ն ա՟յ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիմի նշանակեցաւ, պատառմամբ կողին զբնաւս արբուցեալ: Ո՛չ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք՝ թափանցանց միութեամբ զսոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ· ոչ սողոմոն կամ՝ զօրաբաբէլ մահկանացուաց ոստիկանուն, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ· ոչ աննուքրական հասարակաճաշակ իւղով առ 'ի յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ՝ և փառօք մեծին օծանի: Ո՛չ տուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ ա՟յ՝ զսորին որդիս կնքեալ ձեռնադրէ· ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեանն երկնից ժառանգս կրթէ· զ'ի ծոց իւր դրդեալսն՝ գոգոյն աբրահամու ընծայեցուցանէ: Փեսայ հարսնութեան սորա՝ որդին ա՟յ կենդանւոյ· օրիորդք խնձոյից սորին՝ հայրապետացն գումարք: Սոյն ինքն մուացումն տանէ այսակիր բարձանցն կռամոլու՟է, զի զերկնայնոյն ա՟յ ունի զծանօթութի՟ն· օտարութի՟ է ամ՟ի դիցն դրօշելոց, զի 'ի համօրէն քարինս սորա՝ ք՟ս երկրպագի· քակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց, զի 'ի բնաւից մայրից աշխարհի՝ նմանութ՟ք կենացն փայտի՝ 'ի

սմա

ամս տ̃րն Նոյ̂բրի · խորտակումն է համայն գլխապատիր յուռութեանց արձանաց , զի քարն գլորեալ կարկեհան ակամբք և վէմօք կենդանեօք՝ այսրէն հաստատի :

ԺԳ. Այս յարկ չքնաղ և ա̃ծընկալ՝ ազա́տ է միանգամայն 'ի յաւէտնուաստ ծառայութ̃է · ոչ օրինակ վերնոյն սիոնի , քան թէ ճշմարտութ̃ե նմին ճանաչի · ոչ կռապաշտութ̃են կապաւ՝ բագին , և կամ լծով օրինին՝ տեղի պարտաւորութ̃ե , այլ տ̃րունի բարերարութ̃են պարգևարան 'ի մէնջ համբուրի : Ո՛չ սասանի երբէք՝ յայլ իմն կերպարան ձևոյ փոխարկեալ , այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի · սոյն ինքն և երկին երկնի՝ յերկրի լուսապայծառ կերպիւ՝ հռչակի : Որպէս չէ՛ առանց հօրն քո̃ի , և ոչ առանց այսր մօր արդանդի յոգի կատարիլ : Անտուն շրջի անբովանդակելին , եթէ ոչ 'ի սմին տան տաղաւարեցի · ոչ ունի տեղի գլխոյն հանգըստեան՝ տ̃րն բոլորից , եթէ ոչ 'ի յայս կայարան կենաց մտեալ ագանիցի : Քան 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութ̃ե առաւել պարծի · անբաւութիւն ա̃ծեան լուսոյն , ո̃ղ զդէմս մարգարէին՝ և զօրինակս սորին ծածկեցին , ո̃ղ փախեան 'ի փառաց երեսաց նորին , և նմանութ̃ե սորուն՝ որ 'ի տաճարին՝ ոչ հանդարտեցին , 'ի սօն հանդիսի մեծի գովեստի , և 'ի բանականացս դասուց խմբեալ նուագի : Աստ օրհնի կըրկին բաղձանօք , քան 'ի դրախտին վայելչական :

կան ։

ԺԴ. Այս մայր հոգևոր՝ երկնաւոր՝ լուսաւոր, քան թէ երկրաւոր՝ ընչաւոր՝ մարմնաւոր, զիս գգուեաց որդի. կաթն ըստեանց սորա՝ արիւնն քնի ։ Եթէ ծծանին իսկ պատկեր զայն ոք գրեսցէ, ոչ անօրինի ։ Իբր զնշան խաչին փրկութե՝ զօրութիս զարմանազանս՝ և արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշագործէ. բեմ ահաւորին սեղանի՝ ՚ի սմա հաստատեալ տեսանի. սովաւ խորթաբարոյից հերձուածողաց՝ մոլեգնածու բերանք կարկին ։ Ունի և քարինս իմն իմանալիս և բանաւորականս, որով զգազանամիտս անմաքուրս՝ բացուստ ՚ի բաց տրոհեալ տարագրէ ։ Ծնանի և ծծս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս՝ միոյն այ քնի ։ Ունի և զդիրն իւր ընդ արևելս՝ ՚ի տեղի խոստման բնակութեանն մերոյ առաջնոյ. ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս՝ զդրախտեանն այ շաւիղ. զփայլականն առակ տիրական՝ ՚ի դէմս բերեալ մեզ վարդապետէ. զփրկութին ՚ի յելից անաւի ծագման արուսեկին՝ քնեան երևմանն ՚ի վերջնում աւուրն, արարածոց երկրի Թարգմանէ ։ Ցաւս հալածէ. ախտաժէտս բժշկէ. դիւաց բռնութեց զօրէ ։ Արգանդ որովայնի սորին՝ աւազանն կենդանարար. ՚ի պար հարսանեաց սորա՝ դասք առաքելոցն ։ Այնքան Ճոխացաւ բարգաւաճեալ երանութեամբ, մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ՝ վայելչապէս յորջորջեցաւ.

ցաւ . անիրամօրին լուսոյ կոչմամբ՝ 'ի մերձաւորայ միածնին ձայնեալ կնքեցաւ ։ Ծփելոյ մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտութեան . խրախճանարան՝ վերնոցն դասուց . բժշկարան անսխալելի՝ տարակուսեալ պարտաւորաց ։ Երրորդութին անպատում՝ 'ի սմա փառաւորի՝ օրհնեալ յամենայնի ։

ԺԵ. Իսկ եթէ ոք ձեռն չարութեն՝ 'ի վերինն արքայութին յանդգնաբար համբառնայցէ , և դիւս ինչ մարմնաւոր , և կամ հնարք մարդկային , և կամ արուեստ երկրակենցաղ՝ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի , և ոչ պարզև առաւել կենաց , և ակնկալութին ածային , և հոգւոյն սբյ յայտնեալ՝ լուսաւորող նախագրութիւն , և երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականութեն , և կամաց արարողին՝ խնկաւորեալ խորհրդարան , և առաքելոց ձեռինն աջոյ՝ բարեհանճար հիմնարկութիւն , և միանգամայն ասել՝ դուռն երկնից , և քաղաք այ կենդանւոյ , և մայր կենդանեաց՝ ազատ 'ի պարտեաց , և ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բանականի , իմանալին՝ խորհուրդ հոգւոյս , և շօշափելին՝ պատկեր մարմնոյս , և սրբութեանցն անդանճառից՝ գերազանցեալ նոր սրբութին , և քնեանն նշանաւ՝ պայծառապարծ պսակեցեալ , զայնպիսի ոչ խոստովանողն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ՝ 'ի ձեռն բանին իւրոյ էակցի , բարձեալ

'ի

'ի նմանէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի · փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին : Իսկ մեք զորս գրեցաք՝ ամէն և վկայեմք , հաւատացեալ որում կարդեցաքս · յանուն և 'ի փառս ամենակալ երրորդութեն և միում աստուածութեանն , յաւիտեանս յաւիտենից · ամէն :

Այն էր հատուած յերրորդութեն · և այս 'ի մայրն էր լուսաւորչաց՝ խոստովանեալ դաւանութեն :

⁂

Վերստին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ· ԾԶ:

ա · Ո՜վ ողորմած , բազմագութ՝ հզօր՝ ահաւոր՝ մարդասէր՝ օրհնեալ՝ կենդանի՝ անճառ · որ ոչ ելանէ երբեք ընդ բան քո՝ իր անձեռնարկելի , որ և մնաց է անհնարաւոր : Քո՛ է հատուցանել պատուղ քաղցրութե՝ ընդ փշոց խստութեան , սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց · քանզի բարի առնել ատելւոյն , և աղօթս 'ի վերայ հալածչին , և փրկութի հայցել խոցողին , և սպանողին ներումն խնդրել՝ 'ի քէն ընծայեցաւ պատուէրս այս հրաշից · որոյ քաղցրութիւն անճառ է քան զօրինակ , և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք , և գովեալ շնորհաց քոց ճաշակելիք · հոգի էրեսաց՝ և զօրութ՟ի գեղոյ մերոյ՝ տէ՛ր ք՟ս օրհնեալ ՚ի բարձունս ։ Այլ մարդք երկրածինք և ամենավրէպք , և բարեմատոյց ձեռաց՝ չարիս դարձուցին ․ իսկ դու լոյս և տուիչ լուսոյ՝ ոչ լսես անէծս ․ ոչ ախարժես չար ․ ոչ կամիս կորուստ ․ ոչ ըղձանաս մահ ․ ոչ յուզիս ՚ի խռովութ՟է ․ ոչ տիրիս ՚ի ցասմանէ ․ ոչ հարկիս ՚ի բարկութ՟է ․ ոչ մթանաս ՚ի սիրոյ ․ ոչ այլայլիս ՚ի գթութ՟է ․ ոչ փոփոխիս ՚ի բարութ՟է ․ ոչ թիկանց շրջումն , և ոչ երեսաց անդրադարձութ՟ի , այլ ամենևին լուսաւորութ՟ի՝ և նկատումն փրկութ՟ե ։

ը՟ ․ Եթէ քաւեսցես , կարո՛ղ ես ․ եթէ բժշկես , զօրաւո՛ր ես ․ եթէ կենդանացուցանես , բաւակա՛ն ես ․ եթէ շնորհես , առա՛տ ես ․ եթէ ողջացուցանես , հնարաւո՛ր ես ․ եթէ պարգևես , ամենալի՛ ես ․ եթէ արդարացուցանես , ամէնարուէ՛ստ ես ․ եթէ մխիթարես , ամէնիշխա՛ն ես ․ եթէ նորոգես , ամենակա՛լ ես ․ եթէ հրաշագործեսցես , ամենաթագաւո՛ր ես ․ եթէ վերստին հաստատես , արարիչ ես ․ եթէ կրկին գոյացուցանես , ա՟ծ ես ․ եթէ հոգաս ընդ մեր , ամենատէ՛ր ես ․ եթէ կորզես ՚ի մեղաց , այցելո՛ւ ես ․ եթէ չարժանեացս ընձեռես , օրհնեա՛լ ես ․ եթէ յորսողէն զերծուսցես , փրկի՛չ ես ․ եթէ զեղցես ՚ի քոյոցդ ՚ի մեզ , հարո՛ւստ ես ․ եթէ նախքա՛ն ՚ի մէնջ խնդրելն՝ դու կարկառեսցես , անկարօ՛տ ես ․ եթէ լսես նեղութ՟ես , անդորրի՛չ ես ․

եթէ զվերըջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես: Թէ պապաքելոյս արբուցանիցես, աղբիւր ես. Թէ զծածկեալսն երեւեցուցանես, լոյս ես. Թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես. Թէ զբիծսն անտես առնիցես, երկայնամիտ ես. Թէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. Թէ ծառայիս ձեռն մատուցես, ըստացօղ ես. Թէ աջովդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. Թէ վհատելոյս դարման մատուցես, կերակրիչ ես. Թէ զանդէտս պարարեսցես, վարդապետ ես. Թէ զդիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես:

Դ. Եւ արդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողորմութե՟ն ոչ միայն գրեալ, այլ կատարեալ եւ գլխաւորեալ՝ նախնի նահատակդ համբերութե՟ն վկայից. որ վասն իմոյ փրկութե՟ն հանդիսացար զօրապէս յասպարիսի ճակատուն, զի կակղեսցես զկարծր բըռնութե՟ն մարմնոյս գոռոզութե՟ն վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի, եւ յանպարտակիրդ մարմին չափեալ զբնութեանս մերում զատաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ սրտեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ. օրհնեալ յաւիտեանս. ամէն:

* * *

⁂

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա͞յ ։

ԲԱՆ․ ՀԷ ։

ա․ Եւ քանզի որ է օրհնաբանեալ և լուսանորոգ՝ կշռութեան երկուց ընտրութե͞ց՝ արարածոցս սասանութե͞ց՝ յեղանակելոյ յայլ իմն էու͞ն երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութե͞, և կործանելոցս վերբերութե͞, սարսափելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութե͞՝ զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր՝ ա͞ծ բոլորից ։

բ․ Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կերպիւ․ ոչ խօսեցար՝ տուիչդ բանի․ ոչ բարբառեցար՝ հաստիչդ լեզուի․ ոչ ձայն արձակեցեր՝ սասանիչդ երկրի․ ոչ մռնչեցեր՝ ամենադղրդեցիկ փողդ մեծութե͞․ ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր․ և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր․ ոչ մատնեցեր ամօթոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու․ ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն դըժուարեցար․ ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր․ և ոչ ընդ կռփելն երբեք խռովեցար․ ոչ ընդ կատակելն, որսամոլեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր : Մերկացուցին զզգեստ պատմուճանին իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ : Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեանն . Ճաշակեաց վհատութ͞ք, և արգել անդէն տարակուսանօք . առին մոլեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս : Գանի՛ հարուածոց յետին անարգութեան 'ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին . Ծունր կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութ͞ե :

դ͞ . Ո՛չ ետուն հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ՝ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին . ընկալար իբր երկայնամիտ . առեր իբրև զհեզ . բարձեր որպէս համբերող, ըստանձնեալ իբր զպարտական՝ զփայտն վշտաց : Որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝ ուսով բերեալ զզէնն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց՝ զևրակերտս դահաւորակս մարմնեղէն գոյութ͞եւս՝ պահպանեսցէ 'ի դատապարտութ͞են վայրի՝ իբր 'ի խրախճան խնճոյից : Հանին արտաքս իբր զողջակէզ . կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ զեղջերացն . տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատարագ . բևեռեցին ոտ͞ս չարագործ . պնդեցին իբր զապստամբ . զխաղաղութ͞իդ երկնաւոր՝ իբր զաւազակ . զանկարգու-

մէ

ա՟ծնութիւնդ՝ իբր զդատապարտեալ. զայն 'ի քրովբէից պաշտեցեալդ՝ իբր զքամահեալ. զսահմանդ կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու. զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին. զտէր և զկատարումն մարգարէից՝ իբր զհամառօտիչ գրեցելոցն. զճառագայթդ փառաց՝ և զկնիք անքննին խորհրդոյդ հօր՝ իբր զներհակ ծնողիդ կամաց. զօրհնեալդ խնկալէս՝ իբր զտարադրեալ. զկապոց օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս գրեալ. զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալանաւոր. զահաւորդ երկնի և երկրի՝ իբր զհաւասարի պատժաւոր. զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ:

Գ. Ո՛վ քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարութիւնդ ողորմածիդ գթութ՟ն, որ զս՟ ապախտաւոր և անօրինեալ ծառայիս, տ՟րդ բոլորից՝ զայս ի՟մ կամաւորապէս և հաւանողական հաճութեամբ տարեալ՝ մարմնոյդ միութեամբ 'ի քեզ ընկալար. և մինչև 'ի քննարան չիրմին տապանի՝ անպակաս 'ի լրութեան ամբողջ նոյնութ՟ն ա՟ծ անքննին՝ զնոյն կրեալ նախատինս անճառ համբերութեամբ, յարեալ կենդանի ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ՝ աննուաղ մարմնով, և անթերի ա՟ծութեամբ: Օրհնեալ փառօք, գովեալ գթութեամբ, բարեբանեալ միշտ ողորմութեամբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

ԲԱՆ· ՀԲ։

ա̃· Եւ արդ՝ անկեալ յերեսս հողանիւթ կերպիցս , 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագուբ̃ , ընդ բարեգործիդ ողորմածութե̃՝ զկենդանարար ոտս համբուրելով , զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ ։

բ̃· Աղաչեմ զքեզ միայն խնամակալ , մարդասէր , գթած , կեցուցիչ , հզօր , այցելու , պաշտպան· մի՛ ունայնասցի վաստակն աշխատութե̃ փրկականիդ կրից մարդացելոյդ վասն իմ ա̃յ· մի՛ սոսկ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մատնութե̃ն աւուր գիշերին· մի՛ լիցի ատոմերացեալ լուսոյդ երախտիս , զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգևեցեր· մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս , զոր կոչից քոց կայլակք նորոգեցին· մի՛ անշահ եղիցին կրիցդ պատուէրք , զոր կարօտութե̃ս իմում մատուցեր ։ Մի՛ պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո մատուցեալս իւրացուցանել· ահա յաղթեսցես կամօք քո՝ ըղձից չարին· վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն· կրկին պարտեսցի խայտառ դատեցեալն ։ Մի՛ անխայեր զազատարարդ քո բանի , որ զըռ-

տեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանել․ զանձառն արարեր բարերարութեն՝ յանակնկալ ժամուն յուսահատութե, յորժամ բնաւ իսկ կըտրեալ և օտարացեալ էր կենդանութեն շարժողութե․ մեռար անմահդ՝ և զմահացեալս նորոգեցեր․ եթէ զկանոն համաձևութե օրինին փոխեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն և զևս հնարաւորն մի՛ արգելցես՝ սկզբնաձևի ողորմածութե բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր։ Աղաչեմ բանիւդ ամենազօրաւ՝ որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր ՚ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ զտոյց ՚ի լաւ անդր․ և փոխանակ զի ես ո՛չ խնդրեցի հետևել լուսոյդ, դու ելցես ինձ յայց՝ ճառագայթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս զխաւարապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ ՚ի քէն․ ո՛չ է ժամանակ յերկարաձգութե առ ՚ի զպարտսն հատուցանել, ահա շնորհեա՛ ինձ տառապելոյս զերեսս քոյ՝ լոյսդ ՚ի խաւարի սրտիս վհատելոյ։ Արգե՛լ և կնքեա՛ զընթացմունս ելիցն, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ ՚ի յուշոյս իմ տեսութէ․ պահեա՛ ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ մնացականաց․ որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց պաշտ-
պանեալ ՚ի քէն՝ անսահման բարի։

Դ․ Ր․ հա ողորմեա՛ ինձ գթած, աղաչեմ զքեզ ողորմեա՛ ինձ՝ հզօր, կրկին ողորմեա՛։ Մի՛ փոխարկեր երկուս ցաւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ ամենեւին· մի՛ բառնար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն պարգեւեալդ շնորհ· մի՛ կապտեր զփչումն ամենօրհնեալդ հոգւոյ· մի՛ լուծաներ ըզխնկեալ զկնիք արքունական պատկերիդ։ Մի՛ յայտնեսցին փուշք մեղանացս՝ 'ի սըրբութիւնս մտացս· մի՛ խզեր զկապ միութեան՝ զընդ քեզ սիրոյն սնդութե՟· մի՛ մերժեսցես զարուեստ զօրութե՟՝ լեզուոյս յարմարութեան· մի՛ պակասեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ մատունս բաշխել։ Մի՛ գրեր 'ի դպրութե՟ կենաց մատենիդ՝ զմահուն պարտիս· մի՛ պահեր· մի՛ ինձ համարիր· մի՛ ջնջեցուցաներ· մի՛ ամաչեցուցաներ· մի՛ նախատեր· մի՛ տան հարկաներ· մի՛ արձանացուցաներ զմեղկուե՟ցն· մի՛ ամբարեր զկորստեանցն· մի՛ իբր սոդոմեալ իմն ամբաստաներ։ Մի՛ յարուսցես ընդ իս զծառն անիծից· մի՛ արձակեր 'ի յիս զսաղարթ վնասուցն· մի՛ ընծիւղեր զծաղիկ մեղացս· մի՛ բերցես ընդ առաջ զնամանկ պարտուցս· մի՛ արտաքսերեր զէութի՟ պտղոյն։ Մի՛ թուեացես 'ի ձիւղս երկրաստեղծ մատանցդ՝ ըզդիւտս գործոցս· մի՛ մատուսցես բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիւնս իմ յիշատակել· մի՛ մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս՝ վարել 'ի գերութեան· մի՛ աստէն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես· մի՛ նուաղութեամբ սոյր անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր· մի՛ 'ի սակաւում այսմ ժամանակի՝

կի՝ զանվախճանելի զփառսն չափեր․ մի՛ ընդ հովտիւ վշտաց հեծութեան՝ զանախտական զկեանս դրաւեր․ մի՛ ընդ ըստուերի այսր մթութե̄՝ զանճառելիդ լոյս փոխանակեր․ մի՛ զերասանակ մտացս ըլքցես՝ ըստ արտուղի հետս հետեւել․ մի՛ զկամուրջ կենցաղոյս գրեսցես՝ ինձ հանգըստեան բաւականութի̄․ մի՛ զհովլիտ հանճարոյս ստուերական պահեր՝ 'ի հանդերձեալն ինձ հրապարակել։ Եթէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն․ եթէ շտեմարանես 'ի սրտի, սաստատին կիզեալ անբոց այրեցայց․ եթէ քննեսցես զանօրէնութիւնս, առանց յանդիմանն քեզ լինելոյ՝ իսպառ հալեցայց․ եթէ անկակից ինձ թողցես զմեղսն, 'ի նոսին վատնեալ մաշեցայց։

Գ̄․ Ակնարկեա՛ միշտ զօրեղ ամենակարօղ՝ փախնուլ չարութե̄ցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեացէ․ հրամայեա՛ գըթած, խնամակալ, գո՛վեալ, լո՛յս անշիջանելի, զօրութե̄ անսահմանելեաւ, զի նո՛ր հաստատեսցի գոյութ̄ի բնութեանս մարմնեղէն յարկի անդամոցս․ յորում հանգուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ․ զապականութիւն մեղացս մերժեալ իսպառ՝ յանարատութե̄ զիս պատրաստեսցես՝ ամենակեցո՛յց թագաւոր անմահ տ̄ր յ̄ս ք̄ս, օրհնեալ յաւիտեանս․ ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ:

ԲԱՆ. ՀԹ:

ա̄. Յիշեմ տէր, որ գթութեանց, սիրողդ իրաւանց՝ ա̄ծ ճշմարիտ. նայեմ վերստին 'ի բնութեանս կերպարան միշտ սխալական. զննեմ ինձ դարձեալ զամենընթաց տարածմունս՝ ելից արեանս չարժողութե̄. բժշկապէս մատի՛ր տեսանել, զի մարդ եմ՝ հաստատեալ մնօք խակութե̄ թերի խորհրդոց՝ յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսողդ ոչէից՝ միայն դու անմասն ստութե̄ խաւարի: Այս իրաւունս է գրել՝ ինձ ընդ մեղուցեալսն մարդկորէն վրիպանաց սխալմամբ՝ պարտեալ կրկին՝ իբր զերկրածին մահացու մարմին, քան բանիդ քում սուտ երևել. քանզի արդարև գիտակ իսկ ես, թէ չար է ագարն՝ և ընդաբոյս չարութիւն մեր, և ոչ փոփոխին խորհուրդք մեք յաւիտեան, ըստ հոգեհանճար իմաստնոյն կանխազեկոյց առակի:

բ̄. Թեթևացո՛ զսաստկութիւն տանջանացն, որ պատրաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհեննին՝ զարդ մահուն յաւիտենականի. բա՛րձ զամօթոյս պարտիս, որ պահեալ է յայտնել թշուառականիս ~~յետնին~~ ամենին յանդիմանութե̄:

Խրատ խաղաղութ՟ե՝ յառաջապարգև ողորմութ՟ե քո ընծայեցո · զի մի՛ անտանելիքն ահաւորութեան՝ ի ցոյցս ինձ եկեալ կերպարանեսցին , անյոյս ապշութ՟ե ընդկենաց զղջման առաջի կարգեալ , դատաստանն ահաւոր · անկաշառ և անխաբելի դատաւորն · ամօթն սոսկալի · կշտամբանքն սարսափելի · յանդիմանութ՟ին անփախչելի · տագնապն անձողոպրելի · պակուցումն անխրախուսելի · դողումն անվճարելի · լալումն անափոփելի · կրճումն ատամանցն անբժշկելի · տարականութ՟ին անողջանալի · անէծքն սարսափելի՝ ա՟ծոյին քո բանիդ · փակումն գթոյն , և արգելումն ողորմութ՟են : Որ ընդ գալարելն երկնի՝ և ընդ երկրի դղրդելն ընդ կարծրութիւն յատակիս , բաց կուտակելոյ կոհակաց խռովութ՟ե ծովու իբր փախստեան կերպ ցուցանելով , մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց · և տատանեալ սասանեալ լայնատարած գետնոյս թանձրութ՟ե 'ի հիմանց անտի , ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնոյին խորոց՝ հարթէ զլերինս , և հալեալ հըրգեհին բնութիւք վիմաց և ա՟մ տարերաց գոյից · այլայլին երկինք՝ յանեղծ փոփոխութ՟են , և յեղանակին արարածք տարերօք իւրովք՝ 'ի նորոգ նմանութ՟ի : Ծածկութիւք գործոց հրապարակին , և աներևոյթք կրից մեր յայտնին · վարք կրօնից ներգործեցելոց՝ 'ի մարմինս մեր նկարին : Թագաւորն երկնից՝ յաթենի նստի , վճիռ

հա

հատուցմանն 'ի ձեռին իւրում: Այժմ վայ ինձ եօթնիցս անգամ կրկին եղկութ̅ե · ըստ չափոյ կշռութ̅ե այսր համարու, որ զամբաւութիւնս թուոց պարագրէ: Զի՞նչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի · քանզի սաստիկ է յիշատակն իսկ՝ յառաջեալ քան զհանդիպումն · զոր ունի մարգարէ՝ զօրինակին նմանութ̅ե 'ի դէմս բերելով, զնեղ տագնապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն · զորօրինակ եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առիւծու, և պատահեսցէ նմա արջ · և փախնուցու յերեսաց արջոյն, և մտանիցէ 'ի տուն, և յեցուսցէ զձեռն իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ · և դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի՝ զտեսիլն քստմնելի, ո՞չ ապաքէն՝ ասէ, խաւար է օր Տ̅ն, որ խաւարոյ և մթոյ, որ ամպոյ և մառախղոյ:

Է̅ · Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից, հզօր ոստիկան՝ իրաւամբք ամբաստանեսցէ, և հատուցանողն ահաւոր՝ արդարութ̅ե յանդիմանեսցէ: Սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուձապեն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն, և զոմանս յամօթն դատապարտեն · կիսոց՝ դէմս լցեալս ծաղու ցուցանեն, և ինձ՝ ահարկուս և քստմնելիս երևեցուցանեն · ոմանց՝ պսակս լուսապաճոյճս մատուցանեն, և այլոց՝ կորուստ մահու բողոքեն · արդարոցն ձայն աւետեաց, և ինձ գոյժ

ան

անվախճան վշտաց ։ Յորժամ առ բարիսն՝ մահու յաղթութիւն իսպառ մեռանի , և ինձ չարագործիս կրկին յարակայի ։ ուր դրանն բաղխել՝ ոչ ինչ աղդիցէ , վճար եղեալ գթութէն առ իս ։ Յորժամ դպրութէք հրաշիցն զարմանալեաց , որ են ծածկեալքն յայժմուցս հասարակաց վարուցն տեսակք՝ մարդկային բնութէս գործոց , յաղագս որոյ եղեն գոյութիւնք իմ էից՝ յիւրաքանչիւր մարմինս անպակաս գրութբ իսկոյն երևին ։ և խորութէք անճառիցն կնքեցելոց յիմաստից աստեացս՝ առաջի աչաց մերոց կերպարանին ։ Ուր այժմ չահավաճառութիւնք ողբոց և արտասուաց զերկինս գրաւեն , և անդ իբր զապաժամին ընդունայնուէք՝ արհամարհեալք լքանին ։ հառաչմունք հեծութէ՝ ոչ կանխաւ աստի առաքեալ , չէ երբէք գտանել անդէն ։ ողորմուէք ճչգով սերմանեալ , ոչ պայծառ վառմամբ գնան առաջի ։ Ուր տապանն նախայանցիցն , և կտակարանն ուխտանարգիցն , և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայնս դատախազեն ։ յորում սոսկալի վայրի՝ ոմն զուխտն կցորդութեան հայրենի , և ոմն զխորանն վկայութեան անտեսիցն , և ոմն զարիւն մեծին այ՝ ամբաստան ինձ իբրաւացի առաջի իմ ատարածանեն ։ Զտանջանարանսն բազմապատիկս՝ անձամբ անձին աստէն իսկ պատրաստեցի , զիարդ մխիթարեցայց համառօտեալս յուսոյ ։ զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն, որ փառաւորեալքն են երանութ̃, սարսեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաւորին, ես եղկելիս՝ աւանդակորոյս սատակման որդիս՝ ո՞ւր երեւեցայց. որ ոչ միայն չէ՛մ պսակելոց, այլ եւ պատուհասն իմ անտանելի՝ եւ կորուստն անսպառելի։

Է̃. Այլ արարչես ամենապարգեւ՝ զօրութե̃ն անճառ ձեռն փրկութե̃ 'ի կորուստ գերելոյս. զի օգնեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ՛ 'ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվըտանգելի՝ պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ մնայց իմաստի՛ զապագայիցն դիպուածս, բաւականացեալ 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց. եւ մի՛ մատնեցայց կորեանցն առիւծուց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն գազանուե̃, զի զորովայն մահուն լցուցեալ՝ զաստուած պարարեալս՝ անդ ձգեալ հալեն, ուր անսպառ պահի մնացուած մթերիցն՝ 'ի ծախումն յաւիտենից։ Զի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման՝ 'ի կեանս եւ յերանութի̃, բնաւից ապաւէն Թագաւոր լուսոյ՝ տէ՛ր յս̃ քս̃, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Պէր

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հաճողի, առ մայրն Երանուէ՝ աղերս մաղթանաց բանի: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Տիրուհւոյն:

ԲԱՆ. Ձ:

ա. Եւ արդ՝ 'ի վերայ սոյնքանեաց յուսահատութե̅ց և ահարկու սրտաբեկութե̅ց, պակուցանողական սոսկութե̅ց ահագին բարկութե̅ց, տագնապեալ ոգւով թախծութե̅ խոպառ, աղաչեմ զքեզ ո՛վ ա̃ծածին: Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմնատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. անխառն իբրև զօդ. մաքուր ո̃պ լոյս. անշաղախ ըստ նմանութե̅ պատկերի արուսեկին բարձրութեան. գերազանց քան զընակութե̅ անկոխելին սրբութե̅ց. երանաւոր խոստմանն տեղի. եդեմ ընչական. ծառ կենացն անմահից բոցեղէն սրովբէ պարունակեալ, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ: Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ. որդի քո ծնընդեամբ՝ և տ̃ր արարչութբ̅: Ընդ անաղտ մաքրութե̅դ՝ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութե̅դ՝ և խնամակալ բարեխօս. ընկալ զմաղթանս այսր աղերսանաց՝ քում դաւանողիս, և մատո ընծայեալ ընդ սմին խառնեալ զբանն իմ 'նախնի՝ մեծիդ ներ-

րոբողէ՝ 'ի քոյդ պաղատանս ։ Հիւսեմ միացօ զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոյ՝ տունկդ կենաց պտղոյն օրհնութե՟ ․ զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից քո՟ի որդւոյ

քոյ և տ՟ն ։

ը․ Օժանդակեամ թեւոցդ աղօթիւք՝ խոստովանեալ մայրդ կենդանեաց ․ և ելիցն իմ յերկրէս հովտէ , առանց ըլկանաց հետեւել 'ի կեանս օթեվանացդ պատրաստութե՟, զի թեթեւասցի կատարածն իմ ինձ՝ ծանրացելոյս անօրէնութբ՟ ։ Արասցես տօն ինձ բերկրութե՟՝ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն եւայի ․ բարեխօսեամ խնդրեամ աղաչեմ , զի ըստ անճառելի մաքրութեդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութի՟ ։ Արտասուօք օգնեամ վտանգեցելոյս՝ գովեալդ 'ի կանայս ․ ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն ծնօղդ ա՟յ ․ ընդ իմում թշուառուիս հոգւամ խորամն բարձրելոյն ․ ձեռն տուր անկելոյս՝ տաճար երկնային ․ փառաւորեամ վարդերդ քո 'ի քեզ՝ ա՟ծօրէն ինձ հրաշագործել քաւութե՟ և ողորմութե՟ աղախինն ա՟յ և մայր ․ բարձրասցի պատիւ քո

ինև , և ցուցցի փրկութե՟ իմ քև ։

թ․ Եթէ զիս դատեսս՝ տիրամայր ․ թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի ․ թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ ․ թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ ․ թէ զամաչեցեալս յառաջ մատուցես՝ բարեշնորհ. Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ սբ՟ կոյս. Թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ ա՟յ. Թէ զիս ցուցցես զգթածութե՟՝ լուծիչդ անիծից. Թէ զծփեալս հաստատեսցես՝ հանդիստ. Թէ ՚ի խռովուե՟ցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար. Թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գովեալ. Թէ վասն իմ մնացես ՚ի հանդէս՝ մահու նահանջիչ. Թէ զդառնութիւն իմ անուշեսցես՝ քաղցրութիւն. Թէ զբաժանմանն իմ խորոց քակտեսցես՝ հաշտութիւն. Թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ. Թէ զմառնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս. Թէ զլալեացս ձայն հասցես՝ բերկրութի. Թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց. Թէ ՚ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հզօրելից. Թէ ողորմութ՟բ ինձ պատահեսցես՝ կամակ նուիրեալ, օրհնեալդ միայն ՚ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց. Ահա կաթիլ մի կաթին՝ քումդ կուսութե՟՝ յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տն՟ յոր արարչին երկնի և բնաւորին երկրի: Զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովն և համայն ա՟ծութ՟բն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սբ՟յ էութ՟բ, և անքննութ՟բ մերոյին բնութ՟բս միացելով, ա՟մ՝ և յամենայնում, մի յերրորդութե՟ն, նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Վերափոխին յաւելուածոյ երկրին հեծութեան՝ նորին հաջողէ, առ նոյն աղերս ճառխանաց բանի :

'Ի խորոց ոսկերց խօսք՝ ընդ ա̅յ :

ԲԱՆ. ՁԱ։

ա̅. Ընդ ծածանելն մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպելոց զաղերս հայցուածոց, որ վ̅ իմ՛ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արդահատութ̅ մաքուր բերանոց՝ ընկա՛լ բա՛րեգութ : Որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ՝ անկիրթք չարեաց, հաստեալք յամենիշխան հրամանաց էիդ. զօրութիւնք հզօրք՝ անկնարկութ̅ե բարձրելոյդ. սէ̅ք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք և անպարտելիք. և ըստ ընթացից տեսութ̅ե մտաց՝ արագունք :

բ̅. Որք և պտղակորոյս տնկոյ Թզենւոյն եռամեանն դատարկութ̅, որ զբնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն, զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն՝ յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթի̅ն պաճուճելոյ՝ զրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութ̅ես, սոքա բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլ և խնամակալք. որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով. բարեմասնութ̅են մեր աղաչեն. և յաւե-

տե

տենականն կենդանութ̅ փրկութե̅ն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ ։ Քանզի արդարև մեր են այս աղաչանք 'ի բարերարեդ ա̅յ վ̅ն մեր կարգեալ առ նմ̅ ․ զի նոքա բանիւ՛ են ստեղծեալ, և մեք ձեռօք ներգործեալ ։ Որք և դալոց են ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութե̅ երկրայնոցս, յահաւորին ատենի՝ յայտնիչք իրաւամբք զմատակարարութ̅ին՝ որ առ մեզ ․ որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտամնջէրն նուագ ձայնի, ողորմեա՛՝ դու ստեղծեր
մի՛ կորուսաներ ։

Է․ Տէրդ՝ ընդ գոհաբանութե̅ ձայնիցն խնդրուածոց՝ անմահականացն վեհից՝ և 'ի մեր հեծութիս հաստատեսցիս՝ բնաւէից արարիչ, որ յաղթես գթութ̅դ քո վերնոցն և ստորնայնոցս ․ քանզի քո է բարերարելդ առ մեզ և առ նոսին ։ Արդ՝ վ̅ն բարեզարդութե̅ անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն, և անվանելեացն ․ ամէնաճեցուն առաւելութ̅ 'ի բարձրն ընտրականութ̅ գերափայլ յաճախ գիտութ̅՝ անցաւորա ջերմութ̅ ջեռուցանօղք՝ ինքնաբուն սապուն ա̅ծախրութ̅ ըստ ինքեանց զմերս սառնասեր սրտիցս անբորբոք չիջուցին․ այրել անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ 'ի խորանիս, առանց ներհելոյ և դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենատեղծիդ . քրովբէօրէն առաքինութ՟ յա՟ծ միացեալք անբաժանելի ։ Որք երկնաւոր պետութի՟ք են մեծք , և զինուորութի՟ք անբիծք ահաւորք , երկնաւորիդ ա՟յ՝ ազատազնեայ պաշտօնեայք ,՚ի յամպոյդ լուսոյ՝ ցոլք նշուլից ։

ձ . Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ողորմել՝ յիսուս , աղաչանօք իմոյն հրեշտակի , դարձուցանելով զիս տէր՝ ՚ի բարիդ քո հետս լուսոյ . զի զաւանդ հոգւոյս իմ՛ պաշտպանութե՟ , զոր հաւատայեր նմին տեսչութեան , զընկալեալն ՚ի քէն ՚ի կենցաղ աստեացս՝ ուրախութ՟ սրտիւ յիս բերկրեալ , անմեղադրելի առ ՚ի քէն օրհնեալ՝ խնդալից դեմաց զուարճութ՟՝ քեզ արքայ բարձրութե՟ փառաց անհասից՝ ՚ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ՝ գովեա՛լ ողորմած ։ Եւ քեզ անքննին ընդ հօր անհասի՝ թո՛ւակցութեամբ հոգւոյդ անճառի՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութի՟ , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովի , առ նոյն աղերս մաղթանաց բանի :

'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

ԲԱՆ. ՂԲ:

ա. Տր՛ ած բարերար բազմապարգեւ Թագաւոր , կենաց պատսպարան , լուսոյ կերպարան , լայնատարր հանգստարան . որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար . գործեցեր զանպատումն , և հանդերձեցեր զհրաշալիսն . մինչև կատարեցեր զառեցեալն ընդ ամենալիր ածութեդ :

բ. Արդ՝ վս առաքելոցն սբց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց , և հոգւովդ սրբով օծելոց , զորոց զգովեստն արժանաւորութն ըստ իմում կարի՝ առ'ի փառս քո տր ամենայնի՝ յայլում բանի պաշտեցի , և ինձ ողորմեսցիս յիշատակաւ սրբոյ նոցին ընտրութեան : Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հանդերձեսցեն յերանութին փափաքելի . ձայն բարի հովուութեան նոցին՝ 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի : Մասն կալայց 'ի յանեղծութի փրկութեան տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց , սկզբնաշնորհիցն պատուոյս , փառաւորեալն դասուց . գետոցն բանականաց , աւետարանչացն բարձանց , իշխանացն պանծալեաց , լուսապայծառ Թագիւ պճնելոցն , 'ի զարդ-

անկապուտ զօրութե՟ շնորհին պայծառացելոց, իւղոյն զուարթութե՟ տիրական
լուսոյն կատարելոց ։

դ. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ այ՟ քս՟ի՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութե՟ք, որք մահացու և վշտաշարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հողազանգուածն բնութե՟ք՝ մարտուցեալ ընդ տարր գոյից ա՟մնիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս · արիաբար ելեալք 'ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք Ճշմարիտք ամենափորձն մահու · իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝ աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն աստէն նկատիչք · աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին · որ հաւասարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարէն 'ի խրախճանս անկէան երանութեան · որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստականուէր քրտնակնդրուկ աղերսիցն յարդմամբ՝ ընկալ զիս նորոգ ըստ նոցին մասին անեղծ փրկութե՟՝
'ի քեզ արժանացեալ ։

ե. Ընդ խաղացեալն հուրբ և սուսերբ՝ արեամբ ներկելոցն, և Ճգնաւորացն սբ՟ց հարցն միանձանց՝ և քեզ հետևելոցն որդի այ՟, անպարտելի քաջութե՟ք և անպատիր զգաստութե՟ք, ընդ դժնեայ գոռոզն մարմնոյս բռնութե՟՝ արիապէս մարտուցեալ, տովխմբ վանեցին զանմարմինն բելիար ·

լեար ․ և մշտամարտ հանդիսին յասպարեսի կենցաղոյս՝ առանց զզուանաց ծանրաբեռնութե՟՝ 'ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութե՟՝ զթեթևութ՟ն հոգւոցն թըռուցեալ՝ 'ի նաւահանգիստն կենաց հասին ․ և իբր սիրօղք վերնում վիճակին՝ առանց յետնոցն մտածութե՟ , զթագն յաղթութե՟ համարձակապէս՝ պայծառ ճոխութ՟բ պճնեալ իսկապէս՝ 'ի գլուխ կապեցին ․ վ՟ն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմեղաւորս 'ի պատժականաց՝ ընկա՛լ ընդ նոսին ։

Է․ Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ ընդ նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսարկութիւն , որ վ՟ն իմ գոչէին քեզ 'ի հաճութ՟ն , և ես ընդ նոսին՝ իբր դառնութիւն եդեալ ընդ քաղցու , կամ տատասկ ընդ ողորկութե՟ , տգեղութիւն ընդ վայելչութե՟ , և տիղմ ընդ գեղեցկութե՟ մարգարտի , կամ հող ընդ յստակութե՟ ոսկւոյ , և կամ քարինս անարգս ընդ պայծառութե՟ արծաթոյ , բացասութիւն ընդ ճշմարտութեան , կամ աւազ ինչ ատամնառու ընդ կակղութե՟ զանգուածոյ հացի ․ արդ լուր՝ հզօր հնարաւոր գովեալ , զնոցայն վ՟ն իմ , և զիմս ընդ նոսին՝ 'ի նոցին գովեստ , 'ի փրկութիւն իմ և 'ի փառս քո՝ ա՛մենագութ , բա՛րերար , օրհնեալ , երկայնամիտ , կա՛րող , ա՛նքըննին , ա՛նճառ , ա՛նեղծ և անստեղծ ։ Քո՛

են պարգևք, քո՛ են շնորհք․ դո՛ւ սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի։ Ո՛չ ես դատապարտիչ, այլ ազատիչ․ ո՛չ ես կորուսիչ, այլ գտիչ․ ո՛չ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ․ ո՛չ ես տարագրիչ, այլ ժողովիչ․ ո՛չ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ․ ո՛չ ես ընկղմիչ, այլ վերածիչ․ ո՛չ ես գլորիչ, այլ կանգնիչ․ ո՛չ ես անիծիչ, այլ օրհնիչ․ ո՛չ ես վրիժառու, այլ շնորհիչ․ ո՛չ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ։ Ո՛չ եղծանես, այլ գրես․ ո՛չ սասանես, այլ հաստատես․ ո՛չ ոտն հարկանես, այլ ափոփես․ ո՛չ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց․ ո՛չ ես ՚ի կամս շարժեալ սատակման, այլ ՚ի փրկութիւն ողորմութե՟։ Ո՛չ մոռանաս զայցելութի՟․ ո՛չ լքանես զբարի․ ո՛չ արգելուս զգթութիւն․ ո՛չ բերես վճիռ կորստեան, այլ կտակ ազատութե՟։ Ո՛չ թշնամանիս յառատութե՟ց․ ո՛չ բամբասիս ՚ի շնորհաց․ ո՛չ հայհոյիս ՚ի պարգևաց․ ո՛չ նախատիս ՚ի ձրի ձրից․ ո՛չ անգոսնիս յերկայնմտութե՟ց․ ո՛չ եպերիս ՚ի ներութե՟ց․ ո՛չ բանտարկիս ՚ի բարութե՟ց․ ո՛չ անպատուիս ՚ի քաղցրութե՟ց․ ո՛չ քամահիս ՚ի հեզուե՟ց․ ո՛չ առաջին այսոցիկ տրտնջմունք, այլ անլռելի գոհաբանութի՟ք։ Բա՛րձ զմեղս իմ հզօ՛ր․ լո՛յծ զանէծս իմ օ՛րհնեալ․ քաւեա՛ զպարտիս իմ ողորմած․ ընջեա՛ զյանցանս իմ գթա՛ծ․ մատո՛ մատն այցելութե՟, և անդստին իսկ կատարեցայց․ զի՞նչ քեզ տէ՛ր՝ քան զայսոյն դիւրագոյն, Եւ կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարևորագոյն : Այլ կենդանագրեա՛ բարեխնամ քոյինաստեղծ պատկերիս՝ փչումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորութե մաքրական շնորհի՝ զամենամեղս ոգի պաշտպանեայ :

Է. Մի՛ ածեր մերժեալ՝ ինձ օր տարաժամ՝ 'ի համառօտս երբեք՝ անթոշակ տապաձեռնութ՝ ընդ անկատար ուղին հետևել . մի՛ մատուցաներ բաժակ դառնութե՝ 'ի ժամ ծարաւու . մի՛ փակեր գըթած՝ իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգտիս , և մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն ինձ պատահեսցէ . մի՛ տար տօթոյն յանպատրաստ պահուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ , և մի՛ լուսնական դիպուածք հատեալ գաղտնեօք վնասեսցեն . մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս , և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն : Մի՛ հանգիստն մահ բերիցէ , և մի՛ նինջումն 'ի սատակումն յառաջեսցէ . մի՛ քունն ինձ կորուստ լիցի , և մի՛ նիրհումն ապականութե գործեսցէ . մի՛ վախճանն անյարմար՝ 'ի վերայ իմ արշաւեսցէ , և մի՛ շնչոյս վերարձակութե ըմբռնեալ՝ 'ի խոնարհ լեցի :

Ը. Դո՛ւ ես տէր . դո՛ւ գթած . դո՛ւ բարերար . դո՛ւ երկայնամիտ . դո՛ւ ամենակարող . առ տմ բան անհատանէ անձառազօրաւոր , քաւել՝ փրկել՝ կենագործել , լուսաւորել , վերստին հաստատել , 'ի ժանեաց կերչաց գազանաց՝ և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութ՟ե ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց, ընդ արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել: Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քում շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղօք, և եթէ ամբարձեալն արդարութ՟բ. եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ տկլին, և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն: Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ ս՟բյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* * *

Վերստին յաւելուած չրէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ. ՁԴ:

ա. Բարձրեալ անքննելի. զօրութ՟ն ահեղ. տէր արարածոց. թագաւոր երկնի. առեղծիչ հրեշտակաց. պոյարան մտաց. հաստիչ հրեղինաց. պետ բարի հոգւոց. աջ ապաւինութ՟ե. անդորրութ՟ն հանգստեան. տեսարան լուսաւորութ՟ե. պայծառութ՟ն բերկրութ՟ե. ճանապարհ երանութ՟ե. պատճառ կենդանութ՟ե. առիթ բանաւորութ՟ե. փրկութիւն առանց չարութ՟ե. առաջնորդ խաղաղութեան. պարիսպ ամրութ՟ե. պատուար պահպանութ՟ե. ցանկ բոլոր մեծի օրհնութ՟ե • սահման անոխակալութ՟ե , յիշեմ յայսմ՝ ողբերգութ՟ե մատենիս բանիս խոստովանութ՟ե՝ և զոր 'ի մարդկային ազգէ թշնամիս մեր՝ 'ի բարի , և արմ կատարեա՛ նոցին քաւութ՟ի և ողորմութ՟ի : Մի բարկանայցես ն՟ց վ՟ն իմ՝ տէ՛ր , իբրև զո՟բս բամբասողաց՝ առ յանձնս սիրոյդ որ յիս , այլ որպէս զչարս կշտամբողաց և խրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա : Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո՝ ա՛րդարադատ , ոմանք առ մեզ չ՟աստակարագոյնք՝ սակաւուք թերևս՝ և յիրաւի բամբասելոցս , և ես առ քեզ՝ ա՛մենապարգև , անթի՛ւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս :

Է՟ • Արդ՝ յիշեա՛ զքո մեծութիւնդ՝ տ՟ր • նայեցեալ 'ի յիմս անարգութիւն • և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց , և դու առ քոյս՝ ըստ քում մեծութեդ՝ անճառելիս հրաշագործեսցես : Մի սաստկեսցես զիմն խածանողն , այլ փոփոխեսցես • խլեալ զխոտանս բարս երկրաւորս՝ զքարինս արմատացուցես , և յիս և 'ի նոսին : Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս , և ես խաւար և յիմար • դու խնկութ՟ե բարի գովելի , և ես համայնիւ՟ն չար ապիկար • դու տ՟ր ստորից և երկնից , և ես անիշխան չնչոյս և հոգւոյս • դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ , և ես տաժանաւոր և վտանգաւոր • դու 'ի վեր քան զկիրս երկրիս , և ես կաւ անարգութ՟ե պարշութ՟ե • դու՝ ըստ մարգարէին , ղեկին . Միայն յաւիտեան յանբաւ բարձրութեան , և ես միշտ կորնչիմ՝ ըստ նորին բանին . 'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն , և ես բովանդակին իսկ եմ՝ որ պաւանդն իմ ոչ պահեցի : Հա՛ն զիս 'ի բանտէս . արձակեա՛ 'ի կապանացս . զերծո՛ 'ի շղթայիցս . փրկեա՛ 'ի խեղդմանէս . ազատեա՛ 'ի տագնապէս . քակտեա՛ 'ի յերկաթիցս . լո՛յծ 'ի պաշարմանցս . ապատաքսեա՛ յերկմտութեանցս . սփոփեա՛ 'ի տխրութեանցս . հանգո՛ 'ի նեղութեանցս . փարատեա՛ 'ի վշտացս . հանդարտեա՛ 'ի խռովութեանցս . ապաքինեա՛ 'ի ցաւոցս . մերժեա՛ 'ի հեծութեանցս . հեռացո՛ 'ի յողբոցս . կազդուրեա՛ 'ի կականմանցս : Աստուած ողորմութեան և պարգևատու քաղցրութեան , մի՛ ըզգրաւեալս արեամբ հզօրիդ՝ անտես արարեալ ընդվայր կորուսաներ . կանգնեա՛ զհասեալս յափն մահու՝ 'ի բազմավտանգ հիւանդութենէս :

Դ . Ահա՛ բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ընդունայնութեան , յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ յոչնչէս երևեալ , 'ի յանդաստանէ մօրն իմոյ սենեկի՝ փուշ դժնեկի՝ մեղաց շառաւիղի . մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին յուդայի , և կամ զաւակին եփրեմի : Եւ քանզի բուսուցեալ տնկեցի յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմութեան՝ խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս , ըստ գրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիսն , զիա՛րդ ոչ կոչեցից զանձն իմ՝ դար-

ձե.

չէլի անդաստան անխծաբեր փշովք մեղաց հեղձեալ ։ Ո՛չ սերմանեցի արդարութի , ըստ բանին յովսեայ , և զխամրդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն ։ Անկաւ ստինք կուսութե՝ անձինս մաքրութե , ըստ մարգարէին բանի՝ որ առ իսրայէլ , կարօղ ես տր՝ 'ի նոյնն հաստատել ։ Լայնեցի ընդարձակեցի , ըստ մոլեկան բարուցն յուդայի , զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց , 'ի ձեռս քո՛ է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութի ։ Եթէ մարմնապէսն կցորդութիւն ընդ տեսանողին՝ անարատ գործեաց զպոռնիկն , իսկ դու՛ փրկութի՝ հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես ․ եթէ արեգակնըս այս անկենդան՝ ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մատակարար , և զկարակուռն մօրից ցամաքէ , և զոհաս պտուղս հասուցանէ , իսկ ստացօղդ ամենից՝ հոգիդ տյ՝ որքան զօրեսցես զտիղմ չարեաց աղտոյ՝ և զթարախ պղծութե մեղաց մթերից՝ խնկոյն սպառել ։ Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի՝ առելեացն իմոց 'ի կարգ այս բանի , զի զհերքեալ մնաստակարս զարտուց մահու՝ յամենախնամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես՝ օրհնեա՛լ գթուն ․ այլ՝ կենագործեա՛ զիս զամենամեղս անդամօք մարմնոյս՝ ընդ բնութե հոգւոյս խորհել միշտ զքոյսդ ։ Իսկ բարեգործացն խնդրել բարիս , բնութե են օրէնք՝ անբռնադատ կրիցն յարակցապէս առ այն բերումն ։

րումն ։ Քանզի արդարև առ միդ այդ պատուհէր՝ ա՟մ հասակ զօրանայ. իսկ միւսոյդ երկրորդի՝ առաջնովդ խնամով հանդիպել, ծածկանիդ է նմանութիւն. յաղագս այսր իրի՝ նախնի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս, քան զերախտաւորացն բարիս ։

Գ. Եւ արդ՝ յիշեա զնոսա կրկին ընդ միոյ, որ 'ի քո անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան. և տուր ն՟ց տ՟ր ամենառատ բարերար և անոխակալ վարձս արդարոյ և մարգարէի, թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց ն՟ց և առ յոյս նոցին ակնկալութ՟ե, որ առ պարտաւոր գերիս՝ ողջամիտ կամօք ակնարկեն, ո՟չ թէ 'ի մասանցդ քո կեցուցչայ՝ 'ի պահպանարան հոգւոյս ծածկուն՝ լինով ունիցիմ ։ Եւ զպատժաւորս՝ անամփոփելի 'ի քոց տեսութ՟եց, և յանխաբելի 'ի յուղիղ կշռութ՟եց՝ քաղցր գթութ՟դ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս՝ մաքուր արասցես, անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութ՟են ։ Եւ ո՟չ շուք ի՟մն վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս՝ սիրելիքն քո՝ վասն քոյ, նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութ՟ե, չգիտելով զբիծս դաղտնեացն՝ երջանիկ կարդան եղկելոյս, և դու հռչակաւոր ամենապարգև օրհնեալ մարգարէր՝ առ ընտիս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութ՟ե՝ հաշտեաց ընդ ն՟մ ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նո-

'ցին մասին պարգևեա՛ զանեղծ մեծութիւնդ՝ և զանթառամելի զպսակդ՝ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրութեան :

Է. Որ դու ես դրաւ փրկութեան մեծութեան անվանելի և անծախ գանձուց ընտրելիս և սովեցելոյս , 'ի վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ որ 'ի քէն՝ յարգեալ ճոխանամբ : Կաւո՛ ինձ սահման՝ ջրոյ հանգստեան . տրձանացն անփոփոխ՝ պատրաստական վստահութեան . կարգեա՛ օրհնաբանեալ՝ անկեղակարծ յուսոյ ամրութեան . տո՛ւր ամենախնամ դու՝ անաչառ պաշտպանութեան . սասանեցելոյս՝ բարեաց անդորրութեան . տարակուսելոյս՝ լուսոյ ապաւինութեան . աշխարելոյս՝ մեծ երջանկութեան . վհատելոյս՝ կենաց օգնութեան . լքելոյս՝ անդայթագղելի օժանդակութեան . նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութեան : Զի քո՛ է բնաւդ , և 'ի քէն է ամենայնդ , և 'ի ձեռն քո բաշխին հաստատունք պիտանացուաց համայնից կենաց . և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

⁂

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա͞յ ։

ԲԱՆ. ՁԴ ։

ա̄ . Արքայ երկնաւոր . թագաւոր բարձրեալ . տ͞ր բոլորից . ամենից ակընկալութիւն . ստեղծօղ տեսականաց . հաստիչ իմանալեաց . պատճառ եղանութ̃եց . կազմիչ հանդերձելոց . տո́ւիչ լուսոյ . առիթ առաւօտու . պատրաստիչ վաղորդայնի . երեւեցուցիչ երեկորի . տարբերիչ խաւարի . արուե́ստաւոր բարեհնար . իմաստութ̃ե գործօնեայ . քաւարան օրհնեալ . հալիչ մեղանաց . հալածիչ ցաւոց . քակտիչ դառնութեանց . պահպանարան հանգստեան . հնարք նիրհման . յարմարիչ քնոյ . պարգեւիչ ննջման . շնչոյ յարակարգութ̃ի . զգայութ̃ե տեւողութիւն . ցրիչ ցնորից . յեղանակիչ անրջոց . փոխարկութ̃ի զարհուրմանց . այլայլութ̃ի տխրութ̃եց . խափանիչ խիթմանց . ընդարձակիչ կարծեաց . համադրութիւն ծփմանց . ահագնութ̃ի խարդախմանց . հարուածիչ դիւաց . փախուցիչ ախտից . ընկլմիչ դաթագողութ̃եց ։

բ̄ . Պաշտպանեա́ երկնաստեղծ ձեռամբդ . զօրացո́ բարձրացեալ քո աջովդ . ամփոփեա́ ամենակալդ թեւօք . ծածկեա́ ա͞ծեան խնամօքդ . ամրացո́ վերակացութ̃բ վերձայնոցդ • շուրջանակի պարսպեալ՝ գումարտակօքդ անմահից • 'ի յամենուստ պարփակեալ՝ կցորդութե՟ հրեշտակացդ • վանեամ զընդդիմամարտն իմ՝ զինուորութե՟ զուարթնոցդ • պատսպարեալ զսասանե՟լս՝ ծածանիդ մաղթանօք • զբանակս անդրանկացդ՝ բարեկարգեամ ինձ պահապան ։ Բա՛ց ընդ աչաց դիմաց՝ և զմտաց իմ տեսանելիս • զգա՛ստ արա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութիւն • վերացո՛ տէ՛ր 'ի զգայութե՟ցս՝ զմածեալս յիմարութիւն • բա՛րձ միայն բարեգործ՝ զպատրուակիս թանձրութե՟ ։ Ընդ սկըզբան բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա՛ • ընդ ելից արևուն՝ արդարութե՟ արեգակնդ 'ի յանձկութե՟ սրտիս մտցէ՛ • Ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստից խորհրդանոց ջահեսցի • խաչիդ տեառնագրութիւն՝ ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի մէն ։ Զի դու ես ա՟ծ անքննին, ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս • ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա͞յ :

ԲԱՆ· ՁԵ:

Ա. Իսկ արդ՝ Տ͞ր զի արթնականն մեր զուարթուն՝ քեզ նուիրումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութ͞ի ընուելն՝ Տ͞ր ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութ͞ի աչաց, ուղղեա՛ հոգւոյդ քո խնամատարութեամբ զյաջողուա՛ծ ձեռուինս գործոյ՝ ընդ հեծութ͞ե ձայնիւ մաղթանաց : Զօրացո՛ տէ՛ր՝ 'ի հանդէս բարի ճըգնաւորական արի վաստակոյ. կցո՛րդ լեր կարեացս տկարութեան. թեթեւս կացո՛ զաշխատութեանս այս սկիզբն. արագեա՛ մինչ կարօղ՝ զյառաջադրեալ ձեռակերտս. դիւրաւ, ընթացո՛ 'ի յաւարտումն լըրմանն : 'Ի վախճան իւրին՝ բերկրութ͞ե զիս հասո՛. ժամանն կացուսցես՝ 'ի հանդիպումն յուսոյն. կցո՛րդ լեր ուղւոյն՝ ճանապարհիս ընթացից. 'ի թուիչս ամբարձման՝ փութացուսցես յօգտակարն. ընդ այժմ իմ՝ լիցիս՝ 'ի վտանգի ծանրութ͞ե. զձայն քո լու՛ր 'ի յանձկութեանն պահու. ձեռամբ քո կեցո՛՝ 'ի կորստեանն ժամու. մատամբ քո ազդեա՛՝ 'ի սահմանին անձկութեան. հարթեա՛ զխարոց՝ ամենաչար խափանմանն. հոգեղինին առաքմամբ, ըստ ամբակումայ, ինձ հնարեա՛. բան ինձ շընորհեամ՝ 'ի յատենի բազմութեն · իմաստութի յիս տնկեա՛՝ 'ի հանդիպման քրինութե : Ամպով կամաց քոց հովանացի՛ր հրաշապէս · հանդարտեցո՛ փայտինդ կենաց՝ զծովուս մրրիկ · սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատկեր՝ քոյին հրամանաւդ · քանզի թէ սաստ ողորմութի քո տէր՝ կամեսցի , այս լուծութի կոհակաց կարծր է քան զվէմ · և թէ 'ի ցամաքի անտես անկիցես , իբր զանկայուն՝ ընդութիւն յատակիս 'ի ներքոյ աստի հասեալ սասանի :

է · Արդ ընկա՛լ յս՟՝ զպաղատանացս ձեռնարկութիւն՝ քեզ 'ի հաճութիւն , և արա՛ ինձ զամենակարծն դայթագրութի՝ մեծ վստահութի : Որպէս 'ի ջրահեղձոյց ամենակործանն դարու , որք 'ի հարթ տարածման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին , յողորմութէդ անմայի մնացեալ կորուսան · իսկ ընդ հովանաւոր մածուցածով լաստի՛ն յոդնատատան հիմանն հայթայթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պահեցան · ընդ որս՝ և զպաղաչօղս մշտատատան՝ 'ի նաւահանգիստն խաղաղութեան մարդասիրապէս ուղղեալ ապրեցո՛ · վարձ 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգևոր շահից , զատորաբերս այս սատոնարութիւն պարտուցս լքեալ բանից տառակաւ , 'ի քեզ տր անկայց միացեալ խոստաւ անբաժանելի՝ օրհնեալ յամենայնի : Եւ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք՝ ընդ հողեղինացն մարտիրոսաց , որք ջրով և հրով փորձեցան, և յետ զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութե, ասասցեն ընդ մեզ համաբանաբար զուգամասնութբ՝ եղիցի եղիցի։

* * *

Վերջին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս մաղթանաց բանի և ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

ԲԱՆ. ՁԶ։

ա. Ընդ այսր հառաչանաց թախծութե ողբոց՝ ՚ի բազմաց կերպից շարադրելոց, և ամենից հոգւոց ողորմեա՛ գովեալ և երկայնամիտ թագաւոր։ Նաև այնոցիկ առաւել՝ որոց հատեալ է ակնկալութին փրկութե կենաց. որք ննջեցին անպատրաստաբար՝ չիջեալ լապտերօք իւղոյն պակասութե։ Ահա յիշեա՛ տէր իմ զթութե, և ՚ի յայս ևս պատճառ իրաւունս ինձ գրեա՛։ Քանզի թէ և ՚ի փառս աջահարութե սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս, զոմն ծանր՝ և զոմն թեթև. զմին զով՝ և զմիւսն հրային. զի դիմադրութին ՚ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդար կոչեսցուք հաւասարիմ հաւասարութեն. և ՚ի յայսմ դարման առաքինութե վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զխոնարհութին առ կաւն դիտման անմոռաց պահեալ՝ զպսակ ընկալցուք ճգնաւորական։

Ամէն

Աւաղ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրէպեցաք, և անասնաբար սանձեցմամբ ըստ հողոյն զիջման՝ ընդ երկիր մածաք, այլ ոչ ախտիւ՝ և այլ ոչ անգթութեամբ. միւս մասն մոլութե՟ ամենաբաղձ կերակրոց՝ իբր գաղան մշտաբոյծ՝ յարակայ կապեալ ընդ բնութեան: Իսկ 'ի քառիցս՝ ոչ անըմբռնելի և անողոքելի սլացմամբ 'ի բաց ստասուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին՝ զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդ միջէ. եթէ օդականաւն հրեշտակայնոյն յառիցիմք 'ի քեզ, ծանրութիւն թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի ստորև քարշեալ խափանէ:

Է. Ես արդ՝ յամենուստ պարտեալ և խսպառ լքեալ՝ իբր զաւրիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ. վատնեալ՝ 'ի բաղմոց՝ 'ի մահ գրաւեցայ. վ՟ն որոյ 'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութե՟ն կողմ նայիմ. և պատկառեալ դիմօք համայնից ունօղս՝ զընաւից աղերսաբանեմ զմեռելոյն՝ քեզ կենդանեաց. քանզի դարձ ես յաւէտ հնարիւք և կորստականացն ըստ իս մեռելոյն. Զմ ինչ քեզ զօրելի է. Նա զի՝ և ընդ անտկար կարելոյդ՝ և կամելդ է ախորժելի:

Ը. Արդ՝ այսպ երկուց բարգաւաճ շնորհաց նորոգչաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի և յատոհմատութե՟ն վհատութե՟ն ազգաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս՝ հոգւոց բժշկութե՟ն. քում հրամանի՝ տէր ամ՟ի, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին կանոնի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

ԲԱՆ· ՁԷ:

ա· Եւ արդ՝ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ սակաւամանեայ կըտակի այսր ողբերգութեան, արա՛ տ՟ր՝ վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս կըշտամբութե՟ն՝ և որ յիս կրին չար սովորութիւք: Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց ակնկալութե՟ն դատապարտելոյս՝ ասելով, ո՛չ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս. և դարձեալ, ա՛յս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալսն ո՛չ կորուսից:

բ· Ահա՛ օրհնեալ ես 'ի գթութե՟ն. բարերարեալ միշտ 'ի քաղցրութե՟ն. խոստովանեալ յերկայնմտութե՟ն. ծանուցեալ 'ի յայցելութե՟ն. քարոզեալ տ՟ր 'ի փրկութե՟ն. ներբողեալ դու յառատութե՟ն. պատմեցեալ 'ի պաշտպանութե՟ն. փառաւորեալ ես 'ի փրկութե՟ն. երկրպագեալ յանբաւ բարձրութե՟ն. պաշտեցեալ 'ի յանքննութե՟ն.

թե՟ · գոլեցեալ միայն 'ի յաղթութե՟ · վերաձայնեալ 'ի մեծ զօրութեան · խնկաւորեալ յողորմածութե՟ · համբուրեցեալ յանճառ հեզութե՟ · Ճաշակեցեալ 'ի խոնարհութե՟ ։ Ընդ քեզ և ծնօղդ քո երկնաւոր ա՟ծդ բոլորից մխիթարութե՟ · ըստ որում հոգիդ քո ս՟բ բարութե՟ , որ զանկեալ զդրաստ թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն անբանութ՟ե՝ կանոնեցեր ո՛չ անտես առնել ։ Որոյ երախտիս հզօրիդ 'ի յիս, և առաքինութիւն մեծիդ 'ի բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց · որովք զայս ձայն աղերսական յարդեալ ընկալցիս՝ մարտիրոսացն պաղատանօք 'ի հոտ հաճութե՟ բուրման անուշից ։ Եւ այսու փրկանօք հաշտարար բանիս՝ զնախնեացն պարտս և զաներեւոյթ վէրս՝ միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա՛ ամենակարող · զներքինս և զարտաքինս · զախտքն և զգիծքն , և զխարանս հարուածոցն · բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութե՟դ զկտեալ խածուածս բազմագունիս , որք դարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէութիւն բնութեանս ։

Դ · Եւ եթէ հասից յամս ծերութե՟ քո առաջնորդեալ՝ արժանիս մահու, մի՛ թողցես զանկարութ՟իս · մի՛ անարգեր զալեխն · մի՛ կորացուսցես զկործանեալսն · մի՛ զեջուսցես զկքեալսն · մի՛ վայրաբերեր զխոնարհեալսն · մի՛ չնչման հողմոյ մատներ զառկայծեալն . մի՛ ընդդիմահկեայես զդեգերեալն . մի՛ անվերարկու առնէր զառուցեալն . մի՛ անդարման լիցի տառապեալն ։ Մի՛ առանց տածելոյ՝ յարկն խարխալեալ . մի՛ անպատիւ՝ պատկերն հնացեալ . մի՛ պարարտութ̃ին անհամեալ . մի՛ շուք շնորհին անարգեալ . մի՛ հնութ̃ին քամահեալ . մի՛ նաւ հոգւոյս ալէկոծեալ . մի՛ երկարութ̃ն յուսոյն կտրեցեալ . մի՛ լար շաւիղին խզեալ . մի՛ ուշ իմաստին բարձեալ . մի՛ գոյին կազմած զեղծեալ . մի՛ ամբարձմանն թեւք փետտեալ . մի՛ զուարթութ̃ն դիմոյն տգեղեալ . մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ . մի՛ պատուհանք աչացս փակեալ . մի՛ լուսաւորութ̃ն նորին խափանեալ . մի՛ պատկերն խօսուն անկեալ ։

Այս աղաչեմ զքեզ՝ բա՛րեգութ , ամենայն որբոց պաշտպան, լո՛ւր սոցին ինձ կանխաւ , զի զանազանն մի՛ մոռասցիս ։

Դու առաջնորդեցեր ինձ , ընդ տարմատաքին, և ապրեցուցեր . հա՛ն տէ՛ր՝ ընդ երգողին՝ և 'ի կարծեացն կասկածանաց , յորմէ երկնչիմ ։ Իսկ ես չե՛մ արժանի 'ի քէն՝ և ո՛չ հասարակական կերակրոյն մարձու , այլ դու կարօղ ես սովորաբար՝ և առ զըղձացօղս բարեգործել ։ Քո՛ են զարմանալիք անճառից բարեաց՝ միայն հրաշագործ առ մ̃ երկայնմտութ̃ , ընդ հօր և հոգւոյդ սբ̃յ օրհնեալ հանապազ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

*

Վէր․

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս ծաղկանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ· ՁԸ։

ա. Եւ արդ՝ ջուր կամաց եւ կաթ արտասուաց՝ բեկումն հոգւոյս՝ մտացս լքմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարգարէին յիշեցուցանեմ՝ զարամաթայցւոյն սամուէլի, զոր առեալ եհեղ 'ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենատես, առ ժողովրդեանն օրինակութի̃ զանձն արկանելոյ խոստովանութեամբ եւ հնազանդութեամբ կենդանարարդ դարշապարաց ։

բ. Եւ արդ՝ ընկալ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց, եւ հաստատեսցես յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ թագաւոր երկնի. եւ օրհնեալ սրբեա՛ ըզտառ մատենի այսր ողբերգութեան. եւ գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան՝ ընդ հաճոյականացն սպասաւորութիս ։ կացցէ՛ առաջի քո մշտնջենաւոր, եւ յիշատակեսցի 'ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի շրթամբք ընտրելոց քոց, եւ խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ, եւ ընծայեսցի 'ի սրահ սրբութե̃ քոյ. խնկեսցի 'ի տաճար անուան քոյ, եւ բուրեսցի 'ի սեղան փառաց քոց. պահեսցի 'ի գանձաձայրանի քում, և համբարեսցի 'ի ստացուածս քո ։ Պատմեսցի 'ի յականջս ազգաց, և քարոզեսցի 'ի լուր ժողովրդոց․ նկարեսցի 'ի գրուածս իմաստից, և տպաւորեսցի 'ի սեամս զգայութ՟եց․ իբր կենդանեօք՝ զիմս պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութ՟ն․ և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայութ՟ե բանի այսր տոմարի՝ գրեցայց կենդանի ։ Մնասցէ սա անեղծ 'ի կամս քո տ՟ր՝ ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ դատից․ անաչառ կշտամբից․ անպատկառ յանդիմանից․ անանխայելի գործից․ անողոքելի պարսաւից․ անհամբոյր ծանակից․ անմարդասիրելի մատնից․ անփրկելի տանջից․ անկաշառ կառափից․ անխնայելի յայտնից․ տպաւոր հրապարակից․ աշխարհալուր բողոքից ։ Փողով մեծութ՟ե ազդման առանց լռութ՟ե և կամ դադարման՝ զիմոյս պարտեացս խոստովանեսցի ։

Դ․ Այն գիր՝ իմովս ձայնիւ՝ իբր զիս ընդիմ աղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն․ հռչակեսցէ զգաղտնիսն․ կականեսցէ զկատարածն․ հնչեսցէ զմոռացեալսն․ յայտնեսցէ զաներևոյթսն․ բարբառեսցէ զբարուրսն․ քարոզեսցէ ըզխորոցն․ պատմեսցէ զմեղացն․ մերկացուսցէ զանտեսիցն․ ցուցցէ զկերպարանըս թաքուցելոցն ։ Շօշափեսցին սովորութքն․ գտցին գայթագղութ՟իքն․ յանդիմանեսցին անձառք․ քամեսցին չարեացն մխայրուածքն ։ Եւ թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութեան քո քո՝ 'ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց ․ որով 'ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ մտի դարնայնոյն՝ նորոգման աւուրն պայծառութե՝ քոյովդ ցօղով յոդի աճեցեալ այսու փրկութեամբ անմահականաւ , եւ անցամաքելի վերամբարձութեամբ շառաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձեալ դալարացայց եւ կրկին ծաղկեցայց , ըստ քոյինաշունչ գրոյն յուսադրութեան ։ Եւ քեզ միայնոյ փրկողի՝ եւ հօգւոյդ քում՝ հօր խնկակցի՝ միասնական տրութեանդ եւ անճառ երրորդութեդ՝ խորհրդական գովեստին փառք եւ երկրպագութի յաւիտեանս ․ ամէն ։

* * *

Վերափոխին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

ԲԱՆ․ ՁԹ ։

ա․ Ած եւ տր ․ կեանք եւ արարիչ ․ ողորմած ․ գթած ․ լոյս ․ երկայնամիտ ․ անոխակալ ․ մարդասէր ․ ամենագութ ․ պարգեւատու ․ փրկիչ ․ օրհնեալ ․ գովեալ ․ բարեբանեալ ։ Դարման ամբութե ․ պատսպարան վստահութե ․ առանց նենգութե բարի ․ առանց խաւարի ճառագայթ ․ քաւիչ մեղաց ․ ողջացու-

ցիչ վիրաց · անհասանելեաց հնարք · անմատչելեաց հպաւոր · անյուսութե՟ ելք · անուն քո խոստովանեալ՝ ա՟յ որդի · և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի՝ և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութե՟՝
յաւիտեանս · ամէն ։

Վերստին յաւելուած երգին հեծութեան՝ նորին հանդերձ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ · Դ ։

ա՟ · Բարեբանեալ ա՟ծ երկնաւոր, միայն արարիչ, տ՟ր ամենակալ · մեծութիւն ահեղ · գթութե՟ օրհնաբանելի · ողորմութե՟ խոստովանելի · բարերարութե՟ երկրպագելի · խնամակալութե՟ պաշտելի · մարդասիրութե՟ տօնելի · պահպանութե՟ խնկելի · բարձրեալ անքննին · մերձաւոր կամարար · ապաւէն անկասկածելի · մխիթար սրտից · փարատիչ վշտաց · ապաքինիչ ցաւոց · սպառումն վհատութեանց · բարձումն պարտեաց · փոխարկիչ կարեաց · կարգաւորիչ կրից · յարմարիչ բանից · սանձարկու լեզուի · շրջադրութե՟ շնչոյ · կացուցիչ հոգւոյ · ամփոփիչ խորհրդոց · կրթարան կամաց · արձանացուցիչ յուզմանց · հանդարտութե՟ մրրկաց · խաղաղութե՟ ծփանաց, որ ունիս զթևոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես ։

Ը. Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութեամբ անհպարտութեամբ երկայնամտեալ հանգչիս տենչանօք անճառ հրաշիւք՝ յանձինս սրբոց ։ Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ գթած ․ սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից ․ Ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ՝ դիմելոյս 'ի լոյս վերին ։ Ձեռընկալու մեծ վստահութեան, որ ոչ թողացուցանես դայթագղելոյս 'ի վայր կործանել ․ յուսոյ կերպարան, ճշմարիտ առ հաւատաչէիւ աղաչողաց մատանց յայտնի երևեալ ․ ապաւինութեան հանգստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան ։ Ազատութիւն շնորհածիր, որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց ․ առատուն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ՝ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես ։ Պայծառուն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես ։ Քաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութենէ առաջնոյն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես ։ Հնարաւոր դիւրահաս՝ առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ ․ ելք վստահութեան առ խոստացելոցն վայելս ․ երանութեան անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի ։

Կամք անփոխադրելի՝ առ 'ի քաւութիւն գերոյս զօրացեալ ամենագովելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց առնես զսքանչելիս: Ամենաստեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն, և զհողմով հոսեալն, և զժանեօք գազանաց ծախեալն, 'ի քթթել ական նովին հիւթականութ̅բ անպակաս յարուցանես: Անհաւասար համարձակութ̅ն, յորում ա̅ծօրէն պանծանօք պարծելն է իրաւացի:

Գ. Հայեա՛ց տ̅ր՝ յերկնից զուարթ քաղցրութ̅բ յամենակործան վտանգնեղելոյս, և արա՛ անդորր հանգստական դիւրաւոր՝ 'ի բազմատագնապս հեծութե̅: Եւ զյարուցեալ գումարս սատակչացն, եթէ սպառազէնք այսական դըժնեայ հնարաւորութ̅ բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց ոգեղ և քո առելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վտանիչ և կործանական նշմարանք, մերժեսցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝ հեռի սահմանաւ խապառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեանն. և կառուցես կացուցես նպատակ կենաց և ամուր մահարձան՝ զնշան խաչիդ՝ ապաւինելոյս 'ի քեզ՝ փրկութ̅ն: Եւ յայսմ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութե̅՝ լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք. կապտեսցին մեքենայքն. վատնեսցին դայթակղութի̅քն. խայտառակեսցին հաղբեցն դըրուբութ՟իք · յայտնեցին երևոյթք որսոյն · գտցին ննջողին ծուղակք · վերացին վարմին վերարկուք · տոչորեցին որոմանցն բոյսք · նզովեցին բռնաւորին չարաբանութ՟իք · կորեցի հար խաբէուե՟ 'ի մահ որսողին · պարսեցին պատրողին բանսարկութ՟իք · պականեցին զէնք զըրպարտողին · անկցին սուսերք մահաբերին · սուզեցին սադրողին պատրաստութ՟իք · արձակեցին տուունք տագնապողին ։ Այլայլեցին սուտ կերպարանք կեղծաւորին · սատակեցին խռովականացն խիստ յարձակմունք · ցրուեցին կցորդութ՟իք կերչացն · բաժանեցին աղինք աւազակացն · քայքայեցին բոյլք բարբարոսացն · քանդեցին ամրոցք ապստամբողացն · արգելցին ամպրոպք յանդգնելոցն · փարատեցին փորձողին անձրևք · հալեցի և ցամաքեցի եղեամն աղանդաւորին ։ Խորտակեցի եղջիւր գոռողին · մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց · փշրեցին ամբարհաւաճութ՟իք հպարտացելոցն · նահանջեցին դիմեցմունք ճակատելոցն · քակտեցին միաբանութիւնք զօրացն բելիարայ , թէ անմարմինք և եթէ մարմնաւորք · փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց՝ յեօթն տարակոյս · 'ի գուբն ինձ փորեալ՝ ինքեանք ընկձեցին ։ Յեղանակեցին ձմերունք ձանձրացուցչին · հատցի կապն կցորդութե՝ մշտաջան աւազակին · նողկացի մըտացս կայից՝ համբոյր շողոքորթին · ընդ-

մի

միջեալ մեկնեսցին՝ նետաձգութիւնք նեղչին • կացցէ 'ի սասանման՝ նաւ խարդախողին • խլեսցին յարմատոց անտի՝ ատամունք խածանողին :

Դ • Վասն փայտիդ օրհնութեան կենաց , յորում պրկեցար Ա̃ծդ անըմբռնելի • յեշատակաւ բեւեռեացդ , որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի • արեամբդ տ̃րունականաւ , որով ըզվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար • լեղւոյն դառնութ̃բ՝ զոր արբեալ , զդեղատուութեան կորուսչին արտաքս հեղեր • պատմաբանութ̃բ ըղձական ճաշիւք կրիցն սարսափելեաց , որով զլրբութ̃ն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր • անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ , յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սատանիկ սարսափմամբ՝ բնութիւնք ա̃մ երևութից և աներևութից , եղիցին այս ա̃մ պարգևք շնորհաց՝ խոստովանելոյս 'ի պաշտպանութ̃ն , 'ի բժշկութ̃ն և 'ի քաւութ̃ն : Եւ մահաբեր դառնաթոյն օձին , և որ 'ի նմա աղդեաց տիեզերադաւ չարութ̃ն , 'ի սատակումն եղիցի նորին • նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մատնեսցի , կապեսցի և ըմբռնեսցի : Եղիցի ողորմութ̃ն ստեղծողիդ ընդ իս , և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանորէն կապաւ միացեալ 'ի մի :

Ե • Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝ մաղթանաց գոչման՝ աղօթից հայցմա՛ն ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի ա̃ծասիրաբար, հաւատարապէս անաչառութ̃բ ընկալցի՛ն 'ի քէն մասն երանութ̃ե՝ պարգեւաց ազատութեան, հաստեալ վերստին յանարատութ̃ի նորոգ մաքրութ̃ե, նկարեալ դարձեալ զձոյդ կերպարան անփոփոխելի: Ահա տիրապէս հը՛նարաւոր՝ զօ՛րեղ՝ ա՛նպատում՝ ա՛նհաս՝ ա՛նիմանալի, տեսցե՛ս սատանիօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութ̃ե, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վ̃ս հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ ս̃բյ փառակցի և կենդանատուի, ա̃ծածնիդ բարեխօսութ̃բ, և խնդրուածովք ամենայն ս̃բց: Զի դու ստեղծեր զա̃մ. և 'ի քէն եղեն ամենայնք. և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց՝ միդ յիսկութէ անժամանակ երրորդութեանդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

* * *

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոջողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ:

ԲԱՆ. ՂԱ:

ա̃. Տ՛տ̃ր գթութեանց և ա̃ծ ողորմութ̃էց. անուն մեծութեան. ձայն ահաւորութ̃ե. կոչումն սաստկութե՟ • լուր անհասութե՟ • բարբառ դողութե՟ • հնչումն հիացման • յուսադրութիւն բարերարութե՟ ամենողորմ՝ քաղցրութե՟ : Յորմէ երկուցեալ սասանին ամ՟ բնուե՟ք եղելոց ՚ի քո սպառնալեաց ահիդ պակուցման, սաւառնին սերովբէք • ամփոփին քերովբէք • պարուրին պարք լուսակերպիցն • երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն • նոյնք ցնծան դողուբ՟ մեծաւ ՚ի մի նուագկատիս բերկրուե՟ • զարհուրին դեւք • ընկրկին չարուե՟ցն գունդք • պակասին խաւարասիրացն հոգիք • անդնդոց մատնին հրեշտակք օտարին : Կապին նշանաւ խաչին՝ յարձակմունք դիմամարտին • փակին ՚ի ստորին բանտի՝ քինաւոր ամայեկացքն • անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին • արգելին անզերծ զընդանաւ՝ մահագինացն կաճառք • պնդին ՚ի մետաղս ահեղ հրամանիդ՝ այսականացն գումարք • պապանձին կարկեալ՝ ընդդիմաբանիցն դատակցութիւնք • պարաւանդին հեծմամբ կորըստեան՝ աներեւութիցն ժողովք • անլոյծ չղթայիւք նեղին՝ առաքելութիւնք դերաքրիստոսին :

ը • Ահա կարկառեմ մատամբք ձեռինս՝ պատուանագրութի՟ նշանիդ ՚ի ժամ գիշերիս, որ ոչ մթանաս խաւարաւ անգիտութե՟՝ ամենեւին տեսականութե՟, քանզի ՚ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես : Ընկալ զաղաչօղս վտանգաւոր գոհարան՝ ընդ պահպանութե՟ թեւոց հզօրիդ •

րիդ· փրկեա՛ 'ի ցնորից՝ եկամուտ աղտեղութեց· սուրբ արա զզգայարան հայելեաց՝ սրտիս նկատմանց· ամրացո՛ փայտիւ՛դ կենաց 'ի տիրական անրջոց· արեամբ քո սրսկեա՛ զշրջարկուն կայիցս· զհետս ելումտիցն՝ կաթուածով կենարար կողիդ զծագրեա՛· երդոցն պահպանարան՝ քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի· հանդէպ տեսութե աչացս ամբարձման՝ փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի· ընդ բարաւոր յարկիս՝ չարչարանաց քոց գործի հաստիցի· զծառոյդ օրհնութե՝ հաւատք յուսոյ իմոյ կախեսցի: Արդէն տէր սովաւ զսատակիչն հոգւոց· մտցէ անխափան՝ պաշտպանն լուսոյ· և ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս՝ և զբեռն պարտեացս թեթեւացո՛, զոր 'ի լռարանի մնացս ամփոփման մահճացս անկողնի՝ ուշաբերեալ զյուսահատութեան դառն պտղոցն՝ խոստովանիմ ամենադիտիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեցս:

Է· Հանգո՛ զվաստակեալս 'ի բազմածուփս աշխատութենէ· բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութիւն ընդ վշտացն· զհեծութիւն ընդ կարեացն· զանձկութիւն ընդ թշուառութեցն· զհառաչմունս ընդ խորտակմանցն· զբեկութիւն ընդ ապշութեանցն· զթմբրութիւն ընդ շրոտմանցն· զարբեցութիւն ընդ յիմարութեցն· զթերամտութիւն ընդ խելագարութեանցն· զսառումն սիրոյն, և զհրային ջերմութիւն աղուական ախտոյին , Օժանդակ լեր տկարութեան բազմատխուր տարտամութեան , բարեգործ աջովդ շնորհի • ձեռամբդ նորոգողի • մատամբդ կենսաբաշխի • փառօքդ մշտափայլի • յարակայութեամբդ անեղծի • երեսօքդ զուարթականի • խոկութեամբդ էիդ պաշտելի • բարձրութեամբդ երկրպագելի ։ Հատո՛ զչարաչար հեծութիւն՝ կորստականս խեղդման • զնորգիւտ չարին • զհին խարդախութիւն բանսարկուին • զօտար ազդեցմունս՝ 'ի մահ կրթողին • զանյարմարական երևոյթս՝ հանապազորդեան եղեռնագործին • զաւ այս հնարադրութեանն դժնդակ դիւին • զողքական բոցաշնչութիւն ձգօղ կախարդին ։ Պահեա՛ 'ի ահեղւոյ հանգստեան մեռօրէնակ այսր դադարման , յաներևոյթ մտածութեանց • 'ի մանաւոր սխալութեանց • 'ի մեծագոյն գայթագղութեանց • 'ի փոքրագոյն ոտնառութեանց • 'ի խաբեբայ չար ձանձրութեանց ։ Հեռացո՛ զանհանդէպ մտածութիւնն 'ի զգայութեանց ծառայից յանցաւորի • զկիրս բարկելիս • զչարս թշնամանելիս • զդիպուածս պատկառելիս • զհետս վրիպելիս • զպատիրս ձաղելիս • զխորհուրդս անգամնելիս • զաւելաբանութիւնս նշկահելիս ։ Անխախտ հոգւով և անշաղախ մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեա՛ , 'ի շնչմանէ հոգւոց • 'ի զարկմանէ բռնութեանց • 'ի բախմանէ փոթորկաց • 'ի յոստմանէ մրրկաց • 'ի յարձակմանէ գազանաց ։ 'Ի կափման աչացս՝ հայեցուած սրտիս մի՛ ստուերասցի , այլ զուարթացն պայծառացն վայելչացն՝ ընդ քեզ փայլեսցի՝ տ̅՛ր յ̅ս ք̅ս , լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ : Բանիւ քո սըրբեա՛ զպատսպարանս բազմականիս՝ 'ի խորամանկութե̅ց , 'ի զբաղմանց , 'ի քո ատելի յիշատակաց , 'ի վերնամարտ մտածմանց , 'ի քրէական մորոսութե̅ց , 'ի տերանենգ անշնորհութե̅ց , յաստուածընդդէմ հերձուածութե̅ց : Գնդիւք վերնոյնոցդ՝ վերակացու ինձ լիցին , պետութբ̅ք , իշխանութբ̅ք , զօրաւորօքն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց՝ ս̅բ ա̅ծութե̅դ · առաքեալքն՝ աւետեաց աւետարանաւն · մարգարէքն՝ կտակարանօքն · մաղթանք երջանկացն՝ 'ի կատարածի աւուրն ընծայեալ : Որովք նիրհեցից երկիւղիւ ըստ քեզ՝ արթմնութբ̅ · և զարթեայց շնորհօք քո՝ կրկին ուրախութբ̅ · եթէ վհատութեամբ ննջեցից , յարեայց դարձեալ հոգևորական բերկրութբ̅ · եթէ ընկողմնեցայց մեղանօք , կանգնեցայց վերստին զատեալ 'ի խղճէ անաղտ ամբծութեամբ :

Դ̅ · Լո՛ւր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հեծութեան՝ միայն բազմագութ , բարեխօսութբ̅ ս̅բ̅յ ա̅ծածնիդ · և ամենայն արդարոց , և նահատակաց ընտրելոց : Եւ քեզ փառք յամենեցունց՝ խմբովս գոչմամբ վերառաքեցել սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց՝ 'ի գովեստ հօր քո ա̅յ մերոյ , և հոգւոյդ ս̅բ̅յ բնաւից

Հաստողի և Նորոգողի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* * *

ʼԻ ծայրն երջանիկ բարեբաստութեան՝ ծածկարին խորհրդածութեան. ապաւինս եդեալ ընդ հերպարանս Թարգմանութեն:

ԲԱՆ. ՂԲ:

ա. Գոհանամ զքէն բարեգութ՝ միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի ա̅յ կենդանւոյ, այն ինչ զարթուցեալ՝ անձկութե̄ սիրոյ քո յիշատակի 'ի լրութեն հնչման՝ փայտից հրաւիրման: Որով բախեալ զձայնարձակուեցն զազդողարան, սթափեցաք կանգնեցաք, 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրինակս թմբրմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք 'ի ժամ պաշտաման օրհնաբանութեան, յանդիման լինել քեզ ուրախութբ̄՝ հանդէպ հաստուցմանս բեմի:

բ. Ահա փառք քեզ՝ անսահման անուն և անբովանդակելի զօրութիւն, որ այսքանեօք հնարաւորութեամբք՝ ընդ փըրկութե խնամ հոգացար. գոհաբանեալ անեղծ խնկութիւն, որ կերպարանեցեր հրաշիւք աստուածին զհանդերձելոցն նմանութին, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ՝ առ քունս անյարիր՝ սաստիկս որոտացեր: Որպէս թէ ընդ ծուլութես դանդաղութե՝ զյանդիմանու-

թե

թն խրատուդ խառնեցեր ․ 'ի հայրենիս սիրոյդ հեզութն՝ զուժգնութն ճոյթմանն յարեցեր ․ յընդոստ զարկուցած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրևեցեր ․ ոչ մեղմութբ մեղմական վանդիճնիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ոհաւորութբ՝ զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր ։ Ծնրադրական երկրպագութն ստեղծչին բոլորից , որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս՝ զօրինակ ահեղ բարբառոյն՝ մեծի աւուրն յարուէ ․ կենդանացուցեր 'ի դադարմանէ դժոխական անբանութէ ․ 'ի խնդիր ելեալ կոչեցեր զպակասամիտս՝ 'ի գինիդ ուրախութե ․ արարեր զոյն՝ լինել հանդերձիչ անարատ հարսինն՝ առ սէր փեսայիդ ․ երկուցեր փոքր այս խթանաւ՝ զապարասանին զվիթխարութի ․ լուծ ստոճար կըլթութե՝ ստամբակին ուսոյ՝ զոյս իր գործեցեր ․ վարապան վանիչ՝ չարախօսին կըզակացեդեալ կազմեցեր ։ Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութն մեծիդ տր ․ որ փոխարկեցեր զփայտին պարտիս՝ յազատուէ շնորհիդ կենաց ․ իմաստնացուցեր վերստին դարձեալ՝ զյիմարս ցնդեալ՝ հոգևորական հանճարովդ ․ կարկառ կամամբ՝ զանբժշկութիւն հարուածոց օձին՝ առանց մուացման միշտ թարգմանեցեր ․ ընդ երրորդութեդ գծագրութն զկայն երեքկին՝ իմաստակարին 'ի կատարածին

սովլիմբ կրկնեցեր ։

Դ ․ Պոլէսանեբբողից՝ բուռմամբ խնկոյ

վերառաքեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի սնոտապատիր կուսին բազմաստուածուէ՞ առաւել յաճախագունիւք որսայար զանձն իմ պարտաւոր 'ի քո երկրպագութիւն. խրոխտ և անհարկու նուէրեալ փայտին՝ զճշմարտութին քարոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճականաւ՝ զնոր աւետարանութեդ պատիւ: Սոյն ինքն աղաղակ բարձրութե գոչման սպառազինութեդ քո՝ արքայ պետութեց կայսերաց երկրի տր քո. Նշան խրախութե աւարտման հանդիսի մարտի քոյ՝ յն, յորում իմանալին փարաւոն կապել ըմբռնեցաւ, կափիչ հանապազորդեան՝ գլխոյ գագաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս այս տաշեցեալ: Սովաւ գումարին 'ի պատերազմի որդիք սիոնի՝ ընդդէմ աշխարհակալին խաւարի. տօն իմն մեծաւանդ կրթութե կարգեալ 'ի հեռուստ՝ այս դրօշուած լուղեալ՝ առանց հնանալոյ և կամ խափանման. Նշանակիչ ժամանակի ապագայից հատուցման՝ 'ի բացուստ անդր ծանուցմամբն. աղդակից հանդունաման կենացն փայտի՝ որ 'ի դրախտիդ նյ. կոչարան բարուոք հաւաքման փոյթ ընթացիւք՝ 'ի յարկն օրհնութե. պատկեր տեսակի անկոյն գիտութե՝ 'ի կարգ ընտրութե բարւոյն և չարի. յիշատակ մեծ տեառնագրութե յերեւս կերպիս հոգւովդ սրբով՝ զնշան խաչիդ. նախազեկոյց աւետամատոյց փառաց գալստեան՝ 'ի դըշխոյն պահեալ նը թագաւորիդ. յորդո-

րէ

րիչ քաջալերական՝ մաքրապարեցն խրախճանութե. անապատական սիրարկու՝ անձնահամբոյրն կցորդութեան՝ շքեղաշուք քաղցնծայ ամենածին կուսի Թագուհւոյ. յարդարիչ ծածուկ պճնութե, որ 'ի հոգին է վայելչութի. նմանութի պատգամին սինայ, որ 'ի տէրունեայն արտաքս առաքիւր. միշտ օրինորդ պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սովաւ փառազարդէր:

Դ. Գերագոյն քան զերկնքին փողն եղջերեայ՝ զբունութիւնն բելիարայ՝ սովաւ հարթեալ տապալեցեր. քարինս արձակեցեր պարսիւքս այսու փայտեայ՝ ընդդէմ գողիադու. գայլսոն նորոգ կառուցեր՝ վկայ ահարկու կործանմանն սատանայի. զ'ի խոր աճեցեալ արմատս մեղացն՝ մեքենայիւքս այսու խլեցեր. զմոռացեալ գործոյս իմ պարտիս՝ այսր երախտեօք ընդ իս կապեցեր: Զոր եթէ այլ իմն ձայն բանիւ ոյ անուանեմ նախապատուեմ էկաւորութեն՝ ոչ սխալեմ, քան թէ ճըշմարտեմ. 'ի տկար ամենայն այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութի գործոցդ յոյժ՝ առաւելապէս պատմեալ հռչակի. բիւրաւոր օգնականութիւս վերնապարգեւս և քոյինատուրս 'ի յայսմ անպատապար ապաւինութէ՝ երկրականաց զարմանագրեցեր:

Ե. Խոստովանեալ անուանդ անքննելին՝ մարդասիրլիդ բարեխնամութե, խընկեալ խորհրդով սրբամանութե՝ անգըծագրելի կերպարան լուսոյ. որ կրկնաձիր նշանաւս այսու՝ նետս արձակեցեր հեռաձիգս ձայնատրականս՝ օդաչուս և յարմարաթռիչս՝ ունողս յինքեան հոգւի կենդանի․ որով անսխալ հանդիպմամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին գազանութեան՝ յաւէտ կործանմամբ 'ի յետս ընկճեցեր ։ Իբր զպատնէշս ամրաբերձ բերդամրութե՟՝ կանգնաւորս անվայրարկելիս՝ աստուաս անմատնօր զկատեալ դիպուածս այս փայտի զարկման՝ հրեշտակ կամարար՝ թշնամւոյն ներհակ վերյուղարկեցեր ։ Բանիւ հրամանի մեծիդ ակնարկութե՟՝ օծութի՟ շնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր խեթկիչ մոլի գոռոզին, իբր զխաչիդ փրկանակ յեռանեալ սրեցեր ։ 'Ի մեծ ազդմանէ այսր աղաղակի դեր քան 'ի վերինոցն՝ քանդեալ վերացաւ դրանդն ամրութե՟ կամաց՝ անվայելուչ և ամեներկչոտ խենեշութեան կարճամտին, ընդ հրէական սրտին իմատից՝ և սատոնէրական տանն կործանութեան ։

Դ․ Փառաբանութիւն քեզ վերընծայեմ՝ անմահ թագաւոր․ զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր՝ աղաչեմ զքեզ՝ կրկին ներգործեա՛ ։ Անցուցեր սովահերքեալ առ 'ի մէնջ զխէթ դժնդակ խորամանկութեան բանսարկուին․ զատժանական տապ մեղաց․ զհողմն դառնութե՟ շնչման խաբողին․ զսարր արկածից մահու երկիւղի․ զառ 'ի յօդից ցնդմանէ ժխասկար բերմունս տխրեցուցիչս․ զայսախտոն հեծեծութեան թալկացուցիչս : Յորժամ վերստին քոյինազէն հեծանաւս՝ օժանդակեալ թեւօք նշանիդ՝ զամպս հրածինս . զորոտմանս կարկտաբերս . զցաւագին ցոլմունս հրախաւար կեղծաւորութեան փչման՝ բազմոտանի վիշապին . զսուր սատակման , զճակատամարտ դիմեցման , զյարուցելոցն ՚ի վերայ վայրենական խորհրդոց , զդիւային կաքաւս : Յորժամ զարհուրեն յայսմ իրէ փոքունէ՝ անցի առնեալ մեծաւ դողութբ̃ , կիրթ իմն ծանօթութբ̃ յայտնի դիտացեալ , թէ յայս ազդձայնի՝ յառնէ տ̃ր ՚ի դատաստան : Եւ խրախուսին յոգի արութբ̃՝ զրահեալ պընտապէս սուսերաւ հոգւոյն՝ ա̃ծարեալ մարտիկք ամենայն՝ ՚ի ձեւ կանոնի այսր յիշատակի , որ զամենափորձ հրոյն ընտրուէ՝ գոչմամբ անկերպագրելեաւ՝ համօրէն ազանց .քարոզէ ՚ի յօրինաւոր ապարէզ՝ երջանկաբար նահատակուն :

◆

Է . Հարաւ ահա փող աւագափող , համբարձաւ սովաւ ա̃ծ օրհնութբ̃ . պատմեցաւ սովիմբ ա̃մ երկրի . հնչեաց ՚ի լսելիս բաժանման հեթանոսաց . ձայն պահապանաց մեծին զօրացաւ , ըստ բանին եսայեայ , և ՚ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցուք : Ցնդեցան ջրոյն առակաւ՝ ՚ի ձեռն սորին՝ թշնամիք խաչին . անպատուեցաւ ճաշակն պտղոյ առաջին փայտին . տօնեցաւ նիւթս այս խորհրդական՝ կենաց անուանեալ . անարգեցաւ երկաթ՝ առ ՚ի պէտս պատերազմի . իբր զորբուն տ̃ն՝ ՚ի

սանձս

սանձա երիվարին մեծին նշանի՝ այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ. ամփոփեցաւ օծեալս ցուպով հովուին երկնայնոյ՝ սուր իշխանութե մարդկային ձեռին: Ո՛չ գըծեաց 'ի քար տաճարին մուրճ ինչ գործողի. իսկ յածակերտս խորան՝ փայտս այս նուիրեալ ընդ խաչին թևոց սլացեալ զօրէ: Ո՛չ. 'ի գլուխս ամենոյն, և կամ յեօթնեկս եօթներարդս յոբելինիցն՝ յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծայրս տիեզերաց՝ և ընդ ծիրս եզերաց՝ 'ի ծոցս ջուրց բազմութե ծովուց և կըղզեաց նոցա՝ յանձախ սաստկութբ անարգել ճայթմամբ իմն ածայնով հնչեցեալ աւետաբանէ: Կոտորեցան սուսերք սատակողին՝ այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխաձևեալ 'ի խոփս և 'ի մանկաղս:

Է. Ո՛չ արձագանք արձանաց 'ի խորոց ինչ գանչութէ՝ խլասս առաքեցեալ, և ո՛չ գթնդակայլէս, ըստ իմաստակի ումեմն օտարի, զօդ վիրաւորեալ. ո՛չ անախորժ արութբ ընդ ունկն մտեալ, և ո՛չ զամանուղղոյն անկամակութբ չար թնդեցուցեալ, ո՛չ ոսկերցն փուշ խրտուցման՝ յանձն բուսուցեալ, և ո՛չ մտացն այլայլ ապշութե առաջի արկեալ. ո՛չ զանդակնիւթոյ պղնձոյ գանդաշեցուցեալ, և ո՛չ քար ընդ վիրգս սալի՝ առանց քաղցրութե առնոյն զարկուցեալ: Պարփակարան անխորտակելի նորոյս սխոյին. մի սա՛ 'ի ապաստացն կազմուածոց արարչականդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից՝ ընդ ղեւտականացն՝ զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց. Նոր գործի շնորհի նուագարանաց աւետարանին՝ զարթուցիչ հոգւոյն մ̃յ առ մեզ, քան առ օրհնաբանութե̃ սաղմոսարանին՝ ՚ի վերայ եղիսէին: Սկզբնապար նախընթացութ̃ե աղէյարմար ջութակաց՝ բարետաւիղ ողբերգարկութե̃ց՝ բարացուցական բամբռան բառայի բարառնութե̃ց. սրինկ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ հնոյն փոխանորդութե̃բ. ո́չ հեթանոսօրէն ուրուաձայն հնչման, և կամ հրէաբար խակախորհութե̃, զոր մարգարէն տերամբ ազդեցոյց՝ ՚ի բա́ց արա յինէն. այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պատահարաց:

Թ. Եւ արդ՝ ընկա́լ օրհնութե̃ յարդեալ գովեստիւ զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութի և քո փառաւորութի̃. քո պաշտօն՝ և իմ գոհութի̃. անաղանդ արուեստ բարձրութե̃՝ արարչական փառաւորութեանդ: Մտցէ ձայնդ այդ ա̃ծաբեալ՝ ընդ պատուաստյօդիցս շաղկապութե̃, հանել ՚ի հոգւոյս զպատիրս դիւաց՝ և զմուտս անիծից՝ և մեղաց ապականութե̃: Արասցես լինել զայս իր՝ նշանակիչ քնար ջահաւորական՝ անջրելինամակ՝

Ջատագով անխափանական տ՟րունական տնօրինականացդ : Ահա պարգևեա՛ սովաւ՝ բա՛րեգութ, աղաչեմ հզօ՛ր՝ կրկին մեզ շնորհեա՛ պահպանութ՟ն ՚ի դիմամարտից՝ յաներևոյթ և յերևելի : Ընձեռեա՛ մեզ ձե՛ռն ամենայնի, որ բանաս և մատուցանես պատրաստաբար բաշխմամբ ՚ի մասունս բազմապիսիս, օդոց քաղցրութ՟ն, անձրևաց շահեկանութ՟ն : Պակասեսցին քոյով հրամանաւ այսու բարբառով՝ հողմ տապախառն, շնչումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախուե՟ց · սովաւ խափանեսցին ամ՟ դիմամարտութ՟իք զինուորութ՟եց դժնեայ մատնչին · հալեսցին հատցին և մեռցին յերջանիկ ձայնէ՝ օծեալս այս փայտէ՝ որդն և ուտիչ, և ամ՟ նմանք սոցին, որ ՚ի մերոց մեղաց զօրացեալ՝ ընդ մեզ պատերազմին : Արժանացո՛ մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյդ ՚ի քեզ մեծ պաշտպանութիւն՝ ստեղծի՛չ բոլորից տէր արարածոց, զայս ծառ սաբեկայ, որ ունի կախեալ ՚ի դիտակ ոստոցն՝ զաւանդ մ՟բ նորոգ՝ այժմու փրկութ՟ես ծաղկեալ քև՝ ք՟ս, ՚ի պտուղ կենաց անմահականաց : Փախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բարեզեկոյց ձայնարձակութ՟բ՝ նէսարք ներհակք ստապատիրն ստորնականաց՝ բազմաձեռնեան խարդաւանողաց : Մերժեսցին սովաւ ՚ի յանդոց՝ պտղատոհմական արօրադրութ՟եց մերոց սահմանաց՝ և ՚ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք վատնիչք , և հոյլք մորմոքեցուցիչք · կարեսցին սովաւ՝ յաւելուածք կրկնապատգեղ և անվայելուչ պատահմանց՝ 'ի հնարից չարին 'ի մեզ յայտնելոց · իսկապէս վանեսցի սովաւ , որք յերկաքանչիւրոց բնութեանցս մերոց վերբերէին ինքնաստեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց , յումեմն օտարին վրիպակ մտածմունս , և յայլումն գարշ գոյութիւնք՝ անմաքուր զեռնոցն ապականողաց : Փրկեա՛ տէ՛ր յո՛ աղաչեմ զքեզ , փրկեա՛ բարերար · կարկառեա՛ առ իս զաջդ ամենագով , և օգնեա՛ ինձ սովաւ՝ զերծո՛ զիս յամենեցունց ընդդիմացողաց :

Ժ. Սառնեսցի մխացի հրամանաւ քո 'ի սոյն՝ առ 'ի փոխարկել զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի քոյին բանիդ արդիւնաւորութե · հարցես մխեսցես զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց՝ 'ի սիրտս ծորեալս և յոգիս լքեալս , և հաստատեսցես կազմեալ պնդապէս՝ 'ի կայումն ուժիդ անսասանելի · իսկ զանընդոստն կակղացուսցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեզութե՝ մեծաւանդ քո պատուիրանիդ , որպէս զպօղոսն և զմատթէոսն : Յիշեցո՛ մարդասէր պատուեալս այս փայտին՝ զերախտիս խաչիդ , որով զանճառուն ներգործեցեր · բարձ յինէն՝ կեցուցիչ , զվտանգ պարտեացս՝ պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տապանակիդ : Բացցին կամօք քո հզօր՝ 'ի յայս ձայն կենաց՝

նայ՝ լսելիք սրտից յամառեցելոց · լուիցեն յայս մեծի բարութե՟ քումդ ակնարկութեան՝ ականջք խլից · պարզեսցին 'ի ձեռն սորին՝ լեզուք համրացելոց · լուսաւորեսցին 'ի սոյն՝ տեսարանք աչաց, հայել մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայլաբար · զղջասցին դարձցին կազդուրեալ կամք յափրացելոց · ընձեռեալ տացես տ՟ր տագնապելոյս անձրև արտասուաց ։ Եղիցի քև սա մեզ՝ լուր ցնծութե՟ · ձայն ուրախութե՟ · բարբառ բերկրութե՟ · նուագ հանգստեան · նիւթ երանութե՟ · պատճառ փրկութե՟ · առիթ քաւութե՟ · մերժումն վշտաց · խզումն խեղդմանց · ընդարձակութի՟ նեղուե՟ց · համառօտումն խեթմանց · հալածումն հեծութե՟ց · թեթևութի՟ թառաչմանց · յապահովութի՟ կարեաց · կարգադրութի՟ կրից · սփոփութի՟ վհատմանց · բժշկութի՟ ցաւոց · տևականութի՟ հեղգութե՟ց · ուշադրութիւն անտեսից ։

ժա. 'Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ սանդուղ երկնաշու, առ հայր քո օրհնաբան ահաւոր անուն՝ ձգեալ մատուսցես՝ բարեբար, հոգւոյդ առաջնորդութ՟ մխանալ 'ի քեզ անընդմիջելի · որով և ս՟բյ միոյ՝ միայնոյ և միանական տ՟րութեդ՝ և անեղծ արարչութեդ՝ 'ի կենդանեաց և յանշնչականաց հաստելոց՝ վայելչական գոհութ՟ փառք և իշխանութի՟ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Վերստին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ։

ԲԱՆ. ՂԳ ։

Աղօթք Թարգմանօրէն ձայն սրբալուսոյ Խաչոյն մեռանի ։

ՍՈ՛ւրբ ահաւոր անուն՝ բարձրեալ անպատում. անձկութ̅ն փափաք յարախորժելի. 'ի սրբերգենիցն փառաւորողաց միշտ սրբաբանեալ՝ բնակեալդ 'ի սրբում. լի և ամենազեղուն բարութ̅բ առատաձեռն աննուաղելի. լոյս բարի, և ծագումն գովելի. երկրպագեալ փառաւորելի, ահեղ և անջնջելի. ամէն և յամենայնում ։ Այսու բանի՛ւ դաշամբք յուսոյ՝ ուխտ ընդ քեզ միութ̅ե՝ հզօր, այր, ամէն, ալէլուիայ. գովեալ Թագաւոր հանուրց. ա̅ծ բոլորից. ստեղծիչ գոյից. և տ̅ր կամարար. միայն առիթ պատճառաւորաց. փրկիչ և օծեալ մըշտապաշտելի ։

բ̅. Ուստի մեկնապէս Թարգմանեալ 'ի մեզ զայս գանձ անվաճառ՝ և հարստութ̅ն անփոխադրելի՝ յո̅ քո̅ արքայ երկնաւոր. տրում գողութ̅բ մեծաւ ապաւեն անմահականայն ահեղից լուսաբերան բոցաշընչութիւք , կրկնեալ քեզ յօժարութբ՟ 'ի հաճութենէ անխոտոր մտաց՝ ծունր գոհութե՟ · ստեղծօղ էութեանց , որ են 'ի տեսման և 'ի ծածկութեան : Որ եսդ և էիր միայն բովանդակ՝ ամենեքին անպակասելն , ասեր զմերս խոկայլես համայն , զի 'ի լրումն քումդ լցուցես · օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յաւէտ միշտ անքննութբ՟ ողորմութբ՟ մեզ 'ի փրկութե՟ , 'ի փառս և 'ի գովեստ անճառ բարձրութե՟՝ ահաւորիդ բարերարութեան : Սկըզբնաձիր օծմանս շնորհի՝ մեծախորհուրդ հրաշագործութե՟ · քանզի լոյս քո մեզ ծանուցեալ՝ ճառագայթ անհաս · ծագումն անսահման · արեգակն անաշառափիռ · սաղ սահմանից՝ երկակշիռ տարրութեանց · ճրագ ոսկի՝ և լոյս հեռամանց , որով 'ի ցոյցս խմաստից եկեալ տեսութբ՟՝ բանիս այս յարմարութեան , տօնեմք պարերգութբ՟ հրեշտակօրէն յըստակամասաբար՝ փրկչավայելուչ կնդրկախնկեալ զպարգևաբաշխ առատատրութե՟ ամենախնամողիդ՝ յիւղ զուարթ անբիծ գաւանման : Քանզի 'ի սկզբան անդ՝ կալոեցելոյ ողորմելի տխրականութեամբ 'ի փշմանէ բարձրագոյն շնորհին՝ հայրն իմ սկըզբնաստեղծ՝ և հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ 'ի մահ գրաւեցաւ · կապեալ ընդ եղծման ապականութեան անզերծ հանգուցիւ , 'ի ծառոյն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամենակործան գլորման , հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ . իսկ դու գթած տ՟ր ողորմութեան՝ քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր , և զի չերցն ակնկալութ՟բ չեկաց յոր ինչ էրն , որով անկարողանայր իսկապէս տեսանել 'ի լոյսն վերին անմատոյց գերակայութ՟ե անսահմանելւոյդ , ոչ մշտափայլ յարակայ վառմամբ անպղօտելի տարածանեցեր . այլ գիշերայնոյն ռամալպիրծ մթին առհաւրաց՝ ձեռնկալութ՟ի ձիթոյ՝ շարամանութ՟բ նիւթոյ պատրուկի ընդ նոյն զանգեղոյ՝ յօրինակ քո անախտ միութ՟բ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր . զի որ 'ի ստուերս մահու տարագրեալ գտաք՝ կանխակորուստ տնկոյն ապարանից ,'ի պատճառ իրին՝ ազգակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորու՟ե . որպէս և փայտին մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ , առակաւ մեծի խորհրդոյն՝ միաւորեալ 'ի փայտն կենաց :

Գ. Եւ արդ՝ որպէս ոչ է որ լումամբ՝ առանց գիշերոյ . և ոչ անօրէնութիւն յարկէ՝ առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ . քանզի իբր օրինակն հասարակային ոչ նաճիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութիւն լուսաւոր առնէ , նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ շնորհին ընտրութ՟բ անիմանալեաւ՝ զաներևոյթ հոգիս միութ՟բ 'ի մեզ անտեսիդ՝ հրաշափառապէս այս֊

ծառայուցանէ : Զի ոչ յիշումն լուսարանին որք աւազանին՝ ընծայմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատամք առնուլ սրբութիւն , սոյնպէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութիւն առնումք և 'ի սոյն՝ համարիմք ունել տմի՛ աներկմտելի : Եւ ոչ հրամանդ տէրունական օրհնաբանելն՝ զքաւութիւն մեղաց ախտացելոցն նախավճռուէիր . իսկ ո՛չ հաւատ ունողացն առ այն բժշկութիւն հրաշալի՝ յանդիմանակաց անսուտ առ նմին մարմնոյն տեսակի՝ հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէիր , սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս . իսկ զներքին մարդս աներևակ՝ ծածկապէս մաքրեալ նոր կենդանածնէ :

ղ . Պատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ՝ արարչիդ երկնի . քանզի որք զիւղոյն կրեցին օգտութիւն՝ որ յողորմութենէն շահընծայութիւն , և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ , թէ ողորմած եմ ես տէր . քանզի ոչ սիրոյն անուան կցորդիս աստուած , նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ անտեսութեանն որ առ մեզ : Վեհագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութիւն՝ այս ճարպ պարարտութեան՝ երկրի թանձրութեան՝ հողանիւթ գոյականութեան . զի ոչ սոյն մասն 'ի կենդանւոյն՝ ո՛չ 'ի կերակուր հրամայիւր անդ՝ ըստ օրինին , այլ արարչութեդ բոլորովին պատուով որոշիւր , նոյն նմանութիւն

Եւ և աստանօր՝ իբր զզօրութին տն մատչելի լոյս աւանդ՝ հաճութեան էից այ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարազատ զուգաճանապարհ, արարողից պահեալ և ուխտեալ · քանզի ոչ շունչ արեան՝ և ոչ ճենճեր ինչ զոհարթութեն՝ օրինակ հոգւոյս իմոյ և կարոյս՝ ընդ անդամաթիւս մնոյն ծախի, այլ արքայութեդ վերնում վիճակի՝ տրունական բաղմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի ։

Է · Ո՛չ էր մատչելի 'ի նախագահութիւն արու անդրանիկ՝ դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր · ոչ քահանայութեն 'ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր ։ Յակոբ զքարն պատկեր վիմին՝ 'ի խորհուրդ երկար՝ խորանին ընտրութեն՝ օծմամբն տպաւորեալ կերպացոյց · առ որ զկնքումն անճառ բարձրելոյդ՝ տեսութե սանդղոյն յարմարութեան, և զիս 'ի վեր տանելոյն անդուլեկցութեն, զարձանն իւղեալ կառոյց նպատակ՝ 'ի ցոյցս ապանեացն յիշատակի ։ Ահարոնեան քահանայութեն պայծառութի՝ հրամանաւ մեծից այ՝ օծմամբն ճոխանայր · որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն զեղեալ՝ դերափառ իւղոյն՝ զարմանազան կենդանագրութեն, ըստ սաղմոսողին, զփառաց նախնւոյն առակէր զանդրադարձուն, և զշնորհից կենաց սրբութեն՝ ընդ մեզ խառնութի ։ Թագաւորութի ոչ էր պանծալի անդա-

նոր

նօր պատկերաւն ստեղծագործիդ , եթէ ոչ եղջերբ իւղոյն օրհնութեան ձեռնադրեալ՝ պսակաւ պճնութե՟ թագին՝ յանուն քո քն՟ գլուխ ամբառնայր : Եւ զխ՟րդ զնախնին վեհից մոռացայ՝ զծառայն մեծիդ՝ և զկերպարանն անպարագրելւոյդ • ոչ ահա մելքիսեդեկ՝ յօրինակ ճշմարտիդ ահաւորուե՟՝ ՚ի ձիթաստանեաց լերինն , ուր յետոյ ոտք մարմնացելոյդ ա՟յ զետեղեալ կային , ՚ի վերնոյ անալի հրեշտակաց՝ ՚ի պտղոց տեղւոյն իւղեցաւ • ուստի չիրմի սկզբնահօրն պաշտպան՝ եպիսկոպոսական արքայապատիւ՟ ճոխուբ՟՝ ՚ի քէն հանդերձեալ նստաւ , մինչև յայտնեցար երևեալ լրմամբ՝ համայն իսկութե՟ ադամայնին կենագործութեդ :

Դ. Եւ արդ՝ քանզի քո են շնորհք , և քեզ վայել են գոհաբանութի՟ք՝ օրհնաբանեալ որդի ա՟յ , դու ինքն յարմարեա՛ բարենըշմար տպաւորուբ՟ զաղաչանս իւղաւորականս՝ խնկապատարս՝ զմռսայքիս՝ պատճառ քեզ փառաց , և ինձ մեղապարտիս առիթ բժշկութե՟ • մաստ՛ տէր յ՟ն , վիրացս աններևութեից՝ զայս ձէթ լուսանիւթ • և արկ ՚ի սոյն խարանս խոցոյ մահացուի՝ զկաթուած օրհնութե՟ իւղոյդ փրկուե՟՝ անապական գինեաւ սիրոյդ , միութբ՟ արարչականաւ պատապարեալ պատանօք խնամոց • զի յիշատակարանս թարգմանօրէնս բանիս մաղթանաց՝ վայելչական ի՟մ յարմարութբ՟՝ ՚ի թևս հոգւոյդ զկարգիւր գայցէ : ՚Ի վերայ դաւթի՝ հոգի քո

բարձ

բարձրեալ՝ յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութ̅ն նուիրեցաւ : Սաւուղ յայր յայլ՝ և 'ի մարգարէս ոմանս անտուստ իսկ գրեցաւ, յորժամ օծումն ժամանեցաւ դագաթան նորին : Արքայութ̅ին առընտանեայց՝ օծմամբն գրաւեալ՝ մատուցաւ 'ի կցորդութիւն տանն իսրայէլի : Կայսերս ոմանս նշանաւորս վեհս և երևելիս՝ 'ի խժականաց բարբարոս ազգաց՝ իւղս այս կենսացնցուղ ցօղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ մ̅յ : Բանն որ առ կիւրոս երկնաւորին պատուճասխրութեան՝ զօծեալն ձայն՝ նմին մեծ վարկաւ : Զայն սաղմոսողին՝ դեր քան զմարգարէութիւն՝ զօծեալն անուն նախայարմարեաց, կանոնափակ ընդմիջարկութ̅ե պատուէր աւանդեալ, մի մերձենայք, և մի մեղանչէք : Առ հեղխաս առաքելութիւն ա̅ծային հրամանատուէն, նշանակ իմն հանելոյ 'ի պաշտամանէ անտի բահաղու, զօծելութ̅ն 'ի քորեբ ազդեաց յէուայ և ազայէլի : Իւղ թափեալ անուն փեսայիդ՝ 'ի հոգելից բանից իմաստնոյն վերավկայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ․ ո̅ղ զի հոգին՝ մ̅յ յաւէտ պատկեր և նշանակիչ, զի փոքուս զմեծդ կերպադրութ̅ն քև նկարագրեալ՝ ընդ քեզ միասցուք առմամբ քո շնորհիդ :

Է․ Իւ զի՞ ևս երկարս՝ պատուճածօրէնս՝ բացականագոյնս՝ գծագրականս և առակաւորս շարագրեցից առաջին վերնոյդ և

ահա-

ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիս. տ՟րդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի՝ 'ի յօծմանէ անտի սկսար քարոզել զաւետարանն արքայութ՟ե. վըկայեալ անտուստ 'ի յոհաննէ՝ օծեալ և գառն ա՟յ՝ բարձող մեղաց աշխարհի: Զի թէպէտ ընդ օծմանն օրհնութ՟ե՝ հոգին էր քեզ խնկաբար լոմամբ, և ա՟ծութեան խառնութիւն բովանդակապէս, այլ անուանն պաշտի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս ազդելոյ 'ի սբ՟ն. զի զըատրկութիւն ադամեան մարմնոյն՝ մեծանալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես: Բացեալ զառածս մարդաբնութ՟ե եսայեայ՝ դու ինքն ա՟ծութիդ մարդացեալ՝ ընթերցար, հաւատարիմ առնել զբան ծառայից քոց՝ տէ՛ր. և իբրև ծանուցեալ եղեր օծութ՟բն 'ի կարգ անդ բանին, թէ հոգի տ՟ն 'ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա փակեցեր 'ի հանդիսափառն օծելութ՟ե՝ զորքանունի երկաքանչիւրոցն յայտ արարեալ խորոցասահմանի՝ ընդարձակ հեռաւորութ՟ք մեծաւ կնքեցեր, զմերս՝ կաթուածով ինչ շնորհազարդեալ, և զքոյդ՝ իսկութեամբ ընդ հօր՝ և ընդ հոգւոյդ հաւասարութ՟ք թարգմանեալ: 'Ի նախածանօթ մերակերպութ՟ն՝ պանծալի իմ՟ն գովեստի՛ օծեա՛լն կոչմամբ՝ 'ի հրեշտակացդ փառաւորողաց՝ արարածոց երկրի ծանուցար: Զոր մարգարէն կանխաւ գուշակեաց զ'ի յորդանան, և յընտրեալն լեառն թաբորական՝

հայրենի ձայնիդ եկաւորութե̃ , թէ որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր ։ Զոր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ՝ առ 'ի զառեալդ ձեռնադրելոյ , օծ զքեզ ա̃ծ՝ ա̃ծ քո իւղով ուրախութե̃ ։

Ը̃ . Հոգի երեսաց մերոց տ̃ր ք̃ս . որ է օծեալ անուանդ իսկոյն, որով զփչումն կենդանութե̃ 'ի դէմս մեր լոյս՝ բարերարութե̃դ քո ազդեցեր . իմաստութբ̃ ումեմն երջանկի՝ մարդասիրութե̃ խոստովանելի , ասելով առ ոմն , թէ եդ վկայութե̃ առաջի տ̃ն օծելոյն . զնոր աւետեացս վըկայելով, թէ կօշիկս անգամ ոչ առի յա̃մ մնեղեաց ։ Երգոցն երգ՝ իւղեփեցական գինի՝ զաստուծով ծանուցեալ զխորհուրդն՝ 'ի գովեստ հարսին տ̃բ եկեղեցւոյս՝ զըմուռս առաքինութե̃ հանդերձ ա̃մ առաքին իւղովն . և ես զըմուռս և կնդրուկ մաքրութե̃ վարուց ա̃մ փոշեաց անուշից՝ իւղովքն զանգեալ՝ անդստին և այսր յառաջաբերեաց ։ Դանիէլ զկենսատու մահու քո՝ ք̃ս թագաւոր երկնի ,'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անոճանագրեալ վկայեաց յայտնի , թէ զկնի վաթսուն և ինն եօթներորդացն՝ սպանցի օծեալն , և օծեալ սաւաշնորդ զքեզ յորջորջեաց ։ Ծրագակիր աշտանակն զաքարիայ ազդօվայ՝ որ 'ի բարեքեայ՝ իւղոյն բարեբաշխ բացատրութբ̃՝ 'ի մասունս եօթանց առաջադրուեց գնդեցն վառելոց՝ 'ի ջահէ անոփ զօրութբ̃ անեկամոսաբար

վե

զինձակաւորեալ , զ՚ի քոյդ լուսէ ՚ի մեզ փրկութե՟ն և օծելութե՟ն գերաբնագոյնս նախազեկուցեր ։ Զոր ըստ օրինին անստուար գուշակմամբ ՚ի խորանին որ ՚ի տաճարին՝ ամէնընդել լինի կրթութ՟բ սովորաբար մատուցեալ լինէր , պանիք բաղարջընծայք , և նաշիհք՝ իւղովք խառնեցեալք , և զուարակք եզանց իւղարկեալք , և տիրական անուամբ ձայնեցեալք , և հաւուց ոմանց թաթաւմամբ յազգակից ճարպին ՚ի յարիւն , այսր խորհրդոյ՝ առաձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ՝ միածնին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ Այ՟ միայն զու օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնութ՟բ համայն էութ՟բ՝ իսկապէս լըրմամբ ամ՟ի անպակասելի ։

Թ. Եւ զի՞ ևս իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի , և ոչ ճաշակել զքեզ՝ քաղցրութ՟ե ․ իմանալ քև զայս՝ թէ զի՞նչ իցէ իւղն , և թէ ո՞չ զախտութե՟ն ՚ի փայտն պարտեաց՝ սովիմբ բժշկեալ , ըստ սաղմոսողին , զուարթ գործեսցես ։ Եւ զի՞նչ սպարատութե՟ն , եթէ ո՞չ զկերակուրն մահու՝ սովաւ մոռասցուք լցեալ ՚ի սմանէ ։ Եւ զի՞նչ օծութե՟ն , եթէ ո՞չ զմոխրոյն թշուառ տեսութե՟ն՝ ՚ի ձեռն սորին փոխարկեսցուք ՚ի պայծառութ՟ե յաւէժ ուրախութ՟ե ․ անուամբ քո փրկեալ յոգի զօրութ՟ե՝ հօր անուանեսցուք ։ Եւ զի՞նչ արդեօք մարգարէին հոգևոր ըղձականութ՟ե ամենատենչ բաղձանացն իցէ իմանալ ․

որոյ ծերութին աւանկի 'ի ձեռն պարարտութե, և կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբարձութե, եթէ ոչ՝ զհին խարդախութեն սգոյն սաստկութե 'ի մահ կործանմանն՝ կենդանագործեալ դեղովս այս կենաց՝ պատսպարեալ օժանդակեսցես։ Եւ զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութի ; եթէ ոչ՝ 'ի մէջ իմն անյուսութեան մեղացն միգի և կռապաշտութեն խաւարի՝ կերպակցապէս միութ 'ի յիս եմմանուէլ։ Եւ կամ զի՞նչ մարգարէն ածարբանեալ 'ի սփոփանս զուարթարարս օրհնութե՝ նշանակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ, օծցին իւղով 'ի մրրոյ պարզելոյ. և կամ իմաստունն՝ 'ի գլխոյ հարսինն՝ ասէ օրէորդացն, հաստատեսջիք զնս իւղով, և գեղեցկազարդ խնծորով յարկեալ ծածկեսջիք, և 'ի պարտէզ իւղենեաց տածեալ գրգեսջիք, եթէ ոչ՝ այսր ահա ընտրական նիւթիւ՝ հոգւովդ քո լցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք զանխիմանալիդ 'ի մեզ բարձրութե գոլեալ։ Եւ արդ քեզ միայն՝ խնամակալ, պատճառ բարի բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս՝ երիկամանցս գործակցութք՝ սրտիս հեծութք՝ լեզուիս և շրթանցս ձայնարկութք, լուր ողորմութք տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս. շնորհաւորեալ այսու պարգեւօք՝ գոհաբանութի քեզ վերընծայեմ՝ հզօր ահաւոր բարձրեալ անքննին, անփակ փափաքմամբ միշտ համբուրեսցեալ, սուրբ

սուրբ՝

սո՛ւրբ՝ և միայն մի՛շտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութ՟բ: Ընձեռեա՛ առաւել բարերարութ՟ն իսպառ վրիպելոյս. տո՛ւր յոյս քաղցրութ՟ե՝ ոչ մասին միոյ մատուցման լուսոյ՝ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել քև բա՛րի զնրբուն ծածուկ խորհրդոյս՝ դրդութ՟ն խառնեալ ընդ աղերս՝ առել ընդ դաւթի, ընկալայք ա՟ծ զողորմութ՟ն քո, և զծածուկս գաղտնեացդ անտեսից՝ իմաստութ՟բ քով յայտնի արարեր:

Ժ. Եւ արդ՝ մեծութ՟ն քեզ՝ ամենակալ առատաձեռն անմոռացելի՝ ամենափոյթ առ ՚ի գթութիւն՝ մշտայօժար ՚ի բժշկութ՟ն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագլուտ ընտանի նիւթոյս՝ ըզհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութ՟ե: Քանզի զոր երկին ա՟մ բարձանց՝ երկրիս լայնութեամբ՝ և անդնդոց ներքնոց խորութ՟բ՝ ծովուց բազմութ՟բ՝ ոչ զօրէ տանել, այլ իբր զդոյզն ՚ի մեծէ բերի, ՚ի փոքր դոյս տեսականեցեր զօրութ՟բ՝ սահմանեալ ճշմարտապէս անհըրապուրելի. զի մի՛ նորոգ իմն երևելով յայլ էութ՟է՝ առ այս հարևանցի երևականութիւն ինչ վարկանիցի, վիրաւորել՝ քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս միտաց: Քանզի ո՟չ մարմին՝ քեզ հաւատապէս՝ օրհնաբանեա՛լ որդի ա՟յ, իսկութ՟ն և ոչ օրինակ՝ ՚ի յարդեանցն ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ՝ զարիւն խաղողոյ, և արդանդկենաց հոգևոր ծննդեանն՝ զառատութե՟ն ջուրց յոլովու՟ն , նոյնպէս և զհոգի անմահիդ փչման՝ սովաւ և 'ի սոյն արդիւնաւորեցեր · երկունք կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկեղոյն՝ և ոչ հեթանոսութե՟ է փոխարկութե՟ն , որպէս ոչ տեանադրուե՟ն խաչական փայտի ինչ երկրորդուե՟ , նստեկոյս յերկրի խաւարի՝ ըստ նմանութե՟ քո տէր՝ ծագեցեր : Քանզի յայս կերպարան շնորհի՝ զանպակաս ըղբուե՟ն անհասիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր , զի մի անանկն կարօտացի՝ և մի ընչեղն բարձրամտեսցէ , ըստ օդոյ հաւասար բաշխման , և լուսոյ արեգական տարածման , և ջրական վտակաց զեղման · զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամասնութեամբ՝ փոքունցն առաւել , քան մեծամեծացն :

ժա՟ · Իսկ այս նիւթոյ տեսաւորուե՟ն խարին խորհրդոյ՝ և 'ի բնուստ անտուստ հրաշապէս ունի զթարգմանութի՟ն · ոչ՟ զի ոչ երկմիտ ինչ շութափութե՟ անհաստատապէս զտեղի փոխէ , և ոչ նենգողաբար զբնակութի՟ն ինքեան լքանէ · քանզի ոչ վերջնականօք անձառովք հերքի , և ոչ յընդդիմակցէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ : Վ՟ զի որպէս պատահումն գունոյ յէութե՟ն մարմնոյ՝ անփոփոխ իմն և անհրաժեշտ , որ գոլով գոյացուցանէ՝ և ոչ գոլով ապականէ , այսպիսեաւ իմն յարմարութե՟՝ իւղոյս զօրուե՟ն անդստին 'ի յիւրոց անտի կերպարան զառեալն ունողի՝ միասնական զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր՝ տ՟ր յ՟ս ք՟ս, ընդ իրին գոյի՝ և զօրինակն լծակցելովն. քանզի զանիմանալին տեսութեան աչաց և մտաց ըղձից՝ 'ի դէմս բերեալ կերպաւորեցեր. 'ի պտղոց երկրի ճնշեալ մզելով՝ զարմանալեօք հրաշագործութեամբ մատակարարել մեզ պատրաստեցեր: Մանաւանդ զի ոչ յոլովից խառնից 'ի մի եկելոց խմբակցութենէ զանազան ծաղկանց, ըստ հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլութենէ, զայս իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութիւն վերնալոյս ձիթոյ: Որ թէպէտ անճառ էին համեղութիւնք քումդ անուշութեան, և ընդ օրինակաց իրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի՝ և շուշան հովտաց՝ և նարդոս ընտիր՝ և եղեգնախունկ խառնեալ հալուէից՝ յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ՝ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար փառաւորեալ անունդ անքննելին, որ զա՟մ լնուս, և յիրի իմեքէ ամենևին ոչ կարօտանաս: Ուստի ոչ շփոթելովք 'ի հակառակաց բռնադատուեց՝ բաժանեալ կամաց՝ մեկին առակի, այլ 'ի սիրոյ հաւանութենէ ա՟ծապէս 'ի մէնջ պարարես, վ՟ն մեր ըստ մեզ՝ առ ամենայն վայելչական նմանութիւն օրինակեցեալ. առ որս լոյս բարի՝ և հուր ջեռուցիչ.

տուող

տապ սիրոյ առանց մասին ինչ չնչման անգթական սառնացրտութե՟՝ այս զանգուած նիւթոյ՝ կաթուածոյ ձիւթոյ՝ մաքուր մնաց տեսեալ իմանի, որով յիրաւի սովաւ 'ի յա՟ծ է միանալի: Ընդ սողոմոնի օծելոյ որդեգրեցելոյ ա՟յ՝ երգեմ բերանով հարսինն՝ երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութի՟, համբուրեալ 'ի յիղձս մնաց՝ զհոտ իւղոց քոց քան զամենայն խունկս. և իբր զբանս կենաց յաւիտենականաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն՝ և ա՟ծաբան աւետարանչին, զհետ քո 'ի հոտ իւղոց քոց ընթասցուք. լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ 'ի վեր է քան զերկին օդոյս այսորիկ, և օծեալ զգլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղէց քեզ ուրախութե՟, զուարթապէս՝ և ո՛չ տըխրաբար:

ժբ՟. Այս իւղ խնկելի՝ պաշտելի և երանելի, ո՛չ սոսկ օծումն ուղղոյս սենեկի, և կամ հերաց վարսից գագաթաննպաստ ինչ մատուցանի, եթէ ո՛չ ա՟րունական կենսատու խաչիդ ա՟նագրեսցի: Այն իւղ զարմանահրաշ օրհնութեան լուսոյ՝ զհրէայն և զխուժն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ ըղդուժն դժնէաբար՝ և զարհաւրատեսակ շնագլուխն սոսկալիթխար, զտէրն ազատ՝ և զստրուկն ծառայածին՝ քրիստոնեան արարեալ՝ անուամբ քո կնքէ, և հոգւոյդ սբ՟յ ընծայէ, և հօրդ երկնաւորի՝

րի՝ հարազատ որդի հաստատէ ։ Բազմօրինակ են սովաւ արուեստից ուսմունք յարմարեցեալք, նախ նիւթոյն՝ ապա զօրութեն ։ Քանզի իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի, և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ՝ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խորտակի, և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի ։ Մատն սա քո՝ յ՟ս, որով զհրաշալիսն զարմանագրես ․ քանզի իբր անգծելի կազմութ՟ք կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստն շրջարկութեամբ պաշտպանեալ՝ ծածկէ յայլագունակ խրթնի եկամտից ․ մինչ զի այսու մաքրութ՟ք թաթաւեալն 'ի սմա՝ ոչ ներկի արեամբ, և ոչ ախտատեսակ երփնիւ այլայլի ։ Նա զի և թափանցանց իմն խառնութ՟ք հոգեպէս՝ ընդ թանձրութ՟ե մերոյս գոյութ՟ե մտեալ անցանէ ․ զի թէ անէծք սաղմոսողին՝ ձիթոյ առակաւ՝ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, որչափ ևս հոգիդ սոյն Ճարպով լուսոյ՝ զաներևոյթ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ ․ ազդումն տուեալ 'ի խորոց անտի շնչման հագագին՝ մինչև 'ի սպառուած ծայրիցն եղերաց՝ զքնաւն ընկղմէ զյիշատակ մարմնոյ մահուն արկածից ․ քանզի կենդանական զօրութ՟ի քո միշտ ահաւոր՝ տ՟ր յ՟ս ք՟ս՝ 'ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իւղ բնակէ ։

Ժդ․ Այս օծումն բարետեսիլ՝ և առ բռնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս՝ իբր զօրաւոր հնարից կերպարան ճգնաւորական՝ անըմբռնելի ձեռաց ներհակին՝ օրինօք պաշտի, դիւաց և ախտից հզօր ահարկու։ Քանզի յոքնապաճոյճ պճնութն բանին եղեկլլելի առ իմանալին փարաւոն, հենդնաւոր առակագրութբ՝ ողբականօք շարայարմարեալ, յորժամ եղեր՝ ասէ, և հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան։ Օրհնաբանեա՛լ ահաւորութն ամենավայր ձեռնկալութե, որ միշտ անճա՛ռ ես բանից՝ և գերազանցեալ քննութեց․ որ աւետարանաւն կենաց խնկէս յարակայ՝ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի դաւթի․ և 'ի քահանայապետին հարցմանէ, դու՞ ես օծեալն որդի օրհնելոյն․ և յերանաւորն դաւանութէ պետրոսի՝ օծեալ միայն որդի այ կենդանւոյ, և յապահաւատ քննողացն․ եթէ դու՞ ես օծեալն՝ ասեն, ասա՛ մեզ համարձակ․ և 'ի կանոնականացն քոց՝ հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տր ամի․ և հերովդէս յառաջ քան զայն՝ զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ․ և զխա՛րդ դրեն՝ դու իսկ ասացեր, զօծեալն այըզտէրն դաւթի՝ զանսկիզբն որդի՝ ժամանակաւ որդի։ Քանզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախապատուութե։

ժգ․ Այնքան ունի ահաւորութի՝ միանդամայն և սրբութ՟ն իւղաւորական խընկաւորութ՟ն՝ սոսկալի անունս օծութ՟ե, մինչ զի որպէս ո՛չ է համարձակել ուրուք յերկրայնոցս ա՟ծ անուանել այլ ա՟ծային, նոյնպէս ո՛չ բերէ մարմին՝ զքրիստոսդ անուն անձին համարել, այլ զքրիստոնեայն. անտանելի նախնւոյն մեծութ՟ե մկրտչին՝ ջուրբ զհոգին հրաւիրողին. քանզի չե՛մ ես ասէ՝ օծեալն, այլ առաքեալ առաջի նո՟ր: Սովաւ չըքէին՝ ո՟չ բանն ազդէ աւետարանչին մարկոսի, առաքելականացն լծակցութ՟ք, իբր ազգակից հարազատ ձեռինդ ա՟յ՝ այսու վարեցեալք. քանզի իւղով օծանէին՝ և առանց մարդկային հնարից՝ անուամբ քո բժշկէին: Վ՟ն զի ո՟չ խաւար 'ի լուսոյ՝ և ցաւ յառողջութ՟ե, գիշեր 'ի տունջենէ՝ և մահ 'ի կենաց, այսպէս և 'ի սոյն իրէ տիրապարդւէ՝ ա՟մ չարին երևոյթք մերժին խափանին և բնաւին ամփոփին. Քանզի ո՟չ ձանձք զազիրք՝ և փոքր զեռունք սարդից և ունկնամոկից՝ իբր 'ի դեղոյ մահու՝ յայս նիւթոյ սպառեալ պակասին, սոյնպէս լրութ՟բ շնորհի օրհնութ՟ե սոյն իւղ զօրացեալ՝ և զայսս վանէ, և զմուրհակս չարեաց ջնջէ. և զվճիռ մահու պատռէ. Ո՛չ է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդակութ՟ե: Եթէ աւազակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ փրկութ՟ե մատուցեալ տուաւ. եթէ անձարակ վիրացն յակոբայ և իսրայէլի, սոյն իր պատուական յիշատակեցաւ. այս

իւ

իւղոյ փափաքեալ գաւիթ՝ իբր ձիթենի պտղալից 'ի տանն տն՟ յուսով յարակայի, լեալ զթլփատութ՟ին անդստին, զմկըրտութ՟ես շնորհ գուշակէ : Եւ զի՞ է ինձ զայսմանէ ճառել, և համայնին կարծել հասանել, որ և ոչ մերինքն զօրեն ձեռնարկութ՟բ ինչ բանի՝ զայն խորհուրդ 'ի մասնաւորէ ինչ ճառելով նշանակել, թողում ասել՝ թէ յիսկութ՟է :

ԺԵ. Փա՜ռք քեզ միշտ և յա՟մի անմա՛հ թագաւոր՝ 'ի յայժմու երգեցեալ օրհնաբանութ՟ես, զոր արարեր և կատարեցեր առ իս՝ բարեխնամ գթած և երկայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթօղ. անդըստին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն ածեր զիսկութին ճշմարտապէս : Դու լոյս իսկ բնութ՟բ և արեգակն մշտապայծառ՝ և զաշակերտացն դաս՝ լոյս անուանեցեր, որով զարարածս ամ՟ երկրի՝ ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լուսեցեր : Ընկալար զիւղն անուշութ՟ե յումեմնէ՝ 'ի յոտս, յօրինակ ընդունելութ՟ե մաղթանաց առ քեզ. և 'ի միւսմէ պոռնկէ՝ 'ի գլուխ, նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ. մշտափափաք բաղձանօք անսահմանելիդ 'ի սոյն հոտոտեալ, մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ՝ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրամանն պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհաքարոզել զսակաւաձեռն իւղոյն յարդարութ՟ի, զարմանս հրաշից լսողացն՝ առ ապառնեացն յուսադրութի̃ ։ Դուք օծութի̃ ունիք զսբ̃յն՝ ասաց երջանիկն առաքելութեանց, մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ՝ յառաւելութե̃ կենդանարարիդ անպակաս բովանդակութե̃ ։ Ուստի յաւէտ իմն յարմարաւոր և հանգունատիպ՝ առ 'ի մասնաւորն նմանութիւն լուսոյդ և հոգւոյդ սբ̃յ՝ այս կաթուած օրհնութե̃ 'ի վերնոյդ քաղցրաստութե̃ց՝ անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և ասի լոյս, իբր զնախաթիւ գոլ ստեղծուածոց՝ և արարչութե̃դ պատկերակից, որով զխաւար մթութե̃ մեղաց հալածես. իսկ հուր, զի յամ̃ տարր արարածոց հաստատապէս ունի զուգութի̃՝ ըստ էականին կշիռ բաշխութե̃, ծածուկ և յայտնի, լուեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի 'ի հակառակէն, ոչ յինքնաստատ յօժարմտութե̃ բաղձայ բորբոքիլ ։ Դարձեալ և օծումն, զի արքայաբար որդեգրեալ՝ ընդ քեզ 'ի ժառանգութե̃ հօրդ մատուցես. ողորմութե̃դ ազգակցաւ նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հանդերձեալ փառսն փայլեսցուք. դարձեալ և հոտն, զի մաքրեալ զարկածս խաբէութե̃ն՝ որ 'ի բանսարկուէին ներգործուէ, նորոգ փոփոխմամբ հոտոյդ և ճշմարտութե̃՝ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք, բևեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք՝ ամենապարգև ։

ժէ̃. Ահա արդարև յաւէտ իսկապէս՝ իւղս այս լուսապատար խնկալիր՝ վեր-

նա

նականիդ սիրոյ տեսութ՟ի : Վ՟ որոյ և պօղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ձեռն գոհաբանութեանն՝ ասելով յայտնի, որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի ք՟ս յ՟ս՝ ա՟ծ է, որ և կնքեաց զմեզ՝ և ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր. և դարձեալ, մի՝ ասէ, տրտմեցուցանէք զհոգին ս՟բ ա՟յ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան: Պատկառելի և անվանելի օծութ՟ես յորջորջութ՟ի՝ իբր 'ի նորումն՝ յաւէտ քան 'ի հնումն. քանզի բանն դաւթեան սաղմոսին՝ զոխրական անօրինականացդ ընկըզընաւոր կրիցդ խորհուրդ՝ ճշմարտաբար վերաստահմանէ, ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց՝ վ՟ տ՟ն և վասն օծելոյ ն՟ր : Արդարէութ՟ի մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս՝ հրէական չար մոլեգնութ՟ն՝ որ 'ի տ՟րդ յանդգնութիւն, ո՞վ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տ՟ն՝ և քաւեսցի. քանզի թէև յազգայնոյն սպանու սաւուղ, այլ ո՛չ իսպառ մերժեցան յամօթ և 'ի նախատինս ազգաց օտարաց, մինչև արեանդ ա՟յ հազորդեալ դատան : Գրաւական մեծ յիշատակի ապագայիցն ժառանգութ՟ե՝ աղօթանուէր աղերսարկութ՟ի ասել սաղմոսին, վ՟ դաւթի սիրելոյ քոյ՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ. և դարձեալ, նայեա՛ և տե՛ս յերեսս օծելոյ քոյ և արա՛ ողորմութիւն ընդ օծելոյ քոյ :

ժէ. Ձեռինդ քո՝ ք՟ս, երկրպագեալ

պարգեւատրութ՟ի՝ այս հիւթ լուսակիր․ քանզի ոչ այլ մեծ բարձրութ՟ի յարքայութե՟ն ճոխութենէ՝ ասէ մարգարէն 'ի դիմաց քո տէ՛ր, քան թէ՝ գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի ըզնա ։ Ուստի կիրթ իմն յիշատակաւ՝ ըզքոյդ համբուրեալ լուսոյ օծութ՟ի՝ տէ՛ր յս՟ քս՟, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենաւորութ՟ի, թէ դու ես ա՟ծ՝ և յա՟մի միայն թագաւոր թագաւորութեանց․ և ճշմարիտ օծեալ իւղելոց, փառաբանեալ երկրպագութ՟բ, երէկ և այսօր ։ Քանզի զո՛ր օրինակ պատրոյկ թացեալ 'ի ճարպում՝ ոչ երևեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հեղեալ՝ 'ի հանդերձեալսն ջահաւորի ։ Այս է կերպարանին մեկնաւոր բացերևութիւն, 'ի նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն յարմարութ՟բ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ ։

ԺԲ․ Երգ՝ այսօրեկ պատճառ վերադոյն մասանց կեցուցչայ ա՟ծականաց՝ արարչութե՟դ հարազատաց, առանց որոյ ոչ է գրել ք՟նեան, և ոչ նազովրեցի անուանիլ, և ոչ յիշատակիլ յորդիս յուդայի, և կամ խրախոյս բառնալ յանուն ա՟յ յակոբայ, այս հիւթականութիւն օրհնութ՟ե ձիթոյս, յորում ս՟բ երրորդութիդ խառնեցեալ միաւորի․ Ճառագայթ շնորհաց․ ջուք մերոց դիմաց․ նկարագրութ՟ի երեսաց․ բարեձևութ՟ե պատահմանց․

լուսաւորութ՟ն աչաց · ա՟նադրութ՟ն բըբաց · վայելչութ՟ն այտից · զարդ կերպարանաց · պահպանարան շրթանց · հանդերձիչ կրօնից · յարմարիչ վարուց · շաղկապ հաւաքմանց · զօրութիւն անձանց · ուժգնութ՟ն դիմեցմանց · խափանիչ յուռթից · քակտիչ հմայեկաց · նահանջիչ ձեռնածուաց · խայտառակիչ կախարդաց · դատիչ աղանդից · բռնախոյեան դիւաց · փարատիչ ցաւոց · կատարիչ կնքեցելոց · տենչանք երախայից · անզննելին արտաքնոց · հիացումն հեթանոսաց · նախանձարկու անհաւատից · մերկացուցիչ դաւանեաց · յարդանք յետնոց · փառք սոըըկաց · պճնումն կանանց · աճեցումն տըղայոց · հրճուանք ծերոց · ձեռնադրիչ նուիրելոց · զգուշութ՟ն մաքրոց · պսակ թագաւորաց · ճոխութիւն արքայից · յառաջադրութ՟ն կայսերաց ։ Քանզի զոր օրինակ ամ՟ն ինչ կնքեալ՝ նշանակիչ իմ՟ն է ներքնայնոյն մեծագնութ՟ե, նոյնպէս բարձրութ՟ն շնորհին 'ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն քո՝ ա՟ծ տ՟ր յ՟ս ք՟ս, վայելչական իմ՟ն տեսակաւ ծանուցեալ նշանակի ։ Իսկ անունն իսկոյն անդստին 'ի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգելից արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անտի սկսեալ, 'ի դէմս ածելով զիւրեն կերպարան՝ ահաւոր խորհրդոյ պատկեր ։

⁂

ԺԹ. Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց՝ գրեթէ զսոյն աղերսեալ խնդրէր, ըստ քերթութեանն բանի, որ ըստ խորութ̅ն հոմերոնի՝ թարգմանեալ իմանի, ինձ մայր. այսինքն է՝ առ 'ի յինքն ձգօղ զմերս բնութ̅ի զօրաւորապէս, և կայուն հաստատեալ չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականութ̅ի՝ առ աւազանին լուսաւորութ̅ի. և իբրև զդեղ՝ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յեղանակել զցնդեալս իմ վայրագութ̅ի, և զաղբերց հեղեղեալ մշտահոսութիւն ։ Իսկ մառնամնում՝ որ և այս միւռոն, ըստ այլում բանի ցուցանի. այսինքն է՝ մթին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն դիմառութեան՝ չէ՛ օտարացեղ, քանզի արդարև յիրէ անտի անուննն նշանակի. վ̅ն զի անքննին է այս խորութ̅ի յաւէտ՝ քան զն̅մ սրբութ̅ի ս̅բց ։ Զի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուծանայ, և կամ հայցի բնութ̅բ զսխրան հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութ̅բ 'ի մասունս աղգողականացն տնօրինապէս ա̅ծնագրի. սակայն անհասութ̅բն վերնականաւ՝ և զանուննն ունի անքննին ։ Քանզի ոչ̅ ա̅ծ իսկ և իսկ 'ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութ̅բն՝ յեղանակաւ իմն անբաւութ̅ե՝ 'ի խաւար

ան

անզննին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ 'ի ձեռնարկուե̃ց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորումն լուսոյ՝ 'ի լեզուաց ոմանց ճարտարաց 'ի ճահ ճեմութե̃ց՝ գրականապէս անուանադրութ̃՝ միայն առձայնի, վասն ոչ զօրելոյ երկրածին բնութ̃ե զիսկն գիտելոյ ։ Իսկ զերկաքանչիւրս ա̃ծականացն՝ անդստին յինքեան հարստաբար տիրապէս ունի ․ քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւղս այս նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կնդրուկաւ ․ վ̃ն զի ա̃ծ մեր՝ հուր ծախիչ է, ըստ մովսէսի ․ և դարձեալ՝ լոյս է, ըստ յովհաննու ․ ուստի և եսայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ, եղիցի՝ ասէ, լոյսն իսրայէլի 'ի հուր ։

Ե̃ ․ Դարձեալ՝ այլ իմն կերպարացուցանելով զբանս՝ առ 'ի նոյն պատկեր յայտնութեան իրի ․ վ̃ն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն՝ որ 'ի դթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել ․ քանզի՝ մեռայ, որ է դառնութ̃ի, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց, որ և միւռն ստուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութ̃ե ապականութ̃ի ։ Քանզի այսու օծմամբ հոգևորականաւ՝ խզեալ կամ հատեալ 'ի սնոտիասէր մահակերպարան տաղտկազազրական հեշտուե̃ց հակառակողին, որ օդախոնաւ մեղկութ̃բ զքնարս ձայնաւորական՝ և կամ զարկուած վերա-

ծածկութե՟ մղնարքհեսա ուժգնաբարբառ
խրոխտահնչական կազմուածոյ թմբկիս
գործականութե՟՝ ջրացիր ի՟մն գիջութե՟՝
անվայելուչ թուլադաշնակեալ՝ 'ի սորե
կորստեան քարշէ զօրինակ մերս գոյու-
թե , կասկիմք յուսով վերստին դարձեալ
ընդ անճառ խորհրդոյ խաչի քո՝ ք՟ս · մը-
կրտսեալք 'ի մահ կենդանւոյդ՝ անվախ-
ճան կենացդ սովաւ հաղորդիմք , 'ի քեզ
իսկ ա՟ծ համայնիւ խրախուսեալ՝ խոստաւ
ամենեքին անհատուածելի :

ի՟ա · Այս իւղ՝ զդրօշեալն քառակուսեան
յանուն քո յ՟ն՝ նշանի բարձրելոյդ հաւա-
տար հաստէ · շնորհ ընձեռեալ զուգա-
փառ և նմանատիպ արեան կեցուցչիդ՝
նոյն անվանելի փառօք պսակեալ մեծա-
ցուցանէ : Փայտ անուանի իւղոյ օրհնու-
թե , ըստ մարգարէին կանխաձայնութե՟ ,
զ'ի հասարակաց կազմեցեալ բուսոց ան-
տառաց զօրացէս ուղղեալ՝ 'ի խակութե՟
չարին արկածից և օտար կարծեաց՝ 'ի
ստեղծօղդ վերաբերեալ առ նոյն նիւթս
կենաց՝ հաստուն ներգործէ : Զի և որ 'ի
մեղ մոլիցն սպասուհանաց մշտաբացիկ
թափանցանցութ՟իք՝ յանուն մեծութեան
ահաւորիդ զօրութ՟ե՝ 'ի խոհական ի՟մն հա-
մեստութ՟ի քեւ տ՟նագրեցեալ առ 'ի յըղ-
ձակերս օթեվան հոգւոյդ՝ անաղտելի
պատրանաց չարին՝ խաւարահողմխարդա-
խողին այսու լուսով զսպեալ ամփոփիմք
'ի նուէրդ գոհութե՟ երեկորեան պաշտա-
ման՝ ընդ երկնայնոցն զամբարաց՝ առ օ-

րէ

րինակ վառուման շնորհիդ որ 'ի մեզ · 'ի սոյն յիշատակ փրկութե բարեացն՝ սովաւ անկեցեալ ծագի , և ծաղկաւէտ եղեալ պտղածնի · 'ի սպաս ընթրեացն պատրաստութե յետնում գիշերի՝ 'ի մեծի գալստեան : Ահա զայս լոյս ճրագի համարեալ 'ի կիր արկանեմք :

իե · Դարձեալ՝ ըստ գծագրացն գումարութե քսանևչորիցն շարադրութեան՝ որ յաղփափետաց անտի վերաթոճի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարգի , յորում զայս խորհուրդ խորութեան անտուստ թարգմանեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին՝ ջամբել պատրաստեմք ամենակազմ յարմարութե · քանզի յութներորդէ անուն գրոյ՝ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանօրէն քննութե , ընդ ձիթոյն անուան՝ նիւթ ճշմարտագրի · որ է կերպարան արդեան խմորոյ՝ յինքն բերողի զզանգուածն զօրեղապէս · որ ոչ սակաւն 'ի յօլովէն պարագայի , քան թէ 'ի նոյն իրն դարձուցեալ , ըստ աւետարանական առակին , զամ առ ինքն վերաբերեալ աճեցուն առնէ :

իզ · Սոյն իւղ հեզութե՝ միշտ համբարձման և խոնարհութե օրինակ և նմանութե , առ ոմն կակուղ պատուաւ մատուցեալ ջամբի , հարթակշիռ և բարեյարմար բանի կերպարան · իսկ համայնիցս ըստ ծականաց՝ հասանող և ստորածորելի նիւթից՝ գերափառ վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր · քանզի և յաման ինչ

մոր.

մորթոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձեւոյ և կամ՝ ջրոյ թացութեն՝ մեղկէ, այլ 'ի սահմանն սպատշաճին պահէ : Այսպէս ընկալեալ զքոյոյդ բարեաց անհաւասար առաւելութեն՝ որդի՛ ա̃յ կենդանւոյ, զորըբանոճէր այս օծելութեն՝ 'ի ճակատ դեմացս արեամբ քո գրեմք • և 'ի բնութիւն շնչոյս՝ հոգւով քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ ծայրարձակութբ՝ 'ի տարածութն յոգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութեն՝ պտուղ խաղոյ ընծայեալ զլոյս՝ 'ի փառս աղաւնեացն հանդերձելոցն: Այս ճարպ հոգևոր երջանիկ և վերնանշոյլ՝ 'ի դէմս երեսաց իմս պատկերի՝ քումդ նշանաւ ջահաւորեսցի :

Իդ • Եւ քանզի՝ իբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ զօրութեն՝ արագ սլացմամբ 'ի թեւս թեթեւս մտաց սլացմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից՝ անհուն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ խաղաս որոշեալ, փակեցաւ յենէն • ոչ օրինակեցաւ կցորդաւ • ոչ նմանեցաւ զուգամասնութբ • ոչ սահմանեցաւ ձեւակերպութբ • ոչ կշռեցաւ ընկերին չափով, այլ ահա ընդ մ̃ծեան խաչիդ նշանի՝ հաւատարութբ արեան կեցուցչիդ՝ հոգխապէս գերազանցեցաւ: Եւ արդ՝ օրհնեմ զմեզ տէր սովաւ և 'ի սոյն • ևս և անունդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և զարմանաւոր, 'ի գովեստ փառաց

ան

անձառից՝ մաքրակրօնից բուրվառաւ իմնկեալ, սուրբ՝ ոք, անքննին, անպատում, բարձրեալ, ողորմած, վերերգեալ՝ ճշմարիտ, բարերար և ոք, արա՛ սովաւ փրկութն • սուր և քաւութն • պարգևեա՛ բժշկութն • հանդերձաւորեա՛ շնորհ • առատաձեռնեա՛ երանութն ։ Յօծումն այս ձիթոյ՝ երկնանձրև լուսոյ՝ անարատ դըտայց • յեղեալս այս թեզան բանաւորական՝ մի մտցէ, և մի գրաւեսցէ տխրականութն այլոց մեղանաց՝ շաղախել երբէք զոգւոյս կերպարան ։ Եղիցի սոյն ինքն որոց մատչին օծանիլ սովաւ՝ հարսնապաճոյճ պանծանօք պճնել գեղայօրէն ոք վայելչութբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ ։ Եղիցի հուրս այս լուսափառ և ածաձիր՝ մերձեցելոցն 'ի սոյն ընտրութն՝ մուխ կրկնեռաց և բարեփափաք ջերմութե այլ յօրինուածոյ, որով ամի՛ անենապատրաստ ընդութբ՝ 'ի կարծրականումդ անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց՝ 'ի քեզ հաստատեալ աներկմտելի ։ Լիցի նշանակ վերնամրցանակ այսր պարգևի սովաւ վառելոցն, ոչ ողողիլ ջուրբ • ոչ այրիլ հուրբ • ոչ ցրտանալ 'ի սառնուէ • ոչ վնասակար հողմով չիջանիլ • ոչ աղտեղիլ յուրուճական ինչ պղծութէ • ոչ զպահեալսն՝ չարին մատնել, և ոչ 'ի սորա ելիցն՝ զմթերս գանձուն կենաց՝ յիմարաբար արտաքս հանել • ոչ անպատապար մնալ 'ի թևոց քոց օգնականութէ, և ոչ զեղացեալն 'ի մեղ

օծու_

օծուն՝ անմաքրասէրս 'ի բաց մերկանալ: Այլ եղիցուք քև 'ի սոյն հրացեալ․ սովիմք պարարեալ․ սովաւ լուսաւորեալ․ այսու արդարացեալ՝ ազատացեալ՝ պսակեալ և թագաւորեալ: Եւ քեզ միայնոյ միայն օծելոյ՝ յամենեցունց օրհնութիւնք երգոց, աւելուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթանակութիւնք գովեստից, բարեբաստութիւնք շրթանց, սրբաբանութիւնք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ սբյ՝ յաւիտեանս յաւիտենից․ ամէն:

Այն էմ յետնարկութեան 'ի սրբութեան, և այս արձանագրութին 'ի սրբութեանցն սրբութին:

⁂

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

ԲԱՆ․ ՂԴ:

ա․ Ած յաւիտենական․ բարերար և ամենակալ․ ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ․ կեանք 'ի մահու, և լոյս 'ի խաւարի․ յոյս ակնունողաց, և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութբ՝ քո՝ դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծագումն և անմուտ արեգակն․ քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տրութե քո խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութե ամ եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց․

որ լսես զհեծութ̃ն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նց̃· ա̃ծ իմ և Թագաւոր իմ· կեա́նք իմ և ապաւէն իմ· յո́յս իմ և վըստահութ̃ն իմ· յս̃ քս̃ ա̃ծդ ա̃մի· սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սբ̃ց· մխիթարութ̃ն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գիտես զա̃մ յառաջ քան զլինել նց̃· առաքեա́ զպահպանողական զօրութ̃ն աջոյ քո, և փրկեա́ զիս յերկիւղէ գիշերի և 'ի գիւէ չարէ: Որպէս զի զյիշատակ սոսկալի և սբ̃ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութ̃ն ինչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ:

ե̃· Դու 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր ա̃ծային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք ա̃ծականօք՝ ամաչեսցէ սատանայ· քակտեսցին մեքենայքն· բարձցին որոգայթքն· պարտեսցին մարտուցեալքն· պակասեսցին զէնքն սայրասուրք· մերժեսցի մէգն· փարատեսցի խաւարն· մեկնեսցի մառախուղն: Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ· վ̃ն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից· ամէն:

Վերստին յաւելուած նորին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ։

ԲԱՆ. ՂԵ։

ա̅ . Արեգակն արդար . ճառագայթ օրհնեալ . լուսոյ կերպարան . փափաք անձկութե̅ . բարձրեալ անքննին . զօրեղ անպատում . բարւոյ բերկրութի̅ . յուսոյ տեսութի̅ . գովեալ երկնաւոր . թագաւոր փառաց . ք̅ս արարիչ . խոստովանեալ կեանք ։ Եւ արդ՝ զթերութիւն վրիպանաց բազմախաւ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ, մատուցեալ յաղերս հաճութե̅ հօր քում բարձրելոյ ։ Որ վասն իմ 'ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութի̅՝ ամենեւին կենաց օրհնութի̅, վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից ։ Զի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ՝ ա̅ծ և տ̅ր բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր ։

բ̅ . Եւ վ̅ն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ 'ի հաճութի̅ կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս . թողցին պարտիքն . ապաքինեսցի̅ ամօթն . մոռասցին պատկառանքն • բարեգործեցի՟ն դատակնիքն • սատակեցի՟ն որդունքն • վերացի՟ լալն • հանդարտեցէ՟ կրծու՟մն ատամանցն • ըսպառեցի՟ն ողբքն • հատցի՟ն արտասուքն • մերժեցի՟ սուգն • հալածեցի՟ խաւարն • վանեցի՟ հուրն սատակութե՟ • հերքեցի՟ն տանջանարանքն բազմօրինակք:

գ. • Եկեցե՟ն գթութիւնք կամողին և պարգևողին կենաց ամենից • ծագեցի՟ լոյսդ • արագեցէ՟ փրկութի՟նդ • հասցէ՟ օգնութիւնդ • ժամանեցէ՟ այցելութի՟նդ • կանխեցէ՟ ցօղդ ողորմութեան • յաւաջեցէ՟ արբուցէ՟ զանդատանս պապաքեալ՝ անկեալ ոսկերացս թշուառութ՟ ՚ի վիհն մահու • ծաղկեցուցէ՟ պտղաբերեցէ՟ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ՝ որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց: Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո գթած՝ ՚ի քեզ զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ ՚ի մեղաց անմահ կենդանութեամբ ՚ի յարութե՟ն արդարոց, հօր քում օրհնեցեալ: Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ ս՟բյ բարեբանութի՟՝ վայելչական գոհութ՟ • այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից • ամէն:

ՎԱԽՃԱՆ:

Յիշատակարան Մատենիս Դրութեան:

Ըստ հոլովման ընթացից ամենակաց յառաջ շարժութե՟, որ ըստ լուսապատարն նշուլագեղն արփիաճաճանչ՝ լուսակիրն օրակշիռն մշտափարատոն ակնապարար՝ ականն արեւու՝ ստեղծականն արուսեկի, որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութե՟ 'ի չափս դարուց՝ ընչատապատ և կենդանանորոգ տառուղեկան յաւիտենիս, 'ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, 'ի սկիզբն պսակելոյ մտի տասնեկին՝ Յաբեթական տոհմիս տումարի. յետ երից ամաց անցելոյ՝ որ զկնի գալստեան՝ 'ի կայս և 'ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող և մեծ կայսերն հռոմոց բասլի, յորժամ ընդարձակ և միակագաւիթ կանոնաւ ըսփիւռ տարածէր՝ լիասահման և անխարոց 'ի սատոճարակարկատ կոթողս կարծր արձանաց՝ 'ի ձգումն ձեռին՝ և յանխզելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ, 'ի նոյն վերասլացեալ 'ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց՝ խմբից աշխարհաց 'ի ծոց իւր:

Արդ՝ 'ի յայնմ անդորրութե՟ միջոցի, յորում եղերեալ ընդոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի.

կար

կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով 'ի հրաշակերտութիւն միագոյ իրի՝ զբազմաստեղնեան դրոշագս դրութ̃է այսմ սոփերի արգասաւորի, ես Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսայ, և կրտսեր վարժապետաց, գործակցութ̃է եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի • որք իբրև զմի մարմին բանական՝ 'ի յերկուց առ մի կերպարան չինելոյ դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց՝ առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:

Արդ՝ հայցեմք 'ի ճաշակողաց յայսմ սեղանոյ յոքնօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրով 'ի միտս բարիս • որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեանն:

Ցուցակ աղօթից ։

Աղօթք առաւօտու ։ բան ․ ժա ։ ձդ ։ ձե ։ ղբ ։
Աղօթք գիշերայնոյ ։ ժբ ։ խա ։ ղա ։ ղգ ։
Աղօթք զղջման ։ է ։ ը ։ իբ ։ իդ ։ իէ ։ հա ։
Աղօթք խնդրելոյ զշնորհս և զթողութիւն մեղաց ։ դ ։ ժե ։ ի ։ իդ ։ լ ։ լբ ։ խ ։ խէ ։ խթ ։ ծ ։ ծէ ։
Մաղթանք հաւատոյ ։ ժ ։ ժա ։ ժդ ։ լդ ։ խդ ։ հե ։
Մաղթանք յուսոյ և սիրոյ ։ բ ։ ժբ ։ լա ։ լէ ։ խբ ։ խթ ։ կե ։ ձբ ։
Աղօթք յառաջ քան զպատարագն կամ զհաղորդելն ։ լգ ․ դ ․ ե ։ իդ ։ իէ ։ ծբ ։ ծդ ։
Աղօթք զկնի պատարագին կամ հաղորդելոյն ։ լգ ․ ա ։ ե ։ իդ ։ կէ ։ ղե ։
Աղօթք 'ի տր չարչարանս քսի ։ հէ ։ իբ ։ լգ ։ կգ ։ հգ ։ հը ։ խդ ։ կէ ։ լէ ։ ծբ ։ ծը ։ ղգ ։
Աղօթք առ տր ածամայրն ։ ձ ։ իդ ։
Աղօթք բարեխօսութե սբցն ։ լա ։ դ ։ հա ։ ձբ ։ ձդ ։ ձէ ։ ղա ։
Աղօթք առ հրեշտակս և առ պահապան հրշտկն ։ ձա ։
Աղօթք վս բարի մահուան ։ բ ։ կդ ։ հդ ։ ձ ։ ձե ։
Աղօթք վասն բժշկութե ։ գ ։ ժդ ։ ժէ ։ ժը ։ իե ։ լե ։ խբ ։ խգ ։ խը ։ կգ ։ կդ ։ կդ ։
Աղօթք վս հոգեվարաց, յիշատակաւ մահու գերեզմանին յարութե և դատաստանին ։ ա ։ բ ։ է ։ ը ։ ի ։ իդ ։ լբ ։ լէ ։ լթ ։ խ ։ կե ։ կդ ։ հդ ։ հդ ։ հթ ։ ձ ։ ձա ։ ձը ։ կէ ։ ղա ։ ղե ։
Աղօթք վս ննջեցելոց ։ ձդ ։
Աղօթք վս հարուածոց արտորէնից ․ և այլն ։ գ ։ կգ ։ ձը ։ ձթ ։ ղբ ։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ։

Քաղեալք 'ի սրբոյ աւետարանչաց։

ՍԷյ աւետարանէն որ ըստ Մատթէոսի։

Տ՟րն մեր Յս՟ Քս՟։

ԵՒ շրջէր Յս՟ ընդ ամ՟ կողմն գալիլեացւոց. ուսուցանէր 'ի ժողովուրդս նց՟ եւ քարոզէր զաւետարանն արքայութե՟, եւ բժշկէր զամ՟ հիւանդութիւնս՝ եւ զամ՟ ախտս 'ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նր՟ ընդ ամ՟ երկիրն ասորւոց. եւ մատուցին առ նա զամ՟ հիւանդս, որ նեղեալ էին 'ի պէսպէս ցաւս եւ 'ի տանջանս, եւ զդիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս, եւ բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նր՟ ժողովուրդք բազումք 'ի գալիլեէ եւ 'ի դեկապօլեայ եւ յեղ՟մէ եւ 'ի հրէաստանէ եւ յայնկոյս յորդանանու.

եւ բժշկեաց զնոսա։

Իսկ իբրեւ էջ 'ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի՝ երկիրպագանէր նմա և ասէր. Տէ՛ր՝ եթէ կամիս, կարօղ ես զիս սրբել: Ձգեաց զձեռն իւր և հասոյց ՚ի նա յս̃՝ և ասէ՝ կամիմ սրբեա՛ց. և վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն: Եւ ասէ ցնա յս̃, զգո՛յշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցո՛յց զանձն քո քահանային, և մատո՛ զպատարագն՝ զոր հրամայեաց մովսէս ՚ի վկայութիւն նց̃:

Եւ մտեալ ՚ի կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի. աղաչէր զնա և ասէր. Տէ՛ր՝ մանուկ իմ անկեալ կայ ՚ի տան անդամալոյծ չարաչար տանջեալ: Ասէ ցնա յս̃, ես եկից և բժշկեցից զնա: Պատասխանի ետ հարիւրապետն և ասէ, տէ՛ր՝ չեմ բաւական եթէ ը̃ յարկաւ իմով մտցես, այլ սոսկ բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ: Քանզի և ես այր մի եմ ը̃ իշխանութ̃. ունիմ ը̃ ինև զինուորս՝ ասեմ սմա երթ, և երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա՛ զայս՝ և առնէ: Իբրև լուաւ յս̃՝ զարմացաւ և ասէ ցայնոսիկ որք զհետն երթային, ամէն ասեմ ձեզ և ոչ յիսրայէլի այսպիսի հաւատս գտի երբեք: Բայց ասեմ ձեզ՝ զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմեսցին ը̃ աբրահամու և ը̃ իսահակայ և ընդ յակոբու յարքայութ̃ երկնից: Եւ որդիքն արքայութ̃՝ ելցեն ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Եւ ասէ յս̃ ցհարիւրապետն՝ երթ և ոպ̃ հաւատացերդ, եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նր̃ յաւուր

յայն

յայնմիկ ։ Եւ եկեալ յս՟ ՚ի տուն պետրոսի, ետես զի զոքանչ նր՟ անկեալ դնէր տապացեալ ։ Կալաւ զձեռանէ նորա․ և եթող զնա ջերմն · յոտն եկաց և պաշտէր զնա ։ Իբրև եղև երեկոյ, մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայսն բանիւ և զամ՟ հիւանդսն բժշկեաց ։ Զի լցցի բանն որ ասացաւ ՚ի ձեռն եսայեայ մրգրէի, նա զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր եբարձ ։

Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն գերգեսացւոց՝ պատահեցին նմ՟ դիւահարք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն չարաչարք յոյժ, ոմ՟ զի չէր հնար անցանել ումեք ը՟ այն ճանապարհ ։ Եւ ահա աղաղակեցին և ասեն · զի՞ կայ մեր և քո յս՟ որդի այ՟, եկիր տարաժամ տանջել զմեզ ։ Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտական ։ Եւ դևքն աղաչէին զնա և ասէին՝ եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն ։ Եւ ասէ ցնս՟՝ երթա՛յք · և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից · և դիմեաց ամ՟ երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով · և մեռան ՚ի ջուրսն ։ Եւ խոզարածքն փախեան․ և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամ՟, և զիրս դիւահարացն ։ Եւ ահա ամ՟ քաղաքն ել ը՟ առաջ յս՟ի · իբրև տեսին զնա՝ աղաչէին զի գնասցէ ՚ի սահմանաց նոցա ։

Եւ մտեալ ՚ի նաւ՝ անց յայնկոյս և եկն ՚ի քաղաքն իւր ։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի՝ որ դնէր ՚ի մահիճս․ և տեսեալ յի̅ զհաւատսն ն̅ց՝ ասէ ցանդամալոյծն. թողե̅լ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ը̅ն միտս՝ հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ յի̅ զխորհուրդս նոցա՝ ասէ ցն̅ս. ընդէ՞ր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր։ Զինչ դիւրին է, ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ արի և շրջեա՛ց։ Այլ՝ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս։ Յայնժամ ասէ ցանդամալոյծն՝ արի ա՛ռ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր։ Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւոր առնէին զա̅ծ զտուողն այնպիսի իշխանութե̅ մարդկան։։

Մինչդեռ նա զայս խօսէր ը̅ն նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր, դուստր իմ արդ ևս վախճանեցաւ, այլ եկեալ դիցես զձեռն քո 'ի վ̅ր նորա, և կեցցէ։ Յարեաւ յի̅՝ և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի ն̅ր։ Քանզի ասէր 'ի միտ իւրում, թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նորա փրկիմ։ Իսկ յի̅ իբրև դարձաւ և ետես զնա՝ ասէ. քաջալերեա՛ց դու՛ստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ։ Իբրև եկն յի̅ 'ի տուն իշխանին, և ետես զփողահարսն և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա 'ի բա՛ց գնացէք. զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկն՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։

Եւ իբրեւ ել ամբոխն 'ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա եւ յարեաւ աղջիկն ։ Եւ ել համբաւս այս ը̅ ամենայն երկիրն ընդ այն ։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն յս̅՝ զհետ եղեն նորա կոյրք երկու. աղաղակէին եւ ասէին, ողորմեա՛ց մեզ որդի՛ Դաւթի ։ Եւ իբրեւ եկն 'ի տուն, մատեան առ նա կոյրքն. եւ ասէ ցնս̅ յս̅. հաւատայք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո՛ տր̅ ։ Յայնժամ մերձեցաւ յաչս նց̅ եւ ասէ, ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ ։ Եւ բացան աչք նոցա. եւ սաստեաց նոցա յս̅ եւ ասէ՝ զգո՛յշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամ̅ երկիրն ը̅ այն ։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա՛ մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար ։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. եւ զարմացան ժողովուրդքն եւ ասեն, թէ եւ ո՛չ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի ։ Իսկ փարիսեցիքն ասէին՝ թէ իշխանաւն դիւաց հանէ դա՛ զդեւս ։

Եւ շրջէր յս̅ ընդ ամ̅. քաղաքս եւ ը̅ գիւղս՝ ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա. եւ քարոզէր զաւետարանն արքայութ̅, եւ բժշկէր զամ̅ ախտս եւ զամ̅ հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն ։ Եւ տեսեալ զժողովուրդսն գթացաւ 'ի նս̅, զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ո՛չ իցէ հովիւ ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազում են՝ եւ մշակք սակաւ ։ Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հրամանաւ իւր ։ Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր , ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց՝ հանել զն՟ս և բժշկել զա՟մ ախտս և զա՟մ հիւանդութիւն ։

Եւ գնացեալ անտի յս՟՝ եկն 'ի ժողովուրդըն նոցա ։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր ․ հարցին ցնա և ասեն , եթէ պա՛րտ իցէ 'ի շաբաթու բժշկել ․ զի չարախօսեսցեն զնմանէ ։ Եւ նա ասէ ցն՟ս , ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի , և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու , միթէ ո՛չ ունիցի և յարուցանիցէ զնա ։ Իսկ մարդ՝ ո՜րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար ․ ապա ուրեմն պա՛րտ է 'ի շաբաթու բարիս գործել ։ Յայնժամ ասէ ցայրն , ձգեա՛ զձեռն քո ․ և նա ձգեաց , և եղև ողջ իբրև զմիւսն ։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս՝ խորհուրդ առնին զնմանէ թէ ոպ՟ կորուսցեն զնա ։

Յայնժամ մատուցան առ նա դիւահար մի կոյր և համր՝ և բժշկեաց զնա ․ ոպ՟ զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն և ասէին ․ մի թէ սա՞ իցէ քն՟՝ որդի դաւթի ։ Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն ․ ո՛չ ի՛նչ հանէ դա զդևս՝ եթէ ոչ բեեղզեբուղաւ իշխանաւն դիւաց ։

Եւ ելեալ անտի յս՟ գնաց 'ի կողմանս տիւրոսի և սիդոնի ։ Եւ ահա՛ կին մի քանանացի 'ի սահմանաց անտի նոցա , ելեալ աղաղակէր և ասէր , ողորմեա՛ց ինձ տէր որդի դաւթի , դուստր իմ չարաչար այսահարի ։

Եւ նա ոչ ետ նմա պատասխանի . և մատուցե̅լ աշակերտքն նորա աղաչէին զնա և ասէին , արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ մեր ։ Նա պատասխանի ետ և ասէ , ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսե̅լս տանն Իսրայէլի ։ Եւ նա մատուցե̅լ երկիր պագանէր նմա և ասէր , տ̅ր օգնեա՛ ինձ ։ Պատասխանի ետ նմա և ասէ , ոչ է բարւոք՝ առնուլ զհաց մանկանց և արկանել շանց ։ Եւ նա ասէ , այո՛ տ̅ր . քանզի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տ̅ն իւրեանց ։ Յայնժամ պատասխանի ետ նմա յ̅ս և ասէ , ո՛վ կին դու , մեծ են հաւատք քո . եղիցի քեզ որպէս և կամիս . և բժշկեցաւ դուստր նր̅ ՚ի նմին ժամու ։

Եւ գնացե̅լ անտի յ̅ս եկն ՚ի ծովեզրն գալիլեացւոց . և ելե̅լ ՚ի լեառն նստէր անդ ։ Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին ը̅ իւրեանս կաղս՝ կոյրս՝ համերս՝ միակողմանիս , և այլս բազումս , և ընկեցին զնոսա առ ոտս նորա , և բժշկեաց զնոսա ։ Մինչև զարմանալ ժողովրդոցն , որ տեսանէին . զի համերքն խօսէին , կաղք գնային , միակողմանիք բժշկէին , կոյրք տեսանէին , և փառաւոր առնէին զա̅ծն իսրայէլի ։

Եւ իբրև եկին ՚ի ժողովուրդն , մատեաւ այր մի , ՚ի ծունր իջանէր և ասէր , տ̅ր ողորմեա՛ց որդւոյ իմում . զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ . բազում անգամ անկանի ՚ի հուր՝ և երբեք ՚ի ջուր ։ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել ։ Պատասխանի ետ յ̅ս և ասէ , ո՛վ ազգ անհաւատ և թիւր. մինչև ցե՞րբ իցե՛մ ը՟ ձեզ. մինչև յե՞րբ անսայցե՛մ ձեզ. ա՛ծ զնա առ իս. և ածին զնա առ յս՟։ Եւ սաստեաց ՚ի նա յս՟. և ել ՚ի նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմանէ։ Յայնժամ մատուցեալ աշակերտքն առանձինն և ասեն ցյս՟, մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ նա ասէ ցնս՟՝ վասն թերահաւատութե՟ ձերոյ. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեա՛ց աստի անդր և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահօք։

Եւ յելանելն նոցա յերիքովէ, գնացին զհետ նր՟ ժողովուրդք բազումք։ Եւ ահա՛ կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ յս՟ անցանէ՝ աղաղակեցին և ասեն, ողորմեա՛ց մեզ յս՟ որդի դաւթի։ Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին, տր՟՝ ողորմեա՛ց մեզ որդի դաւթի։ Զտեղի առ յս՟. կոչեաց զնոսա և ասէ՝ զինչ կամիք զի արարից ձեզ։ Ասեն ցնա՝ տէր զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ յս՟ մերձեցաւ յաչս նց՟, և վաղվաղակի տեսին և գնացին զհետ նորա։

Մէջ աւետարանին որ ըստ Մարկոսի ։

Տրամք մերով յինլւ քինլւ ։

Եւ մտանէին 'ի Կափառնաում, և իսկ և իսկ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն ուսուցանէր զնոսա ։ Եւ զարմանային ընդ վարդապետութեանն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրև իշխանութբ̃, և ոչ որպ̃ դպիրքն ։ Եւ էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի՝ յորում այս պիղծ դոյր 'ի նմա. որ աղաղակեաց և ասէ ։ Թո՛յլ տուր, զի կայ մեր և քո՝ յս̃ նազովրեցի ; եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ով ես սուրբդ ա̃յ ։ Սաստեաց 'ի նա յս̃ և ասէ, կարկեա՛ց և ել 'ի դմանէ ։ Եւ զարկոյց զնա այսն պիղծ և աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ել 'ի նմանէ ։ Եւ զարմացան ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն. զի իշխանութբ̃ և այսոց պղծոց սաստէ և հնազանդին սմա ։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գաղիլեացւոց ։

Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն եկն 'ի տուն սիմոնի և անդրէայ՝ յակոբաւ և յովհաննու հանդերձ ։ Եւ զոքանչ սիմոնի դնէր ջերմացեալ. և վաղվաղակի ասեն ցնա վասն նր̃ ։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա ։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ ՚ի մտանել արեգականն՝ բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս։ Եւ էր ամ՟ քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս ՚ի պէսպէս ախտից․ և դեւս բազումս՝ եհան․ և ոչ տայր խօսել դիւացն զի գիտէին զնա թէ ք՟ն է։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա սիմոն՝ և որք ընդ նմայն էին։ Եւ իբրեւ գտին զնա, ասեն ցնա թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա․ եկա՛յք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն՝ զի և անդ քարոզեցից․ զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր ՚ի ժողովուրդս նոցա ընդ ամ՟ գալիլեացիս, և դեւս հանէր։ Գայ առ նա բորոտ մի՝ աղաչէր՝ ՚ի ծունր իջանէր և ասէր․ տ՟ր՝ եթէ կամիս կարօ՛ղ ես զիս սրբել։ Իսկ յ՟ս գթացեալ ձգեաց զձեռն մերձեցաւ ՚ի նա և ասէ ցնա, կամիմ սրբեա՛ց։ Եւ իբրեւ ասացն զնա, վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ։ Զգո՛յշ լեր մի՛ ումեք ինչ ասիցես․ այլ երթ ցո՛յց զքեզ քահանային․ և մատո՛ վ՟ սրբութ՟ե քոյ պատարագ՝ զոր հրամայեաց մովսէս ՚ի վկայութ՟ի նոցա։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ո՛չ ևս կարօղ լինել նմա յայտնապէս ՚ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր․ և գային առ նա յամենայն կողմանց։

մանց :

Եւ մտեալ դարձեալ ՚ի կափառնաում յետ աւուրց: Լուր եղև եթէ ՚ի տան է. և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն, և խօսէր նց̃ զբանն: Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ՚ի չորից: Եւ իբրև ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն ուր էր յ̃ս. և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճսն յորում կայր անդամալոյծն: Եւ տեսեալ զհաւատս նոցա ասէ ցանդամալոյծն, որդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ էին ոմանք ՚ի դպրաց անտի, որ անդ նստէին՝ և խորհէին ՚ի սիրտս իւրեանց: Զինչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւն. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ եթէ ոչ՝ մի ա̃ծ: Եւ գիտաց յ̃ս յոգի իւր՝ թէ այնպէս խորհէին ՚ի միտս իւրեանց, և ասէ՝ զի՞ խորհիք զայդ ՚ի սիրտս ձեր: Զինչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն՝ քեզ ասեմ արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո: Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն՝ ել առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն և փառաւոր առնել զա̃ծ և ասել՝, թէ այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք:

Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր:

էր ։ Եւ սպասէին նմա եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնմանէ ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր․ արի՛ ե՛կ 'ի մէջ ։ Եւ ասէ ցնս̃, զի՞նչ արժան է 'ի շաբաթու՝ բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել․ ոգի մի՛ ապրեցուցանե՞լ՝ թէ կորուսանել․ և նոքա լռեցին ։ Եւ հայեցե̃լ յ̃նի զնոքօք ըն́ ցասմամբ՝ տրտմեալ վասն կուրութե̃ց սրտից նոցա, ասէ ցայրն՝ ձգեա՛ զձեռն քո․ և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա ։ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա, թէ զիա՞րդ կորուսցեն զնա ։

Իսկ յս̃ աշակերտօքն իւրովք գնաց 'ի ծովեզրն․ և բազում ժողովուրդ 'ի գալիլեացւոց երթային զհետ նորա, և 'ի հրէաստանէ, և յերէ̃մէ, և յայնկոյս յորդանանու, և որք 'ի տիւրոսէ և 'ի սիդոնէ, բազում ժողովուրդ իբրև լսէին որչափ ինչ առնէր՝ գային առ նա ։ Եւ ասէ ցաշակերտսն իւր՝ զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վս̃ ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա ։ Քանզի ըզբազումս բժշկեաց․ մինչ գալ խռնել զնովաւ, զի մերձեսցին առ նա՝ որք ունէին ախտս ինչ ։ Եւ այսք պղծք յորժամ տեսանէին զնա՝ անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին․ թէ դու ես որդին այ̃․ և նա յոյժ սաստէր նց̃՝ զի մի՛ յայտնի առնիցեն զնա ։

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն գերգեսացւոց ։ Եւ ընդ ելանելն նր̃ 'ի նաւէ

անաւէն՝ պատահեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ : Որոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր . և ոչ շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա : Վ՟ն բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ . և ոչ ոք կարէր պարտել զնա : Քանզի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք : Իբրև ետես զյս՟ 'ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա : Աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ, զի կայ իմ և քո յս՟ որդի ա՟յ բարձրելոյ երդմնեցուցանեմ զքեզ յա՟ծ, մի տանջեր զիս : Քանզի ասէր ցնա՝ ել ա՛յսդ պիղծ 'ի մարդոյ այդի : Եւ հարցանէր ցնա թէ զի՞նչ անուն է քո, և ասէ ցնա լէգէոն անուն է իմ . քանզի բազումք եմք : Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն : Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ : Աղաչեցին զնա ա՟մ դեւքն և ասեն, առաքեա՛ զմեզ 'ի խոզսն՝ զի մտցուք 'ի նս՟ : Եւ հրամայեաց նց՟ . և իբրև ելին այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն, և դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն, էին իբրև երկու հազարք, և հեղձնուին 'ի ծովուն : Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակս . և ելին տեսանել զի՞նչ իցէ՝ որ գործեցաւն : Գան առ յս՟ և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ որ ունէր զլէգէոնն, և զահի հարան :

րան: Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զինչ եղև այսահարին, և զինչ վս̅ խոզիցն: Եւ սկսան աղաչել զնա գնալ ՚ի սահմանաց նոցա: Եւ իբրև եմուտ նա ՚ի նաւն՝ աղաչէր զնա դիւահարն զի ընդ նմա իցէ· և յս̅ ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա՝ երթ ՚ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նց̅, որ ինչ միանգամ տ̅ր արար քեզ, և ողորմեցաւ քեզ: Եւ չոգաւ և սկսաւ քարոզել ՚ի դեկապօլին, զոր ինչ արար նմա յս̅, և ամենեքին զարմանային:

Եւ իբրև անց յս̅ միւսանգամ յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն: Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս· և իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս ն̅ր: Աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է ՚ի մահ· զի եկեսցես դնիցես նմա ձեռն· որպէս զի ապրեսցի, և կեցցէ: Եւ գնաց ընդ նմա· երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա: Եւ կին մի էր ՚ի տեռատեսութե̅ արեան զերկոտասան ամ և յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց· և ծախեալ զինչս իւր զա̅մ՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ: Իբրև լուաւ զյս̅է՝ եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձէ նորա: Քանզի խորհէր ՚ի միտս, թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա, փրկեցայց: Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա, և գիտաց ՚ի մարմին իւր թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն: Եւ անդէն վաղվաղա-

զաղակի գիտաց յս̅ յանձն իւր զզօրութիւնն որ ել 'ի նմանէ. դարձաւ յամբոխն և ասէ, ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանե՞ս, զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վ̅ն զայդոն արար, քանզի գիտէր զինչ եղև նմա. եկն անկաւ առաջի նր̅, և ասաց զա̅մ իրսն ստուգութեամբ։ Եւ յս̅ ասէ ցնա՝ դուստր հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութ̅ի, և եղիջի՛ր ողջ 'ի տանջանաց քոց։ Մինչդեռ նա զայն խօսէր՝ գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին և ասեն, թէ դուստրն քո մեռաւ՝ զի՞ ես աշխատ առնես զվարդապետդ։ Իսկ յս̅ իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն, մի՛ երկնչիր՝ բայց միայն հաւատա՛։ Եւ ոչ զոք եթող ը̅ իւր երթալ. բայց միայն զպետրոս՝ և զյակոբոս՝ և զյովհաննէս զեղբայրն յակոբայ։ Գայ 'ի տուն ժողովրդապետին՝ և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս և աղաղակ յոյժ։ Եւ մտեալ 'ի ներքս ասէ ցնոսա՝ զի՞ խռովեալ էք և լայք. մանուկն ոչ է մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան՝ առնու ը̅ իւր զհայր մանկանն և զմայր, և զն̅ս որ ը̅ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն ասէ ցնա՝ տա՛լիթա կումի. որ թարգմանի՝ աղջիկ դու, քեզ ասեմ արի՛։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր. քանզի էր ամաց՝ իբրև երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք: Եւ պատուէր տայր նոցա յոյժ՝ զի մի՛ ոք գիտասցէ զայն, և ասաց տալ նմա ուտել:

Եւ իբրև անցին յայնկոյս, եկին յերկիրն գեննեսարէթ: Եւ իբրև ելին 'ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ: Եւ ընթացեալ այսր անդր ը̅ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս՝ ուր լսէին թէ անդ իցէ: Եւ ուր և մտանէր 'ի գեօղս կամ 'ի քաղաքս՝ կմ̅ յագարակս՝ 'ի հրապարակս դնէին զախտաժէտս՝ և աղաչէին զնա զի գոնէ 'ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որք միանգամ մերձեցանն՝ փրկեցան:

Եւ անտի յարուցեալ եկն 'ի սահմանս տիւրոսի և սիդոնի. և մտեալ 'ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել: Լուաւ կին մի զնմանէ՝ որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նորա: Եւ կինն էր հեթանոս փիւնիկ ասորի յազգէ, և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա: Եւ յս̅ ասէ ցնա՝ Թո՛յլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Նա պատասխանի ետ և ասէ. տէ՛ր և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին. Եւ ասէ ցնա՝ վն̅ այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ: Գնաց 'ի տուն իւր՝ և եգիտ ելեալ զդեւն, և զդուստրն զի անկեալ դնէր 'ի մահիճսն:

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն տիւրոսի և սիդոնի , և եկն ՚ի ծովեզրն գալիլեացւոց ՚ի մէջ սահմանացն ՚ի դեկապօլիս։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր , և աղաչէին՝ զի ձեռն դիցէ ՚ի վերայ նորա։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի , արկ զմատունս իւր ընդ ականջս նորա և եթուք անդր· և կալաւ զլեզուէ նորա։ Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և ասէ եփփաթա՝ որ է բացիր։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա և լուծան կապանք լեզուի նորա և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն· և որչափ նա պատուիրէր նոցա , նոքա ևս առաւել քարոզէին։ Եւ ևս քան զևս զարմանային և ասէին , զա̃մ ինչ բարւոք գործեաց սա· զի խլից լսել տայ և համերից խօսել։

Գան ՚ի բեթսայիդա , և ածեն առաջի նր̃ կոյր մի , և աղաչէին զնա զի մերձեսցի ՚ի նա։ Եւ առեալ զձեռանէ կուրին եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա և ձեռն եդ ՚ի վերայ նորա , և հարցանէր ցնա թէ տեսանիցէ՞ ինչ։ Բացեալ և ասէր , տեսանեմ զմարդիկս զի շրջին իբրև զծառս։ Դարձեալ եդ ձեռս ՚ի վերայ աչաց նորա , եբաց և տեսանէր· ողջացաւ և տեսանէր համարձակ զա̃մ։ Արձակեաց զնա ՚ի տուն իւր և ասէ , ՚ի շէնդ մի մտանիցես· այլ երթ ՚ի տուն քո· և յորժամ ՚ի շէնն մտանիցես , մի՛ ումեք ասիցես ՚ի շինին։

Եւ եկեալ առ աշակերտսն տեսին ամբոխ շուրջ զնոքօք· և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նս̃։ Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն

Իբրև տեսին զնա՝ զարմացան· և ընդ առաջ ընթացեալ՝ ողջոյն տային նմա ։ Եւ եհարց ցնս̃, թէ զի՞նչ վիճէիք ընդ նս̃ ։ Պատասխանի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն և ասէ, Վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ զոր ունի այս համր ։ Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա · և փրփրէ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի · և ասացի աշակերտաց քո զի հանցեն, և ո՛չ կարացին հանել զնա ։ Պատասխանի ետ նոցա և ասէ, ո՛վ ազգ անհաւատ՝ մինչև յերբ իցեմ առ ձեզ · մինչև ցերբ անսայցեմ ձեզ · ածէք զնա առ իս ։ Եւ ածին զնա առ նա · իբրև ետես զնա այսն՝ վաղվաղակի շարժեաց զնա · և անկեալ յերկիր թաւալէր և փրփրէայր ։ Եհարց ցհայր նորա և ասէ · քանի՞ ժամանակք են յորմէհետէ այդ եղև դմա · և նա ասէ՝ ՚ի մանկութենէ ։ Բազում անգամ ՚ի հուր արկանէ զդա, և ՚ի ջուր՝ զի կորուսցէ · այլ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա՛ մեզ տէր գթացեալ ՚ի վերայ մեր ։ Եւ յս̃ ասէ ցնա՝ ասացեր թէ կարող ես · ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն ։ Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն և ասէ · հաւատամ տէ՛ր՝ օգնեա՛ անհաւատութեան իմում ։ Իբրև ետես յս̃ եթէ կուտի ժողովուրդն ՚ի վր̃, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ, համր և խուլ այս, ես տամ հրաման, ել ՚ի դմանէ և այլ մի՛ ևս մտանիցես ՚ի դա ։ Եւ աղաղակեաց և յոյժ լլկեաց զնա և ել · և եղև պատանեակն իբրև զմեռեալ · մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ ։ Եւ յս̃ կալեալ զձեռանէ նո̄ր՝ յարոյց զնա և կանգնեցաւ։ Եւ իբրև եմուտ նա ՚ի տուն, աշակերտքն առանձինն հարցին ցնա՝ մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։

Եւ գան յերիքով. և ընդ ելանելն նո̄ր յերիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդով, որդի տէմէի բարտիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս ճանապարհին։ Իբրև լուաւ թէ յս̄ նազովրեցի է՝ սկսաւ աղաղակել և ասել, որդի դաւթի յս̄ ողորմեա՛ց ինձ։ Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. և նա առաւել ևս աղաղակէր որդի դաւթի ողորմեա՛ց ինձ։ Զտեղի առ յս̄, և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն և ասեն ցնա, քաջալերեա՛ց արի՛ կոչէ զքեզ։ Եւ նորա ընկեցե̄լ զձորձս իւր՝ յարեաւ և եկն առ յս̄։ Պատասխանի ետ նմա յս̄ և ասէ՝ զի՞նչ կամիս թէ արարից քեզ. ասէ՝ ցնա կոյրն՝ ռաբբունի՝ զի բացայց։ Եւ յս̄ ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա ՚ի ճանապարհին։

Ս͞բյ աւետարանէս որ ըստ Ղուկասու :

Տ͞րն մեր Յ͞ս Ք͞ս :

ԵՒ էջ 'ի կափառնայում' 'ի քաղաքն գալիլեացւոց' և ուսուցանէր զն͞ս 'ի շաբաթուն : Եւ զարմանային ը͞ վարդապետութի͞ն նորա զի իշխանութ͞բ էր բան նորա : Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի' զոր ունէր այս դիւի պղծոյ . և աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասէ' թուլացո՛ , զի՛ կայ մեր և քո Յ͞ս Նազովրեցի . եկիր կորուսանել զմեզ' գիտեմք ըզքեզ' ո՛վ ես սուրբ ա͞յ : Սաստեաց 'ի նա Յ͞ս և ասէ' պապանձեա՛ց և ե՛լ 'ի դմանէ . զգետնեաց զնա դևն 'ի մէջ անդ , և ել 'ի նմանէ . և ինչ ո՛չ վնասեաց նմա : Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենեցուն . խօսէին ը͞ միմեանս և ասէին , զի՞նչ է բանս այս' զի իշխանութ͞բ և զօրութ͞բ սաստէ' այսոց պղծոց և ելանեն : Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն :

Եւ յարուցե͞լ 'ի ժողովրդենէ անտի' եմուտ 'ի տուն սիմոնի . և զոքանչ սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ . և աղաչեցին զնա վասն նորա : Եկաց առ նմա , սաստեաց ջերմանն , և եթող զնա . և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա : Եւ ընդ արևուն մտանել' որոց էին հիւանդք 'ի պէսպէս ցաւս' բերէին զնս̃ առ նա : Եւ նա իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս և բժշկէր զնս̃ : Ելանէին դևքն 'ի բազմաց՝ աղաղակէին և ասէին, եթէ դու ես որդի ա̃յ․ և նա սաստէր՝ և ո՛չ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ քս̃ն է :

Եւ եղև 'ի հասանելն նորա 'ի մի քաղաքացն, ահա այր մի լի՛ բորոտութե̃ իբրև ետես զյս̃, անկեալ 'ի վերայ երեսաց աղաչեաց զնա, և ասէ․ տէ՛ր եթէ կամիս, կարօղ ես զիս սրբել : Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց 'ի նա և ասէ, կամիմ սրբեա՛ց․ և վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն : Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել․ այլ թէ՝ երթ ցո՛յց զանձն քո քահանային, և մատո՛ պատարագ վասն սրբութե̃ քոյ․ որպէս և հրամայեաց մովսէս 'ի վկայութի̃ նոցա : Եւ յորդէր առաւել բանն զնմանէ․ և ժողովէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել 'ի հիւանդութե̃ իւրեանց : Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս :

Եւ եղև 'ի միում աւուրց և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին․ որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց գալիլեացւոց և հրէաստանի և երուսաղէմի․ և զօրութի̃ տն̃ էր 'ի բժշկել զնս̃ : Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ․ և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս և դնել առաջի նորա : Եւ իբրև ո՛չ գտանէին թէ ընդ ո՛ր մուծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին, ելին

'ի

'ի տանիս , և 'ի ցու՜ոյն կախեցին զնա , և իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի յի̃ի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա, այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղքքո: Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն և ասեն . ո՞ է սա որ խօսի զհայհոյութիւն . ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն ա̃ծ: Իբրև գիտաց յի̃ս զխորհուրդս նոցա , պատասխանի ետ և ասէ ցնո̃ , զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրագոյն է ասել թողեալ լիցին քեզ մեղքքո, եթէ ասել արի՛ և գնա: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութի̃ ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն , քե՛զ ասեմ՝ արի՛ առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո: Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիւրն յորոյ վերայ անկեալ դնէր , գնաց 'ի տուն իւր՝ և փառաւոր առնէր զա̃ծ: Զարմանք կալան զամենեսեան, և փառաւոր առնէին զա̃ծ . լի եղեն ահիւ՛ և ասեն , եթէ տեսաք այսօր նոր նշան :

Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա 'ի ժողովուրդն և ուսուցանել . և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր: Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիքն՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ՝ զի գտանիցեն չարախօսութի̃ զնմանէ: Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա . ասէ ցայրն որոյ ձեռնն գօսացեալ էր , արի՛ ա՛նց 'ի մէջ . և նա յարուցեալ եկաց: Ասէ ցնո̃ յի̃ս՝ հարցից ինչ զձեզ . զի՞նչ արժան է 'ի շաբաթու , բարի՞ ինչ առնել, եթէ չար գործել . ոգի մի՞ ապրեցուցանել՝ թէ կորուսանել: Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա՝ ձգեա զձեռն քո, և նա ձգեաց. և հաստատեցաւ ձեռն նորա իբրև զմիւսն: Եւ նոքա լցան յիմարութե, և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն յին:

Եւ իջեալ նոքօք հանդերձ՝ ի տեղի միում տափարակ. և ժողով աշակերտացն նորա, և բազմութի յոյժ ժողովրդեանն, յամենայն հրէաստանէ և յերմէ և յայնմ կողմանէ և ՚ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի: Որ եկին լսել ՚ի նմանէ. և բժշկել ՚ի հիւանդութե իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ ամ ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութի բազում ելանէր ՚ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին:

Եւ իբրև կատարեաց զամ բանս իւր ՚ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ՚ի կափառնաում: Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ՚ի վախճանել, որ էր նմա պատուական. իբրև լուաւ զյսէ, առաքեաց զծերսն ՚ի հրէից, աղաչէր զնա զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ յս աղաչէին զնա ստէպ՝ և ասէին, թէ արժանի է՝ որում զշնորհս զայս առնես. զի սիրէ զազգս մեր. և զժողովրդանոցն նա շինեաց մեզ: Եւ յս գնաց ընդ նոսա. իբրև ոչ ինչ կարի հեռի էր ՚ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ ցնա, տէր՝ մի ինչ աշխատ լինիր. զի չեմ բաւական եթէ ը յարկաւ իմով մտանիցես: Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ · այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկս իմ: Քանզի և ես այր մի եմ կարգեալ ը՟ իշխանութե՟բ · ունիմ ը՟ ինև զինուորս · և ասեմ սմա երթ, և երթայ · և այլում թէ եկ, և գայ · և ծառայի իմում թէ արա զայս, և առնէ: Եւ իբրև լուաւ զայս յ՟ս զարմացաւ · դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա և ասէ՝ ամէն ասեմ ձեզ՝ թէ և ո՛չ յիսրայէլի այսչափ հաւատս գտի: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ՚ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ:

Եւ եղև ՚ի վաղիւն երթայր ՚ի քաղաք մի, որում անուն էր նային · երթային ը՟ նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բազում: Իբրև մերձ եղև ՚ի դուռն քաղաքին, և ահա եհանէր մեռեալ մի որդի միամօր մօր իւրոյ · և նա էր այրի, և ժողովուրդ բազում քաղաքին էր ը՟ նմա: Իբրև ետես զնա տ՟ր՝ գթացաւ ՚ի նա և ասէ, մի լար: Եւ մատուցեալ մերձեցաւ ՚ի դագաղն · և որք բարձեալն տանէին՝ զտեղի առին · և ասէ՝ պատանի դու՝ քեզ ասեմ արի: Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել, և ետ զնա ցմայր իւր: Եւ ահ կալաւ զամենեսին և փառաւոր առնէին զա՟ծ և ասէին՝ թէ մարգարէ մեծ յարուցեալ է ՚ի միջի մերում · և թէ այց արար ա՟ծ ժողովրդեան իւրում ՚ի բարութիւն: Եւ ել զրոյցս այս ը՟ ա՟մ հրէաստան վասն նորա՝ և ը՟ ամենայն կողմանս աշխարհին:

Եւ պատմեցին յովհաննու աշակերտքն իւր

վասն

վայուն ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց յովհաննէս. առաքեաց առ տէր և ասէ, դու ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա ասեն՝ յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ՝ դու ես որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք։ Եւ 'ի նմին ժամու բժշկեաց զբազումս 'ի հիւանդութե̅ց և 'ի հարուածոց և յայսոց չարաց. և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պատասխանի ետ ն̅ց և ասէ՝ երթայք պատմեցէք յովհաննու զոր տեսէք և լուայք, զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին։

Եւ երանի՛ է որ ոչ գայթակղեսցի յիս։

Եւ նաւեցին իջին յաշխարհն գերգեսացւոց որ է յայնկոյս հանդէպ գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք՝ պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին դևք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ զյս̅, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո յս̅ որդի ա̅յ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրամայեաց այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր 'ի շղթայս և պահէր յերկաթս. և խզէր զկապանսն՝ և վարէր 'ի դիւէն յանապատս։ Եհարց ցնա յս̅ և ասէ, զի՞նչ անուն է քեզ. և նա ասէ՝ լեգէոն. զի դևք բազումք մտեալ էին 'ի նա : Եւ աղաչէին զնա՝ զի մի հրաման տայցէ նոցա երթալ յանդունդս : Եւ էր անդ՝ երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն . և աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նոցա մտանել 'ի նոսա . և հրամայեաց նոցա : Եւ ելեալ դևքն յառնէն՝ մտին 'ի խոզեանն . և դիմեաց երամակն 'ի դահէ անտի 'ի ծովակն և հեղձաւ : Իբրև տեսին խոզարածքն զեղեան որ եղէն՝ փախեան . և պատմեցին 'ի քաղաքին և յագարակսն : Եւ իբրև ելին տեսանել զգործսն , և եկին առ յ՟ս , և գտին զայրն ուստի դևքն ելեալ էին՝ զգեցեալ և զգաստացե՟լ նստէր առ ոտսն յ՟ի , և երկեան : Պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր , թէ զիարդ փրկեցաւ դիւահարն : Եւ աղաչէր զնա ա՟մ բազմութիւն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց, գնալ 'ի սահմանաց նոցա . քանզի ահիւ մեծաւ տագնապէին, և նա մտեալ 'ի նաւ դարձաւ անդրէն : Աղաչէր զնա այրն ուստի դևքն ելեալ էին շրջել ը՟ նմա : Արձակեաց զնա և ասէ . դա՛րձ 'ի տուն քո և պատմեա՛ զոր միանգամ արար քեզ ա՟ծ : Գնաց 'ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա յ՟ս :

Եւ իբրև դարձաւ անդրէն յ՟ս ընկալաւ զնա ժողովուրդն , քանզի ամենեքեան ակն ունէին նմա : Եւ ահա՛ եկն այր մի՛ որում անուն էր յայրոս . և նա էր իշխան ժողովրդեանն . անկե՟լ առ ոտսն յ՟ի , աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա : Զի դուստր միամօր էր նորա , ամաց իբրև երկոտասանից .

և էր մերձ 'ի մահ . և ը՟ երթալն նր՟՝ ժողովուրդքն նեղէին զնա : Եւ կին մի էր 'ի տեռատեսութե՟ արեան՝ ամաց երկոտասանից . որ 'ի բժիշկս ծախեալ էր զա՟մ ինչս իւր . որ ո՛չ էր լեալ հնար յումեքէ բժշկել : Մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նորա , և նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա : Եւ ասէ յս՟՝ ով է որ մերձեցաւն յիս . իբրև ամենեքեան ուրանային , ասէ պետրոս՝ և որք ը՟ նմա էին . վա՛րդապետ՝ ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ : Եւ ասէ յս՟՝ ոմն մերձեցաւ յիս . քանզի գիտացի եթէ զօրութիւն ել յինէն : Իբրև ետես կինն՝ եթէ ո՛չ ծածկեցաւ 'ի նմանէ , եկն դողալով և անկաւ առաջի նորա . թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա , պատմեաց առաջի ա՟մ ժողովրդեանն . և եթէ ո՛րպէս բժշկեցաւ առժամայն : Եւ ասէ՝ քաջալերեա՛ց դուստր . հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղաղութի՟ :

Եւ մինչդեռ նա խօսէր , գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա , մեռաւ դուստրն քո , մի՟ ինչ աշխատ առներ զդա : Իսկ յս՟ իբրև լուաւ , պատասխանի ետ նմա և ասէ . մի՟ երկնչիր , միայն հաւատա՛ և կեցցէ : Եւ մտեալ 'ի տունն՝ ո՛չ զոք եթող մտանել . բայց միայն զպետրոս և զյակոբոս և զյովհաննէս , և զհայր մանկանն և զմայր նր՟ : Լային ամենեքեան և կոծէին զնա . և նա ասէ՝ մի՟ լայք , զի չէ՟ մեռեալ՝ այլ ննջէ : Եւ նոքա ծաղր առնէին զնա . զի գիտէին թէ մեռաւ : Եւ նորա հանեալ զամենեսին

ար

արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ, արի՛ կա՛ց մանուկ դու։ Եւ դարձաւ ոգի նորա և կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա ուտել։ Եւ զարմացան ծնօղքն նորա. և նա պատուիրէր մի՛ ումեք ասել որ ինչ եղեն։

Եւ եղև ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ը̅ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ, վա՛րդապետ աղաչեմ զքեզ հայեա՛ց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Եւ ահա ա՛յս հարկանի ՚ի նմա. և յանկարծ գոչէ. և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ. և հազիւ մեկնի ՚ի նմանէ խորտակել զնա։ Եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա, և ո՛չ կարացին։ Պատասխանի ետ յ̅ս և ասէ, ո՛վ ազգ անհաւատ և թիւր. մինչև յե՞րբ եղէց ը̅ ձեզ՝ և անսայցեմ ձեզ, մատո՛ այսր զորդին քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դևն և շարժլեաց։ Սաստեաց յ̅ս այսոյն պղծոյ և բժշկեաց զմանուկն և ետ զնա ցհայր իւր։ Եւ զարմանային ամենեքեան ՚ի վերայ մեծամեծացն ա̅յ. և ՚ի զարմանալ ամենեցուն ՚ի վ̅ր ա̅մի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. դի՛ք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան։

Եւ հանէր դև մի համր. և եղև յելանել դևին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ա̅մ ժողովուրդքն։ Եւ ոմանք ՚ի նոցանէ ասեն՝ բէեղզեբուղաւ իշխանաւն դևաց հանէ դա զդևս։

զդևս ։ Եւ այլք փորձէին և նշան յերկնից խնդրէին ՚ի նմանէ ։ Իսկ նորա գիտացե՟լ զխորհուրդս նոցա, ասէ ցն՟ս. ա՟մ թագաւորութիւն բաժանե՟լ յանձն՝ աւերի. և տուն բաժանե՟լ յանձն կործանի ։ Արդ եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութ՟ն նորա. զի ասէք զինէն թէ բեեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս ։ Եթէ ես բեեղզեբուղաւ հանեմ զդևս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք ։ Իսկ եթէ մատամբ ա՟յ հանեմ զդևս, ապա հասեալ է ՚ի վերայ ձեր արքայութ՟ն ա՟յ ։ Յորժ՟մ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, ՚ի խաղաղութ՟ե են ինչք նորա. բայց եթէ հզօրագոյն քան զնա ՚ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութ՟ն հանէ յոր յուսացեալն էր, և զաւար նորա բաշխեսցէ ։ Որ ո՛չ է ընդ իս՝ հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ ։ Յորժամ այսն ելանիցէ ՚ի մարդոյ՝ շրջի ը՟ անջրդին տեղիս. խնդրէ հանգիստ. և իբրև ո՛չ գտանէ՝ ասէ, դարձայց անդրէն ՚ի տուն իմ ուստի ելի ։ Եւ դայ գտանէ մաքրեալ և յարդարեալ ։ Յայնժ՟մ երթայ և առնու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն ։ Եւ եղև մինչդեռ խօսէր զայս՝ ձայն եբարձ կին մի ՚ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի՛ է որովայնին որ կրեաց զքեզ՝ և ստեանցն որ դիեցուցին զքեզ ։ Եւ նա ասէ, նա՛ երանի այնոցիկ, որ լսեն զբանն այ և պահեն .

Եւ ուսուցանէր 'ի միում ժողովրդանոցացն 'ի շաբաթու: Եւ ահա կին մի զոր ունէր այս հիւանդութեան ամս ութուտասն . և էր կարկամեալ և ոչ կարէր ամենևին 'ի վեր հայել: Եւ տեսեալ զնա յս կոչեաց առ ինքն և ասէ ցնա, կին դու՝ արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ: Եւ եդ 'ի վերայ նորա ձեռն . և առժամայն ուղղեցաւ և փառաւոր առնէր զած: Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր 'ի շաբաթու բժշկեաց յս. և ասէ ցժողովուրդն վեց օր է՝ յորս արժան է գործել . յայնս եկայք բժշկեցարուք, և մի յաւուր շաբաթու: Պատասխանի ետ նմա տէր և ասէ, կեղծաւորք՝ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ 'ի շաբաթու ոչ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ և տանի տայ ջուր: Իսկ այս դուստր աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւասիկ ութուտասն ամ, ոչ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու: Եւ զայս իբրև ասէր, յամօթ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա: Եւ ամենայն ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն փառաւորութեանցն՝ որ գործէին 'ի նմանէ:

Եւ եղև 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց՝ և նոքա սպասէին նմա: Եւ ահա այր մի էր անդ ջրգողեալ առաջի նորա: Պատասխանի ետ յս և ասէ ցօրինաւորս և

ցփա

ցփարիսեցիս՝ եթէ արժա՛ն իցէ 'ի շաբաթու բժշկել. և նոքա լուռ եղեն: Եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց: Եւ ասէ ցնս̃՝ ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրհոր, և ո՛չ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու: Եւ ո՛չ կարացին տալ նմա պատասխանի առ այն:

Եւ եղև մինչ երթայր նա յե̃ղմ, և ինքն անցանէր ը̃ մէջ սամարիայ և գալիլեացւոց: Եւ մինչ դեռ մտանէր 'ի գեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ, որք կային 'ի հեռաստանէ. բարձին զձայնս և ասեն՝ Յս̃ վարդապետ՝ ողորմեա՛յ մեզ: Եւ իբրև ետես զնս̃՝ ասէ ցնս̃. երթայք ցուցէ՛ք զանձինս քահանայիցն. և եղև իբրև գնացին առժամայն սրբեցան: Մի ոմն 'ի նոցանէ իբրև ետես եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զա̃ծ: Անկաւ առ ոտս նորա 'ի վերայ երեսաց իւրոց՝ և գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի: Պատասխանի ետ յս̃ և ասէ: ո՞չ տասն սոքա սրբեցան. իսկ արդ ինն ո՞ւր են: Զի ո՛չ գտան դառնալ տալ փառս ա̃յ, բայց միայն այլազգիս այս: Եւ ասէ ցնա. արի՛ գնա՛ զի հաւատք քո կեցուցին զքեզ:

Եւ եղև 'ի մօտել նորա յերիքով՝ կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ զինչ իցէ այն: Եւ պատմեցին նմա թէ յս̃ նազովրեցի անցանէ: Աղաղակեաց և ասէ՝ յս̄ որդի Դաւթի՝ ողորմեա՛ց ինձ։ Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել աղաղակէր՝ որդի Դաւթի՝ ողորմեա՛ց ինձ։ Զտէ զի էառ յս̄ և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրև մերձ եղև առ նա՝ եհարց զնա և ասէ, զի՞նչ կամիս դու զի արարից քեզ. և նա ասէ՝ տէ՛ր զի բացցին աչք իմ, և տեսից. Եւ յս̄ ասէ ցնա՝ հայեա՛ց, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առ ժամայն ետես. երթայր զհետ նորա և փառաւոր առնէր զած̄. և ամ̄ ժողովրդեանն տեսեալ՝ տային օրհնութիւն այ̄։

Մէջ աւետարանին՝ որ ըստ Յովհաննու։

Տ՟րն մեր յ՟ս ք՟ս։

Եւ յետ երկուց աւուրց՝ ել անտի եւ գնաց ՚ի գալիլեա։ Զի ինքն իսկ յ՟ս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Այլ յորժամ՝ եկն նա ՚ի գալիլեա. ընկալան զնա գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զա՟մ նշանսն, զոր արար յերուսաղէմ՝ ՚ի տօնին. քանզի եւ նոքա եկեալ էին ՚ի տօնն։ Եկն դարձեալ ՚ի կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի։ Եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ՚ի կափառնաում։ Նա իբրեւ լուաւ եթէ յ՟ս եկեալ է ՚ի հրէաստանէ ՚ի գալիլեա, եկն առ նա. եւ աղաչէր զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նր՟՝ քանզի մերձ էր ՚ի մեռանել։ Ասէ ցնա, եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն, տէր էջ մինչեւ մեռե՟լ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա յ՟ս, երթ որդին քո կենդանի է. եւ հաւատաց այրն բանին զոր ասաց նմա յ՟ս եւ գնաց։ Եւ մինչդեռ իջանէր՝ ը՟ն առաջ եղեն նմա ծառայք նորա. աւետիս ետուն եւ ասեն՝ թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վ՟ն ժամուն՝ յորում ապաքինեցաւ. եւ ասեն ցնա՝ երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն։

Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա յս̃ թէ որդին քո կենդանի է · և հաւատաց ինքն և ամենայն տուն իւր : Զայս դարձեալ երկրորդ նշանս արար յս̃՝ եկեալ 'ի հրէաստանէ 'ի գալիլիա :

Յետ այսորիկ տօն էր հրէից, և ել յիսուս յերուսաղէմ : Եւ էր յերուսաղէմ 'ի պրոբատիկէ աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդայ՝ հինգ սրահ : Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց · կուրաց՝ կաղաց՝ գօսացելոց՝ որ ակն ունէին ջրոցն յուզելոյ : Եւ հրեշտակ տ̃ն իջանէր ը̃ ժամանակի յաւազանին՝ և յուզէր զջուրս · և որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր · ոչ ունելով նշան հիւանդութեան : Եւ անդ էր այր մի · որոյ երեսուն և ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում : Զնա իբրև ետես յս̃ զի անկեալ դնէր , և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետև , ասէ ցնա՝ կամիս ողջ լինել : Պատասխանի ետ նմա հիւանդն · տէ՛ր ո՛չ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին , արկցէ զիս յաւազանն · և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ : Ասէ ցնա յս̃ , արի՛ առ զմահիճս քո և գնա՛ : Եւ ողջացաւ այրն · և յարեաւ առ զմահիճս , իւր և շրջէր · և էր շաբաթ յաւուրն յայնմիկ : Ասեն հրէայքն ցբժշկեալն՝ շաբաթ է և ո՛չ է արժան քեզ առնուլ զմահիճս քո : Պատասխանի ետ, նոցա և ասէ · որ բժշկեացն զիս , նա ասաց ցիս , ա՛ռ զմահիճս քո և գնա : Հարցին ցնա և ասեն ,

ասեն, ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, առ զմահիճս քո և շրջեա՛ց: Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՛վ իցէ. քանզի յ՟ս խոյս ետ վ՟ն ամբոխին 'ի տեղւոջէ անտի: Յետ այսորիկ գտանէ զնա յ՟ս 'ի տաճարին, և ասէ ցնա. ահաւասիկ ողջացար, մի և՛ս մեղանչէր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ: Գնաց այրն և պատմեաց հրէիցն, եթէ յ՟ս էր որ բժշկեացն զնա: Եւ վասն այնորիկ հալածէին զյ՟ս հրէայքն, զի զայն առնէր 'ի շաբաթու: Եւ յ՟ս պատասխանի ետ նց՟՝ հայր իմ՝ մինչև ցայժմ գործէ՝ և ես գործեմ: Վ՟ն այնորիկ առաւել խնդրէին հրէայքն սպանանել զնա, զի ո՛չ միայն լուծանէր զշաբաթս, այլև հայր իւր կոչէր զա՟ծ. և հաւասար առնէր զանձն՝ ա՟յ:

Եւ մինչդեռ անցանէր ետես այր մի կոյր 'ի ծնէ. և հարցին ցնա աշակերտքն նորա և ասեն. ռաբբի՝ ո՛յր մեղս է. սորա՞, թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի: Պատասխանի ետ յ՟ս. ո՛չ դորա մեղս է, և ո՛չ հօր և մօր իւրոյ, այլ զի յայտնի լիցին գործքն ա՟յ 'ի դմա: Եւ ինձ պարտ է գործել զգործըս այնորիկ որ առաքեացն զիս՝ մինչ աւուր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ո՛ք կարէ գործել: Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի: Զայս իբրև ասաց, եթուք 'ի գետին. և արար կաւ 'ի թքոյն, և ծեփեաց զկաւն 'ի վ՟ր աչաց կուրին: Եւ ասէ ցնա՝ երթ լուա՛ յաւազանին սելովմայ՝ որ թարգմանի առաքեալ. չոքաւ լուացաւ, եկն և տեսանէր: Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն եթէ մուրացիկ էր, ասէին՝ ո՞չ սա էր որ նստէրն և մուրանայր. կէսքն ասէին նա է. այլքն ասէին ո՛չ՝ այլ նման է նմա. և ինքն ասէր՝ թէ ես եմ։ Ասեն ցնա՝ իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա ետ պատասխանի՝ այր մի՝ որում յս̃ն ասեն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս՝ երթ՝ 'ի սելովամ և լուա՛. չոքայ լուացայ՝ և տեսանեմ։ Ասեն ցնա՝ ու՞ր է նա. ասէ ցնս̃՝ ոչ գիտեմ։ Ածին առ փարիսեցիսն զնա՝ որ երբեմն կոյրն էր։ Եւ էր շաբաթ յորժամ՝ զկաւն արար Յս̃ և եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն՝ թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ ցնս̃՝ կաւ եդ 'ի վերայ աչաց իմոց, և լուացայ և տեսանեմ։ Ասեն ոմանք 'ի փարիսեցւոցն. ոչ է այրն այն յա̃յ՝ զի զշաբաթս ոչ պահէ. կէսքն ասէին, իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել. և էին հերձուածք 'ի մէջ նց̃։ Ասեն դարձեալ ցկոյրն՝ դու զի ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո. և նա ասէ՝ թէ մարգարէ է։ Եւ ոչ հաւատային հրէայքն զնմանէ՝ եթէ կոյր էր և բացաւ, մինչև կոչեցին զծնողս բացելոյն։ Հարցին ցնոսա և ասեն. սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք թէ կոյր ծնաւ, արդ՝ զիա՞րդ տեսանէ։ Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա և ասեն. գիտեմք՝ զի սա է որդին մեր և զի կոյր ծնաւ. բայց զիա՞րդ այժմ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ ո՞ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա՛ իսկ հարցէք. ինքնին 'ի չափ հասեալ է՝ ինքն իսկ խօսեսցի վասն իւր ։ Զայս ասացին ծնողքն նորա , զի երկընչէին 'ի հրէիցն . քանզի ուխտ եդեալ էր հրէից , եթէ ոք խոստովանեսցի զնա քրիստոս՝ 'ի բաց կացցէ 'ի ժողովրդենէն ։ Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա . թէ ինքնին 'ի չափ հասեալ է՝ զնա իսկ հարցէք ։ Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր , և ասեն ցնա , տո՛ւր փառս այ , մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է ։ Եւ նա ասէ , թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ , բայց զայս գիտեմ՝ զի կոյր էի՝ և արդ տեսանեմ ։ Դարձեալ ասեն ցնա . զի՞նչ արար քեզ՝ զիա՞րդ եբաց զաչս քո ։ Պատասխանի ետ նոցա , այժմ ասացի ձեզ և ո՞չ լուայք՝ զի կամիք միւսանգամ լսել . մի թէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա ։ Նոքա հայհոյէին զնա և ասէին . դու լեր նորա աշակերտ , մեք մովսէսի աշակերտք եմք ։ Մեք գիտեմք զի ընդ մովսէսի խօսեցաւ ած . զդա ոչ գիտեմք ուստի իցէ ։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա՝ այդ իսկ են սքանչելիք . զի դուք ոչ գիտէք ուստի իցէ՝ և զիմ զաչս եբաց ։ Գիտեմք՝ զի ած մեղաւորաց ոչ լսէ . բայց եթէ ածապաշտ ոք իցէ՝ և զկամս նր առնիցէ , նմա լսէ ։ 'Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ ։ Եթէ ոչ յայ էր այրն այն , ոչ կարէր առնել ինչ ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա՝ 'ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին . և դու վարդապետես զմեզ . և հանին զնա արտաքս ։

Լուաւ յն՟ եթէ հանեին զնա արտաքս. եւ իբրեւ եգիտ զնա, ասէ ցնա՝ դու հաւատա՞ս յորդի այ՟: Նա պատասխանի ետ եւ ասէ. տէր՝ ո՞վ է զի հաւատացից ՚ի նա: Ասէ ցնա յս՟. եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ ը՟ քեզ՝ նա է: Եւ նա ասէ, հաւատամ տէր՝ եւ երկիրպագ նմա: